Մ. Մ. ՆԱՋԱՐՅԱՆ

ՀԱՅ ՄԱՄԱՒԱՓԱՍՏԱՆԵԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ

(1851 - 1917)

ՀԱՍԿ
ԱԿԱԴԵՄԻԱ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ИСТОРИИ

С. С. НАЗАРЯН

АРМЯНСКАЯ ДЕТСКО-ЮНОШЕСКАЯ ПЕЧАТЬ (1851 — 1917)

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1979

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ս. Ս. ՆԱՋԱՐՅԱՆ

ՀԱՅ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ
(1851—1917)

Ա 11/692494

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1979

002Ap(09)
Ն 15

Աշխատությունը նվիրված է հայ մանկապատանեկան մամուլի սկզբնավորման ու զարգացման պատմությանը։ Համառոտ բնութագրված են առաջին մանկական պարբերականները, որոնց լույս ընծայման դրդապատճառները սերտորեն առնչվում են XIX դարի 50-ական թվականների լուսավորական-դեմոկրատական շարժման խնդիրների հետ։ Մանրամասն ներկայացված է մանկապատանեկան հաջորդ օրգանների («Թատրոն բարեկամ մանկանց», «Բուրաստան մանկանց», «Աղբյուր» և այլն) գաղափարական ու դաստիարակչական հիմնական ուղեգիծը։ Ցույց է տրված նաև XIX դարի սկզբի հայ մանկապատանեկան պարբերականների (ձեռագիր և տպագիր) դերը մատաղ սերնդի դաստիարակության գործում։

Գիրքը նախատեսված է ընթերցող լայն շրջանների համար։

Պատասխանատու խմբագիր՝
բանասիրական գիտությունների թեկնածու
Մ. Հ. ՄԽԻԹԱՐՅԱՆ

Գիրքը հրատարակության են երաշխավորել գրախոսներ՝ բանասիրական գիտությունների դոկտոր Գ. Ս. ՀՈՎՍԵՓՅԱՆԸ և պատմական գիտությունների թեկնածու է. Ա. ԿՈՍՏԱՆԴՅԱՆԸ

Ն 4502010000 / 703(02)—79 36—78

© *Հայկական ՍՍՀ ԴՄ Հրատարակչություն, 1979։*

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայ մանկապատանեկան պարբերական մամուլի պատմությունը սերտորեն առնչվում է մեր ժողովրդի հասարակական կյանքի պատմական զարգացման օրինաչափություններին։

Մանկապատանեկան մամուլը, թափանցելով մատաղ սերնդի հոգևոր ու մտավոր աշխարհը, կարևոր դեր է կատարում ապագա քաղաքացիների դաստիարակման գործում։ Նման խնդրի իրագործման համար կյանքի կոչված այդ մամուլը հայ իրականության մեջ ունի իր հարուստ պատմությունը։

Հայ մանկապատանեկան մամուլի առաջին օրգանները՝ «Բուրաստան ս. Սահակեան» (1851—1853) և «Թութակ Հայկազեան» (1854—1855) ամսագրերը երևան են եկել արևմտահայ իրականությունում՝ անցած դարի 50-ական թվականներին։ Արձագանքելով պատմական ժամանակաշրջանի լուսավորական շարժման առաջադրած խնդիրներին, այդ օրգանները պայքար են ծավալել հին, սխոլաստիկական դաստիարակության վնասակար աղեցությունից պատանիներին ղերծ պահելու համար։ Դրանք միաժամանակ մեծ դեր են կատարել հասունացող սերնդին մարդասիրության, հայրենասիրության ոգով դաստիարակելու, նրանց աշխարհաճանաչողությունն ընդլայնելու ուղղությամբ։ Այդ նոր հրատարակությունները թե՛ արտաքին ձևավորմամբ, և թե՛ հարցերի ընդգրկման շառավիղով ակնհայտորեն տարբերվել են ընդհանուր մամուլից։ Ելնելով պատանի ընթերցողների տարիքային առանձնահատկություններից, այդ պարբերականները փորձել են այս կամ այն չափով պատասխանել նրանց հետաքրքրասիրություններին։

Երկու տասնամյակ անց, 1870—1880-ական թվականներին, երբ նոր թափ է ստացել լուսավորական-դեմոկրատական շարժումը, արևմտահայ իրականությունում երևան են եկել մանկապատանեկան մամուլի նոր օրգաններ: 1876 թ. Հակոբ Պարոնյանը Կոստանդնուպոլսում լույս է ընծայել «Թատրոն բարեկամ մանկաց» երկշաբաթաթերթը, որով և սկիզբ է դրել մանկապատանեկան մամուլի դեմոկրատական թևի զարգացմանը: Կոստանդնուպոլսում լույս են տեսել նաև «Ավետաբեր տղայոց համար» (1872), «Բուրաստան մանկանց» (1882), «Ծաղիկ մանկանց» (1889) և այլ պարբերականներ: 1883 թ. Թիֆլիսում առաջադեմ մտավորականների մի խումբ (Գ. Մխրզոյան, Ն. Մարկոսյան, Տ. Նազարյան) ձեռնամուխ է եղել «Աղբյուր» ամսագրի հրատարակմանը: «Աղբյուրը» իր շուրջն է համախմբել ժամանակի լավագույն դրողներին, ստեղծելով դեմոկրատական ու հումանիստական գաղափարներով հագեցված մանկական նոր գրականություն: «Աղբյուրը» դարի լուսավոր միտքն ու գաղափարները մատչելի ձևերով հասցրել է մանուկ ընթերցողներին: «Աղբյուրի» ստեղծած լավագույն ավանդույթները շարունակվել ու զարգացվել են «Հասկեր» (1905) ամսագրում:

1900-ական թվականներից սկսած աշխատավոր լայն խավերի մեջ խմորվող հեղափոխական տրամադրությունները համակել են նաև պատանիներին ու երիտասարդությանը: Ստեղծվել են աշակերտական հեղափոխական գաղտնի խմբակներ՝ իրենց խմորատիպ և ձեռագիր օրգաններով:

Ցարական կառավարության հանդեպ ունեցած իրենց ըմբոստ տրամադրություններն աշակերտները հաճախ արտահայտել են գրական ստեղծագործությունների միջոցով: Այս տեսակետից ուշագրավ են 1907 թ. Թիֆլիսում հրատարակված «Փնջիկ» կիսաերգիծական ամսագիրը, 1910 թ. լույս տեսած «Պատանի» գրական ժողովածուն: Նույն տարիներին հարուստ բովանդակությամբ աչքի է ընկել արևմտահայ իրականությունում լույս տեսած մանկապատանեկան մամուլը: Այդ մամուլի էջերում քննադատության են ենթարկվել սուլթանական բռնապետության աղգահալած քաղաքականությունը, տիրապետող խավի կամայականությունները:

Մանկական ամսագրերում և շաբաթաթերթերում բարձրացվել են մատաղ սերնդի ինչպես բարոյական դաստիարակության, այնպես էլ ֆիզիկական կրթության հարցերը: Կոստանդնուպոլսում լույս է տեսել ֆիզիկական դաստիարակությանը նվիրված «Մարմնամարզ» ամսագիրը: Ուշագրավ է և այն, որ մանուկներին ու պատանիներին նվիրված պարբերականներ հրատարակվել են նաև գավառներում («Հայկունի», «Բողբոջ»—Մարզվան և այլն):

Հայ մանկապատանեկան մամուլը զարգացման երկար շրջան է անցել, դառնալով մատաղ սերնդի բարոյական, հասարակական, քաղաքական դաստիարակության ամենամասսայական միջոցներից մեկը: Չնայած դրան, մինչև այժմ մեր բանասիրությունը քիչ է զբաղվել անցյալի հայ մանկապատանեկան մամուլի ուսումնասիրությամբ: Առանձին պարբերականների մասին հոդվածներ են տպագրվել գիտական մամուլում[1]: Գ. Ստեփանյանը և Խ. Գյուլնազարյանն իրենց ուսումնասիրություններում անդրադարձել են առավել նշանավոր մանկական պարբերականների քննարկմանը[2]: «Հասկեր» ամսագրի մասին թեկնածուական դիսերտացիա է պաշտպանել Մ. Կորյունը: Ս. Լալախանյանը իր «Հայ մանկական գրականության պատմության ուրվագծեր» գրքի (Ե., 1973) առանձին բաժնում լուսաբանել է մանկական գրականության հարցերը՝ կապված «Թատրոն բարեկամ մանկանց», «Բուրաստան մանկանց», «Աղբյուր», «Հասկեր» պարբերականների հետ:

Հայ անցյալի ու ներկայի մանկական գրականության և մամուլի վերաբերյալ առանձին հոդվածաշար է տպագրվել Հալեպում լույս տեսնող «Բուրաստան» մանկապատանեկան ամսագրի (1951—1952 թթ.) համարներում:

---

[1] Տե՛ս Մ. Հակոբյան, Հայկական մանկական մամուլի առաջին օրգանները, «Պատմա-բանասիրական հանդես», 1963, № 1, էջ 266—271, նույնի «Աղբյուր» ամսագիրը, ՀՍՍՀ ԴԱ տեղեկագիր (հաս. գիտ.), 1959, № 2, էջ 65—76:

[2] Տե՛ս Գ. Խ. Ստեփանյան, Հակոբ Պարոնյան (Կյանքը և հրապարակախոսությունը), Երևան, 1964, էջ 172—194, Խ. Մ. Գյուլնազարյան, Ակնարկներ հայ մանկական գրականության պատմության, Երևան, 1961, էջ 63—92:

Ներկա աշխատության մեջ փորձ է արվել ներկայացնելու հայ մանկապատանեկան մամուլի սկզբնավորման ու զարգացման համառոտ ուրվագիծը և ցույց տալու յուրաքանչյուր պարբերականի գաղափարական ու գաստիարակչական հիմնական ուղղվածությունը: Հատկապես մեծ տեղ է տրվել այն պարբերականներին, որոնք ժամանակին արժեքավոր դեր են կատարել մատաղ սերնդի հոգևոր ու մտավոր դաստիարակության առաջավոր գրույթների պրոպագանդման գործում: Ուսումնասիրությունից դուրս են մնացել մի քանի վարժարանների առանձին հրատարակություններ («Բողբոջ»—Զմյուռնիա, 1862, «Երախայրիք»—Եվդոկիա, 1883—1885, «Մենատոր»—Այնթափ, 1884 և այլն), որոնց օրինակները հնարավոր չի եղել գտնել մեր գրադարաններում: Չեն քննարկվել նաև ուսանողական և աշակերտական միությունների այն օրգանները («Թուրքիկ»—Բաքու, 1906, «Կայծ»—1911—1914, «Ուսումնարան»—1911—1915, «Հայ ուսանող»—1910—1911, «Հայ դպրոց»—1914, Կոստանդնուպոլիս, «Լույս»—1913—1914, Վան և այլն), որոնք անմիջականորեն չեն առնչվել մեր թեմային:

Աշխատության համար սկզբնաղբյուր են եղել հայ մանկապատանեկան անցյալի մամուլի հավաքածուները, ՀՍՍՀ, ՎՍՍՀ և ՍՍՀՄ պետական կենտրոնական պատմական արխիվներում թեմայի շուրջ պահպանված որոշ նյութեր, Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում ու ՍՄԿԿ Կենտկոմին առընթեր Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական մասնաճյուղի պրադարանում պահվող աշակերտական ձեռագիր օրգանների հավաքածուները:

ՓԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՀԱՅ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ

Անցած դարի 40—60-ական թվականներից սկսած ֆեոդալիզմի քայքայման և կապիտալիստական արտադրահարաբերությունների զարգացման պայմաններում լայն թափ է ստանում լուսավորական շարժումը: Պայքարը՝ ուղղված ընդհանրապես ճորտատիրական իրավունքի ու նրա մնացուկների դեմ, տարվում է հասարակական, քաղաքական, կուլտուրական ու կրթական կյանքի բոլոր բնագավառներում: Բնութագրելով լուսավորիչ մտածողներին, Վ. Ի. Լենինը գտնում է, որ նրանք թշնամությամբ էին համակված դեպի ճորտատիրական իրավունքն ու նրա բոլոր արտահայտությունները տնտեսական, սոցիալական և իրավական բնագավառներում, և որ նրանց բնորոշ էր լուսավորության, ինքնավարության, ազատության, կյանքի եվրոպական ձևերի և առհասարակ Ռուսաստանի բազմակողմանի եվրոպականացման առանդագին պաշտպանությունը[1]:

Լուսավորական շարժումը այդ տարիներին իր վառ արտահայտությունն է գտնում նաև հայ ժողովրդի արևմտահայ և արևելահայ հատվածներում: Հայ ժողովրդի լավագույն զավակները, կրթություն ստանալով ռուսական ու արևմտաեվրոպական քաղաքակիրթ երկրներում, վերադառնում էին հայրենիք՝ լուսավորությունն ու կրթությունը աշխատավոր լայն մասսաների մեջ տարածելու, ազգային-հասարակական կյանքը դեմոկրատական հիմունքներով կազմակերպելու նպատակներով խանդավառված: Այդ սերնդի անդրանիկ ներկայացուցիչներն էին արևմտահայ իրականությունում Ն.

[1] *Տե՛ս* Վ. Ի. Լենին, *Երկերի լիակատար ժողովածու, հատ. 2, էջ 648:*

Զորայանը, Գր. Օտյանը, Ն. Ռուսինյանը, Աղաթոնյան եղբայրները և ուրիշներ։ Նրանց կողմից կյանքը արևմտաեվրոպական ձևով վերափոխելն ամենևին չէր նշանակում եվրոպական ժողովուրդների կուլտուրայի և կենցաղի ուղղակի ընդօրինակում։ Նրանք գործունեության հիմք ընդունելով «ազգը ինքը պետք է կրթի իր զավակներին» նշանաբանը, ուշադրության կենտրոնում էին պահում կուլտուր-կրթական հիմնարկների ստեղծման, ազգային կյանքի ինքնազարգացման խնդիրները։ «Ազգը լուսավորությամբ պիտի լուսավորենք...—գրում էին նրանք,—Ազգը պիտի լուսավորենք դպրոցները ծաղկեցնելով, նորանոր վարժարաններ հաստատելով, այլ և այլ ազգօգուտ հաստատություններ ընելով»[2]։

Լուսավորիչ մտավորականների նախաձեռնությամբ հիմնադրվում են Կոստանդնուպոլսում՝ «Հայկական թատերական ընկերությունը» (1857), «Բարեգործական ընկերությունը» (1860), Զմյուռնիայում՝ «Հայ ընթերցարանը» (1869) և մի շարք այլ ընկերություններ։

Դարասկզբին լուսավորական շարժման անդրանիկ ներկայացուցիչները հետևելով XVIII դարի արևմտաեվրոպական լուսավորիչ մտածողների (Դ. Դիդրո, Ժան Ժակ Ռուսսո և ուրիշներ) պատմափիլիսոփայական և մանկավարժական հայացքներին, կրթության և լուսավորության տարածման մեջ էին տեսնում սոցիալ-տնտեսական կյանքի վերափոխման և հասարակության զարգացման հիմնական երաշխիքը։ Նրանք, չհասնելով սոցիալական հակասությունների պատմական իմաստի ըմբռնմանը, կյանքի վերափոխումը կապում էին լույսի և խավարի միջև եղած ներհակության վերացման հետ։ Նրանց կարելի է վերագրել լուսավորիչ մտածողների մասին Վ. Ի. Լենինի կողմից ասված հետևյալ խոսքերը. «Լուսավորիչը հավատում է տվյալ հասարակական զարգացմանը, որովհետև չի նկատում նրան հատուկ հակասությունները»[3]։

Ազգային լուսավորության խնդիրներով տարված հայ

---

[2] «Լուսավորյալները ու լուսավորությունը», լուսապատճեն, Կոստանդնուպոլիս, 1858, էջ 6։

[3] Վ. Ի. Լենին, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 2, էջ 675։

մատավորականության ներկայացուցիչները հանդես էին գալիս դպրոցներում իշխող սխոլաստիկական ոգու մերժմամբ, դասախարակության աշխարհականացման, աշխարհաբար լեզվի զարգացման, ռեալական կրթության հաստատման պահանջներով։ Նրանցից Նիկողայոս Ջորայանը դաստիարակության բնագավառի թերություններից մեկը համարելով օրինավոր և բանիմաց ուսուցիչների պակասը, գրում է. «...որ օրեն ազգը իր վարժապետներուն թիվը շատըցնելու կնայի ու հարմար մարդիկ ձեռք բերելու համար անոնց դիտությանը ու վարքին վրայոք կարգ և կանոն կհաստատե, նույն օրեն կրնա ինքն ալ օրինավոր դաստիարակության ճամփուն մտած ըլլալու հուսալ»[4]։ Կողմնակից լինելով ռեալական կրթությանը, նա բարձրացնում է դպրոցը իրական կյանքի պահանջներին համապատասխան վերափոխելու խնդիրը, առաջարկում է աշակերտներին սովորեցնել զանազան արհեստներ։ Դպրոցներում սովորողները, ըստ նրա, պետք է ձեռք բերեն մայրենի լեզվի գրագիտություն՝ կանոնավոր, անսխալ խոսելու և գրելու, յուրացնեն որևէ բանուկ արհեստ և դառնան վարպետ այդ արհեստի գծով, դառնան հմուտ երկրագործ, վաճառական, մեքենագործ, ջուլհակ և այլն։

Ռեալական կրթության հարցերը լայնորեն քննարկվում են նաև արևելահայ մտավորականների կողմից։ Հետևելով Խ. Աբովյանի մակավարժական հայացքներին, Ստ. Նազարյանը Մոսկվայում լույս է ընծայում «Առաջին հոգեղեն կերակուր» դասագիրքը, «Հանդես նոր հայախոսության» ժողովածուն և այլ աշխատություններ, որոնցում մերժում է դասավանդման սխոլաստիկական մեթոդները և պահանջում իրականացնել դաստիարակության այն սկզբունքները, որոնք մանկանը կապում են կյանքի հետ։ Իր խմբագրած «Հյուսիսափայլ» ամսագրում Նազարյանը քննարկում է դպրոցների բարեփոխման, աշխարհիկ դաստիարակության հարցերը։ Նա գտնում է, որ մատաղ սերունդը իր կրթությունը պետք է ստանա մայրենի լեզվով և ազգային ոգով։ Ամսագրի էջերում Ստ. Նազարյանը և նրան համախոհ աշխատակիցները մշակում են

[4] Ն. Մ. Ջորայան, Նկարագիր ազգային դաստիարակության, կամ ազգային դաստիարակության գլխավոր թերությունները, Կ. Պոլիս, 1849, էջ 6։

լուսավորության տարածման իրենց ծրագիրը։ «Նազարյանը, սակայն, կարծում էր, թե լուսավորության միջոցով կարելի կլինի բարձրացնել ժողովրդի ոչ միայն մտավոր, այլև նյութական մակարդակը»[5]։

Բարձր գնահատելով Ստ. Նազարյանի լուսավորական գործունեությունը, Աշ. Հովհաննիսյանը գրում է. «Աբովյանից անմիջապես հետո Նազարյանն էր, որ ասպարեզ էր իջնում որպես ազգային լուսավորության սկզբունքների ռահվիրա։ Մասնագիտորեն պատրաստված, կուռ և շեշտված համոզմունքի ու նկարագրի տեր՝ ազգային լեզվի, դրականության, դպրոցական կրթության մարզում նա մշակեց ու առաջադրեց կղերաֆեոդալական տիրող մտայնությանը հակադրված հայացքներ, որոնք մեծաքայլ առաջադիմության հայտարար էին ռուսահայ կյանքի «եվրոպականացման», այսինքն՝ նոր կազմավորվող ռուսահայ բուրժուական հասարակության պահանջների ոգով»[6]։

Լուսավորության հարցերը «Հյուսիսափայլ» ամսագրում հեղափոխական-դեմոկրատիզմի դիրքերից է առաջադրում Միքայել Նալբանդյանը։ Նա հանդես է գալիս հասարակ, աշխատավոր ժողովրդի շահերի պաշտպանության դիրքերից և ակնհայտորեն ազգ ասելով, հասկանում է այն հասարակ ժողովուրդը, «որի վերա ծանրացել էր ազգային ապաթախտության հետևանքը»[7]։ Միքայել Նալբանդյանը պահանջում է Հայաստանի քաղաքներում և գյուղերում բացել տարրական դպրոցներ, գրագիտությունը դարձնել համատարած, տարածելով հասարակության բոլոր խավերում։ Դպրոցը նա համարում է ազգային կյանքի հեղաշրջման հիմնական միջոցներից մեկը, որը կոչված է ծառայելու հասարակ ժողովրդի կրթության, լուսավորության և ազատագրության գործին։ «...ազգային դպրոցները,— գրում է Մ. Նալբանդյանը,— պարտական են

---

[5] Մ. Հ. Մխիթարյան, «Հյուսիսափայլ» ամսագիրը, Երևան, 1958, էջ 101։

[6] Ա. Գ. Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, դիրք առաջին, Երևան, 1955, էջ 212։

[7] Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 1, Երևան, 1945, էջ 452։

բանալ մանուկների միտքը, պինդ տնկել նոցա մեջ ազգության սերմը, վառել նոցա սրտում հայության կրակը, մի խոսքով, կատարել այն ընտանեկան պարտականությունը, որ ծնողք պիտի կատարեն յուրյանց ազգի օգտի համար, և որ մնացած է երևի վերա ընտանեկան դաստիարակություն չլինելուց մեր մեջ»[8]:

1860-ական թվականներից հասարակական-քաղաքական և հատկապես մանկավարժական մամուլի էջերում մշակվում են տեսական հարցեր մանկական ընթերցանության բովանդակության և դաստիարակչական ուղղվածության վերաբերյալ: Այսպես, «Հայկական աշխարհ», «Վարժարան» մանկավարժական օրգաններում առանձին բաժիններ են հատկացվում մանկական ընթերցանությանը: Տպագրվում են մանուկներին ու պատանիներին հետաքրքրող հարցերի շուրջ փոքրածավալ դեղարվեստական նյութեր, բնության երևույթները բացատրող ու նկարագրող գեղեցիկ պատկերներ և այլն:

Անհրաժեշտ է նշել, որ այդ ժամանակաշրջանում ընդլայնվում է կապը ռուսական մանկավարժական մտքի և ընդհանրապես կուլտուրայի ու հասարակական կյանքի հետ: Հայ մամուլի էջերում տպագրվում են հոդվածներ ռուսական «Учитель», «Детский сад», «Педагогическое обозрение» և այլ պարբերականներից, որոնց միջոցով պրոպագանդվում է ռուսական և արևմտաեվրոպական մանկավարժության նոր սիստեմը: «Հայկական աշխարհում» զետեղվում է «Детскій сад» մանկավարժական ամսագրից «Խաղի նշանակությունը մանուկի կյանքում»[9] հոդվածը, որտեղ խաղը ներկայացվում է որպես մանուկների բնական զարգացման, բարոյական դաստիարակության լավագույն միջոց: Արտատպելով այս հոդվածը, հեղինակն առաջարկում է հայ իրականության մեջ նախադպրոցական դաստիարակության կազմակերպման գործում ղեկավարվել նոր սկզբունքներով և նոր մեթոդներով: «Եթե ունինք ցանկություն այս ճանապարհի վերա հաստատ քայլերով ընթանալ և այդ տրտունջներից ու դանգատներից ազատվել,— գրված է այնտեղ,— ապա հարկավոր է մեր կյան-

[8] Նույն տեղում, էջ 455:

[9] «Հայկական աշխարհ», 1869, № 10, էջ 356—362:

քի սկզբնական կրթության մեջ մի հեղափոխություն գործել, առաջնորդվելով առողջ բանականությամբ և բնության տիեզերական օրենքներով»[10]:

«Հայկական աշխարհում» քննվում են նաև մանկական գրքերի բովանդակության, արտահայտչական միջոցների վերաբերյալ հարցերը: Ամսագիրը գտնում է, որ մանկական գիրքը պետք է ձևավորված լինի գեղեցիկ, ունենա իմաստալից բովանդակություն: Ապա առաջարկվում է զգույշ լինել մանուկներին կրոնական զգացմունք ներշնչելիս, կրոնը օգտագործել միայն դաստիարակչական նպատակներով: Պահանջվում է նաև բնությունը ներկայացնել իր իսկական պատկերներով, իսկ պատմությունը՝ այնպես, ինչպես եղել է, «առանց աղավաղումների, առանց չափազանցությունների»:

Մանկական ընթերցանության նկատմամբ եղած նման հետաքրքրությունն ինքնին առաջ է քաշում մանկապատանեկան մամուլի ստեղծման անհրաժեշտության հարցը: Անդրադառնալով այդ հարցին, «Գարուն» ամսագիրը գրում է. «Այժմ ուսման գարուն է մեր ազգի համար, մեր այգիքն ավելի կծաղկեն և մեր ծառերն ավելի պտուղներ կտան, եթե աշակերտ տղայոց համար պատրաստենք ամսագրեր և լրագրեր, որ ինչպես նոքա, նույնպես կարդացող վաճառականներն ու արհեստավորներն, և առավել հոգևորականներն ստանան լուսավորության ավելի տեղեկություն, իսկ անգրագետներն ականջ դնեն կարդացողներին»[11]:

Մանուկների ու պատանիների համար տպագիր օրգաններ առաջինը երևան են գալիս արևմտահայ իրականությունում[12]: Այդ գործի հիմնադիրներն են լուսավորիչ-մտածողները: Նրանք թուրքական բռնապետության ծանր պայմաններում ազգի ինքնության պահպանման համար մղված պայ-

---

[10] Նույն տեղում, էջ 361:

[11] «Գարուն», 1866, № 1, էջ 3:

[12] Արևելահայ իրականությունում 1860—1870 թթ. լույս են տեսել միայն ձեռագիր պարբերականներ: Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի աշակերտները 1860 թ. հիմնել են «Բարեզուշակ աստղ Հայաստանի», իսկ Գևորգյան Հեմարանի աշակերտները 1875 թ.՝ «Մանրանկար օրագիր աշակերտաց Գևորգյան Հեմարանի» պարբերականները:

քարում խիստ կարևոր նշանակություն տալով մատաղ սերնդի համակողմանի դաստիարակության գործին և այդ գործում մամուլի դերին ու նշանակությանը, կազմակերպում են աշակերտական առաչին օրգանների լույս ընծայումը։ Նրանց անմիջական ղեկավարությամբ հրատարակվում են Կոստանդնուպոլսում՝ 1851 թ. «Բուրաստան ս. Սահակեան», իսկ Զմյուռնիայում՝ 1854 թ.՝ «Բութակ Հայկազեան» և 1855 թ.՝ «Երիասեր» ամսագրերը։

Կոստանդնուպոլսի Բերա թաղամասի Ս. Հռիփսիմյան և Գայանյան՝ աղջիկների, Գում-Գաբուի Պողոսյան՝ տղաների, Խասգյուղի Ներսիսյան և այլ վարժարանների հետ միասին աչքի ընկնող դեր է կատարում Սուլթան Մեճիտի և Ստեփաննոս Աղավնի պատրիարքի օրոք 1831 թ. Սամաթիա թաղամասում կառուցված Սահակյան վարժարանը[13]։ Վարժարանի տեսուչն էր Գևորգ ամիրա Երեմյանը, իսկ հոգաբարձուն՝ Անդրանիկ Փափազյանը։ Դպրոցում անցնում էին հայագիտություն, թուրքերեն, աշխարհագրություն, նկարչություն, վայելչագրություն, երաժշտություն և այլ առարկաներ։ Գործում էին նաև հատուկ արհեստանոցներ, որտեղ աշակերտները սովորում էին զանազան արհեստներ (մոմագործություն, կոշկակարություն, դերձակություն և այլն)։

Սահակյան վարժարանում սովորում էին ոչ միայն Կոստանդնուպոլսի, այլ նաև հայաշատ մյուս վայրերից եկած երեխաները[14]։ Վարժարանի ղեկավարությունը և մանկավարժական կազմը հետևելով լուսավորիչ մտածողներ Ն. Զորայանի, Ն. Ռուսինյանի և ուրիշների հայացքներին, ազգի առաջադիմության գործի իրականացումը տեսնում էին «խեղճ ու ազգին էն ետին մասին զավակները» կրթելու մեջ։ «...ազգային ընդհանուր առաջադիմութեան մը, որ կը փափագինք նէ, ասանկ ետքիններն ալ (խոսքը չունևոր ընտանիքների զավակների մասին է—Ս. Ն.) ձեռք առնելով կըլլա, ուստի ազ-

---

[13] Տե՛ս «Սամաթիոյ Սահակեան-Նունեան վարժարանները (անցյալին և ներկային)», Կ. Պոլիս, 1950, էջ 4։

[14] Սահակյան վարժարանի աչքի ընկնող սաներից է եղել նաև մոլդովահայ Պողոս Մարկոսյանը, որը բարձրագույն կրթություն է ստացել Փարիզի համալսարանում։

գասերի մըն ալ մատագրությունը ասանկ ազգային հաստատության մը վրա դյուրավ ձգուիլը իրավացի է. և մեր ալ այս բանիս գործիք ըլլալը վարձք»[15]։

Սահակյան վարժարանի ղեկավարության աջակցությամբ բարձր դասարանների սաները լույս են ընծայում աշակերտական առաջին՝ «Բուրաստան ս. Սահակեան» ամսագիրը։

«ԲՈՒՐԱՍՏԱՆ Ս. ՍԱՀԱԿԵԱՆ»
(1851—1853)

Հայ ժողովրդի ինքնագիտակցության արթնացման տարիներին «Բուրաստան ս. Սահակեան» ամսագիրը բոլորովին նոր երևույթ էր հայ իրականության մեջ։ Մինչ այդ հրատարակված մանկական սակավ գրքերի ու դասագրքերի մեջ աչքի էին ընկնում միայն Վենետիկի Մխիթարյան միաբանության կողմից 1839 թ. «Մատենագարան մանկանց» մատենաշարով աշխարհաբար լույս ընծայված պատմվածքներն ու վիպակները, ինչպես նաև մի քանի պարբերականներում մանկական ստեղծագործություններին հատկացված բաժինները։

«Բուրաստան ս. Սահակեան» ամսագիրը լայն տարածում էր գտնում հայաշատ բոլոր վայրերում։ Այն հրատարակվում էր դպրոցի լավագույն աշակերտներ Միքայել Առանձար Մարգարյանի[16], Հարություն Թյուլյանի[17] և ուրիշների ջանքերով։ Հայ պատանիների ու երիտասարդության անդրանիկ պարբերականը 1851 թ. լույս է տեսել 12 համար, իսկ 1852 թվականին՝ 5 համար և դադարել։ 1853 թ. Միքայել Մարգարյանի ջանքերով «Բուրաստան ս. Սահակեան» ամսագիրը վերահրատարակվել է, բայց լույս է տեսել ընդամենը երկու հա-

[15] «Բուրաստան ս. Սահակեան», 1851, № 3, էջ 47։

[16] Մ. Մարգարյանը ծնվել է 1832 թ., Կոստանդնուպոլսում։ Սկզբնական կրթությունն ստացել է Սահակյան վարժարանում։ Սկզբում զբաղվել է ուսուցչությամբ, ապա նվիրվել մանկավարժական և հրապարակախոսական գործունեությանը։ Մահացել է 1893 թ. Թեհրանում (տե՛ս Աբրահամ Այվազյան, Շար հայ կենսագրութեանց, հատ. III, կ. Պոլիս, 1893, էջ 218—221)։

[17] Հ. Թյուլյան (1832—1898)։ Դպրոցն ավարտելուց հետո մաթեմատիկա է դասավանդել Սահակյան վարժարանում։

մար։ Ամսագրին աշխատակցում էին ինչպես Սահակյան վարժարանի բարձր դասարանների սանները (Հարութիւն Արամ Այտնյան, Սարգիս Վահագն Շամլյանց, Սիմեոն Հայկ Ֆելեկյանց, Հովհաննես Միհրդատ Գաբրիելյանց), այնպես էլ Կոստանդնուպոլսի Ներսիսյան (Միքայել Սուրեն Սահաքճյան), Զմյուռնիայի Մեսրոպյան (Հայկ Հակոբ Տեոեյան) և այլ վարժարանների աշակերտները։

«Բուրաստան ս. Սահակեան» ամսագիրը հասցեագրված լինելով ոչ միայն Կոստանդնուպոլսի աշակերտությանը, այլև հայաշատ բոլոր վայրերի պատանիներին, նպատակ ուներ ի յուշ դնել ուսման և դաստիարակության բնագավառներում դպրոցի ձեռք բերած հաջողությունները և դրանով խրախուսել նրանց, որոնք «բան սորվելու ճամփուն չեն հետևիր»։

«Բուրաստան ս. Սահակեան» ամսագիրը իր առջև դնելով հայ զավակներին «ազգային ոգով, ճշմարիտ բարոյականությամբ և ուսումնականությամբ» դիմելու խնդիրը, ստանձնում է ժամանակի համար կարևոր մի դեր՝ պատրաստել ազգասիրությամբ, հայրենասիրությամբ, ժողովրդասիրությամբ լիանդավառված սերունդ հասարակության համար, սերունդ, որ, ինչպես Մ. Նալբանդյանն է ասել. «հյուսիսի ցրտաբեր մրրիկը կամ հարավի այրող տոթը չկարողանային չորացնել նորանից ծլելու բույսը»[18]։

Ամսագրում արծարծված գաղափարները տարածում էին գտնում «Բարոյական», «Բանասիրական», «Տնտեսական», «Ուսումնական» բաժիններում զետեղված նյութերի միջոցով։

Դժվար էր «Բարոյական» բաժնի համար նյութեր հայթայթելը։ Պատանիներին առանձին հասցեագրված գործեր չէին հրատարակվում, մամուլում տպագրված հատուկենտ մանկական ստեղծագործությունները չէին բավարարում ժամանակի պատանու հոգևոր պահանջները։ Խմբագիր-հրատարակիչները ստիպված դիմում էին թարգմանական գրականությանը, ինչպես և հայ ու այլ ժողովուրդների բանավոր ստեղծագործության հարուստ դանձարանին։ Տպագրվում էին բարոյավեպեր, զվարճավեպեր (այսպես էին անվանվում բա-

[18] Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 1, Երևան, 1945, էջ 456։

ՀԱՅԿ. ԱՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ռոյախրատական փոքրածավալ ստեղծագործությունները), առակներ և այլն։ Կարևոր նորություն էր այն, որ ստեղծագործության նյութը վերցված էր աշխատավոր ժողովրդի կյանքից, հերոսը աշխատավոր մարդն էր, իր հույզերով, իր հոգսերով ու ցանկություններով։ Այդ գործերը մեծ մասամբ կիսաերգիծական, ծիծաղաշարժ պատկերներ էին կամ ճանապարհորդական նոթեր («Բոբինճեյ իշխանին երջանկություն փնտրելու ճամփորդությունը»[19], «Պարսկաստանցի Ալիպեին արկածները»[20], «Փընչինելլո խեղկատակին խաղերը»[21] և այլն), որ ղբաղեցնում էին ընթերցողի միտքը, ուշադրությունը բևեռում դաստիարակության հիմնական խնդիրների վրա։ Այսպես, «Պարսկաստանցի Ալիպեին արկածները» բարոյավեպում (թարգմանական) գործողությունների ու պատումների հաջորդական ընթացքը ընթերցողին համոզում է, որ երջանկությունը ոչ թե հարստության, թագավորական կյանքի, այլ սեփական աղնիվ աշխատանքի, շրջապատին ու մարդկանց օգտակար լինելու մեջ է։ Միաժամանակ ցույց է տրվում, որ մարդկային բոլոր լավագույն հատկանիշները խտացված են աշխատավոր ժողովրդի մեջ։ Այստեղ հակադրվում են միմյանց աղնիվ ու արդար աշխատանքով ապրող հովիվ Ալիպեի ու պալատական մարդկանց բարոյական կերպարները։ Ալիպեն, որ հրավիրվելով թագավորական պալատ, արժանանում է թագավորի համակրանքին, շարժում է պալատականների նախանձը և ղրպարտվում նրանց կողմից։ Հիասթափված շրջապատից, խեղճ հովիվը մտաբերում է իր անցյալի պարզ ու աղնիվ կյանքը, իր համեստ տունը և երանությամբ մտաբերում. «...Օ՜հ, անմեղ ու երջանիկ կենաց սիրելի գործիքներ. ոսկի քանդակաց և հավերժական հիշատակաց արժանիներ, երանի թե իմ աչքի վիճակիս մեջ ձեզմով միայն հանգստանայի, քան թե խռովության և չարության մեջ հարստանայի»[22]։ Մեկ այլ «Բոբինճեյ իշխանին երջանկություն փնտրելու ճամ-

---

19 «Բուրաստան ս. Սահակեան», 1851, № 1, էջ 13—16, № 2, էջ 25—27։

20 «Բուրաստան ս. Սահակեան», 1851, № 5, էջ 73—76։

21 «Բուրաստան ս. Սահակեան», 1851, № 3—№12։

22 «Բուրաստան ս. Սահակեան», 1851, № 5, էջ 76։

փարդությունը» դրույցը ընթերցողին համոզում է, որ երջանկությունը մարդկանց հանդեպ ունեցած պարտքերը կատարելու մեջ է։ Լուսավորական հումանիզմը, որի համաձայն կյանքի հակասական կողմերը հնարավոր է համահարթել բարոյական քարողներով, ինքնակատարելագործման միջոցով, այս պատկերում գտնում է իր փայլուն արտահայտությունը։

Պատանի խմբագիր-հրատարակիչները երբեմն դիմում էին բարոյախրատական անմիջական խոսքի օգնությանը։ Այսպես, օրինակ, պատանիների մեջ աշխատասիրություն մշակելու նպատակով նրանք գրում էին. «Տղաք ալ լավ գիտնալու են, որ ուսմունք ու գիտություն ըսվածը առանց աշխատանքի չի կըրնալ ըլլալ, չանալու են, որ ծուլության չար սխալը իրենց սրտերնուն խլեն ու փրցունեն և անոր տեղ աշխատությունը հանձն առնուն», կամ «Երանի թե պատանիք և երիտասարդք մտաց մշակության հարգը և օգուտը լավ ճանչընային և իրենց վրա թագավորյալ մոլի կիրքերը կապելու և սանձելու կարողություն ունենային, միանգամայն հիշելով, թե ուսումնասիրության և կրթության եկող անձ մը բոլոր կենաց ձանձրություններն, թշվառություններն և մոլուխենե ազատ կը մնա»[23]։

Կրոնական դոգմանները չէին, որ որոշում էին ամսագրի բարոյախոսական ուղեգիծը։ Ընդհակառակը, այստեղ ժխտվում էին կրոնաբարոյախոսական դաստիարակության հնացած մեթոդները։ Ամսագիրը գտնում էր, որ ամենևին չպետք է ապավինել Աստծուն, «որովհետև մարդու երջանկությունն ալ, թշվառությունն ալ իր ձեռքն է»[24]։

Գեղարվեստական ընթերցանության լավագույն նյութեր էին ներկայացնում ազգ-հեքիաթները, առակները, հայրենասիրական բանաստեղծությունները ու ռամկական երգերը։ Ազգ-հեքիաթներում ու առակներում նշավակվում էին մարդկային փոխհարաբերություններում տեղ գտած արատավոր կողմերը, բնավորության վատ հատկանիշները։ «Ագահությունը մարդուս չարիք հասցնելով, ունեցածին ալ վնաս կը-

---

[23] «Բուրաստան ս. Սահակեան», 1851, № 4, էջ 59։

[24] «Բուրաստան ս. Սահակեան», 1851, № 1, էջ 10։

բերի»[25] ղրույց-հեքիաթում ցույց էր տրվում, թե ժլատությունը ինչպիսի խղճալի վիճակների մեջ կարող էր գցել մարդուն: Կարկատած մաշիկները ամեն անգամ անախորժություն էին պատճառում վաճառական Քասիմին: Այդ ղրույցը, «Աբու Հասանի մաշիկները» վերնագրով, հետագայում մշակվել է մանկական գրողների կողմից, զարդարել հայ մանկապատանեկան մամուլի («Բուրաստան մանկանց», «Հասկեր» և այլն) էջերը:

Ղրույց-հեքիաթների հետ մեծ տեղ էին գրավում եղոպոսյան սյուժեներով գրված առակները, որոնք հիմնականում բարոյական բարձր հատկանիշներ էին սերմանում մանուկների ու պատանիների մեջ: Յուրաքանչյուր առակի բարոյախրատական իմաստը արտահայտվում էր անմիջապես վերնագրի մեջ, այսպես, «Գայլ և ոչխար, կամ նենգավորեն պետք է զգույշ կենալ»[26], «Երկու գայլ և մեղուք, կամ որ-չափ տաքնաս չի համբերես, միշտ վնասը քեզի կբնես»[27] և այլն:

Ամսագրի շուրջ համախմբված աշակերտներն իրենց ցանկությունները ու վառ իղձերն արտահայտում էին նաև բանաստեղծությունների միջոցով: Նրանց ջերմ փափագն էր՝ հայրենիքը տեսնել ազատ և հայրենակարոտ որդիներին՝ հայրենի հարկի տակ.

Բաց քու մայրենի թևերդ խանդաղատ
Ընդունե սիրով քու որդիդ ազատ,
Որ թևև բյուրավոր տապարեզներով
Հեռու են քենե, բայց միշտ հարազատ[28]:

Անհրաժեշտ է նշել այն հանգամանքը, որ ընթերցանության նյութ ընտրելիս ամսագիրը նկատի էր առնում ընթերցողների տարիքային առանձնահատկությունները: «Մեր կողմանե կխոստանանք,— գրված էր այնտեղ,— Բուրաստանս քիչ կամ շատ ընթերցողաց ավելի փափագելի ընել ջանալու և ուսումնասիրության արծարծին գրգիռ մը տալու, ամեն հա-

---

[25] «Բուրաստան ս. Սահակեան», 1851, № 8, էջ 121—124:

[26] «Բուրաստան ս. Սահակեան», 1851, № 9, էջ 140—141:

[27] «Բուրաստան ս. Սահակեան», 1852, № 2, էջ 24—25:

[28] «Բուրաստան ս. Սահակեան», 1851, № 3, էջ 51:

սակին հաճոյիցը ծառայելու պատրաստելով»[29]: Դպրոցական բարձր տարիքի երեխաների համար տպագրվում էին կենսագրական, ճանապարհորդական ակնարկներ («Թովմաս Ինկըլֆիլտ»[30], «Ռուս ճանապարհորդի մը Ամերիկայի մեջ պատահած արկածները»[31] և այլն), նախադպրոցական տարիքի երեխաների համար՝ բնության երևույթների բացատրությանը նվիրված մանկական ոտանավորներ («Գարուն», «Մայիս» և այլն):

Պատանի խմբագիր-հրատարակիչները լուսավորիչ մտածողների նման ազգային կյանքի ընդհանուր առաջադիմության մեջ էին դնում սոցիալական տարբեր շերտերի իրավահավասարության երաշխիքը: Ուստի, կուլտուրական, լուսավորական ընկերությունների երևան գալը նրանց ենթադրել էր տալիս, թե «Աստիճանի խտրությունները իսպառ մոռցուեցան, ամենքն մեկ հայրենեաց և մեկ նախահոր հարազատ զավակներ, որով և եղբայրներ ըլլալնիս միմիայն սկզբունք ճանչցուեցավ, թե եկեղեցանք, թե ազգապետք, թե միջինք և ստորնականք ամեն մարդ իր աստիճանը ճանչցած և անոր համեմատ ազգասիրական սիրով մը միավորված առհասարակ ամենուն բերնեն կլսվի ազգասիրություն և հայրենասիրություն, առհասարակ գովելի փույթ մը և աշխույժ հոգատարություն մը կը տեսնվի ուսումնասիրության, ընկերության և ազգօգուտ հաստատություններուն հաստատուն և կանոնավոր բարեհաջող ընթացքին վրա»[32]:

Խմբագիր-հրատարակիչները կյանքի վերափոխման վերաբերյալ ունենալով սահմանափակ հայացքներ, հույսեր էին կապում հարուստ ամիրաների բարեգործությունների հետ: Եվ պատահական չէր, որ ամսագրի էջերում տեղ էին գրավում նաև բարերար ամիրաներին նվիրված ձոներ, որոնք գրված էին գրաբարախառն լեզվով: Այսպես, Սահակյան վարժարանի տեսուչ Գևորգ ամիրա Երեմյանին նվիրված ձոնում դովա-

---

[29] «Բուրաստան ս. Սահակեան», 1852, № 1, էջ 3:

[30] «Բուրաստան ս. Սահակեան», 1851, № 9, էջ 141—142:

[31] «Բուրաստան ս. Սահակեան», 1852, № 3, էջ 60:

[32] «Բուրաստան ս. Սահակեան», 1851, № 3, էջ 45:

բանվում էր տեսուչը, որի միջոցներով պահպանվում էր դրպրոցը և լույս էր ընծայվում ամսագիրը։

Ուշագրավ է այն, որ ամսագիրը հանդես էր գալիս սխոլաստիկական հին դաստիարակության մեթոդների դեմ և պաշտպանում ռեալական կրթության նոր սիստեմը։ Այդ մասին են վկայում ամսագրի էջերում բնական դիտելիքների և նորագույն գյուտերի վերաբերյալ տպագրված հոդվածները («Աստղաբաշխական», «Աշխարհագրական», «Բնապատմություն» և այլն)։

Ամսագիրը միաժամանակ հանդես էր գալիս եկեղեցական հնացած օրենքների, մի շարք ծիսակատարությունների քննադատությամբ։ Քննադատվում էր կաղանդի ծիսակատարությունը և խրախուսվում այդ ծիսակատարության վերացումը Սահակյան վարժարանում։

«Բուրաստան ս. Սահակեան» ամսագիրը լուսավորական դեմոկրատիզմի դիրքերից ելնելով, իր հնարավորություններից սահմաններում մասնակցում էր տգիտության, հետամնացության դեմ սկսված այն շարժմանը, որով, ինչպես Գ. Ստեփանյանն է գրում, «Փաստորեն 40-ական թվականների կեսերից նկատելի չափով վերջ է տրվում կղերաավատական գաղափարախոսության բացարձակ թելադրանքին արևմտահայ մշակույթի վրա, գաղափարախոսություն, որը գալիս էր հարուստ ամիրաների ու նրանց կամակատար պատրիարքի միջոցով։ Այդ շրջանից տեսնում ենք պոլսահայ մշակույթի վրա առաջավոր, լուսավորական գաղափարախոսության որոշակի ուժեղացում»[33]։

Աշակերտական առաջին պարբերականը գաղափարական բովանդակությամբ, դաստիարակչական նպատակասլացությամբ կարևոր դեր է խաղում մատաղ սերնդի հոգևոր կերպարի ձևավորման գործում։ Այդ իսկ պատճառով այն բարձր գնահատականի է արժանանում մամուլի և առանձին մտավորականների կողմից։ Գր. Գալեմքեարյանը հայ մանկական անդրանիկ պարբերականի մասին գրում է. «Եվ պետք է ըսել,

---

[33] Գ. Ս. Ստեփանյան, *Ուրվագիծ արևմտահայ թատրոնի պատմության*, հատ. 1, Երևան, 1962, էջ 34։

որ իրեն դծած սահմանին մեջ ըստ բավականի կատարեալ էր և հաճոյ ժամանակակցաց»[34]: Իսկ Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ Ռափայել գիտնական վարդապետը իր բերկրանքն է հայտնում ամսագրի խմբագրությանն ուղղած նամակում. «Տեսաք զ Բուրաստան և յոյժ գովեցաք զջան վաստակավորացն և զբազմերախտ վերակացուի նոցա և զկատարելություն տպագրուենն»[35]:

1851 թ. Թիֆլիսի «Արարատ» շաբաթաթերթը յուրովի է դնահատում ամսագրի դերը, գրելով. «Սուրբ Սահակեան դպրոցի հաստնացեալ աշակերտաց աշխատություննն կարող է արդարացուցանել ազգի ակնկալությունն: Բուրաստանն խոստանում է ոչ միայն անուշահոտ ծաղկունքներու փնջերով զարդարել Հայոց ազգի գլուխը, որպես անթառամ դափնիներով, այլև քաղցրահամ պտուղներու առատութեամբ յագեցուցանել՝ հոգամաշ քաղցու նըթեալ Հայկազանց...:

Թող յուրաքանչյուր Հայրենասեր մեկ մեկ հատ ունենան այդ Բուրաստանեն և յուրյանց զավակաց ասեն, թե ահա ձեզ նման մանկանց երկասիրություն է, բայց նոքա միայն հասակավ են ձեզ նման, մանկունք՝ տիոլք և կատարեալք՝ իմաստությամբ»[36]:

«Բուրաստան ս. Սահակեան» ամսագիրը, որ կոչված էր ազգօգուտ գործի համար, բավարար թվով բաժանորդներ և նյութական միջոցներ չունենալու հետևանքով 1853 թ. դադարում է լույս տեսնելուց: «Այսպես, առաջին տարին ամբողջ հրատարակեցավ ըստ կարգի: Բ. տարվոյն՝ 1852-ին սկիզբն հարկ եղավ երկայն ատեն լռել...: Սակայն բաժանորդաց սակավությունը կը ստիպեր այս Բ. տարին անկատար թողուլ, և 1853-ին, փետրվարին քանի մը թիվ ալ հրատարակեցավ: Նույն տարվոյ հոկտեմբերին արդեն ի սպառ դադրած էր»[37]:

---

[34] «Հանդես ամսօրեա», 1889, № 5, էջ 88:

[35] «Բուրաստան ս. Սահակեան», 1851, № 4, էջ 67:

[36] «Արարատ», 1850, № 27, էջ 419:

[37] «Հանդես ամսօրեա», 1889, № 5, էջ 88:

«ԹՈՒԹԱԿ ՀԱՅԿԱԶԵԱՆ»
(1854—1855)

Կոստանդնուպոլսի ս. Սահակյան վարժարանի աշակերտների օրինակին են հետևում Զմյուռնիայի վարժարանի տանտերը: 1854 թ. նրանք լույս են ընծայում «Թութակ Հայկազեան» աշակերտական ամսագիրը:

Կոստանդնուպոլսից հետո Զմյուռնիան արևմտահայ ժողովրդի մշակութային երկրորդ խոշոր կենտրոնն էր: Այստեղ էր գործում նշանավոր կրթական օջախներից մեկը՝ Մեսրոպյան վարժարանը: Հայտնի է, որ 1799 թ. Ապրոյան ընտանիքի անդամներն իրենց փայտաշեն տունը նվիրելով ազգին, վեր են ածել վարժարանի: Ինչպես Վ. Քոսյանն է գրում. «Տգիտութեան հարված մը տվող և ազգը լուսավորող ս. Մեսրոպայ երիցս օրհնեալ անմոռաց անունը կը տրվի այս առաջին վարժարանին և կը հանձնվին անոր հովանվոյն շենքն ու մանկտին 1799-ին»[38]: Մինչ այդ Զմյուռնիայում վարժարանի առանձին շենք գոյություն չէր ունեցել: Եղել էին տնային վարժոցներ, ուր սովորել էին միայն հարուստ ծնողների զավակները: Մեսրոպյան վարժարանը Զմյուռնիայի առաջին վարժարանն է, որի համար 1825 թ. կառուցվում է երկհարկանի նոր շենք: Նորաշեն դպրոցի առաջին ուսուցիչն է դառնում Հովհան Վանանդեցին: «Վանանդեցին յոթն ութ տարի կը վարե այս պաշտոնը, իր ժամանակը վարժարանը մեծ անուն կունենայ ի մասնավորի հայկաբանութեան և կրոնագիտութեան նյութերուն մեջ: Իրեն կը հաջորդե Անդրեաս վարժապետ Փափազեան»[39]:

Վարժարանում զգալի բարեփոխություններ են մտցվում Անդրեաս Փափազյանի օրոք: 1831 թ. նշանակվելով Մեսրոպյան վարժարանի հայոց և իտալերեն լեզուների ուսուցիչ և վերատեսուչ, նա աշխատում է բարձր հիմքերի վրա դնել հայոց և օտար լեզուների ուսուցման գործը: Եվ կարճ ժամանակում նրան այդ հաջողվում է: «Բազմավեպում» կարդում

---

[36] Տե՛ս Հ. Հակոբ Վ. Քոսեան, Հայք ի Զմյուռնիա և ի շրջակայս, հատ. Ա., Վիեննա, 1899, էջ 117—118:

[39] Նույն տեղում, էջ 119:

ենք. «Մխիթարեան վարժարանին մէջ, ամեն բաներն ավելի մեծ փույթ ունին հայերենը ծաղկեցնելու, քան կսովրին նաև դաղիերեն, իտալերեն, աշխարհաբար հունարեն, անգլերեն ու տաճկերեն»[40]: Եվ թեև այդ տարիներին ֆրանսերեն լեզուն «անհավատության, վոլտեր ըսել էր» համարվում, այնուհանդերձ դասավանդվում էր վարժարանում: Փափազյանը ձգտում էր դպրոցում մտցնել աշխարհաբար հայերենի ուսուցումը, սակայն նման նորամուծությունները դուր չէին գալիս կղերամիտ և հետադեմ հոգաբարձուներին: «...այլ եթե երբեք աշխարհաբար դասագիրք մտցնեմ դպրոցի մեջ,—գրում է նա,—փորձանք պիտի հանեմ գլուխս, գիս պիտի ելնեն հալածեն իբր բողոքական»[41]: Այնուամենայնիվ, Փափազյանը մասնակցում է մի շարք գրքերի աշխարհաբար թարգմանությանը, օգտակար դեր կատարում աշխարհաբար լեզվի տարածման գործում: Նա վարժարանում ուսուցման դրվածքը բարելավելու նպատակով սահմանում է աշակերտների տարեվերջի քննությունները, կազմակերպում մրցանակաբաշխություններ և այլն: Միաժամանակ բավական աշխատանք է կատարում ֆիզիկական դաստիարակության կազմակերպման ուղղությամբ: Նրա ջանքերով վարժարանում ավելացվում է ընդմիջման ժամը և աշակերտներին թույլ է տրվում խաղալու պարտեզում: Աշակերտների ուժերով, նրա ղեկավարությամբ վարժարանում կազմակերպվում են թատերական ներկայացումներ: Ուստի և դուր չէ, որ Անդրեաս Փափազյանի տեսչության շրջանը համարվում է «ոսկեդար» Մխիթարյան վարժարանի համար: Անդրեաս Փափազյանի օրոք հազվագյուտ ձեռագրերով հարստացվում է դպրոցի թանգարանը: Այստեղ էր պահվում 1695 թվականին Ամստերդամում տպագրված «Համառարած աշխարհացույցի» մեկ օրինակը:

1855 թ. վարժարանի հոգաբարձությունը սահմանափակում է Փափազյան-տեսչի իրավունքները: Այդ հանգամանքը ստիպում է նրան 1856 թվականի ապրիլի 6-ից թողնել վարժարանը: Որոշ ժամանակ նա զբաղվում է մասնավոր դասերով: 1857 թ. նորընտիր հոգաբարձությունը գնահատելով

[40] «Բազմավեպ», 1847, № 2, էջ 28:

[41] «Արևելյան մամուլ», 1894, № 13, էջ 406:

Փափազյանի ծառայությունները, վերականգնում է նրա իրավունքները: Նա նորից նշանակվում է դպրոցի տեսուչ, սակայն նույն թվականին էլ կաթված է ստանում և 52 տարեկան հասակում մահանում: Վաստակաշատ տեսչի անունը ջերմությամբ է մնում աշակերտների հիշողության մեջ: Աշակերտներից Մեսրոպ Նուպարյանը «Արևելյան մամուլում» տպագրած իր «Իմ մանկական հիշատակներես» ուշագրավ հոդվածաշարում գրում է. «Խիստ դովելի դաստիարակ մը էր Անդրեաս, որ ամեն կարելի եռանդով ծառայած է Ս. Մեսրոպեան վարժարանի, իր բոլոր շունչն ու կյանքը նվիրելով անոր փառաց, և իր բոլոր ուժն ու գործունեությունն՝ անոր օգտին ու առաջադիմության»[42]: Նույն Նուպարյանի վկայությամբ «Անդրեաս վարժապետի ավանդած դասերու ամենն ամուլը քրիստոնեականն էր: Ամենևին բան չէինք հասկնար այդ ուսումէ, որ զմեզ ոչ ճշմարիտ և ոչ բանգետ քրիստոնյա մը ընելու պիտի ծառայեր»[43]: Անդրեաս Փափազյանը սկիզբ է դնում սխոլաստիկական դաստիարակության հնացած ձևերի դեմ մղած պայքարին, հանդիսանալով նոր մանկավարժության նախակարապետը արևմտահայ իրականությունում:

Մեսրոպյան վարժարանի դերը սերունդների կրթության գործում բարձր է գնահատվել ժամանակին: Գաբրիել Պատկանյանը գրել է. «միայն Իզմիրու մեջ է այն ազգային վարժատունն, ուստի յառաջացեալ են և տակավին յառաջանում են, և այսուհետև ևս պիտի յառաջանան ուսումնասեր Հայք, լեզվագետ Հայք, իմաստասեր Հայք,... ազգասեր Հայք և ընդհանրապես երկու աչք լուսավորյալ Հայք»[44]: Աշ. Հովհաննիսյանն անդրադառնալով վարժարանի դերի գնահատմանը, նշում է, որ այն առաջինը մտցրեց աշխարհաբարը որպես դասավանդության պաշտոնական լեզու և առաջինը կենսագործեց ազգային լուսավորության նոր սկզբունքները[45]:

Անդրեաս Փափազյանի անմիջական օգնությամբ վարժա-

---

[42] «Արևելյան մամուլ», 1894, № 13, էջ 405:

[43] «Արևելյան մամուլ», 1894, № 18, էջ 579:

[44] «Արարատ», 1850, № 13, էջ 206:

[45] Տե՛ս Ա. Գ. Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, գիրք առաջին, Երևան, 1955, էջ 304:

բանի սանները հիմնում են «մանկական տպարաններ» և հրատարակում «Թութակ Հայկազեան» ու «Երկասեր» ամսագրերը։ Այդ առթիվ Արշակ Ալպոյաճյանը գրում է. «Այսպես, հիսունական և վաթսունական թվականներուն Իզմիրի հայութիւնը ականատես կըլլա համաշխարհական տպագրութեան պատմութեան մեջ թերևս չտեսնված երևույթի մը։ Դպրոցական պատանիներ, հազիվ կյանքի գարունը ողջունած, իրենց անփորձ գրիչովը, հայրենասիրական նպատակներով ասպարեզ կնետվեին»[46]։ Իսկ վարժարանի սաներից Մեսրոպ Նուպարյանը իր հիշողություններում գրում է. «Ի՞նչ ուսումնասեր եռանդ մը էր այն, որ կը տիրեր դպրոցէ դուրս և ներս։ Մեսրոպյան վարժարանի աշակերտներն երկու խումբ՝ տղայհասակէ տպարան կը հաստատեին և թերթ կը խմբագրեին Անդրեասյ պաշտպան հովանիի տակ։ Առաջին խումբը տարիէ մը հետո իր հատուկ տպարանն «Թութակ» կը հրատարակեր, երբ երկրորդ խումբը, որու մեջ «Մանկական հիշատակներու» հեղինակն ալ կը գտնվեր, հրատարակեց «Երկասերը», այն ևս իր առանձին տպարանին մեջ, իբր մրցորդ «Թութակի»[47]։ Այդ տպարաններում իհարկե, չեն եղել տպագրական անհրաժեշտ սարքեր, գործիքներ։ «Թութակի» և «Երկասերի» տպարաններ, որ կըսենք,—գրում է Մեսրոպ Նուպարյանը,—որևէ պատրանք պետք չէ ազդեն ընթերցողներուն մտքին մեջ։ Դպրոցականներէ հիմնված անշուք և ամենախեղճ հաստատություններ էին անոնք, որևէ տան մը որևէ նետված սենեկի մեջ և հազիվ տպարանի մը երևույթը կընծայեին այցելուի աչքին։ Իսկ անոնց վերբերական մամուլները...։ Երևակայեցեք վաճառատանց մեջ տեսնված երկաթե մամլակը նամակներու նամահանության հատկացած...»[48]։ Արշակ Ալպոյաճյանն իր «Զմյուռնիո տպարանները» հոդվածում գրել է. «Անդրեաս վարժապետի աշակերտները՝ նույնիսկ դպրոցական գրասեղաններեն լրագրող ըլլալու իղձեր ցույց կուտան...»[49]։

---

46 «Պատմա-բանասիրական հանդես», 1964, № 2, էջ 80։

47 «Արևելյան մամուլ», 1894, № 22, էջ 703։

48 Նույն տեղում, էջ 703—704։

49 «Պատմա-բանասիրական հանդես», 1964, № 2, էջ 79։

«Բուբակ Հայկազեան» ամսագրի բովանդակության և դաստիարակչական ուղղության մասին ընդհանուր պատկերացում են տալիս Երևանի հանրապետական գրադարանում պահվող 1855 թ. 3-րդ և 5-րդ համարների լուսապատճենները[50], որոնց բնագրերը պահպանվում են Վիեննայի Մխիթարյանների մատենադարանում:

«Բուբակ Հայկազեան» ամսագիրը խմբագրում և հրատարակում էին վարժարանի բարձր դասարանների աշակերտները: «Հրատարակիչք և տեարք օրագրոյս,— գրված է ամսագրում,— Պերճ Ալեխս. Հայկ Սարգիս Տ. Ալեխսեան, Զարեհ, Գալուստ. Հակոբ. Սիմոնաքեան: Աշակերտք Մեսրոպեան վարժարանի»[51]: Ամսագրին աշխատակցում էին Ս. Գալստյանը, Գ. Կոստանդյանը, Մըսըր Մսըրյանը և ուրիշներ:

Ամսագրում «Բարոյական», «Բանասիրական», «Ուսումնական» բաժիններին ավելացվում է «Զվարճալիք» բաժինը, որտեղ տպագրվում են կիսաերգիծական բնույթի նյութեր: Ուշագրավ նորություն էր այն, որ «Բարոյական» և «Զվարճալիք» բաժիններում դեռևս մարդու իրավազուրկ ու անարգված վիճակը ներկայացնող պատկերներ: Որպես օրինակ կարելի է բերել «Հնդկաստանցի իշխանի մը ապերախտությունը»[52] պրույցը: Սրաբ գերին փրկում է իշխանի կյանքը, ազատում նրան խեղդվելուց: Իշխանը փոխանակ շնորհակալ լինելու, հարձակվում է խեղճ գերու վրա և գոռում. «Անօրեն, ինչպե՞ս համարձակեցար քու անարժան ձեռքդ իմ օրհնյալ գլխուս վրայ դնելու» և հրամայում է իսկույն գլխատել գերուն:

---

[50] Այդ համարների միկրոֆիլմերը ձեռք է բերել Մինաս Հակոբյանը և դրանց լուսանկարչական պատճենները տրամադրել Երևանի Ալ. Մյասնիկյանի անվան հանրապետական գրադարանին:

[51] Հ. Գ. Գալեմքեարյանի «Պատմություն հայ լրագրության» գրքում (էջ 143) «Բուբակ Հայկազեան» ամսագրի հրատարակիչն է համարվում Տ. Վրթանեսը: Ինչպես Ա. Ալպոյաճյանն է վկայում, նա «Բուբակի» խմբագրին շփոթել է «Բզնիկի» խմբագիր Գ. Պալյանի հետ, որը քահանա ձեռնադրվելուց հետո Տ. Վրթանես անունն է կրել (տե՛ս «Պատմա-բանասիրական Հանդես», 1964, № 2, էջ 80):

[52] «Բուբակ Հայկազեան», 1855, № 5, էջ 80:

Մի այլ պատկերում («Սամուելեն պատկեր կը ծախուն»[53]) ցույց է տրվում, որ ազնվությունը, համեստությունը, աշխատանքը երջանկություն են բերում, իսկ հարստությունն ու փառասիրությունը՝ դժբախտություն: Աղքատ Սամուելեն նրկարշի համբավ ու հարստություն ձեռք բերելուց հետո դառնում է հարբեցող, փողը նրան կործանման է հասցնում և նա, որ «օրվան հացին կարոտ էր, որկրամոլութենեն մեռավ»: Ուշագրավ է այն, որ բարոյախրատական գրույցների թեմանները վերցված են հիմնականում ժողովրդական բանավոր ստեղծագործության հարուստ դանձարանից: Այսպես, «Ակամա աստղաբաշխը»[54] գրույցը հիշեցնում է «Ոսկե ձկնիկը» ժողովրդական հեքիաթը, ներկայացնելով այդ հեքիաթի մի այլ տարբերակը: Մարդկային լավագույն հատկանիշներով օժտված համեստ հնակարկատ Ահմետը ստիպված կատարում է փառամոլ կնոջ բոլոր քմահաճույքները: Նա ամեն անգամ ընկնում է դժվարին կացության մեջ և ցուցաբերելով արդարամտություն ու հնարամտություն, դուրս է գալիս ծանր իրավիճակից: Գրվածքի լեզուն պարզ է, ոճը մատչելի: Այն ընթերցողի մեջ առաջացնում է սեր ու համակրանք ազնիվ հնակարկատի նկատմամբ:

Ամսագրի էջերում տպագրված պատկերներում հերոսները իրական մարդիկ են, իրենց լավ ու բարի արարքներով:

Առավել դաստիարակչական նշանակություն և ճանաչողական արժեք ունեն պատմականագրական ակնարկները՝ գրված պատմական դեմքերի (Հուլիոս Կեսար, Ալեքսանդր Մակեդոնացի, Պետրոս Ա և ուրիշներ) կյանքի մասին: «Աշխարհիս մեջ եղած երևելի մարդկանց երիտասարդութեան ժամանակը»[55] խորագիրը կրող այդ ակնարկների հիմնական նպատակն էր՝ կամք և տոկունություն դաստիարակել հայ մատաղ սերնդի մեջ: Ակնարկների մեծ մասը թարգմանված էր հունարենից: Թարգմանությունները կատարում էին վարժարանի աշակերտները (Կ. Յար. Սիմոնաքյան և ուրիշներ): Մեսրոպյան վարժարանի սանները տիրապետում էին ինչպես

---

[53] «Թութակ Հայկազեան», 1855, № 5, էջ 74—77:

[54] Նույն տեղում, էջ 69—73:

[55] «Թութակ Հայկազեան», 1855, № 3, էջ 33—35:

Հունարեն, այնպես էլ անգլերեն և այլ լեզուների։ Օտար լեզուների հետ միասին, նրանք առավել լրջորեն ուսումնասիրում էին մայրենի լեզուն։ Ամսագրում տպագրված մի շարք բանաստեղծություններ հորդորում էին պատանիներին՝ սովորել և սիրել մայրենի լեզուն։

Մենք որ քաջն Հայկայ՝ պայծառ անունէն հայ անուանեցանք
Անորմէն սորված երկնաձիր լեզուին՝ յարգը քաջ ճանչնանք[56]։

Ամսագրի էջերը պարունակում էին նաև ժամանցի հետաքրքրքրական նյութեր, որոնք վերնագրված էին «Զվարճալիք» բաժնում։ Սիծաղաշարժ պատկերների միջոցով խարազանվում էին մարդկային փոխհարաբերություններում տեղ գտած անարդարացի երևույթները («Զի և էշ»[57], «Սուլել»[58] և այլն)։ «Սուլել» պատկերում հարուստ աղան իր հաճույքի համար ստիպում է խեղճ գյուղացուն սուլել այնպես, ինչպես ուխարի հոտը կանչելիս։ Գյուղացին կամաց է սուլում։ Աղան ստիպում է նրան բարձր սուլել։ Համբերությունը հատած գյուղացին ստիպված պատասխանում է. «Երբ որ անասունները մոտիկ կը ըլլան նէ՝ ասանկ կամաց կսուլենք»։ Այս և նման բնույթի պատկերները պատանի ընթերցողների մոտ անպայման առաջացնում են ատելություն կյանքի տերերի նկատմամբ և կարեկցանք՝ աշխատավորության հանդեպ։ Գրական այս պատկերների շնորհիվ դաղափար ենք կազմում ամսագրի դաստիարակչական ուղղվածության և դեմոկրատական ավանդույթների մասին։

«Թութակ Հայկազեանը» կարճ կյանք է ունեցել։ Բաժանորդների սակավության և նյութական միջոցների պակասության պատճառներով 1855 թ. սկզբներին փակվել է։

Վերը նշվեց, որ Անդրեաս Փափազյանի անմիջական օգնությամբ Մեսրոպյան վարժարանի սանները «Թութակ Հայկազեանից» բացի, 1855 թ. լույս են ընծայել նաև «Երկասեր»

---

56 «Թութակ Հայկազեան», 1855, № 5, էջ 68։

57 «Թութակ Հայկազեան», 1855, № 3, էջ 47։

58 Նույն տեղում։

անունով աշակերտական ամսագիրը[59]: Հայտնի է, որ «Երկասեր» հրատարակման և տարածման գործին ակտիվ մասնակցություն է ցույց տվել Կոստանդնուպոլսի հայ մեծատուններից մեկի որդին՝ Իլիաս Զայանը, իսկ Մեսրոպ Նուպարյանը աշխատակցել է «Երկասերին»[60]: «Երկասերը» ունեցել է հետևյալ բաժինները. «Բանասիրական», «Բնական», «Ուսումնական», «Զվարճալիք», «Հանելուկներ»: «Բանասիրական» բաժնում զետեղվել են հետաքրքրական պատմություններ, բանաստեղծություններ: Բարոյախրատական բնույթի այս պատմություններին բնորոշ է եղել դեմոկրատիզմը: Սակայն պետք է նշել, որ նյութերի մեծ մասի գաղափարական բովանդակությունը կազմել է քրիստոնեական բարոյախոսությունը: Մի շարք նյութեր թարգմանաբար վերցված են հունական դիցաբանությունից: Ինչպես նկատվում է, «Երկասերը» թե՛ արտաքին ձևավորմամբ, թե՛ գաղափարական բովանդակությամբ նման է եղել «Բուբակ Հայկազեանին»: «Երկասերի» համարները նույնպես տպագրվել են աշակերտների ուժերով և մեծ դժվարությամբ: Հայտնի չէ, թե ովքեր են եղել ամսագրի փաստական խմբագիրները: Մեսրոպ Նուպարյանը իր հիշողություններում նշում է, որ «Երկասերը» ուներ մի քանի տասնյակ բաժանորդներ:

Մեսրոպյան վարժարանի աշակերտները հրատարակել են նաև «Բողբոջ» անունով ամսագիրը (1860), որի համարները սակայն մեր ձեռքը չեն ընկել:

Ինչպես վկայում են վերը հիշված փաստերը, աշակերտական այս պարբերականները ժամանակին աշխարհաբար լեզվով ընթերցանության հետաքրքիր ու մատչելի նյութ են մատուցել պատանի ընթերցողներին, նպաստելով նրանց կրթական մակարդակի բարձրացման գործին:

---

[59] «Երկասերի» 1855 թ. I, II և VII համարների լուսապատճենները Միքայել Հակոբյանը ստացել է Փարիզի Նուպարյան մատենադարանից:

[60] Տե՛ս Մ. Հակոբյան, Հայկական մանկական մամուլի առաջին օրգանները, «Պատմա-բանասիրական հանդես», 1963, № 1, էջ 270:

Աշակերտական այս առաջին օրգանները պատանի ընթերցողների մեջ սերմանելով ազգային հպարտության ոգին, ծանոթացնելով հարազատ ժողովրդի նախնիների հերոսական, հայրենասիրական գործերին, վառ են պահել նրանց մեջ հայրենիքի սերը, արթնացրել ազգային արժանապատվության զգացումը: Մյուս կողմից այս օրգանները իրենց էջերում մշակել են մանկական մամուլի այն հիմնական սկզբունքները (նյութերի մատուցման ձևերի ու բովանդակության տեսակետից), որոնք նախանշել են հայ մանկապատանեկան մամուլի զարգացման հիմնական ուղեգիծը:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ 1870—1900 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

XIX դարի 70-ական թվականներից սկսած զարգացման նոր թափ է ստանում հայ ժողովրդի ազգային կրթական շարժումը։ Գործունեության ասպարեզ են մտնում ռուս և արևմտաեվրոպական քաղաքակիրթ երկրներում մասնագիտական կրթություն ստացած հմուտ մանկավարժներ (Ա.ռ. Բահաթրյան, Սոֆ. Բաբայան, Հովհ. Տեր-Միրաքյան, Մ. Մամուրյան և ուրիշներ)։ Հայ ժողովրդի թե՛ արևելահայ, և թե՛ արևմտահայ հատվածներում հիմնվում են կուլտուր-կրթական նոր օջախներ, ընկերություններ։ Այսպես, արևմտահայ իրականությունում սկսում են գործել «Դպրոցասեր տիկնաց», «Դպրոցասիրաց-արևելյան», «Կիլիկյան» և այլ ընկերություններ։ Հասարակական-քաղաքական պարբերականների կողքին երևան են գալիս մանկավարժական մասնագիտացված ամսագրեր ու շաբաթաթերթեր (արևելահայ իրականությունում՝ «Դաստիարակ», 1873, «Դպրոց», 1874, «Մանկավարժական թերթ», 1878, «Վարժարան», 1882, «Մանկավարժանոց», 1884 և այլն, արևմտահայ իրականությունում՝ «Լույս», 1874 և այլն)։ Ընդհանրապես, այդ շրջանը նշանավորվում է մամուլի աննախադեպ զարգացմամբ։ Հրատարակվում են մասնագիտացված պարբերականներ։ Լույս են տեսնում իրավաբանական («Իրավունք», Զմյուռնիա, 1868), գիտական («Ժողովրդային գիտություն», Կ. Պոլիս, 1880, «Մեսեռոբ», Զմյուռնիա, 1880), առողջապահական («Առողջապահական թերթ», Երևան, 1881, «Մատենադարան ժողովրդեան», Կ. Պոլիս, 1882 և այլն) ամսագրեր ու թերթեր։ Մնունդ է առնում նաև երաժշտական մա-

մուլը («Մուզիկ», Կ. Պոլիս, 1870, «Նուագք հայկականք», Կ. Պոլիս, 1879 և այլն)։ Կարևորություն է տրվում մատաղ սերնդի ինչպես բարոյական, այնպես էլ գեղագիտական դաստիարակության խնդիրներին։ Երաժշտության դասավանդումը դպրոցներում դառնում է սովորական երևույթ և, անկասկած, մեծ նշանակություն է ունենում աճող սերնդի գեղարվեստական դաստիարակության գործի բարելավման տեսակետից[1]։ Ստեղծվում են մանկական երգեր, հրատարակվում է մանկական երաժշտական գրականություն։

Առաջադեմ մանկավարժներ Մ. Մամուրյանը, Ռ. Պերպերյանը, Տ. Ռաշմաճյանը, Ա. Բահաթրյանը և ուրիշներ հանդես են գալիս ռեալական կրթության, մատաղ սերնդի համակողմանի դաստիարակության ջերմ պաշտպանությամբ, խիստ քննադատական մոտեցում ցուցաբերելով ուսուցման հին սկզբունքների և դասավանդման հին մեթոդների նկատմամբ։ Նրանք բոլորն էլ պայքարում են լուսավորությունն ու գիտությունը ժողովրդական լայն խավերի մեջ տարածելու համար։ Դեմոկրատ մտածող Մ. Մամուրյանը անհրաժեշտ է համարում ուսումնական ծրագրերում մտցնել այնպիսի առարկաներ, որոնք աշակերտներին զինեն բնության ու հասարակության զարգացման մասին իրական գիտելիքներով։ Մ. Մամուրյանը, Ռ. Պերպերյանը և ուրիշներ մանկավարժական առաջադեմ հայացքների պաշտպանությամբ հանդես են գալիս ինչպես ընդհանուր, այնպես էլ աշակերտական մամուլի էջերում։ Մանկավարժական մտքի աշխուժացման հետ մեկտեղ զարգացման մեծ թափ է ստանում աշակերտական և մանկապատանեկան մամուլը։ Իրար հետևից լույս են տեսնում «Երկրագունդ», «Ավետաբեր տղայոց համար», «Թատրոն բարեկամ մանկանց», «Բուրաստան մանկանց», «Ծաղիկ մանկանց» և այլ պարբերականներ։

Աշակերտական թերթերի շարքում բնության և հասարակության մասին իրական գիտելիքների տարածման տեսակետից աչքի է ընկնում Կոստանդնուպոլսի Նուպար-Շահնա-

---

[1] Տե՛ս Մ. Մուրադյան, Հայկական երաժշտական մշակույթի պատմություն, հատ. 2, Երևան, 1970, էջ 79։

ղարյան վարժարանի սանների հրատարակած «Երկրագունդ» շաբաթաթերթը։

«ԵՐԿՐԱԳՈՒՆԴ»
(1870—1871)

Արևմտահայ դպրոցի պատմության մեջ դաստիարակչական ու ուսուցման նոր մեթոդներով աչքի ընկնող դեր է կատարել Նուպար-Շահնազարյան վարժարանը[2]։ 1870 թ. այն ուներ 20 ուսուցիչ և 113 աշակերտ, 5 կարգ (դասարան) և մեկ նախակրթարան, որտեղ սովորում էին առաջին դասարանի երեխաները։ Դպրոցում դասավանդվում էին կրոն, ընդհանուր պատմություն, լեզու և գրականություն, ֆրանսերեն, թուրքերեն, աշխարհագրություն, ֆիզիկա, աստղաբաշխություն, մաթեմատիկա, իրավագիտություն, երաժշտություն և այլ առարկաներ։

1865 թ. Կոստանդնուպոլիս է տեղափոխվում և դպրոցին նվիրվում Կարապետ Շահնազարյանի՝ Մանչեստրում 1864—1865 թթ. հրատարակված «Երկրագունդ» պարբերականի տպարանը։ Նուպար-Շահնազարյան դպրոցի սանները հարգելով Շահնազարյանի հիշատակը, նրա հրատարակած շաբաթաթերթի անունով ձեռնարկում են նոր շաբաթաթերթի հրատարակության գործը։ 1870 թ. լույս է տեսնում «Երկրագունդ» շաբաթաթերթը։ «Վարժարանիս աշակերտները,—գրված է առաջնորդողում,—հանդես մը խմբագրելու կարողությունն ստացած ըլլալով, իրենց խնդրանքը արժանահիշատակ հոր «Երկրագունդ» անուն շաբաթաթերթը անոր հիշատակին շարունակելու նպատակով աշակերտաց հանձնեցինք և ահա այս օրուընե գործի կսկսին և առաջին թերթն հրապարակ կը հանեն հասարակության իրենց երախայրիքն ընծայելով, կը

---

[2] Կարապետ Շահնազարյանի կտակի համաձայն դպրոցը պետք է բացվեր Կիլիկիայում։ Սակայն Ներսես Վարժապետյանը այցելելով եգիպտահայ Նուպար փաշային, նրանից միջնորդության խնդրեց Շահնազարյանի կտակած 1000 ոսկով Կ. Պոլսի Խասգյուղ թաղամասում դպրոց հիմնելու համար։ Նուպար փաշան այդ գործում իր օգնությունը ցույց տվեց, դպրոցը հիմնվեց Կոստանդնուպոլսում, 1866 թ. և կրեց Նուպար-Շահնազարյան անունը։



ԵՐԿԲԱԳՈՒՆԴ

ՀԱՆԴԷՍ ՇԱԲԱԹԱԿԱՆ

Ելլուդական ուժեղ ջրտի սիրէ պիտի հրատարակուի.
Ցուցակ մի ալեաց ի պիտի մէջտեղ կանգնի.

Վիճակներ ձի տրուի մէջտեղ.
Ամեն մի տարի 2 դրւ.
Աստղաբաշխութիւն Ամենայն ի ի Երկնից.

Թիւ 5 1870 ՕՒՆՈՒԱՐ 31

ՄԻՆԻՉ

Ձմռան կամ մարդկային բնակութիւնն ունի քիչ աղաղակ միտք ու առավել ոչ ոք ուզեր վերջին զոր գծեց իր առջև ձնուն քանատան ազատելի, որչափ չէ սիրած կարծեցած մնաս գլուխ։ Ցանկացի երբ ոչ ոք առնի ան կերպ մտքերս ասպարէզ թէև պատճառելով իւրացիս գրվարդ և ազատասիրց գնաս տանի գոհ ի կամ ի ինչ, զոր ոչ ոք ասպարէզ չունենայ, զոր ոչ ոք գործ չ՝ասպատանել իւր լուռ խոկ հարազատաց, կամ ազատել բնիկներն ազատասիրեն, յայտնելով իւր դատաց այն միտք ի բնել ինչ բան որ մեզ ոչ տանեցած էր ազատասիրեն մարդկային բնակութիւն։ ազատութիւն կամ ինքնավարութիւն պիտի մարդուն միանգամայն ամենայն ինչ ոչ ոք ինչ ոչ ոք ինչ ոչ ոք

հուսանք ներողամտություն և քաջալերություն միանգամայն»[3]։ Գնահատելով Շահնազարյանի դերը ազգային լուսավորության և կրթության տարածման գործում, նրանք գրում են. «Շահնազարյան նպատակ մը ունի Հայուն լուսավորությունը, իղձ մը՝ Հայուն Քշվառության բարձումը, այդ նպատակին, այդ իղձին առջև փիլիսոփա, քաղաքագետ ու զարմանալի տնտեսագետ մը կը դառնա, ուրիշները «լույս» կը պոռան, ինք՝ «դրամ» բառ մը ալ կավելցնեն հոն.—լույս և դրամ, ահա երկու բառեր, զորս իրարու համար սիրեց և Շահնազար, և զորս տարածելու համար ոչ զրիչ խնայեց, ոչ քրտինք և ոչ իսկ իր առողջությունը»[4]։

Կրթության գործը արդի «մեծ սկզբունքներեն մինը» համարելով, շաբաթաթերթը բարձրացնում է ժողովրդի միջից, ժողովրդի կյանքին քաջածանոթ ուսուցիչներ պատրաստելու հարցը։ Հասարակության ապագա բախտը կապելով երիտասարդության հետ, գրում է. «Հայ երիտասարդնե՛ր, բախտին ահեղ հարվածոց դեմ ընդ երկար աննկուն խիզախող հայը իր կորուստը կրնա ձենէ գտնել, և իր վերականգնում ձենէ և ոչ օտարէն կըսպասէ»[5]։ Հայ ժողովուրդն ինքն իր սեփական ուժերով պետք է ստեղծի իր կյանքը։ «Հայ երիտասարդնե՛ր, դուք ճանչեցեք զձեզ մեծ պարտքի տակ, դուք ճանչեցեք զձեզ մեծ գործի կոչված...»[6]։

«Երկրագունդ» շաբաթաթերթը խմբագրում էր 18-ամյա պատանի Մինաս Չերազը[7] (Մինաս Չերազյան), իսկ տնօրեններն էին Ս. Միքայելյանը և Հ. Խիեքյանը։ Խմբագիրը քննադատում էր հասարակական կյանքում տեղ գտած այն երևույթները, որոնք բացասաբար էին անդրադառնում մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության գործի կազմա-

---

[3] «Երկրագունդ», 1870, № 1, էջ 1։

[4] «Երկրագունդ», 1870, № 2, էջ 22։

[5] «Երկրագունդ», 1870, № 23, էջ 364։

[6] Նույն տեղում։

[7] Մինաս Չերազ (1852—1928)։ Սովորել է Կոստանդնուպոլսի Նաղդյուղի Ներսիսյան վարժարանում։ Դեռ բարձրագույն կարգի աշակերտ եղած ժամանակ նշանակվել է նույն վարժարանում որպես օգնական ուսուցիչ։ 1866 թ. նա տեղափոխվել է Նուպար-Շահնազարյան վարժարան և այն ավարտել 1868 թ.։ Մինչև 1870 թ. պաշտոնավարել է նույն վարժարանում։

կերպման վրա։ Չերազը Թերթի էջերում բարձր էր գնահատում հայ և այլազգի աղատաշունչ ոգով ստեղծագործող գրողներին։ Վիկտոր Հյուգոյի մասին նա գրում է. «Գրիչը սուր մըն է ազատության», իսկ Ադամ Միցկևիչի մասին ասում է. «Ադամ Միցկևիչ Բոլոնիո (Լեհաստան) անմահ բանաստեղծ ու եռանդուն ազատասեր, անծանոթ է մեր ազգին, թերևս օր մը կարենանք ծանոթացնել զանի»[8]։ Ջմյուռնիայում «Լյա ռեֆորմ» Թերթի հրատարակության առթիվ Ստեփան Ոսկանի մասին Մինաս Չերազը գրում է. «Հայ է խմբագիրը, և սքանչելի ոճ մը ունի ֆրանսերեն։ Պ. Ստեփան Ոսկան, որի անցյալն անծանոթ է ինձ, օտարաց օգուտ և ազգայնոց պատիվ կը բերե այն ընտիր հոդվածներով, յորս լիաբուռն ցանված են լուսավոր ու ազատ գաղափարներ. և որ ավելին է, շրջահայաց լեզու մը կը գործածե»[9]։

Ամսագրում գրախոսականներ են տպագրվել ազատաշունչ ոգով գրված պիեսների վերաբերյալ։ Թերթի խրախուսանքին են արժանացել Մուրադյան վարժարանի աշակերտները՝ «Սուտ մարդարե» կատակերգության բեմադրության համար։ «Մուրատյանք այդ սնապաշտության վրա քաջասիրտ ծիծաղ մը կարձակեն,—գրված է այնտեղ,—և անոնց դեմ ճակատ կը բարձրացնեն այսօր. իրենց դրոշակն Ազատության շունչովը կը թրթռա, քանի՜ մեծ, քանի՜ վսեմ է տեսնել, թե Միջին դարու զավակը կարթըննա, խավարի որդին իր մոր ազիքը կրծելով կը խոսե, և բարև կուտա լույսին...»[10]։

Ազգային-ազատագրական շարժումների ծավալման տարիներին, հայ մատաղ սերնդին ազատագրական ձգտումներով ներշնչելու գործում, անկասկած, կարևոր դեր ուներ կատարելու «Երկրագունդը»։ Այդ իսկ պատճառով այստեղ մեջբերումներ էին կատարվում հայ և օտար բանաստեղծների ազատաշունչ պոեզիայից։ Շաբաթաթերթի էջերում շարունակաբար տպագրվում էր Պատկանյանի «Քաջ Վարդան Մամի-

---

8 «Երկրագունդ», 1870, № 20, էջ 325։

9 «Երկրագունդ», 1870, № 15, էջ 238։

10 «Երկրագունդ», 1870, № 18, էջ 277։

կոնյանի մահը»[10]ա պոեմը: Վարդանի մեջ մարմնավորված էին հայ ժողովրդի արիությունը, համարձակությունը, ինքնամոռ նկատմամբ ունեցած ատելությունն ու անհանդուրժողական վերաբերմունքը:

«Երկրագունդը» տպագրել է նաև Ռափայել Պատկանյանի սոցիալական թեմաներով գրված «Մշակ»[11] և «Գանգատ»[12] բանաստեղծությունները և միաժամանակ իր կարծիքը հայտնել դրանց մասին: «Վերի երկու բանաստեղծությունը Ռափայել Պատկանյանին հանճարոյն արգասիքն են,—գրված է այնտեղ,—որ արդեն ծանոթ է պոլսեցվոց իր «Մայր Արաքսի ափերով» երգովը, որն որ աշխարհածանոթ բանաստեղծներու անգամ նախանձը կարող է շարժել»[13]: Զգալի տեղ հատկացնելով Ռափայել Պատկանյանի բանաստեղծություններին, թերթը նպաստում էր արևմտահայ և արևելահայ գրական կապերի ամրապնդմանը, կապեր, որոնք ազգային կյանքի ձևավորման շրջանում առավել ևս գառնում էին անհրաժեշտ:

Թարգմանական գործերից առանձնապես աչքի էր ընկնում Համբնեի[14] «Արի զինվոր»[15] ոտանավորը: Եղիա Տեմիրճիպաշյանի թարգմանությամբ ոտանավորը հնչում էր նույնպես խրոխտ ու հաղթական:

— Արի զինվոր, ո՞ւր կերթաս:
— Աստծո անունը ու հայրենական խորանները
պաշտպանելու համար, կռվելու կերթամ:
—Օրհնեալ ըլլան ղենքերդ, արի զինվոր:

---

[10]ա «երկրագունդ», 1870, № 45, էջ 707—709, № 47, էջ 740—742, № 50, էջ 786—789, № 51, էջ 808—811, № 52, էջ 819—820:

[11] «երկրագունդ», 1870, № 44, էջ 692—693:

[12] Նույն տեղում, էջ 694:

[13] Նույն տեղում, էջ 695:

[14] Համբնեի այս բանաստեղծությունը հայերեն լեզվով առաջին անգամ տպագրվել է Ստեփան Ոսկանի «Արևելք» ամսագրում (Փարիզ, 1855. № 1, էջ 9—11): Ստեփան Ոսկանն իր ամսագրում հանդես է եկել Համբնեի պաշտպանությամբ, բարձր գնահատել նրա անձն ու ստեղծագործությունները: «Համբնեն երկար տաեն մեր սիրելի հեղինակը եղած,—գրել է նա—և իր գրքերը ոչ միայն ոգետու ճարակ մը տվեր են մեր մտքին, այլև մեր սիրտը սփոփեր են այնպիսի դառն վայրկյեններուն մեջ, ուր հուսահատության տակ ճնշեալ երկբայի ալիքներու մեջ կը ծփայինք»:

[15] «երկրագունդ», 1870, № 17, էջ 270—271:

— Արի դինվոր, ո՞ւր կերթաս։

— Արդարությունը, ժողովրդոց սուրբ իրավունքը, և մարդկության նվիրական օրենքները պաշտպանելու համար, կռվելու կերթամ։

— Օրհնեալ ըլլան զենքերդ, արի դինվոր...[16]։

Հայ ժողովրդին այնքան հոգեհարազատ այս բանաստեղծությունը իրավամբ ժամանակին Թուրքիայի մայրաքաղաքի հայ մտավորականության կողմից մեկնաբանվել է որպես բռնակալների դեմ ուղղված հեղափոխական երգ[17]։ Թարգմանական գործերը պատահական ընտրության արդյունք չէին։ Շաբաթաթերթը խոստովանում էր, որ «օտար ազգաց գրականութենեն գլխավորապես այն բաները պիտի առնի, որոնք որ իրապես կրնան նպաստել բարոյական ու մտավորական զարգացման...», քանի որ «կան գործեր, որ վնասակար են ազգին ներկա դրից նկատմամբ ու աղետաբեր ազդեցություն կունենան, կան գործեր, որ դեռ կանուխ են ժողովրդին համար, ու անկե չեն կրնար ընդունելություն գտնել...»[18]։ Ապա ընդգծում էր, որ թարգմանիչը անպայման պետք է ունենա «կիրթ ճաշակ, դիտող միտք»։ Թերթը նախընտրում էր Վիկտոր Հյուգոյի բանաստեղծությունները («Մանկիկն ի օրրանի»[19], «Ի կին անկեալ»[20] և այլն), Կռիլովի առակները («Տակառ», «Ոսկին» և այլն), ինչպես նաև արևելյան ժողովուրդների առածներն ու ասացվածքները։

Տպագրելով Կռիլովի առակները, շաբաթաթերթը բարձր էր գնահատում դրանց գեղարվեստական արժեքն ու ճանաչողական նշանակությունը։ «Այս առակները դեր. Գաբրիել եպիսկոպոս Այվազյանը թարգմաներ է ռուսերեն բնագրե մը, որ Քռիլով անուն ռուս առակախոսի գործն է։ Արդի գրականությանց մեջ մեծ տեղ բռնած է գաղիացի առակախոս Լա-

16 Նույն տեղում, էջ 270։

17 Տե՛ս Ա. Բ. Կարինյան, Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության, հատ. 2, Երևան, 1960, էջ 445—446։

18 «Երկրագունդ», 1870, № 10, էջ 323։

19 «Երկրագունդ», 1870, № 5, էջ 72—73։

20 «Երկրագունդ», 1870, № 13, էջ 196։

ֆոնտանը, բայց կրնանք համարձակ ըսել, որ Քռիլովը շատ տեղ զանի կը դերազանցէ»[21]։

«Երկրագունդ» շաբաթաթերթի էջերը պատանի ընթերցողներին ծանոթացնում էին հայ ժողովրդի պատմությանը («Հին-շատակ Ավարայրի»[22], «Հայոց պատմություն»[23] և այլն)։ Դիմելով պատանի ընթերցողներին, գրում էր. «Մարդ, որ հայրենյաց սիրով կը մաշի, և անոր կարոտով կը հեծե, կրթված ոգի ունի, որուն չեն կրցած բռնանալ որևէ արհամարհոտ կրքեր ու մոլություններ»[24]։

Հայ ժողովրդի անցյալի պատմությանը և պատմական արժեք ունեցող փաստերին վերաբերող նյութերը տպագրվում էին «Ազգային» բաժնում։ Մի շարք ակնարկներ տեղեկություններ էին հաղորդում նաև այլ ազգերի, ցեղերի և ցեղախմբերի սովորությունների, լեզուների ու այլնի մասին։ Պատմական ու հրապարակախոսական հոդվածներում այն միտքն է զարգացվում, թե լուսավորյալ ու կրթված լինելով միայն հնարավոր կլինի զերծ մնալ ամեն տեսակ բռնություններից։ Հիմնականում ելնելով լուսավորական-դեմոկրատիզմի դիրքերից, «Երկրագունդը» երբեմն մասամբ էլ տուրք էր տալիս քրիստոնեական բարոյախոսությանը, հանդես էր գալիս «ծուռ համոզումները փափկությամբ զննելու», «բարի դաստիարակությամբ ղինվելու» սկզբունքների պաշտպանությամբ։

Ինչպես նախորդ մանկական պարբերականներում, այնպես էլ այստեղ տեղ էին գրավում պատմահենասգրական ակնարկները («Մանկություն հռչակավոր արանց»[25] և այլն)։ Ճանաչողական արժեք ունեին անվանի գիտնականների ու մանկավարժների կյանքն ու գործունեությունը նկարագրող ակնարկները («Հոռաս Ման», «Դեկարտ և Նյուտոն», «Ժան Պադիստ դը Լիլլի» և այլն)։ Հետաքրքրություն էին ներկայացնում Արմեն Լուսինյանի դաստիարակության, ընդհանուր մանկավարժության հարցերին նվիրված հոդվածները։ Դրան-

---

21 «Երկրագունդ», 1870, № 46, էջ 723։

22 «Երկրագունդ», 1870, № 18, էջ 113—114։

23 «Երկրագունդ», 1870, № 11, էջ 161—163։

24 «Երկրագունդ», 1870, № 19, էջ 289։

25 «Երկրագունդ», 1870, № 22, 23, 32 և այլն։

—Արի դինվոր, ո՞ւր կերթաս։

— Արդարությունը, ժողովրդոց սուրբ իրավունքը, և մարդկության նվիրական օրենքները պաշտպանելու համար,

կուվելու կերթամ։

—Օրհնեալ ըլլան զենքերդ, արի դինվոր...[16]։

Հայ ժողովրդին այնքան հոգեհարազատ այս բանաստեղծությունը իրավամբ ժամանակին Թուրքիայի մայրաքաղաքի հայ մտավորականության կողմից մեկնաբանվել է որպես բռնակալների դեմ ուղղված հեղափոխական երգ[17]։ *Թարգմանական գործերը պատահական ընտրության արդյունք չէին։ Շաբաթաթերթը խոստովանում էր, որ «օտար աղգաց գրականութենեն գլխավորապես այն բանները պիտի առնի, որոնք որ իրապես կրնան նպաստել բարոյական ու մտավորական զարգացման...», քանի որ «կան գործեր, որ վնասակար են աղգին ներկա դրից նկատմամբ ու աղետաբեր աղդեցություն կունենան, կան գործեր, որ դեռ կանուխ են ժողովրդին համար, ու անկե չեն կրնար ընդունելություն գտնել...»*[18]։ *Ապա ընդգծում էր, որ թարգմանիչը անպայման պետք է ունենա «կիրթ ճաշակ, դիտող միտք»։ Թերթը նախընտրում էր Վիկտոր Հյուգոյի բանաստեղծությունները («Մանկիկն ի օրրանի»*[19]*, «Ի կին անկեալ»*[20] *և այլն), Կռիլովի առակները («Տակաո», «Ոսկին» և այլն), ինչպես նաև արևելյան ժողովուրդների առածներն ու ասացվածքները։*

Տպագրելով Կռիլովի առակները, շաբաթաթերթը բարձր էր գնահատում դրանց գեղարվեստական արժեքն ու ճանաչողական նշանակությունը։ «Այս առակները գեր. Գաբրիել եպիսկոպոս Այվազյանը թարգմաներ է ռուսերեն բնագրե մը, որ Քռիլով անուն ռուս առակախոսի գործն է։ Արդի գրականությանց մեջ մեծ տեղ բռնած է գաղիացի առակախոս Լա-

---

16 *Նույն տեղում, էջ 270։*

17 *Տե՛ս Ա. Բ. Կարինյան, Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության, հատ. 2, Երևան, 1960, էջ 445—446։*

18 *«Երկրագունդ», 1870, № 10, էջ 323։*

19 *«Երկրագունդ», 1870, № 5, էջ 72—73։*

20 *«Երկրագունդ», 1870, № 13, էջ 196։*

ֆոնտանը, բայց կրնանք համարձակ ըսել, որ Քոլլովը շատ տեղ պանի կը դերազանցէ»[21]։

«Երկրագունդ» շաբաթաթերթի էջերը պատանի ընթերցողներին ծանոթացնում էին հայ ժողովրդի պատմությանը («Հիշատակ Ավարայրի»[22], «Հայոց պատմություն»[23] և այլն)։ Դիմելով պատանի ընթերցողներին, գրում էր. «Մարդ, որ հայրենյաց սիրով կը մաշի, և անոր կարոտով կը հեծե, կրթված ոգի ունի, որուն չեն կրցած բռնանալ որևէ արհամարհոտ կրքեր ու մոլություններ»[24]։

Հայ ժողովրդի անցյալի պատմությանը և պատմական արժեք ունեցող փաստերին վերաբերող նյութերը տպագրվում էին «Ակգային» բաժնում։ Մի շարք ակնարկներ տեղեկություններ էին հաղորդում նաև այլ ազգերի, ցեղերի և ցեղախմբերի սովորությունների, լեզուների ու այլնի մասին։ Պատմական ու հրապարակախոսական հոդվածներում այն միտքն է զարգացվում, թե լուսավորյալ ու կրթված լինելով միայն հնարավոր կլինի վերծ մնալ ամեն տեսակ բռնություններից։ Հիմնականում ելնելով լուսավորական-դեմոկրատիզմի դիրքերից, «Երկրագունդը» երբեմն մասամբ էլ տուրք էր տալիս քրիստոնեական բարոյախոսությանը, հանդես էր գալիս «ծուռ համոզումները փափկությամբ զննելու», «բարի դաստիարակության պինվելու» սկզբունքների պաշտպանությամբ։

Ինչպես նախորդ մանկական պարբերականներում, այնպես էլ այստեղ տեղ էին գրավում պատմահենսագրական ակնարկները («Մանկություն հռչակավոր արանց»[25] և այլն)։ Ճանաչողական արժեք ունեին անվանի դիտնականների ու մանկավարժների կյանքն ու գործունեությունը նկարագրող ակնարկները («Հոռաս Ման», «Դեկարտ և Նյուտոն», «Ժան Պադիստ դը Լիլլի» և այլն)։ Հետաքրքրություն էին ներկայացնում Արմեն Լուսինյանի դաստիարակության, ընդհանուր մանկավարժության հարցերին նվիրված հոդվածները։ Դրան-

---

21 «Երկրագունդ», 1870, № 46, էջ 723։

22 «Երկրագունդ», 1870, № 13, էջ 113—114։

23 «Երկրագունդ», 1870, № 11, էջ 161—163։

24 «Երկրագունդ», 1870, № 19, էջ 289։

25 «Երկրագունդ», 1870, № 22, 23, 32 և այլն։

ցում ընդգծված էր հատկապես այն հանգամանքը, որ օտար երկրներում մշակված դաստիարակչական նոր մեթոդների նույնությամբ օգտագործումը ամենևին էլ օգտակար չէր կարող լինել հայ դպրոցների համար։ Այն կնմանվեր «օտար կլիմայի տակ սնած, աճած, ուրիշ կլիմայի օդ ծծած և ուրիշ կլիմայի ջրով ոռոգված ծառեն փրցված շյուղին (կամ նույնիսկ ծառին), որ ուրիշ կլիմայի մը տակ տեղափոխված առեն չարգասավորիր ու կը չորնա»[26]։ Նա պաշտպանում էր դաստիարակության նոր ու առաջավոր մեթոդներն ազգային կյանքի պահանջներին հարմարեցնելու գաղափարը։ Ազգային դաստիարակության ինքնուրույն մեթոդներ մշակելու համար շաբաթաթերթի կողմից ամենևին չէր ժխտվում արևմտաեվրոպական առավել զարգացած երկրների մանկավարժների լավագույն փորձը։ Ընդհակառակը, շաբաթաթերթը պրոպագանդում էր այն նորը և առաջավորը, որ նկատվում էին գերմանական և այլ դպրոցներում։ Այսպես, օրինակ, «Գերմանական վարժապետարաններու կազմությունը ժողովրդական դպրոցներու նկատմամբ և արդի պահանջմանց համեմատ»[27] հոդվածաշարում առաջադրվում էին վարժապետարանների ստեղծման, ուսման բովանդակության բարեփոխման, նոր ծրագրերի մշակման պահանջները։ «Երկրագունդը» մեծ տեղ էր հատկացնում աղջիկների ու կանանց դաստիարակության հարցերի քննարկմանը («Ֆիրխովի մտածությունները կանանց դաստիարակության վրա»[28] և այլն)։

Շաբաթաթերթը անդրադառնում էր նաև փիլիսոփայական հարցերին։ «Տեսություն փիլիսոփայության վրա»[29] հոդվածաշարում առաջարկվում էր ստեղծել փիլիսոփայության նոր դասագիրք, որով կազմողները «առաջադիմական մեծ բարիք մը ըրած պիտի ըլլան ազգային բարձրագույն վարժարանաց»[30]։ Էջեր էին հատկացվում բնագիտության, կենսաբանու-

---

[26] «Երկրագունդ», 1870, № 6, էջ 84։

[27] «Երկրագունդ», 1870, № 35—39։

[28] «Երկրագունդ», 1870, № 41, էջ 652—656։

[29] «Երկրագունդ», 1870, № 31, էջ 484—487, № 32, 499—502։

[30] «Երկրագունդ», 1870, № 32, էջ 502։

թյան, աստղագիտության, առողջապահության հարցերի քննարկմանը։

Շաբաթաթերթը լայն տարածում էր գտնում ոչ միայն Կոստանդնուպոլսի, այլ նաև հայաշատ մյուս քաղաքների ու գավառների աշակերտության և երիտասարդության մեջ։ Այսպես, Շապին-Գարահիսարի ուսանողներն իրենց գոհունակությունն են հայտնում խմբագրությանն ուղղված հետևյալ նամակում. «Երկրագունդ»-ի մեջ կըսեն ազնիվ նամակագիրք, ազգասիրական եռանդ, նոր գաղափարներ, գրականության սեր նշմարեցինք։ Այդ թերթի հեղինակները մեզ նման պատանի ուսանողներ են, այլ մեր գրիչներ չեն կարող բստ արժանվույն գովել զայդ հանդես, որ իրենց մտաց ծնունդ ու ազգասիրության հավաստին է, մանավանդ թե «ազեկ բան մը գովելը գոհարին վրա բան մը նկարելու կը նմանի»[31]։ Նրանք ոգևորված Նուպար-Շահնազարյան վարժարանի սանների հրապարակախոսական գործունեությամբ, կազմակերպում են Սահակ-Մեսրոպյան ընկերությունը, դումարներ են հավաքում և բաժանորդ դառնում «Երկրագունդ» շաբաթաթերթին։

Պետք է նշել, որ «Երկրագունդը» մեծ հետաքրքրություն է առաջացնում հայ մտավորականության շրջաններում։ Գրիգոր Օտյանը ժամանակին կարդալով պարբերականը, գրում է. «Այդ հանդեսը՝ Նուպար-Շահնազարյան վարժարանին պատանի աշակերտաց խմբագրությունն է. բայց մեծ մարդիկ կրնան կարդալ զայն։ Ես ոչ միայն պիտի կարդամ, այլև պիտի պահեմ գրքատանս մեջ, ուր այս քանի տարի է, ափսոս, որ հայերեն գիր կամ մատյան չեմ կրցած ավելցնել։ Կը հուսամ, թե ինծի պես պիտի մտածեն ամեն զգայուն հայ, որ հայության վերաբերյալ ամեն բաները կը հարգե, և որու «Երկրագունդի» պես թերթ մը, թեև մանուկներէ խմբագրեալ, կուգա հիշեցնել, որ ուրեմն, թե մենք ալ ունինք դեռ հայերեն լեզու մը, և այդ լեզվով կրնան եղեր գրվիլ լուրջ ու զգոն հոդվածներ»[32]։ Շաբաթաթերթի մասին Գրիգոր Օտյանի կարծիքը գաղափար է տալիս պարբերականի ուղղության և կատարած հասարակական դերի մասին։

---

31 «Երկրագունդ», 1870, № 25, էջ 400։

32 «Երկրագունդ», 1870, № 2, էջ 17։

«Երկրագունդ» շաբաթաթերթում, ի տարբերություն աշակերտական առաջին օրգանների, դաստիարակչական հարցերի հետ միասին բարձրացվում են նաև ազգային-ազատագրական պայքարին, հայ ժողովրդի անցյալի հերոսական պատմությանը, ազգային դրականությանը վերաբերող հարցեր։

«Երկրագունդը» երկու տարի լույս տեսնելուց հետո դադարեց։ 1883 թ. շաբաթաթերթը վերստին հրատարակվեց Հ. Պարոնյանի խմբագրությամբ։ Իսկ 1884—1888 թթ. «Երկրագունդի» խմբագիրն էր Եղիա Տեմիրճիպաշյանը։

XIX դարի 70-ական թվականներից սկսած լայն տարածում է գտնում միսիոներական քարոզիչների պրոպագանդան։ Միսիոներական քարոզիչներն ու հետագեմ մտավորականության ներկայացուցիչները ճշմարիտ դաստիարակության սկզբունքներին հակադրում են կեղծ բարեպաշտության և քրիստոնեական բարոյախոսության նորմաները։ Մատաղ սերնդին իրենց բարոյախոսությամբ դաստիարակելու նպատակներով նրանք հիմնում են դպրոցներ, տպարաններ, կուլտուրայի օջախներ և մանուկների ու պատանիների համար հրատարակում պարբերականներ։ Կոստանդնուպոլսում նրանց կողմից լույս է ընծայվում «Ավետաբեր տղայոց համար» պատկերազարդ ամսագիրը։

«ԱՎԵՏԱԲԵՐ ՏՂԱՅՈՑ ՀԱՄԱՐ» (1872—1915)

Հայտնի է, որ դաղութային կախյալ երկրներում XIX դարի սկզբին հիմնվում են միսիոներական ընկերություններ, որոնք կրոնական քողի տակ տարածում և հաստատում են տիրապետող դասակարգի նվաճողական քաղաքականությունը։ Վ. Ի. Լենինը իր «Չինական պատերազմը» հոդվածում ընդգծում է այն միտքը, որ եվրոպական կապիտալիստները «...կողոպուտի քաղաքականությունը կեղծավորությամբ քողարկում էին քրիստոնեության տարածումով»[33]։

1810 թ. Ամերիկայի Բոստոն քաղաքում հիմնվում է մի-

33 Վ. Ի. Լենին, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 4, էջ 476։

սիոներական ընկերություն՝ «Օտար առաքելության ընկերություն» անունով։ Ընկերությունը իր ճյուղերն է հաստատում Բոմբեյում, Երուսաղեմում, Կոստանդնուպոլսում, Փոքր Ասիայի շատ ու շատ այլ քաղաքներում։ Հայաստանի ճյուղը կրում էր «Armenian Bord» անունը և իր մասնաճյուղերն ուներ Վանում, Բիթլիսում, Խարբերդում, Մուշում և այլուր։ Բարոյախոսություն տարածելու նպատակով ընկերությունը Կոստանդնուպոլսի Բերա և Պեպեկ թաղամասերում կառուցում էր դիշերօթիկ դպրոցներ։ Պատրիարքարանը միջոցներ էր ձեռնարկում հայ մանուկներին միսիոներների ազդեցությունից ղերծ պահելու համար։ Բայց կասեցնել բողոքականների գործունեությունը, նրան չէր հաջողվում։ 1869 թ. Կոստանդնուպոլսում բնակվում էին 525 հայ բողոքականներ, իսկ գավառներում՝ 15690։ Նրանք ունեին մամուլի իրենց առանձին օրգանները՝ «Շտեմարան պիտանի գիտելյաց» ամսագիրը, «Ավետաբերը»։ Այդ օրգանները հետու էին ազգային խնդիրներ արծարծելուց, հայ ժողովրդին հուզող առօրյա հարցերը քննարկելուց։ «Հանրագիտակ» շաբաթաթերթը անդրադառնալով բողոքական գործիչների հրատարակած պարբերականներին, գրել է. «Երբեք տեսած, լսած կամ կարդացա՞ծ եք հայ բողոքական թերթին մեջ, ըլլա «Շտեմարան», ըլլա «Ավետաբեր», հայ հասարակության վիճակային, թաղային, տնտեսական, գրական, բանասիրական շոշափող հոդված մը։ Եթե գրեն անգամ, ան ալ այնպես ցանցառ ու հարևանցի, իբր թե մեզմե չըլլային»[34]։ Իսկ «Հանդես ամսօրեան» գտնում էր, որ «Ավետաբերը» թեև հայերեն էր լույս տեսնում, բայց ազգային չէր։ Բողոքական քարոզիչներն իրենց ազդեցության ոլորտներն էլ ավելի ընդարձակելու համար 1872 թ. Կոստանդնուպոլսում հրատարակում են «Ավետաբեր տղայոց համար» ամսագիրը։ Ինչպես Գ. Սահինյանն է գրում. «Օտարերկրյա գաղութարարները, օգտվելով անհովիվ ու անտեր մի հոտում գործելու ազատությունից, փորձում էին իրենց ձեռքը վերցնել հայ մանուկների դաստիարակության գործը, ծրագրելով նրան սրսկել կրոնական թմրեցնող դեղեր, պատվաստել նրան հնա-

[34] «Հանրագիտակ», 1899, № 71, էջ 1134։

զանդուխյան և Հլուխյան, Համբերուխյան և կամազրկուխյան, սարկական համակերպում տերերի նկատմամբ»[35]։

Միսիոներների այս նոր օրգանը, ի տարբերություն նախորդ աշակերտական պարբերականների, պատկերազարդ էր և հասցեագրված էր ինչպես դպրոցական, այնպես էլ նախադպրոցական հասակ ունեցող երեխաներին։ Այն մինչև 1897 թ. լույս է տեսել նաև հայատառ և հունատառ թուրքերենով։ Ամիսը մեկ անգամ, չորս էջ ծավալով լույս տեսած պարբերականի արտոնատերն էր Ճ. Ք. Կրինը, իսկ տնօրեն-խմբագիրը՝ Հ. Ա. Պարնըմը։ Ամսագրին աշխատակցում էին միսիոներական ընկերության անդամներ Մ. Դավթյանը, Ք. Պոյաճյանը և ուրիշներ։ Նյութերի մեծ մասը տպագրվում էր անստորագիր։

Ամսագրի դաստիարակչական հիմնական ուղղությունը քրիստոնեական բարոյախոսությունն էր։ Այն պրոպագանդում էր բողոքական դավանանքը և Սուրբ գրքի պատգամները։

1908 թ. ամսագիրը լույս է տեսել «Ավետաբեր մանկանց» վերնագրով որպես «Ավետաբերի» առանձին բաժին։

1914 թ. ամսագրի տպագրիչն ու հրատարակիչը էր Հ. Մատթևոսյանը։ Նյութերի մեծ մասը գրում և խմբագրում էր Գր. Գալուստյանը։

Առաջին շրջանում (1872—1908) ամսագրում տպագրված յուրաքանչյուր հոդված տարածում էր Քրիստոսի պատգամները. անգամ հանելուկները վերցված էին ավետարաններից և վերնագրված այսպես. «Հանելուկ սուրբ գրքերեն»։

Անտեսելով աշխարհիկ դաստիարակության նոր ձևերն ու մեթոդները, «Ավետաբեր տղայոց համարը» դիմում էր ավետարանին, Քրիստոսի վարքի նկարագրություններին։ Անհատի բարոյական կերպարի գնահատման չափանիշը համարելով Քրիստոսի պատվիրանների կատարումը, ամսագիրը փորձում էր համոզել մանուկ ընթերցողին, թե «Քու երկնավոր Հայրդ կը հոգա քեզի համար։ Նա կուզե, որ բարի ըլլաս, և կը ցավի, եթե չես ըլլար։ Քեզի համար տեղ մը պատրաստած է երկինքին մեջ և կուզե որ հոն երթաս»[36]։

---

[35] Գ. Խ. Ստեփանյան, Հակոբ Պարոնյան (Կյանքը և հրապարակախոսությունը), Երևան, 1964, էջ 173։

[36] «Ավետաբեր տղայոց համար», 1895, № 6, էջ 22։

Քրիստոնեությունը, որ մշակել էր ուրույն հայացք մարդկային անհատականության զարգացման համար, իր տեսանկյունից էր բարձրացնում շրջապատի ու մերձավորի նկատմամբ տածած սիրո գաղափարը: Քրիստոնեության կողմից քարոզվող սերը վերացական էր: Ահա թե ինչու քրիստոնեական բարոյախոսությունից ելնելով, ամսագիրը մատաղ սերնդի մեջ ներշնչում էր սեր բոլորի նկատմամբ (չար թե բարի, թշնամի թե բարեկամ):

Ամսագրում տպագրված բարոյախրատական նյութերում որպես մարդկային լավագույն հատկանիշ խրախուսվում էր խոնարհությունն ընդհանրապես: «Հեզերն են, որ կօրհնվին, խոնարհներն են, որոնք շնորհք կը գտնեն»[37]: Այս միտքն է արտահայտել ամսագիրը նաև 1895 թ. («Խոնարհ էր նա» պատկերում), երբ Թուրք բռնակալը հայ մանկան ներկայությամբ խոշտանգում էր նրա ծնողներին ու հարազատներին: Ամսագիրը ջարդի օրերին անդամ տարածելով տերերի նկատմամբ հլու-հնազանդության ինքնակործան քարոզը, ոչ մի ձևով չէր ակնարկում հայաջինջ կոտորածների մասին: Եվ ինչպես Գ. Սեւեփանյանն է գրում. «Նա չէր տպագրում հայ իրականության հետ կապված և ոչ մի նյութ, հայ ժողովրդի անցյալն ու ներկան արտացոլող որևէ պատմվածք, չէր հրատարակում առհասարակ աշխարհիկ որևէ բան»[38]: Ընդհակառակը, այն իր բարոյախոսությամբ մեռցնում էր մատաղ սերնդի մեջ ատելությունը թշնամու հանդեպ, ինչպես և հասարակական պարտքի զգացումը, սեփական նախաձեռնության ոգին, ներշնչելով միայն հավատ աներևույթ ուժերի և Աստծու նկատմամբ: «Ավետաբեր տղայոց համար» ամսագիրը մինչև անդամ հավատացնում էր իր ընթերցողներին, թե ոչ միայն հոգևոր, այլև ֆիզիկական վերքերի բուժումը նույնպես կախված է Աստծու զորությունից («Երբայեցի աղջիկը»[39] և այլն): Ահա թե ինչու մանկական այս ամսագիրը [illegible]

---

37 «Ավետաբեր տղայոց համար», 1895, № 10, էջ 40:

38 Գ. Ե. Սեւեփանյան, Հակոբ Պարոնյան (Կյանքը և հրապարակախոսությունը), էջ 173:

39 «Ավետաբեր տղայոց համար», 1902, № 1, էջ 1:

կին քննադատվել է առաջադեմ թերթերի ու ամսագրերի կողմից («Թատրոն», «Մանզումեի էֆքյար» և այլն):

Ամսագրի նյութերի գերակշռող մասը ավետարաններից վերցված կրոնական պատմություններ են («Դանիել և անոր ընկերները»[40], «Սամարացոց հնգամատյանը»[41], «Հիսուսի բռնվելը»[42] և այլն): «Սուրբ գիրք կարդալ տվեք դպրոցին մեջ,—հորդորում էր ամսագիրը: —Պետք է, որ այս ըլլա սովորաբար ձեր առաջին գործն առավոտները»[43]: Առաջնությունը տրվում է սուրբ գրքի քարոզների իմացությանը: Դրանով իսկ իդեալականացվում է քրիստոնեության դերը մատաղ սերնդի դաստիարակության գործում:

«Խոսք մը իմ տղոց հետ» վերնագրով հոդվածում հեղինակը դիմելով երեխաներին, փորձում է համոզել նրանց, թե նրանք «Քրիստոսի նամակներն են», այսինքն, Քրիստոսի պատգամները կատարողները: Ամսագիրը սովորեցնում է աղոթք անելիս լուրջ լինել, ուշադիր լսել աղոթքը, քանի որ «քարոզիչը կխոսի աստվածային ճշմարտության վրա»: Իհարկե, Քրիստոսի պատվիրաններն օգտագործվում էին մանուկ ընթերցողների մեջ բարոյական բարձր հատկանիշներ սերմանելու նկատառումներով ևս, բայց այդ քարոզները կտրված լինելով իրական կյանքի պահանջներից, պատվում էին սոսկ հայեցական մարդասիրության ոլորտներում:

Պետք է նշել, որ «Ավետաբեր տղայոց համար» ամսագիրը լինելով միսիոներական քարոզիչների օրգանը, սրբագործում է կապիտալիստական կարգերը, արդարացնում դասակարգային անհավասարությունը: Աշխատավոր ժողովրդի աղքատ կյանքը նկարագրող պատկերներում («Ենկիկեն»[44], «Գերի աղջիկ»[45]) ցույց է տրվում, որ հարուստը բարի է, գթառատ: Դրանցում այն միտքն է արտահայտվում, թե աղքատության համար բողոքելը սխալ ու վնասակար է: Ճըշ-

---

[40] «Ավետաբեր տղայոց համար», 1899, № 3, էջ 9:

[41] Նույն տեղում, էջ 10:

[42] Նույն տեղում, էջ 11:

[43] «Ավետաբեր տղայոց համար», 1875, № 32, էջ 161:

[44] «Ավետաբեր տղայոց համար», 1874, № 5, էջ 18:

[45] Նույն տեղում, էջ 11:

մարիտը իր վիճակի հետ հաշտվելն է ու սեփական աշխատանքով ապրուստի վաստակ գտնելը:

«Հոգ մի ընեք ձեր աղքատությանը,— գրված է ամսագրում,— խնայողությամբ, ժրաջանությամբ, ժուժկալությամբ և խելքով կրնաք ձեր աղքատությունը բարգավաճ վիճակի փոխել, և հասկանալ, թե սուգիվ աղքատությունը ծպտյալ օրհնություն մը է եղել»[46]: Ինչպես նկատվում է, տիրապետող դասակարգին հլու-հնազանդ սերունդ դաստիարակելու նկատառումներով բարոյախրատական նյութերում սքողվում են իրական կյանքի սոցիալական հակասությունները:

Երբեմն էլ ամսագիրը օգտագործում էր աշխարհիկ գրականության նյութերը, միայն կրոնական երանգավորում տալով դրանցում նկարագրված դեպքերի զարգացմանը: Այսպես, «Պահապանին աղջիկը»[47] պատկերում, որ հիշեցնում է Վուչետիչի «Կարմիր լապտերը» մանկական հետաքրքիր պատմվածքը, նկարագրված է, թե ինչպես պահապանի դեռատի աղջիկը հերոսական արարք է կատարում, փրկելով նավը խորտակումից: Աշտարակը բարձր էր, աղջկա ձեռքը չէր հասնում փարոսի լապտերին, իսկ նավը մոտենում էր և մթության մեջ կարող էր խորտակվել: Վտանգավոր այդ պահին նա հիշում է մոր խոսքերը. «Նեղության ատեն միշտ Հիսուսի դիմելու ենք»: Նա ավետարանի և աստվածաշնչի օգնությամբ պատվանդան է սարքում, բարձրանում վրան և վառում լապտերը: Մինչդեռ Վուչետիչի պատմվածքում կրոնական դրքերի մասին խոսք անգամ չկա: Աղջիկը իր սեփական նախաձեռնությամբ, խիզախորեն վառում է լապտերը և փրկում հարյուրավոր ուղևորների կյանք: Պատմվածքի երկու տարբերակներում էլ թերևս դաստիարակչական իմաստը նույնն է. ապրել շրջապատին ու մարդկանց օգտակար լինելու համար: Տարբերությունը միայն այն բանում է, որ ամսագրում տպագրված պատմվածքի մեջ կարևորությունը տրվում է կրոնի և հավատքի միջնորդությանը:

1908 թ. սկսած, երբ Թուրքիայում հաստատվեցին սահմանադրական կարգեր, արևմտահայ մամուլի էջերում նկատ-

[46] «Ավետարեր տղայոց համար», 1874, № 3, էջ 12:

[47] «Ավետարեր տղայոց համար», 1873, № 2, էջ 7—8:

վեց որոշ աշխուժացում։ Երևան եկան մամուլի նոր օրգաններ, այդ թվում և մանկապատանեկան ամսագրեր ու թերթեր և նորից ասպարեզ հանվեց ազգային դաստիարակության հարցը։ 1910 թ. սկսած, եթե ոչ զգալի, ապա որոշ չափով աշխարհիկ բովանդակություն ունեցող և հայրենասիրական շնչով գրված նյութեր երևացին «Ավետաբեր մանկանցի» էջերում շնորհիվ նոր խմբագրի՝ Գրիգոր Գալուստյանի։ Ուստի և 1910 թ. հետո լույս տեսած համարները բովանդակությամբ և ընդգծված հարցերով տարբերվում են նախորդ թվականներին հրատարակված համարներից։ Ինչպես Հալեպում լույս տեսած «Բուրաստան» ամսագրում է գրված. «...անոր 44 տարիներու գոյության մեջ բացառիկ հիշատակության արժանի են վերջին 6 տարիները միայն, երբ այն լույս տեսավ կրկնապատկված ծավալով և այլազան ու ճոխացած բովանդակությամբ։ «Ավետաբեր մանկանց» իր այդ ճոխացած ու «հայացված» բովանդակությունը կը պարտի 1910-ին պաշտոնի կոչված նոր խմբագիրներեն Գրիգոր Հ. Գալուստյանի»[48]։

Գրիգոր Գալուստյանը[49] (Կիլիկեցի) ծնվել է Կիլիկիայի Մարաշ քաղաքում, 1879 թվականին։ Սկզբնական կրթությունն ստացել է ծննդավայրում։ Ապա ուսումը շարունակել է Տարսոնի Ամերիկյան կոլեջում։ Սովորել է նաև Կոստանդնուպոլսի Օսմանյան համալսարանի իրավաբանական բաժանմունքում և ստացել փաստաբանի վկայական։ Ուսուցիչ է աշխատել Ադանայում, Տարսոնում, Կոստանդնուպոլսում։ Գրիգոր Գալուստյանը հայտնի է եղել նաև որպես բանաստեղծ, թարգմանիչ, թերթերի խմբագիր։ Նա կազմել է «Օշական» անունով ընթերցարան դպրոցականների համար։ Մինչև 1913 թ. խմբագրել է «Ավետաբեր մանկանցը»։ 1919—1920 թթ. եղել է «Առավոտ նորահասներու» հանդեսի խմբագիրը, իսկ 1920—1922 թթ.՝ «Հայ պատանի» շաբաթաթերթի խմբագիրը։

Գր. Գալուստյանը Կիլիկեցի, Գրիչ-քնար և այլ ծածկանուններով հրատարակել է արձակ և չափածո ինքնուրույն,

---

48 «Բուրաստան», 1952, Բ տարի, Դ պրակ, էջ 59։

49 Կենսագրական տվյալները վերցված են Հալեպում լույս տեսած «Բուրաստան» ամսաթերթից (տե՛ս «Բուրաստան», 1952, Բ տարի, Դ պրակ, էջ 59—60)։

ինչպես և թարգմանական գործեր ու հրապարակել մատաղ սերնդի դաստիարակության հարցերին նվիրված մի շարք հոդվածներ։ 1922 թ. Մուսթաֆա Քեմալի օրոք Կոստանդնուպոլսում սկսված հայերի արտագաղթը նրան տարավ Ամերիկա, ուր ստանձնեց հայ բարեգործական ընկերության միության քարտուղարի և «Հուշարար-միություն» պաշտոնաթերթի խմբագրի պարտականությունները։

Գր. Գալուստյանի օրոք «Ավետաբեր մանկանց» ստանում է հետաքրքրական բովանդակություն։ Ամսագրի էջերում տեղ են գտնում հայ անցյալի նշանավոր դեպքերի ու դեմքերի («Հայ գրերի գյուտի և տպագրության հոբելյանները» և այլն), ինչպես նաև աշխարհահռչակ դիտնականների, երաժիշտների, նկարիչների, գրողների (Մոցարտ, Շեքսպիր և ուրիշներ) կյանքին ու գործունեությանը նվիրված հանրամատչելի նյութեր։ Տպագրելով Շեքսպիրի «Փըչէ, փըչէ, դուն հով ձմռան»[50] բանաստեղծությունը (թարգմ. Կիլիկեցի—Գր. Գալուստյան), խմբագիրը գրում է. «Հոս, այս առիթով, ինչպես շատ անգամներ ալ ըրած եմ, կը հանձնարարեմ ձեզի, որ աշխատիք ձեր գրական կարողությունները զարգացնել, մասնավորապես կարդալով Շեքսպիրի պես սիեզերահռչակ գրագետներու երկերը։ Այդ կերպով դուք ալ պիտի հաջողիք ազնվացնել ձեր սիրտերը, կրթել ձեր միտքերը և ըլլալ իրապես կրթված մարդ»[51]։

Այս ամսագրում տպագրվել են նաև Լև Տոլստոյի («Արդար թագավորը»)[52] և այլ գրողների կարճ պատմվածքները։ 1910 թ. սկսած ամսագրում գերակշռել են աշխարհիկ բովանդակություն ունեցող նյութերը։ «Բայց մենք,—գրված է այնտեղ,—պետպիտություն մը ընելու և օգտակարն ու հաճելին իրարու խառնելու համար պիտի ուզեինք սբ. գիրքեն շինված հանելուկներու հետ ունենալ նաև ուրիշ տեսակ հանելուկներ, բառախաղեր, վանկախաղեր, թվաբանական խնդիրներ և այլն»[53]։

---

[50] «Ավետաբեր մանկանց», 1912, № 12, էջ 91։

[51] Նույն տեղում։

[52] «Ավետաբեր մանկանց», 1914, № 1, էջ 7—8։

[53] «Ավետաբեր մանկանց», 1913, № 12, էջ 94։

Այդ տարիներին (1908—1915) ամսագիրը անդրադառնում է նաև իրական կյանքի պատկերների նկարագրություններին։ 1914 թ. ամսագրում բացվում է «Մեր նամակատուփը» բաժինը, որի նպատակն էր տեղեկություններ հաղորդել հայրենի երկրից օտար ափեր գաղթած երեխաների կյանքի մասին։ Դիմելով մանուկներին, խմբագիրը գրում է. «Այս էջին վրա դուք և ես նամակներ կը գրենք իրարու և մեր վիճակին և գործերուն վրա տեղեկություններ կու տանք։

Հետաքրքրական չը՞լլար ամսեամիս նամակներ կարդալ խարբերդցի տղայէ մը, կամ վանցի աղջիկէ մը, կամ հայ մանուկէ մը, որ Ամերիկա գաղթած է, և իմանալ, թե այն տեղերուն մէջ ինչ կրնանն և ինչպես կապրին»[54]։

Ինչպես անցյալի շատ օրգանների, այնպես էլ մանկապատանեկան պարբերականների թվում բոլորից երկար կյանք ունեցող (44 տարի) ամսագրի դադարեցման պատճառը եղավ չարաղետ 1915 թվականը։

Թերևս, պետք է նշել, որ ամսագիրը թողել է մանկական պարբերականի համար կարևորություն ունեցող որոշ լավ ավանդույթներ։ Գեղեցիկ ձևավորումը, հաշակով ընտրված նկարները, բնության երևույթների ու կենդանական աշխարհի մասին գրված նյութերը, որ գրավել են պատանի ընթերցողների ուշադրությունը, ընդհանրապես կարևոր են մանկապատանեկան մամուլի համար։ Արտաքին գեղեցկության, գիտամասսայական նյութերի բազմազանության հետ միասին, բարոյախրատական նյութերի գերակշռող մասի դաստիարակչական ուղղվածությունը գրեթե բոլոր տարիներին շարունակում էր մնալ քրիստոնեական բարոյախոսությունը։ Դրա համար իսկ ամսագիրը քննադատվել է ժամանակի առաջադեմ գրողների ու հրապարակախոսների կողմից[55]։ Առաջինը Հ. Պարոնյանը քննադատելով միսիոներների «Ավետաբեր մանկանցը», ի հակադիր այդ ամսագրի, 1876 թ. ձեռնամուխ է լինում իր «Թատրոն բարեկամ մանկանց» ամսագրի լույս ընծայմանը։

---

54 «Ավետաբեր մանկանց», 1914, № 1, էջ 6։

55 Տե՛ս Գ. Խ. Ստեփանյան, Հակոբ Պարոնյան (Կյանքը և հրապարակախոսությունը), էջ 173։

«ԹԱՏՐՈՆ ԲԱՐԵԿԱՄ ՄԱՆԿԱՆՑ»
(1876—1878)

Անցյալ դարի 70-ական թվականներից սկսած հրապարակախոսության ասպարեզ է մտնում Հակոբ Պարոնյանը: Նա որպես երգիծաբան, հրապարակախոս հանդես է գալիս Սիմեոն Ջելկկյանի «Եփրատ» թերթում, ապա՝ «Մասիսում»: 1871 թ. Պարոնյանը դառնում է «Եփրատի» աշխատակիցը, իսկ որոշ ժամանակ անց ստանձնում թերթի խմբագրի պաշտոնը: 1872 թ., երբ դադարում է «Եփրատը», Պարոնյանը աշխատակցում է Հ. Սվաճյանի «Մեղու» ամսագրին, վարելով խմբագրի օգնականի պարտականությունները: Այդ նույն թվականին Սվաճյանը «Մեղուի» խմբագրությունը ամբողջովին հանձնում է Պարոնյանին: 1874 թ. «Մեղուի» փակվելուց հետո Պարոնյանը հրապարակախոսական լայն գործունեություն է ծավալում՝ հրատարակելով «Թատրոն» շաբաթաթերթը: «Թատրոնի» հետ միասին նա լույս է ընծայում թուրքերեն «Թիյաթրո» (1874—1875) պարբերականը, իսկ 1876 թ.՝ «Թատրոն բարեկամ մանկանց» մանկական երկշաբաթաթերթը: Այդ նույն ժամանակաշրջանում Պարոնյանը դառնում է «Լույս» պարբերականի խմբագիրը, ինչպես և թղթակցում է Թիֆլիսում լույս տեսնող Աբգ. Հովհաննիսյանի «Փորձ» և Մոսկվայում հրատարակվող «Փարոս Հայաստանի» պարբերականներին: Պարոնյանը «Լույս» պարբերականը խմբագրում է 1879 թ. սեպտեմբերի 6-ից մինչև 1880 թ. ապրիլի 5-ը[56]:

1876 թ. հրատարակելով «Թատրոն բարեկամ մանկանց» երկշաբաթաթերթը, Պարոնյանը կատարում է իր անդրանիկ քայլերը մանկապատանեկան նոր մամուլի զարգացման ուղղությամբ:

Այն ժամանակներում, երբ բացակայում էին մանուկներին հասցեագրված դրքերը և Կոստանդնուպոլսում հրատարակվող միսիոներական օրգան «Ավետաբեր տղայոց համար» ամսագիրն իր միսթիկական-կրոնական բարոյախոսությունն էր տարածում մանուկների մեջ, անչափ կարևոր էր դառնում

---

[56] Նույն տեղում, էջ 110:



«Թատրոն բարեկամ մանկանց» երկշաբաթաթերթի շապիկը

այնպիսի պարբերականի դերը, որպիսին էր «Թատրոն բարեկամ մանկանց» երկշաբաթաթերթը: Մյուս կողմից պատմական նոր հանգամանքները (1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի նախօրեին ստեղծված իրադրությունը) և դրանցով պայմանավորված հայ ազգային-ազատագրական շարժման աշխուժացումը ինչպես առաջավոր մտավորականության, այնպես էլ Հակոբ Պարոնյանի ուշադրությունը բևեռում են մատաղ սերնդի ճշմարիտ դաստիարակության խնդիրների վրա:

1875 թ. «Թատրոնի» էջերում տպագրած ծանուցման մեջ Պարոնյանը գրում է. «Ազգային մանկտոյն դաստիարակության և հմտության նպաստելու մտաք՝ որոշած եմք առաջիկա տարեգլխեն սկսեալ թերթ մը հրատարակել «Թատրոն տղայոց» անվամբ, որ գեղեցիկ պատկերօք զարդարեալ ըլլալեն ի զատ՝ պիտի պարունակե կրթական, բարոյական, պատմական, վիպական և այլ տղայոց միտքը սրելու հատուկ հոդվածներ:

Մեր հիշյալ թերթը մասնավորաբար փոքրիկ տղայոց հատկացեալ ըլլալով, իրենց հասկացողութեան աստիճանին չափովը պիտի խոսիմք ուղղակի իրենց սրտին և իմացականության հետ. պիտի ջանամք զիրենք ընթերցանության և ուսման ընտելացնել, և զասոնք իրենց հաճելի և հրապուրիչ ընելու համար՝ սորա պարունակութիւնքն ընդհանրապես զվարճալի և զբոսեցուցիչ պիտի ընեմք, ազգային պատմության, աշխարհագրության, թվաբանության և բնական պատմության հատվածները դասական եղանակով ամենէն փոքրահասակ տղայոց իսկ դյուրըմբռնելի ոճով ավանդելով, բարոյալից առակներ կամ առասպելներ ալ պիտի դնեմք, ինչպես նաև հանելուկներ՝ լուծողներուն մրցանակ խոստանալով»[57]:

«Թատրոն բարեկամ մանկանց» երկշաբաթաթերթի առաջին համարի խմբագրականը ընթերցողներին ծանոթացնում է պարբերականի ծրագրին, բովանդակությանը, առաջադիր նպատակներին: «Իմ պզտիկ կարդացողներս. այս «Թատրոն» լրագիրը 15 օրը հետ մը պիտի տպվի՝ հատկապես ձեզի հա-

---

[57] «Թատրոն», 1875, № 175, էջ 2:

մար: Ինտոր որ ձեր հայրերը կամ ձեր մեծերը ամեն օր խոշոր լրագիրներ կը կարդան բան հասկնալու համար, նոր բաներ իմանալու համար, անանկ ալ դուք այս «Թատրոնը» կարդալով ձեր չգիտցած շատ բաները պիտի սորվիք:

Շատ դասեր պիտի տամ ձեզի, և ամեն շաբթու համարնիդ պիտի նայիմ. երբ որ դասերնիդ աղեկ սերտած ըլլաք, պիտի փոխեմ համարնիդ, նորըզնոր դասեր պիտի տամ, զբոսանքներ ալ պիտի սահմանեմ ձեզի, աղվոր պատմություններ պիտի պատմեմ, խաղեր պիտի սորվեցունեմ, հանելուկներ (պիլմեճե) պիտի ըսեմ ձեզի, որ լուծեք»[58]:

Ինչպես ծրագրում էր նշված, երկշաբաթաթերթի գլխավոր նպատակներից մեկն էր՝ մանուկներին հայոց լեզու սովորեցնելը: Դիմելով երեխաներին, խմբագիրը գրում էր. «Ձեր մեջ կան շատերը, որ գիտուն տղու մը չվայելելիք բաներ կը գործածեն, անոնց հայերենը չգիտնալով»: Ուստի, խմբագրությունը որոշում է. «անանկ բաներուն ամեն մեկին առջև հայերենը դնել, որ յուրաքանչյուր երեխա պետք եղած տեղը, սխալ բառ չգործածեր»: Ապա որքան ամոթաբեր է համարվում այն, որ շատ երեխաներ էլ «բառերուն հայերենը գիտեն, բայց չեն գործածեր»: Պարոնյանը հանդես գալով օտարամոլության դեմ, պաշտպանում էր այն առաջավոր դրույթը, ըստ որի պահանջվում էր մատաղ սերնդի կրթության և դաստիարակության գործը կազմակերպել մայրենի լեզվով: Իսկ XIX-րդ դարի 70-ական թվականներին հայ ժողովրդի համար այդ դրույթի իրականացումը կենսական նշանակություն ուներ: Մյուս կողմից՝ Պարոնյանը անհրաժեշտ էր համարում օժանդակել պատանիների աշխատանքային դաստիարակության գործի կազմակերպմանը: «Մանչերուն համար արհեստաներուն (ղէնաաթ) պատմությունը պիտի ընեմ, որ երբ որ մեծնան, իրենց ուզած արհեստն ընտրեն»[59]:

Երեխաներին գիր ու գրականությունից, արհեստներից առավել պակաս չէին հետաքրքրում և զվարճալիքները՝ խաղը, մարմնամարզական վարժությունները, զբոսանքները և այլն:

---

[58] «Թատրոն բարեկամ մանկանց», 1876, № 1, էջ 2:

[59] Նույն տեղում, էջ 3:

Ահա թե ինչու խմբագիրը խոստանում էր մանուկներին սովորեցնել պանապան խաղեր, երգեր, պարեր և այլն:

Մշակված ծրագրի համաձայն, հայ մանուկներին ու պատանիներին թերթը սովորեցնում էր այն ամենը, ինչ պետք էր «կրթյալ և գովելի տղա ըլլալու համար»: Ոչ բոլոր հայ ընտանիքներում էր երեխան սովորում քաղաքավարության տարրական կանոնները: Այդ հանգամանքը անհանդստացնում էր Պարոնյանին: Ուստի նա խոստանում էր հետևել երեխաների նիստուկացին, նրանց վարվեցողությանը տանը, թե հասարակական վայրերում, խոսել նրանց հետ այն բոլորի մասին, որ դրված չէին գրքերում և չէին ուսուցանվում ժամանակի դպրոցներում: Նա դիմելով երեխաներին, գրում էր. «Ազգային մանկավոյն կրթութեան նվիրեալ այս թերթը ձեր աղնվութեան ներկայացնելով՝ կը հրավիրենք ձեր ուշադրությունը սորա պարունակութեան վրա, որ ազգին մեջ ոչ թե իբր եղական նորություն կընծայվի, այլ իբր ամենակարևոր պետք դեռահաս տղայոց դաստիարակութեան»[60]:

Գիտակցելով, որ դեռ վաղ էր մանուկներին նշանավոր գյուտերին, մեծահռչակ փիլիսոփաների հայացքներին ծանոթացնելը, այլ առաջին հերթին անհրաժեշտ էր նրանց մեջ սերմանել բարոյական բարձր հատկանիշներ, Պարոնյանը գրում է. «Մեր նպատակը չէ ընթերցողները հիացնելու մտոք գրական նորանոր գյուտեր հրատարակել, և ոչ իսկ մանկտին ընթերցանության վարժեցնելու մտոք մեծահռչակ փիլիսոփայից սկզբունքներն ի հանդես ընծայել..., այլ մեր դիտավորությունն է գրական ծաղկոց մը հիմնել սակս փոքրիկ տղայոց, և աստ կրկնել հանապազ այն բարոյական և կրթական դասերը, որով միայն կարելի է պատվավոր մարդ և ներհուն քաղաքացի ըլլալ»[61]:

Երկշաբաթաթերթը տուրք չէր տալիս քրիստոնեական բարոյախոսությանը և կրոնական դոգմաններին, ինչպես «Ավետաբեր տղայոց համարը»: Փոքրիկ հերոսները գործում էին սեփական կամքի ու մտքի թելադրանքով՝ ներշնչված ծնողների և հասարակության առջև ունեցած պարտքի զգացումով

60 Նույն տեղում, էջ 8:

61 Նույն տեղում:

(«Հնդկահավ և խլըլիկ», «Կուկեսի մատանին» և այլն)։ Պարբերականում ընդգծվում էր այն հանգամանքը, որ մանկան հոգևոր կյանքը պետք է զարգանա բնականոն ճանապարհով։ Սղոթքը, Աստվածաշնչից վերցված դոգմաները ներկայացվում էին որպես գործոններ, որոնք վաղուց արդեն կորցրել էին իրենց դերն ու նշանակությունը։ Մանուկների իսկական դաստիարակը համարվում էր կյանքը, իրական կյանքը իր նոր ու առաջավոր պահանջներով։ Նյութերի աշխարհիկ ոգին և աշխարհաբար մաքուր լեզուն ինքնին վկայում էին երկշաբաթաթերթի նախընտրած նպատակների մասին։ Պարոնյանը հորդորում էր մանուկներին ու պատանիներին՝ ճանաչել իրական կյանքը։

Հետամուտ ազգային կրթության զարգացմանը, Պարոնյանը հայ մանուկների ճշմարիտ դաստիարակության առաջին նախապայմանն էր համարում հայոց լեզվի և հայ ժողովրդի պատմության իմացությունը։ Պարոնյանի փոքրածավալ գրվածքների մանուկ հերոսները խելացի էին, նրանք կարդում էին հայ ժողովրդի պատմության հերոսական էջերը և հորդորում միմյանց՝ ուսումնասիրել հարազատ ժողովրդի անցյալը, քանի որ անցյալի իմացությամբ «բարիք» արած կլինեին ազգին («Աննիկ և Սաթենիկ»)։ Ոչ թե ազգասիրական նեղ միտումներով, այլ մանուկների ու պատանիների մեջ հայրենասիրության բարձր զգացումը վառ պահելու նկատառումներով էին գրված այն գրվածքները, որոնք սովորեցնում էին մանուկներին՝ սիրել Հայրենիքը։

Մանուկներին շրջապատի հետ կապելու նպատակով Պարոնյանը գրվածքի նյութը վերցնում էր առօրյա կյանքի իրադարձություններից։ 1870 թ. Կոստանդնուպոլսի Բերա թաղամասի հրդեհի նկարագրությանն էր նվիրված «Անվախության ուժը»[62] պատկերը։ Կարևորն այստեղ այնքան հրդեհի տեսարանի նկարագրությունը չէր, որքան երևույթի դաստիարակչական նշանակությունը։ Այն սովորեցնում էր պատանիներին դժբախտության դեպքում ոչ թե շփոթվել, այլ ուշիմ լինել և փրկության ելքը գտնել։

---

[62] «Թատրոն բարեկամ մանկանց», 1876, № 15, էջ 113։

Երկշաբաթաթերթում հաճախ օգտագործվում էին նախորդ մանկապատանեկան պարբերականներում տպագրված գրվածքների սյուժեները, որոնք որոշ փոփոխություններով մատուցվում էին ընթերցողներին: Այսպես, օրինակ, «Նշանացի խոսակցություն»[63] գրվածքը Պարոնյանի պարբերականում այլ իմաստավորում էր ստանում: Այնտեղ գովաբանվում էին հնարամտությունն ու արագաշարժությունը, մինչդեռ «Բուրաստան ս. Սահակեանում» ծաղրվում էր ուսուցչի տգիտությունը: Մանկական գրվածքներում աշխատավոր ժողովրդի պատկերը օժտված էին մարդկային լավագույն հատկանիշներով՝ աշխատասիրությամբ, պղնվությամբ («Որբ Գևորգը»[64]), պիտակությամբ («Բարեգործին վարձատրությունը»[65] և այլն):

Պարոնյանի դեմոկրատիզմն իր արտահայտությունն է գտել նրա մանկական գրվածքներում: Մասավաճառի տղան, աղքատ գյուղացու զավակը, հողագործը, արհեստավորը դարձել են մանկական գրվածքների հերոսներ և որպես բարոյական բարձր կերպարներ լավագույն օրինակ ծառայել մատաղ սերնդի համար: Պարոնյանը հայ մանուկների մեջ մշակում էր սեր և հարգանք հանդեպ աշխատավորը ու նրա կատարած աշխատանքը:

Մանկական պարբերականի խմբագիրը մանուկներին հասցեագրված գրականության հիմնական դաղափարներից մեկն էր համարում մարդասիրությունը: Նրա նպատակն էր՝ դաստիարակել հասարակական պարտքի բարձր զգացումով օժտված, ինչպես և ճշմարտության ու ժողովրդի բարօրության համար պայքարող մարդ-քաղաքացուն: Ճշմարտությունը հեշտ ու հանդիսա ձևով չի հաղթանակում: Չար ու նենգ մարդկանց կողմից ճշմարիտը, բարին հաճախ բռնադատվում են: Պարոնյանը փորձում էր ցույց տալ, թե ովքե՞ր էին ազնիվ ու արդար վաստակով ապրող մարդկանցից խլում գեղեցիկը, բարին, լավը:

---

63 Նույն տեղում, էջ 114—116:

64 «Թատրոն բարեկամ մանկանց», 1876, № 20, էջ 158—159:

65 «Թատրոն բարեկամ մանկանց», 1876, № 16, էջ 121—122:

Պարոնյանի պարբերականը երեխաներին միաժամանակ վինում էր կյանքի ճանաչողությամբ, սովորեցնում զանազանել լավը՝ վատից։ Կյանքի արատավոր երևույթների նկատմամբ ցուցաբերելով քննադատական վերաբերմունք, երկշաբաթաթերթը նպաստում էր լավի, բարու, ճշմարտության համար պայքարող սերունդ դաստիարակելու վեհ գործին։

«Թատրոն բարեկամ մանկանցում» «Մանր վնպեր» խորագրով մանկական գրվածքներ էր տպագրում Մատթեոս Մամուրյանը։ Նրա «Բախտավոր Կոմիտասը», «Թեթև բարեկամ», «Առաքինի մոր որդեսիրությունը» և այլ պատմվածքներ ունեին հետաքրքրական սյուժեներ, դաղափարական ու դաստիարակչական խոր բովանդակություն։ «Բախտավոր Կոմիտասը»[66] հետաքրքրական պատմությունը հիշեցնում էր Հովհաննես Թումանյանի «Անխելք մարդը» հեքիաթը։ Դաստիարակչական իմաստը նույնն էր։ Սովորեցնում էր մանուկներին՝ լավ ճանաչել շրջապատող ու մարդկանց, իրերն ու երևույթները կյանքում ճիշտ կողմնորոշվելու համար։ Մամուրյանն ընդգծում էր այն հանդամանքը, որ Կոմիտասի հետ պատահածը իրողություն էր, և ոչ թե մտացածին պատմություն։ «Իմ պզտիկ ունկնդիրներս,— գրում էր նա,— վերը գրված բախտավոր Կոմիտասին պատմությունը չկարծեք, որ չեղած բան մըն է, իրավցնն պատահած և ամեն օր մեր աղգին առջև տեսնված բան է։ Որչափ անձինք կան, որ իրենց ձեռքը գտնված մեծագին բանի մը արժեքը չճանչելով, կը խաբվին և չնչին բանի մը հետ կըփոխեն»[67]։

Պարոնյանը մոտ լինելով մանուկներին, ուսումնասիրում էր նրանց հոգեբանությունը, ծանոթանում դպրոցական ցածր ու միջին տարիքի երեխաների հետաքրքրություններին։ Ահա թե ինչու «Թատրոն բարեկամ մանկանցում» տպագրված նյութերը բոլորն էլ հոգեհարազատ էին հայ մանուկներին։

Հեքիաթն իր բովանդակությամբ և արտահայտչական առանձնահատկություններով անչափ հետաքրքրական էր երեխաների համար։ Ուստի Պարոնյանը որպես ընթերցանության լավագույն նյութ ընտրում էր հեքիաթը։ Առաջին անգամ հայ

[66] «Թատրոն բարեկամ մանկանց», 1876, № 18, էջ 137—141։

[67] Նույն տեղում, էջ 141։

մանուկը այս շաբաթաթերթում կարդում է այլ ժողովուրդների մոտ վաղուց տարածում գտած հեքիաթները: Արևմտաեվրոպական մանկական գրականությունից վերցված գործերում տեղանունները և անձնանունները հայացվում էին, որպեսզի նկարագրված գործողությունները, ինչպես և գործող անձինք մոտ ու հարազատ լինեին մանուկներին: Այսպես, «Կարմիր Վարդուկը» հեքիաթն ուներ Շարլ Պերրոյի[68] «Կարմիր գլխարկը» հեքիաթի սյուժեն, գործողությունների նույն ընթացքը: Այս հեքիաթի դաստիարակչական իմաստը հասցվում էր մանուկներին հետևյալ խոսքերով. «Թող թույլ բերան չըլլան և ամեն իրենց դեմն եկնողի չպատմեն իրենց բանն ու գործը, թող չիմացնեն ուր երթալնին, ուրկե գալերնին, ձեռվընին խավի՞ծ, թե՞ խորխոխ, ինչ ունենալնին ասոր անոր չհասկըցնեն, որովհետև իրենց տեսած ամեն մարդիկ ալ բարի չեն»[69]:

Պարոնյանը մանուկների հետ անկեղծ էր, իր և երեխաների միջև սերտ կապ ու անկաշառ բարեկամություն հաստատելու միտումներով, ամսագրի մի շարք պատմություններ («Մոտո Ախպարի պատմությունը» և այլն) մանուկներից լսած էր համարում: Առաջնորդող հոդվածներից մեկում այդ մասին նա գրում է. «Բայց խոսքը մեր մեջը մնա, գաղտուկ լսելիք մը ունիմ ձեր ականջն ի վար: Ես այսչափ բաներ ձեզի սորվեցնել խոստացած ատենս, կան անանկ բաներ, որ ես ալ ձեզնէ սորվելով պիտի գրեմ. ինչպես որ Թատրոնին մեջ գրած պատմություններուս շատը ձեզի պես պզտիկ տղոցմէ սորված եմ»[70]:

Հեքիաթների հետ միասին մանուկներին պակաս չէին հետաքրքրում և ճանապարհորդական ակնարկները: Ուստի, Պարոնյանը իր երկշաբաթաթերթում մեծ տեղ էր հատկացնում հերոսական անձնավորությունների հետավոր վայրերում կատարած ճանապարհորդությունների նկարագրություններին

---

[68] Շարլ Պերրո (1628—1703 թթ.): Ֆրանսիացի դրող և գրականության տեսաբան: Առաջինը մշակելով ժողովրդական հեքիաթը, դարձրեց այն մատչելի մանուկների ընթերցանության համար:

[69] «Թատրոն բարեկամ մանկանց», 1876, № 6, էջ 41—42:

[70] «Թատրոն բարեկամ մանկանց», 1876, № 1, էջ 2:

(«Ռուս ճամփորդի Ամերիկայի մեջ գլուխն ևկածները»[71] և այլն)։

Հարուստ էին երկշաբաթաթերթի էջերը նաև պատմա-կենսագրական ակնարկներով («Միծն Ներսես կաթողիկոս և Պապ թագավոր»[72], «Մասիս լեռը»[73] և այլն)։

Պարոնյանն իր պաբերականը հրատարակում էր այնպիսի ժամանակներում, երբ սուլթանական կառավարության կողմից սահմանափակվում էին ազգային կրթության ոլորանները, նույնիսկ որոշ դպրոցներում արգելվում էր հայոց պատմության դասավանդումը։ Նման պայմաններում «Թատրոն բարեկամ մանկանց» պարբերականը խիզախ քայլ էր կատարում՝ անդրադառնալով հայ ժողովրդի անցյալի պատմությանը, փառաբանելով նախնիների հայրենասիրական գործերը։ Պատկերազարդ տեքստերով, ինչպես և հրապարակախոսական բնույթի հոդվածներով երկշաբաթաթերթը հայ մանուկներին ծանոթացնում էր իր ժողովրդի նախնիների կյանքին ու կենցաղին, Հայաստանի հին քաղաքներին։ Այսպես, Մասիս լեռը պատկերող նկարի տակ տրված է Մասիս լեռան և Վաղարշապատի հետ կապված պատմությունը։ Իսկ հոդվածներից մեկում («Ճառախոսություն»[74]) նկարագրված է Վարդան Մամիկոնյանի զեկավարությամբ հայ մարտիկների մղած ճակատամարտը, որ հոդվածագրի մեկնաբանմամբ մղվել է ոչ միայն հավատքի, այլ նաև ազգի ու հայրենիքի պաշտպանության համար։ Հոդվածը ինքնանպատակ չէր, այլ ուներ դաստիարակչական նշանակություն։ Հայրենիքը և ազգը դարձյալ կուլ էին գնում օտար բռնակալների կողմից և հայ ժողովրդին քաջ Վարդանի հայրենաշունչ ոգին էր պետք՝ ազգային ճնշման շղթաներից ազատագրվելու համար։ Երկշաբաթաթերթը դիմելով մանուկներին, գրում է. «Հերիք չէ՞, հայեր, հերիք չէ՞ մեր գերությունը, որուն մեջ կը հեծենք շղթայակապ, ջախջախենք այս ոգիությունի շղթաները, ազատ թևերով թռինք

---

[71] «Թատրոն բարեկամ մանկանց», 1876, № 20, էջ 154—157։

[72] «Թատրոն բարեկամ մանկանց», 1876, № 10, էջ 73—74։

[73] «Թատրոն բարեկամ մանկանց», 1876, № 11, էջ 81—82։

[74] «Թատրոն բարեկամ մանկանց», 1876, № 4, էջ 28—29։

դեպի գիտության, իմաստության և լուսավորության տաճարը»:

Մանկական պարբերականում նկատվում էր նաև Պարոնյանի հումորը, որն իր արտահայտությունն էր գտնում հատկապես կենցաղային առօրյա հարցերին նվիրված հոդվածներում: Անդրադառնալով հագուստների նորաձևությանը, Պարոնյանը քննադատում էր այն աղջիկներին ու կանանց, որոնք չարաշահում էին նորաձևությունը: «Բայց հիմակուան նորասիրությունն ալ կուզե, որ շրջազգեստը ետևի կողմեն մինակ ուռեցած ըլլա, որ կնիկներուն գլուխը մազե լեռ մը ըլլա, և գլխարկն ալ լեռան մեկ քովը բուսած սունկի (մանթար) պես բան մը»: Նման նորաձևությունը նա համարում էր «գատարկասեր թեթևամիտների պճնասիրություն»: Ապա հորդորում էր հայ աղջիկներին «պարզասիրության հետևին», հագնվեն «պարզ ու կոկիկ», չէ որ «քաղաքակրթյալ ազգերն ավելի իրենց խելքը և միտքը զարդարելու ետև կըլլան, քան թե իրենց կերպարանքը»:

Պարոնյանի երկշաբաթաթերթում գեղարվեստական ընթերցանության հետաքրքիր նյութեր էին հատկապես առակները: Հայ մանուկների համար առակներ էին գրում Գ. Այվազյանը, Ա. Գալֆայանը, Կ. Խոսքանցյանը և ուրիշներ: Նրանք միաժամանակ թարգմանում էին Եզոպոսի, Լաֆոնտենի, Կռիլովի և մյուսների առակները: Տպագրելով Լաֆոնտենի «Ճպուռն ու մրջյունը»[75] առակը, շաբաթաթերթը դիմում էր երեխաներին. «Այս մեր ճպուռին նման որչափ անմիտներ կան, որ նախատեսությամբ իրենց ապագան մտածելու տեղ, իրենց անգին ժամանակը անդադար խաղով կամ ուրիշ անօգուտ բանով կանցընեն: Տարիքը կլրանա, բան սորվելու ժամանակը կանցնի, և կը տեսնես, որ ասկե անկե բան գործ մուրալու և հաց ճարելու կը հարկադրին»[76]:

Երկշաբաթաթերթում տեղ էին գրավում գիտահանրամատչելի ակնարկները, որոնք անհրաժեշտ գիտելիքներ էին հաղորդում բնության, կենդանական աշխարհի, տեղավայրերի և այլնի մասին: Մատուցման ձևերով առավել աչքի էին ընկ-

---

75 «Թատրոն բարեկամ մանկանց», 1876, № 5, էջ 38:

76 Նույն տեղում:

նում աշխարհագրական վայրերի, առանձին քաղաքների մասին գրված նյութերը։ Դրանք մանուկներին ու պատանիներին հորդորում էին պատմական տեղեկություններ հայ ժողովրդի կյանքից։ Նկարագրելով Կոստանդնուպոլսի աշխարհագրական դիրքը, Թերթը անդրադառնում էր նաև այնտեղ գաղթած հայերի կյանքին. «Ժամանակով ալ հայ կար այս քաղաքին մեջ, բայց խիստ քիչ. հազիվ 150 տարի կա, որ մեր ազգեն շատեր եկան դուրսերեն հոս բնակելու, Հայաստանի և Պարսկաստանի քաղաքներեն. Վաննեն, Մուշեն, Կարինեն, Ակնեն հարյուրավոր մարդիկ ամեն օր իրենց ծնած ու մեծցած տեղերը թողնելով հոս կը թափեին»[77]։ Պարբերականը մանուկ ընթերցողի մեջ առաջացնում էր սեր ու կարեկցանք հայ պանդուխտ աշխատավորի նկատմամբ։

Պատմաաշխարհագրական ակնարկները ծանոթացնում էին ոչ միայն հարազատ վայրերին, այլև օտար երկրների աշխարհագրական դիրքին, բնակլիմայական պայմաններին («Վենետիկի մակույկները»[78] և այլն)։ Ակնարկների դաստիարակչական ու ուսուցողական նպատակների մասին Թերթը գրում է. «Պզտիկ ընթերցողներս, երբեմն աշխարհագրության վերաբերյալ գիտելիքներ ալ պետք է սորվիք, որով կարենաք երբեմն հիշած քաղաքներուս անունը սորվիլ և աշխարհիս որ կողմեն իյնալը գիտնալ»[79]։

Մանկական պարբերականի էջերում պակաս տեղ չէր հատկացվում նաև աշխատանքային դաստիարակության հարցերի քննարկմանը։ Երկշաբաթաթերթը մանկահաս աղջիկներին սովորեցնում էր տնտեսություն, այսինքն՝ ասեղնագործություն, կերակուրներ եփել և այլն։ Նման հոդվածները հետապնդում էին մի այլ նպատակ ևս՝ երեխաների մեջ սերմանել աշխատասիրություն։

Ակնհայտ է, որ շրջապատը և միջավայրը մեծ ներգործություն են ունենում մանկան բնավորության ձևավորման վրա։ Երեխան առաջին հերթին սովորում է ծնողներից։ Պարոնյանը գտնում էր, որ շատ ու շատ հայ ընտանիքներում բացակայում

---

77 «Թատրոն բարեկամ մանկանց», 1876, № 2, էջ 10։

78 «Թատրոն բարեկամ մանկանց», 1876, № 14, էջ 105—106։

79 Նույն տեղում։

էր կուլտուրական նիստուկացը: Ուստի նա իր երկշաբաթաթերթում պարբերաբար տպագրում էր քաղաքավարության նորմանները ուսուցանող հոդվածներ: «Կրթություն» վերնագրով հոդվածաշարը ամենայն մանրամասնությամբ մանուկներին սովորեցնում էր վարվեցողության ձևերը:

Պարոնյանի պարբերականը հետաքրքրական ու հրապուրիչ էր նաև հաննելուկներով: Հաննելուկների հետ միասին մանուկներին ուրախացնում, կենսախինդ տրամադրություններով էին համակում խաղերը («Ձեռնածուության խաղեր»[80] և այլն): Առավել հետաքրքրական էին նկարները, որոնք հարմարեցված էին տեքստերի բովանդակությանը: Նկարների մի մասը պատրաստվում էր Կոստանդնուպոլսում, իսկ մյուս մասը՝ փոխառնվում էր օտարերկրյա հրատարակություններից: Պարոնյանը իր մանուկ ընթերցողներին ծանոթացնում էր պատկերահանման և փորագրության արվեստին: «Գիտե՞ք սիրուն տղայք, ինչ զարմանալի արհեստով շինված է այս պատկերը,—գրում էր նա,—որ իր այնչափ պզտիկությամբ կրնա շիտակ մեր աչքին առչև բերել ահագին արևը, անհատակ ծովը, լեռները, ծառերը, մինչև ամենապզտիկ շյուղը: Թե՛ այս, և թե՛ ուրիշ պատկերները, որ «Թատրոնիս» մեջ կտեսնեք, փորագրություն ըսված արհեստին գործն է: Ասոնք տոսախ (շիմշիր) ըսված փայտին վրա պողպատե (չելիք) գրիչներով կըփորեն՝ պատկերը փայտին վրա մատիտով գրելեն ետքը»[81]:

Ուսանելի, հետաքրքիր և հրապուրիչ այս պարբերականը ժամանակին եղել է հայ մանուկների ու պատանիների ամենասիրելի երկշաբաթաթերթը: Այդ մասին են վկայում խմբագրության ուղարկված շնորհակալական նամակները: Մանուկ ընթերցողներից Վահան Եսայանը իր նամակում գրում է. «Երանի թե ամեն օր հրապարակվեր, երանի թե մեզի հասակակից տղայք ամենքն ալ առնեին այս թերթը, որուն մեջ սիրուն պատմություններ, գեղեցիկ խրատներ և աղվոր զվարճալիքներ կան»: Ապա վերջում ավելացնում է. «Ինձի հետ իմ

---

[80] «Թատրոն բարեկամ մանկանց», 1876, № 23, էջ 183:

[81] «Թատրոն բարեկամ մանկանց», 1876, № 3, էջ 21:

փոքրիկ քույրը՝ Զապելն ալ իր շնորհակալությունը կը հայտնե ձեզ»[82]:

«Թատրոն բարեկամ մանկանց» պարբերականը գոյատևում է ընդամենը մեկ տարի: 1876 թ. դեկտեմբերի 16-ին հրատարակվում է նրա վերջին համարը: Պարոնյանը իր հրաժեշտի խոսքը ուղղելով բաժանորդներին, գրում է. «Թատրոն այն աղքատ մոր պես ըրավ, որ իր ունեցածը չունեցածը կը ծախե խնճոր կամ շաքար ուզող և չկայն չհասկցող իր անմեղ ու միամիտ զավակը գոհ ընելու համար: Այսուհետև չկրնար իր այս վիճակը ծածկել, քանի որ իր հրատարակությունը դադրեցնելու ստիպված է, ուստի պետք է, որ այս դադարման պատճառը գաղտնի խոստովանի իր մեծ բաժանորդներուն ականջն ի վար, այնպես որ իր փոքրիկ բաժանորդներն իմանալով չվշտանան: Հարկ չէ, որ մեկը տպագրական գործերու հմուտ ըլլա, ամենքը կրնան մտկաբերել, թե ասանկ բազմապատկեր, գեղեցիկ տպագրությամբ և աժան թերթ մը չկրնար Մեկ Արծ. Մեջիտ տարեկանով և 229 բաժանորդով ապրիլ, որոց մեկ մասն ալ դեռ անվճար կը մնան տարին լրանալեն հետո»[83]:

Հակոբ Պարոնյանն իր մանկական պարբերականում մշակում է դաստիարակության այն սկզբունքները, որոնք ուրվագծում են մանկական դեմոկրատական մամուլի զարգացման հիմնարիտ ուղիները: Երկշաբաթաթերթը ժամանակին արժանացել է առաջադեմ մտավորականության բարձր դնահատականին: Մատենաս Մամուրյանը անդրադառնալով Հակոբ Պարոնյանի գործունեությանը, գրել է. «Երբեմն «Մեղու»-ի, այժմ մյուս Թատրոնի[84] հեղինակն ոչ միայն գիտի Թեմոկրիտեսի ծաղրն ու ծիծաղը մեր թերությանց վրա ցույց տալ, այլ կծու ու մտացի սլաքներով տղայոց հետ պարզ ու կրթական լեզվով խոսել, միտք բանալու, սիրտ կրթելու համար հատուկ վեպեր ու բարոյական խրատներ հերյուրել, այս ավելի դժվար արվեստ

---

82 «Թատրոն բարեկամ մանկանց», 1876, № 2, էջ 15:

83 «Թատրոն բարեկամ մանկանց», 1876, № 24, էջ 188:

84 Խոսքը «Թատրոն բարեկամ մանկանցի» մասին է, որը Պարոնյանի 1874 թվականին հրատարակած «Թատրոն» շաբաթաթերթից հետո նույնանուն վերնագրով մյուս պարբերականն է:

է, քան մյուսը։ Աղջին մեջ որչափ շատանան այսպիսի թերթերը, այնքան բարենշան երևույթ մը է»[85]։

1877 թ. հունիսին Կ. Եաղմաճյանը իր ձեռքն է վերցնում «Թատրոն բարեկամ մանկանցի» հրատարակության գործը։ Երկշաբաթաթերթի աւոոնատերն է մնում Հակոբ Պարոնյանը։ Թերթի գաղափարական ու դաստիարակչական ուղղությունը դրեթե չի փոխվում, հիմնականում մնում է նույնը։ Այս անգամ արդեն տպագրվում են նյութեր նաև դպրոցական բարձր տարիքի երեխաների համար։ Մանկական պարբերականի բովանդակության մասին խմբագրական հոդվածում գրված է. «Առհասարակ պիտի պարունակե փոքրիկ տղայոց, պատանեկաց և պատանուհեաց համար պարզ ոճով շարադրված բարոյական պատմություններ, միտք բացող հրահանգներ, զանազան գիտությանց վերաբերյալ նախնական ծանոթություններ, բարոյական դասեր, խրատներ, հին ու նոր կատակարանեն պատվիրներ ու պատմություններ, առակներ, առածներ, երգեր, խաղեր, հանելուկներ և այլն»[86]։

Երկշաբաթաթերթի էջերում երևան են գալիս «Մտավոր վարժություն», «Բարոյական դասեր» բաժինները։ Շարունակելով Պարոնյանի կողմից մշակված ավանդույթները, տպագրվում են նյութեր, որոնք բավարար սնունդ են տալիս մանկան հոգևոր ու մտավոր կյանքի զարգացմանը։ Խմբագրությունը խոստովանում է, որ՝ «Ամեն ջանք ի գործ դրված է այնպիսի նյութեր ընտրել, որ տղայոց մտավոր կարողության և ընդունակության համապատասխանեն»[87]։

«Թատրոն բարեկամ մանկանցում» տեղ էին գրավում նաև ավետարանական պատմությունները, ինչպես և «Ավետաբեր տղայոց համար» մանկական պարբերականից արտատպված նյութերը։ Նոր հրատարակիչների կողմից լույս ընծայվող պարբերականը որոշ չափով տուրք էր տալիս նաև քրիստոնեական բարոյախոսությանը։

Քանի որ «Թատրոն բարեկամ մանկանցը» նյութեր էր ղեկուղում նաև բարձր դասարանի աշակերտության համար,

---

85 «Արևելյան մամուլ», 1876, № 2, էջ 83։

86 «Թատրոն բարեկամ մանկանց», 1877, № 1, էջ 11։

87 Նույն տեղում։

փոքրիկ քույրը՝ Զապելն ալ իր շնորհակալությունը կը հայտնե ձեզ»[82]։

«Թատրոն բարեկամ մանկանց» պարբերականը գոյատեվում է ընդամենը մեկ տարի։ 1876 թ. դեկտեմբերի 16-ին հրատարակվում է նրա վերջին համարը։ Պարոնյանը իր հրաժեշտի խոսքը ուղղելով բաժանորդներին, գրում է. «Թատրոն այն աղքատ մոր պես ըրավ, որ իր ունեցածը չունեցածը կը ծախե խնճոր կամ շաքար ուզող և չկայն չհասկցող իր անմեղ ու միամիտ զավակը գոհ ընելու համար։ Այսուհետև չկրնար իր այս վիճակը ծածկել, քանի որ իր հրատարակությունը դադրեցնելու ստիպված է, ուստի պետք է, որ այս դադարման պատճառը գաղտնի խոստովանի իր մեծ բաժանորդներուն ականջն ի վար, այնպես որ իր փոքրիկ բաժանորդներն իմանալով չվշտանան։ Հարկ չէ, որ մեկը տպագրական գործերու հմուտ ըլլա, ամենքը կրնան մտկաբերել, թե ասանկ բազմապատկեր, գեղեցիկ տպագրությամբ և աժան թերթ մը չկրնար Մեկ Արծ. Մեճիտ տարեկանով և 229 բաժանորդով ապրիլ, որոց մեկ մասն ալ դեռ անվճար կը մնան տարին լրանալեն հետո»[83]։

Հակոբ Պարոնյանն իր մանկական պարբերականում մշակում է դաստիարակության այն սկզբունքները, որոնք ուրվագծում են մանկական դեմոկրատական մամուլի զարգացման հիմնարիտ ուղիները։ Երկշաբաթաթերթը ժամանակին արժանացել է առաջադեմ մտավորականության բարձր դնահատականին։ Մատթեոս Մամուրյանը անդրադառնալով Հակոբ Պարոնյանի գործունեությանը, գրել է. «Երբեմն «Մեղու»-ի, այժմ մյուս Թատրոնի[84] հեղինակն ոչ միայն գիտի Թեմոկրիտեսի ծաղրն ու ծիծաղը մեր թերությանց վրա ցույց տալ, այլ կծու ու մտացի սլաքներով աղայոց հետ պարզ ու կրթական լեզվով խոսել, միաք բանալու, սիրտ կրթելու համար հատուկ վեպեր ու բարոյական խրատներ հերյուրել, այս ավելի դժվար արվեստ

---

82 «Թատրոն բարեկամ մանկանց», 1876, № 2, էջ 15։

83 «Թատրոն բարեկամ մանկանց», 1876, № 24, էջ 188։

84 Խոսքը «Թատրոն բարեկամ մանկանցի» մասին է, որը Պարոնյանի 1874 թվականին հրատարակած «Թատրոն» շաբաթաթերթից հետո նույնանուն վերնագրով մյուս պարբերականն է։

է, քան մյուսը։ Ազգին մեջ որչափ շատանան այսպիսի թերթերը, այնքան բարենշան երևույթ մը է»[85]։

1877 թ. Հունիսին Կ. Եաղմաճյանը իր ձեռքն է վերցնում «Թատրոն բարեկամ մանկանցի» հրատարակության գործը։ Երկշաբաթաթերթի արտոնատերն է մնում Հակոբ Պարոնյանը։ Թերթի գաղափարական ու դաստիարակչական ուղղությունը դրեթե չի փոխվում, հիմնականում մնում է նույնը։ Այս անգամ արդեն տպագրվում են նյութեր նաև դպրոցական բարձր տարիքի երեխաների համար։ Մանկական պարբերականի բովանդակության մասին խմբագրական հոդվածում գրված է. «Առհասարակ պիտի պարունակե փոքրիկ տղայոց, պատանեկաց և պատանուհեաց համար պարզ ոճով շարադրված բարոյական պատմություններ, միտք բացող հրահանգներ, զանազան գիտությանց վերաբերյալ նախնական ծանոթություններ, բարոյական դասեր, խրատներ, հին ու նոր կատակարանեն պատվիրներ ու պատմություններ, առակներ, առածներ, երգեր, խաղեր, հանելուկներ և այլն»[86]։

Երկշաբաթաթերթի էջերում երևան են գալիս «Մտավոր վարժություն», «Բարոյական դասեր» բաժինները։ Շարունակելով Պարոնյանի կողմից մշակված ավանդույթները, տպագրվում են նյութեր, որոնք բավարար սնունդ են տալիս մանկան հոգևոր ու մտավոր կյանքի զարգացմանը։ Խմբագրությունը խոստովանում է, որ՝ «Ամեն ջանք ի գործ դրված է այնպիսի նյութեր ընտրել, որ տղայոց մտավոր կարողության և ընդունակության համապատասխանեն»[87]։

«Թատրոն բարեկամ մանկանցում» տեղ էին գրավում նաև ավետարանական պատմությունները, ինչպես և «Ավետաբեր տղայոց համար» մանկական պարբերականից արտատպված նյութերը։ Նոր հրատարակիչների կողմից լույս ընծայվող պարբերականը որոշ չափով տուրք էր տալիս նաև քրիստոնեական բարոյախոսությանը։

Քանի որ «Թատրոն բարեկամ մանկանցը» նյութեր էր պատրաստում նաև բարձր դասարանի աշակերտության համար,

---

85 «Արևելյան մամուլ», 1876, № 2, էջ 83։

86 «Թատրոն բարեկամ մանկանց», 1877, № 1, էջ 11։

87 Նույն տեղում։

ուստի անդրադառնում էր քաղաքական հարցերին։ 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի տարիներին քննադատաբար անդրադառնալով ստեղծված պայմաններին, Թերթը գրում է. «Ո՞ր նյութին ընտրեմ, որմէ՞ սկսիմ։ Խոսիմ գետորեն հոսած արեա՞նց վրա, թե մերկ ու բոկոտն ձյուներուն մեջ մնացած փախստականներուն վրա. մեծ մարդոց պզտիկ գործե՞ւն վրա, թե խելացի մարդոց անմիտ գործերուն վրա. մեկ կողմեն պատրաստված հիվանդանոցներո՞ւն վրա, թե մյուս կողմեն ձուլված գնդակներուն վրա. գիտությանց լույսն աշխարհի վրա սփռող հաստատությա՞նց վրա, թե մահաբույր փայլատակող թնդանոթներուն վրա. տասնևիններորդ լուսավորյալ դարի՞ն վրա, թե միջին դարն հիշեցնող եղերերգությանց վրա. ոխերիմ ազգասերներո՞ւ վրա, թե Վասակի և Մերուժանի վրա հազարավոր...»[88]։

Երկշաբաթաթերթը խաղաղասիրության, եղբայրասիրության գաղափարներն էր սերմանում մանուկների մեջ։ Գողտրիկ պատմվածքներում ցույց էր տրվում քաջ, անձնազոհ երեխաների վերաբերմունքը հայրենիքի ազատության համար պայքարող մարտիկների նկատմամբ («Կեռասը»[89] և այլն)։

Երկշաբաթաթերթի էջերում մեծ տեղ էին գրավում նաև հայրենասիրական բանաստեղծությունները։ Հայրենակարոտ պանդուխտ հայի նվիրական զգացմունքները բանաստեղծական շնչով արտահայտված էին «Ա՛ռ Հայրենիս» ոտանավորում։ Թշնամու նկատմամբ համակատելություն սերմանող այս բանաստեղծությունն, անկասկած, որոշ դեր է խաղացել երեխաներին հայրենասիրական ոգով դաստիարակելու գործում։

Մանկական պարբերականի էջերում առանձնապես աչքի էին ընկնում Մ. Մամուրյանի առակները («Թութակ և շուն», «Մանուկ և կատու» և այլն) և Ռեթեոս Պերպերյանի բանաստեղծությունները։

Կյանքի և ընդհանրապես աշխարհի վերաբերյալ երեխաների ունեցած պատկերացումները հարստացնելու նպատակ-

[88] «Թատրոն բարեկամ մանկանց», 1878, № 16, էջ 121—122։

[89] «Թատրոն բարեկամ մանկանց», 1878, № 20, էջ 153—155, № 21, էջ 163—168, № 22, էջ 169—174։

ներով տպագրվում էին հույն փիլիսոփաների հումորով համեմված խոսքերը. «Մեկը գնաց Դիոգենեսին հարցուց, թե ո՞ր ժամուն ճաշելու է: Սա պատասխանեց. «Եթե մեծատուն ես՝ կեր, երբ որ կուզես, եթե աղքատ ես՝ կեր, երբ որ կըրնաս»[90]:

Այս հրատարակությունը ևս մեկ տարուց ավել չտևեց: Որքան էլ խմբագրությունը դիմեց ընթերցողներին, խնդրելով «Թատրոնին» «բ» շրջանին բաժանորդ ըլլալ», ոչինչ չստացվեց: Ձուննենալով բավարար թվով բաժանորդներ, մանկական պարբերականը 1878 թ. հունիսին ընդմիշտ փակվեց:

«ԲՈՒԲԱՍՏԱՆ ՄԱՆԿԱՆՑ» (1882—1888)

1882 թ. Կոստանդնուպոլսում լույս է տեսնում «Բուրաստան մանկանց» պատկերազարդ կիսամսյա հանդեսը: Այն խմբագրում և հրատարակում են նկարիչ-փորագրիչներ Նշան Պերպերյանը[91] և Ստեփան Տեովլեթյանը: Մանկական այս նոր պարբերականի խմբագիր-հրատարակիչները սերտ կապերի մեջ են մտնում արևմտահայրոպական մանկական ամսագրերի խմբագրությունների հետ: Ամսագրի բովանդակության մասին առաջին տարվա առաջին համարում գրված է. «Պարունակությունը պիտի ըլլա՝ բարոյական և քրիստոնեական պարտականության վրա համառոտ տեսություններ: —Նշանավոր և երևելի անձանց մանկությունը և հնարագետ անձանց կենսագրությունք՝ հանդերձ կենդանագրովք և նշանավոր անցից պատկերներով: —Մանկական վեպեր.—Բարոյալից մանրա-

---

[90] «Թատրոն բարեկամ մանկանց», 1878, № 17, էջ 133:

[91] Նշան Պերպերյանը ժամանակին հայտնի է եղել որպես մի շարք գեղարվեստական գործերի հեղինակ, թարգմանիչ, միաժամանակ տպարանատեր, գրաշար, փորագրիչ, գործակալ, հրատարակիչ: Նա հրատարակել է գրքեր, դասագրքեր, կազմել օրացույց-տարեցույցեր: Ուշագրավ են նրա կազմած «Ժողովրդական տարեցույցի» հատորները: Նա է իր տպարանում կազմակերպել Մ. Մամուրյանի «Առաջին ընթերցարան», «Բանալի շարադրության», «Առողջաբանություն ազգկանց», «Առևտրական թվաբանություն», «Դիտելիք ու պարտիք տղայոց» և շատ այլ գրքերի հրատարակության գործը:

վեպեր.—Կարևոր և օգտակար արվեստից ու գյուտերու վրա համառոտ և պարզ ծանոթություններ»: Նշվում է նաև, որ նման նյութեր ընտրելիս «առաջնորդ ընտրած են եվրոպական լեզվով, մանավանդ տղայոց համար հրատարակված լրագիրներ և հանդեսներ»:

Ամսագիրն ուղղված էր բոլոր տարիքի երեխաներին: Ուստի, այն գործիչներին, որոնք գտնում էին, թե «Բուրաստան մանկանց» «տղայոց համար չափազանց լուրջ է», խմբագիր-հրատարակիչները պատասխանում էին. «...մեր ազգին մեջ տղայության յուրաքանչյուր տարիքն իր հատուկ թերթն չունի, ինչպես ունեն Եվրոպա և Ամերիկա: Հայերեն տղայոց թերթ մը պետք է հարմար լինի 6 էն մինչև 18 տարվո բոլոր տղոց, այսինքն՝ նորա նյութերն աստիճանավոր և խառն լինին»[92]:

«Բուրաստան մանկանցի» յուրաքանչյուր համար բաղկացած էր տասնվեց էջից: Ամսագրին աշխատակցում էին Կոստանդնուպոլսի, Զմյուռնիայի վարժարանների աշակերտաշակերտուհիները, ինչպես նաև ականավոր հրապարակախոս Մատթեոս Մամուրյանը, բանաստեղծ Ռեթեոս Պերպերյանը և ուրիշներ: Ամսագրին թղթակցում էին Եղիա Տեմիրճիպաշյանը և ժամանակի այլ հրապարակախոսներ:

Բարոյախրատական իմաստով ամսագրում աչքի էին ընկնում ընտանի կենդանիների մասին Վրթանես Փափազյանի գրած նյութերը («Վանա կատու»[93] և այլն), որոնք մանուկների մեջ արթնացնում էին սեր և խղճմտանք, կրթում ու դաստիարակում նրանց զգացմունքները:

Ինչպես «Թատրոն բարեկամ մանկանցում», այնպես էլ «Բուրաստան մանկանցում» զետեղվում էին այլաբանական ղրույցներ: «Կ. Պոլսո կենդանիները» երգիծական մանրապատումներում ցույց էր տրված, թե ինչպես Կ. Պոլսում կյանքը դժվար էր աշխատավոր մարդու համար: «Ա՜հ, ես Պոլիսը լավ կը ճանչնամ, հոն թրամվայի ձի էի և առտուընէ մինչև իրիկուն կը վազեի»[94]: Կամ գրված է. «Եղած տեղդ կեցի՛ր,

[92] «Բուրաստան մանկանց», 1882, տետր 1, էջ 15:

[93] «Բուրաստան մանկանց», 1885, տետր 16, էջ 244—246:

[94] «Բուրաստան մանկանց», 1883, տետր 3, էջ 39:

«Բուրաստան մանկանց» ամսագրի շապիկը

աղաս, և Պոլիսը մի՛ մտածեր, վասն զի այնտեղի ամբողջ փարթամությունը և հարստությունը՝ երկնքէն ուղղակի մեզ եկած օդը և կերած սևուկ հացդ չարժեր»[95]:

Նշանակալից է այն, որ ամսագրում տեղ են գրավում հեքիաթներն ու ժողովրդական բանահյուսությունից վերցված նյութերը: Հայ մանուկների համար այստեղ տպագրվել են Անդերսենի «Լուցկի վաճառող աղջիկը» ուշագրավ հեքիաթը, ինչպես և Գարեգին Սրվանձտյանի «Համով-Հոտով» երկասիրությունից մի քանի հատվածներ: Իրենց բովանդակությամբ ուշագրավ են նաև Ռեբեկա Պերպերյանի, Ալեքսանդր Փանոսյանի, Արշակ Մեհրաբյանի, Մեսրոպյան վարժարանի աշակերտ Միհրան Վարպետյանի և ուրիշների բանաստեղծությունները: Ռեբեկա Պերպերյանի մանկական բանաստեղծությունները տպագրվում էին «Տղայոց համար» խորագրի տակ: Բանաստեղծական վառ պատկերների միջոցով ցույց էր տրվում, որ ոչ բոլոր երեխաներն էին ապրում ուրախ և անհոգ կյանքով, որ շատ ու շատ մանուկների համար տխրալի էր ձմռան գալը, քանի որ

Ձյուն ու բուք օրերուն
Ջունին կրակ, հաց ալ չունին[96]...

Կյանքը իրական գույներով է պատկերված նաև Ալեքսանդր Փանոսյանի և Միհրան Վարպետյանի բանաստեղծություններում: Ա. Փանոսյանի «Կույր ծերունին»[97] և այլ ոտանավորներում կենդանի պատկերներով ներկայացված է որբ ու անտուն հայրենակարոտ մանուկների թշվառ առօրյան:

Պետք է նշել, որ բացառությամբ Ա. Փանոսյանի, Ա. Մեհրաբյանի և մի քանիսի ստեղծագործությունների, ամսագրում տպագրված մանկական գործերը դաստիարակչական ուղղվածությամբ և գեղարվեստական տեսակետից թույլ լինելով, չունեցան մնայուն արժեք: Ամսագիրը չանդրադարձավ նաև մանկական ընթերցանության տեսական հարցերին, չմտահոգվեց ստեղծելու ժամանակի առաջավոր մանկավարժության

[95] Նույն տեղում, էջ 40:

[96] «Բուրաստան մանկանց», 1882, տետր 24, էջ 377:

[97] «Բուրաստան մանկանց», 1883, տետր 3, էջ 35:

պահանջներին պատասխանող գրական ստեղծագործություններ։ Դրա փոխարեն «Բուրաստան մանկանցում» որպես մանկական ընթերցանության օգտակար նյութ աչքի էր ընկնում գիտահանրամատչելի ակնարկը։ Պետք է նշել, որ ակնարկի այդ ժանրն իր զարգացումն ստացավ այս ամսագրում։ «Նշանավոր գործիչներ», «Աշխարհաշեն անձինք» և «Վարք հրևելի արանց» խորագրերով այստեղ տպագրվեցին Ջեմս Ուատտի, Կոլումբոսի, Ռոբերտ Ֆուլտոնի և շատ ու շատ նշանավոր այլ մարդկանց կյանքն ու գործունեությունը լուսաբանող հոդվածներ։ Ուշագրավ էին «Գիտական զբոսանք» ենթավերնագիրը ունեցող տեսական ու դիդակտիկ նյութերը, որոնք ծանոթացնում էին իրերի, առարկաների ֆիզիկական ու քիմիական բաղադրությանը, զանազան նյութերի ստացման միջոցների եղանակներին։ Ամսագիրը անդրադառնում էր նաև Հայաստանի աշխարհագրությանը, պատմական նշանավոր վայրերի (էջմիածին և այլն) նկարագրությանը, ինչպես նաև հայ ժողովրդի պատմությանը («Մասիս» և այլն)։ «Բուրաստան մանկանցը» նախորդների համեմատությամբ ուներ մի առավելություն ևս։ Դա այն էր, որ այստեղ մեծ տեղ էր տրվում ֆիզիկական դաստիարակության կազմակերպման հարցերին։ Դրանով ամսագիրը լրացնում էր այն բացը, որ նկատվում էր դպրոցներում։ Ամսագիրը օգտագործելով քաղաքակիրթ երկրների դպրոցների առաջավոր փորձը, իր էջերում տպագրում էր մարմնամարզության, լողի, սպորտի այլ ձևերի վերաբերյալ ուսուցանող հոդվածներ՝ վարժությունների կատարման ձևերի ցուցադրումով (պատկերների միջոցով)։

Հրատարակիչների և աշխատակիցների ուշադրության կենտրոնում էին գտնվում ինչպես մտավոր կրթության, ֆիզիկական դաստիարակության, այնպես էլ առօրյա կյանքին անհրաժեշտ կենցաղային հարցերը։ Ահա թե ինչու ամսագիրը իր էջերում մեծ տեղ է հատկացնում Մատթեոս Մամուրյանի «Առտնին տնտեսություն»[98] աշխատությանը։ Մատթեոս Մամուրյանը նկատելով եվրոպական քաղաքակիրթ երկրների այ-

[98] «Բուրաստան մանկանց», 1883, տետր 1, էջ 14—16, տետր 2, էջ 27—28 և այլն։

լաղան կենցաղավարության բացասական ազդեցությունը հայ ժողովրդի, հատկապես նրա ընտանեկան կյանքի վրա, մշակում է առանին (ընտանեկան) կանոններ՝ լավ և ճիշտ կենցաղավարության համար: Նրա գլխավոր նպատակն էր ցույց տալ հայ կնոջը իր դերն ու տեղը ընտանիքում և ընդհանրապես կյանքում: Ելնելով դրանից, նա իր դասագիրքը բաժանում է չորս ենթամասերի՝ տան բարոյական կազմավորությունը, նյութական կազմավորությունը, պիտույքը և առողջապահիկ միջոցները: Դիմելով աղջիկներին ու հայ կանանց, նա գրում է. «Դուք, թե՛ ընտանեաց, և թե՛ ընկերութեան մեջ, շատ անգամ հավատարմութեան, անձնազոհութեան և արդարասիրութեան պատկերներն եք, աղդի մը կենսատու ուժերն և լավ խորհուրդներու և գործերու հեղինակ, սակայն Ձեր այդ անշուք վիճակին մեջ՝ ձայն, իրավունք չունիք խոսելու, ոչ գործելու և ոչ հշմարտություն երևան հանելու, և մարդիկ օգուտ քաղելով Ձեր այդ սարկական և վեհերոտ բնութենէ, կգրավեն մինչև իսկ Ձեր այդ անշուք այլ կարևոր ներգործության պատիվը, ինչպես սովոր են գրավել և յուրացնել շատ անգամ ինչ որ իրենցը չէ...»[99]:

Քաղաքակրթությունը որոշակի բարեփոխումներ էր մղում կնոջ ընտանեկան և հասարակական կյանքում: Մամուրյանը բացատրում էր աղջիկներին ու կանանց այն նոր խընդիրները, որոնց իրականացումը կենսական անհրաժեշտություն էր ներկայացնում: «Ներկա պարագայից մեջ՝ բավական չէ տունը պահել մաքուր, հավքտուք ընել, կերակուր և անուշ եփել...,—գրում էր նա,—ո՛չ, ասոնք չեն կազմեր ազգային և ընտանեկան կեանք ըսվածն, որ մեր մեջ բոլորովին անգույն և անկերպարան վիճակ ունի, այլ Հայ տպագա կինը կոչված է ավելի կարևոր և կրթիչ պաշտոն մը վարել...»[100]: Մամուրյանի աշխատության առաջին մասը նվիրված էր կնոջ բարոյական հատկությունների նկարագրությանը: Նա գտնում էր, որ կինը պետք է լինի կրթված, հայրենասեր, ուշիմ, խելոք, ունենա հաստատուն կամք, տոկունություն և այլն: Մամուրյանը իր աշխատության մեջ անդրադառնում էր նաև սեն-

[99] «Բուրաստան մանկանց», 1883, տետր 2, էջ 28:

[100] Նույն տեղում, էջ 31:

յակների կահավորման, մաքրության պահպանման և այլ հարցերին: Սովորեցնում էր, թե ինչպես պետք է պատրաստել այս կամ այն կերակուրը, ինչ կարևոր նշանակություն ունի մարդկային օրգանիզմի համար այս կամ այն սննդամթերքը և այլն: Ժողովրդի կուլտուրական, կրթական կյանքում նկատվող ամեն մի դրական երևույթ իր արձագանքն էր գտնում ամսագրի էջերում: Մատթեոս Մամուրյանի «Առողջաբանություն» գրքի առթիվ ասված է. «Կոկիկ և դյուրըմբռնելի ոճով գրված է: Այնպես որ ոչ թե լոկ աղջկունք, այլև փոքր և նույնիսկ մեծամանչ մանուկներու ալ կրնայ՝ իբր դասագիրք ծառայել»[101]: Մամուրյանի այդ դասագիրքը համարվում էր «ազգային ընտիր արտադրություն», որ արժանի է խրախուսանքի: Ամսագիրը գրում է. «Ահա Մամուրյան, ահա Ռ. Պերպերյան, և այլք նոցա նմանիք, որ կտիրապետեն մեր գրական հրապարակին իրենց տոհմասիրական վաւուռն ղգացմամբն ու հանճարալիր խորհրդածություններով կպանծացուցանեն, կբարձրացնեն, ինչ որ ազգային է: Ապրին այն ամեն իմաստուն հայերն, որք Մամուրյանի և անոնց նման մտքի և մարմնո առողջաբանական մենագրությամբն կսփոփեն զմեզ և ազգին բարձրագույն բարոյականը ավերել սպառնացող հրձանքին դեմ թումբ ու պատվար կը կանգնին»[102]:

«Բուրաստան մանկանցի» հիմնական խնդիրն էր՝ «Ձեռնըտու լինիլ ազգային կրթության վսեմ գործին, ամեն անձնական շահեն ավելի վերահիշյալ նպատակին իրագործման աշխատիլ, չը խնայել բարոյական և նյութական զոհուղություն բարեկարգելու համար մեր սուրբ հանդեսը»[103]: Եղիա Տեմիրճիպաշյանը որևէ կերպ հայ մանուկներին օգտակար լինելու նպատակով խմբագրություն է ուղարկել ամերիկացի Չաննինգ[104] անունով մատենագրի աշխատության «Թե ձեռաց

---

[101] «Բուրաստան մանկանց», 1886, տետր 8, էջ 120:

[102] Նույն տեղում, էջ 121:

[103] «Բուրաստան մանկանց», 1886, տետր 20, էջ 305:

[104] Չաննինգ (1780—1842): Ամերիկացի գիտնական: Ժամանակին նոր աշխարհի ֆենիկն էին նրան համարում:

աշխատությունն աղնիվ է» վերնագրով հատվածը[105], որը թարգմանել էր օրիորդ Սաթենիկ Պեյլեկճյանը։ Խմբագրին ուղարկած նամակում, օգտագործելով հարմար առիթը, նա իր ուրախությունն է հայտնել, գրելով. «Ձեմ կրնար պատմել, թե որքան համակրություն կզգամ առ ձեր անձն և առ ձեր գործն։ Աշխատութեան դյուցազանց կարգ կրնաք դասվիլ դուք, ձեր գործն ալ, «Բուրաստան մանկանցն» աշխատասիրության հորդոր կը կարդա յարաժամ դեռահաս էակաց և ապագա դյուցազանց աշխատութեան։ Ձեր «Բուրաստանին» մեջ կը փթթին ու կը բուրեն նոր տաղանդներ. հին հռչակավոր տաղանդներ ալ կիջնեն հոն երբ երբեմն ոգևորել ու շքավորել դեռափթիթ երկսեռ գրագետներն։ Առաջինն անտարակույս այդ հնամի ու հիանալի հեղինակաց՝ «Արևելյան մամլո» խմբագրապետն է—պարոն Մատթեոս Մամուրյանն, որ կրնա ըսվիլ՝ Արևելից բույրին կուգա խառնել Արևելից լույսն»[106]։

Ամսագիրը նպատակ է ունեցել դաստիարակել ոչ միայն ընտանիքում ու կենցաղում պիտանի սերունդ հասարակության համար, այլև միաժամանակ պատրաստել բազմակողմանիորեն զարգացած, կուլտուրայի, արվեստի հարցերին գիտակ երիտասարդություն։ Ամսագրում «Նկարիչք, քանդակագործք և երաժիշտք» ենթավերնագրով տպագրվել են արևմտաեվրոպական անվանի նկարիչների, երաժշտագետների, գրողների ու փիլիսոփաների կյանքի ու գործունեության վերաբերյալ ուշագրավ հոդվածներ։ Աշխույժ ու պատկերավոր ոճով գրված այդ նյութերը պատանիների ու աղջիկների մեջ ներշնչել են սեր հանդեպ գրականությունը, նկարչությունը, ինչպես և առաջացրել անվանի մարդկանց նմանվելու, նրանց կյանքն ու գործը ընդօրինակելու բուռն ձգտում։

«Բուրաստան մանկանցում» մեծ տեղ են գրավել հատկապես թարգմանական գործերը։ Այստեղ են տպագրվել արևմտաեվրոպական ականավոր գրողներ Վ. Հյուգոյի, Գ.

---

[105] Հատվածում այն միտքն է արտահայտված, թե արհեստավորն ու երկրագործը պետք է «ուսյալ և կրթված» լինեն, և թե հարգի են բոլոր տեսակի աշխատանքները («Բուրաստան մանկանց», 1883, տետր 19, էջ 294—295)։

[106] «Բուրաստան մանկանց», 1883, տետր 19, էջ 293։

Լոնգֆելլոյի, Ջ. Բայրոնի, Ջ. Դիկկենսի, Ժ. Լաֆոնտենի, Հ. Անդերսենի և մյուսների՝ պատանիներին հետաքրքրող գործերը։

Ամսագրի ծառայություններից մեկն էլ համարվում է մանկական դրամատուրգիայի զարգացման ուղղությամբ կատարած փորձը։ Տպագրելով «Վարժուհին», «Կորսված տետրակը» և այլ պիեսներ, ամսագիրը մի կողմից նպաստել է դրամատիկական ժանրի զարգացմանը մանկական գրականության մեջ, մյուս կողմից պատանի ընթերցողի մոտ առաջացրել հետաքրքրություն հանդեպ դրամատուրգիան։

«Բուրաստան մանկանցում» թե՛ բարոյախրատական իմաստով, թե՛ ճանաչողական արժեքով անչափ կարևոր էին ասացվածքները, զրույցները։ Ինչպես Խ. Գյուլնազարյանն է գրում. «Եթե մի ուսումնասիրող հավաքեր «Բուրաստան մանկանց» հանդեսի էջերում ցրված առածները, ասացվածքները, ապա դրանցից հնարավոր կլիներ կազմել մի բավական խոշոր ժողովածու, որ որոշակի պատկերացում կտար արևմտահայ իրականության մեջ անցյալ դարի վերջերին տարածված առածների ու ասացվածքների հիմնական ուղղության և գեղարվեստական առանձնահատկությունների մասին»[107]։

Մեծ առավելություն էր նաև այն, որ ի տարբերություն նախորդների, ամսագիրը աչքի էր ընկնում իր շքեղ նկարներով ու գեղեցիկ ձևավորմամբ։ Հրատարակիչները լինելով նկարիչ-փորագրիչներ, նախշերը, գծանկարները պատրաստում էին առանձին խնամքով, նկատի ունենալով երեխաների տարիքային առանձնահատկությունների հետ կապված հետաքրքրասիրությունները ու հակումները։ Գրական թե այլ բնույթի նյութերի մեծ մասը պատկերազարդ էր։ Նկարների բովանդակությունը համապատասխանեցված էր նյութերին։ Ժամանակակիցների հիշողությունները վկայում են այն մասին, թե մանկական այս ամսագիրը որքան օգտակար գործ է կատարել ընթերցասեր պատանիների կյանքում։ Արևմտահայ գրող Տիրան Չրաքյանը (Ինտրա) անդրադառնալով «Բուրաստան մանկանցին», որի համարները պատանեկության տարի-

[107] Խ. Մ. Գյուլնազարյան, *Ակնարկներ հայ մանկական գրականության պատմության*, Երևան, 1961, էջ 75։

ներին այնքան սիրով ընթերցել է, հիացմունքով վերհիշում է. «Ինչեր կային այն գրքերուն կամ հետզհետե եկող պրակներուն մեջ. որքան բաներ՝ զիս հետաքրքրող, զիս զվարճացնող, զիս խանդաղատացնող ու հուզող, զիս վերին աստիճանի ախորժելի կերպով՝ այսինքն լրջորեն, կատարելապես, ճշմարտապես մշակող։ Այն էջերուն հանդեպ կզորանային ու կհատատուտեին բնութենապաշտ հաշակներս, աշխարհագրական, բնապատմական ու բնագիտական բազմազան հատուածներուն շնորհիվ որոցմով հանդեսը լի էր»[108]։

Ամսագիրը ժամանակին իր արժանի բարձրության վրա դրեց և ուշադրության արժանացրեց մանկական ընթերցանության նյութը, ցույց տալով նրա դաստիարակչական նշանակությունն ու ճանաչողական արժեքը։ Սակայն իր նախորդների նման այն նույնպես երկար չդոյատևեց։ Չունենալով բավարար թվով բաժանորդներ, 1888 թ. ամսագիրը դադարեց։

«ԾԱՂԻԿ ՄԱՆԿԱՆՑ»
(1889—1893)

«Բուրաստան մանկանցի» հրատարակիչ Նշան Պերպերյանը 1889 թ. որպես «Բուրաստան մանկանցի» շարունակություն լույս է ընծայում «Ծաղիկ մանկանց» ամսագիրը։ 1889—1890 թթ. ամսագրի արտոնատերն էր Ա. Սաքայանը, իսկ տպագրիչն ու հրատարակիչը՝ Նշան Պերպերյանը։ 1891—1893 թթ. «Ծաղիկ մանկանցը» լույս է տեսնում որպես դաստիարակության հարցերին նվիրված շաբաթաթերթ, որի արտոնատերը շարունակում է մնալ Ա. Սաքայանը, իսկ խմբագիրն է դառնում Մ֊իհրան Ասքանազը։

Մանուկներին ուղղված «Ծաղիկ մանկանց» ամսագիրը լույս էր տեսնում ամիսը երկու անգամ, 16 էջ ծավալով։ Նյութերը հիմնականում պատրաստում էին «Բուրաստան մանկանցի» աշխատակիցներ Ռեթեոս Պերպերյանը, Ալեքսանդր Փանոսյանը (Ալփասլան), Մ֊իհրան Մոդյանը, Արշակ Չոպանյանը, Սահակ Խանճյանը և ուրիշներ։ Ամսագիրն ուներ ընդամենը 280 բաժանորդ։

[108] «Բյուզանդիոն», 1907, № 3154, էջ 1։

«Մաղիկ մանկանցի» նպատակների մասին խմբագրական հոդվածում գրված է. «Մեր հանդեսը իր նոր շրջանին մեջ միևնույն նպատակին պիտի ծառայե. պիտի պարունակե մանկանց օգտակար հոդվածներ, շահավետ ծանոթություններ ամեն հետաքրքրական իրերու վրա. գիտական և ուսումնական հոդվածներ, պատմություններ նոր գյուտերու վրա, նշանավոր անձանց կենսագրություններ, հին և ժամանակակից պատմութենեն քաղված. հանապարհորդական տպավորություններ, աշխարհագրական գիտելիքներ, բնության հրաշալեաց պատմություն, խաղեր, զվարճալի վեպեր, մանավանդ դպրոցական խաղեր, այս ամենը սիրուն և հետաքրքրական պատկերներով զարդարուն, այնպես որ տարվոյն մեջ ձեր թերթերն իրարու քով գալով՝ պիտի կազմեն ընտանեկան մատենադարան մը մանուկներու և երիտասարդաց ընթերցման արժանի»[109]:

«Մաղիկ մանկանցի» բարոյախրատական նյութերը վերցված էին իրական կյանքից և ամենևին չէին կեղծում կյանքի ճշմարիտ պատկերը: Իսկ արևմտաեվրոպական և այլ գրականություններից թարգմանված պատմությունները հարազատ էին բնագրերին: Այսպես, եթե «Բուրաստան մանկանց» և «Ավետաբեր տղայոց համար» ամսագրերում Վուչետիչի «Կարմիր լապտերը» մանկական պատմվածքը տպագրվել է բոլորովին այլ մեկնաբանությամբ, ապա այստեղ այն թարգմանվել է այնպես, ինչպես բնագրում է: Այսինքն, երկաթգծի պահապան Բիեռոն գնացքը փրկում է վտանգից ոչ թե Ավետարանի կամ սուրբ գրքերի օգնությամբ, այլ անձնազոհ արարքով, հասարակության նկատմամբ ունեցած պարտքի բարձր զգացումից ելնելով:

Որպես մանկական ընթերցանության լավագույն նյութ ամսագրում տպագրվել են Ալֆոնս Դոդեի «Թուղն ու ծույլը», Անդերսենի «Լուցկի վաճառող աղջիկը» պատմվածքները, Լաֆոնտենի առակները և այլ գործեր: Նորություն էր այն, որ այստեղ տպագրվում են աղքատ ու հարուստ երեխաների առօրյան իրար հակադրող գեղարվեստական պատկերներ:

---

[109] «Մաղիկ մանկանց», 1890, № 23, էջ 359—360:

«Խեղճ աղքատ մարդկանց զավակներն իրարու քով կը դողդոջեն սառնահար, կուլան, քաղցն անոնց հոգին կը տանջե», «իսկ հարուստին զավակներն թարմ, առույգ, զվարթ, դեղապանծ, ամեն ինչ ունին» (Կարապետ Ոսկանյան, «Երկու պատկեր»):

«Ծաղիկ մանկանցում» մեծ տեղ էին գրավում դիտահանրամատչելի ակնարկները: Միհրան Մուշյանը այստեղ տպագրում էր աշխարհագրության, առողջապահության վերաբերյալ «Գիտական զբոսանք» խորագրով նյութեր: Սիստեմատիկաբար տպագրվում էին «Մանկության երևելի արանց» պատմակենսագրական ակնարկները: Դրանք վերաբերում էին և՛ հայ, և՛ այլ ժողովուրդների պատմությանը, ազգերի ու ցեղերի կյանքի ու կենցաղի նկարագրությանը:

1891 թ. «Ծաղիկ մանկանցը» դառնալով շաբաթաթերթ, հոդվածներ էր տպագրում՝ ուղղված ուսուցիչներին և ծնողներին: Շաբաթաթերթի հիմնական նպատակն էր՝ օգնել կրթական գործի բարելավմանը: Լուսավորության և կրթության «արգել ու խափան եղող» պատճառ էր համարվում դպրոցական ծրագրերի ու դասագրքերի պակասը:

Շաբաթաթերթի գրեթե յուրաքանչյուր համարում տպագրվում էին «Դպրոցական դասընթացներ» խորագիրը կրող նյութերը: Դրանք ընթերցողին մոտիվ ուղևկցում էին շրջապատի տեղավայրերը, ծանոթացնում քաղաքների ու գյուղերի աշխարհագրական դիրքին, բնակլիմայական պայմաններին: «Միջին ընթացք» ենթավերնագրի տակ տպագրվում էին հայոց լեզվի քերականական կանոնները ուսուցանող դիդակտիկ նյութեր, տեքստեր՝ գործնական պարապմունքների համար, ֆրանսերեն ուսուցանող բացատրական հոդվածներ, ինչպես նաև Լամարթինի («Մանկան օրհներգ յուր զարթման»), Վիկտոր Հյուգոյի («Մահամերձ ծերունին», «Նապոլեոն» և այլն) և այլ հեղինակների բանաստեղծությունները: Առանձնապես ուշագրավ էին «Բարձրագույն ընթացք» բաժնում զետեղված «Պատմություն հայ դպրության», «Պատմություն քաղաքակրթության», «Պատմական մանկավարժություն» և այլ նյութեր: Ա. Գարագաշյանի հոդվածաշարը ծանոթացնում էր հայ վիպասանությանը, հայ պատմիչների (Խորենացի, Կոր-

յուն, Փարպեցի), հայ գրերի գյուտի հեղինակ Մեսրոպ Մաշտոցի կյանքին ու գործունեությանը:

Մատաղ սերնդի դաստիարակության հարցերը նորագույն մանկավարժության դրույթների տեսանկյունից էին լուսաբանվում «Ջանազանք» խորագիրը կրող «Մանկավարժական նամականի» հոդվածաշարում: Շաբաթաթերթը ծնողներից ու դաստիարակներից պահանջում էր՝ երեխաներին սովորեցնել «բնախոսության նախնական սկզբունքները», ինչպես և «հոգեբանության տարրական օրենքները» և «բարոյագիտության էական վարդապետությունները»: «Ջանազանք» բաժնում պարբերականը անդրադառնում էր գրականության տեսության հարցերին: Մատթեոս Մամուրյանի «Գրական վեպն ի Ֆրանսիա»[110] հոդվածաշարում բարձրացվում էր ֆրանսիական նատուրալիստական վեպերի հայ ընթերցող հասարակայնության վրա ունեցած վնասակար ազդեցության հարցը: Նա գտնում էր, որ «լուրջ» և «բեղուն» գրականությունը չէր, որ լայն տարածում էր գտնում հայ ժողովրդի մեջ, այլ «ահռելի և քսմնելի վեպը», որ «իբրև ֆրանսիական և հատկապես փարիզյան բազմակողմանի կենաց պատկերներ կը տեղան ամեն ամիս, ամեն շաբաթ աշխարհի զանազան կողմերեն»: Նա նշում է. «Վիպական գրականությունն իր պայծառությունն ու փայլը պարտի փնտրե Դյումայի, Դոդեի և իրենց նմանեաց մեջ, որ նպատակ ընտրած են մարդկային բնության և ընկերության աղնվագույն կողմերը շեշտել, բարոյական բարձր իդեալի մը դիմել՝ միշտ բնականեն, իրականեն և ճշմարտությենէ չհեռանալով, քան թե վիպական գործերու մեջ բնախոսական, անդամազննական, բուժական և աղտեղաբանական դասեր տալ»[111]: Քննադատելով գրականության մեջ տարածում գտած նատուրալիստական ուղղությունը, որի ներկայացուցիչները պատկերում էին կյանքը այնպես, ինչպես որ այն կար, ներկայացնելով անգամ ամենագռեհիկ կենցաղային մանրուքները, Մամուրյանը մատնանշում էր ռեալիստական գրականության զարգացման ճշմարիտ ուղիները: Նա ընդգծում էր գեղարվեստական գրա-

[110] «Մաղիկ մանկանց», 1891, № 15, էջ 235—238:

[111] Նույն տեղում, էջ 236—237:

կանության դաստիարակող, վեհացնող դերը, որը չէին կարող կատարել ֆրանսիական կենցաղագրական վեպերը։ Պարբերականում Մամուրյանի հոդվածի երևան գալը հաստատում էր նաև այն փաստը, որ ռեալիստական ուղղություն ունեցող գրականության պահանջները գրվում էին նաև մանկական գրականության առաջ։

Այսպիսով, XIX դարի վերջին քառորդում արևմտահայ իրականությունում լույս տեսած մանկապատանեկան մամուլի օրգաններն իրենց բովանդակությամբ և դաստիարակչական ուղղվածությամբ որոշակի դեր են կատարում մատաղ սերնդի հոգևոր ու մտավոր կյանքի զարգացման գործում։ Եթե առաջին պարբերականները («Բուրաստան ս. Սահակեան», «Թութթակ Հայկազեան» և այլն) դնում են հայ մանկապատանեկան մամուլի սկզբնավորման հիմքերը, ապա հաջորդ օրգանները («Թատրոն բարեկամ մանկանց», «Բուրաստան մանկանց», «Ծաղիկ մանկանց» և այլն) ընդարձակում են մանկական մամուլի ընդգրկած հարցերը, մանկական ընթերցանության բովանդակությունը կապում են ժողովրդի առօրյա կյանքի հուզող խնդիրներին, իհարկե, չհեռանալով պատանիների ու աղջիկների հետաքրքրությունների շրջանակներից։ Այդ օրգանները միաժամանակ աստիճանաբար ետին պլան են մղում քրիստոնեական բարոյախոսության նորմաները և նախապատվությունն արդեն տալիս են դաստիարակության ռեալիստական ուղղությանը։ Այս ուղղության սկզբնավորողը արևելահայ մանկապատանեկան մամուլի պատմության մեջ «Աղբյուր» ամսագիրն է։

ԳԼՈՒԽ ԵՐԲՈՐԴ

ԱՐԵՎԵԼԱՀԱՅ ԱՌԱՋԻՆ ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆԸ («ԱՂԲՅՈՒՐ», 1883—1918)

Անցած դարի 80-ական թվականներին նկատելիորեն աշխուժանում և մեծ առաջընթաց է ապրում հայ մանկավարժական միտքը: Արևելյան Հայաստանում ընդարձակվում է դպրոցական ցանցը: Ուսումնարանների թիվը հասնում է 330-ի[1]: Ասպարեզ իջած մասնագետ մանկավարժներ Ս. Բեկնազարյանը, Իս. Հարությունյանը, Ս. Մանդինյանը և ուրիշներ իրենց գործնական աշխատանքում հենվելով հայ ժողովրդի՝ դարերի խորքից եկող դեմոկրատական ավանդույթների վրա, միաժամանակ օգտագործում են մանկավարժական խոշոր կենտրոններում տարածում գտած դաստիարակության նոր մեթոդներն ու առաջավոր փորձը: «Հայ ժողովրդի կյանքի յուրահատուկ պայմանները, նրա դարերով ձևավորված ու ավանդական դարձած հոգեկան դեմոկրատիկ խառնվածքը, նախորդ շրջանի կրթական-լուսավորական գործիչների ոգևշունչ հայրենասիրությունն ու ժողովրդասիրությունը նոր պայմաններում կանխորոշեցին հայ մանկավարժության ընդհանուր դեմոկրատական բնույթը»[2]:

Նոր սերնդի մանկավարժները առանդուն աշխատանք էին կատարում ռուսական ու արևմտաեվրոպական առաջադեմ մանկավարժներ Ուշինսկու, Դիստերվեգի և ուրիշների հայացքները տարածելու և կրթական նոր սիստեմը հայկական դպրոցներում արմատավորելու ուղղությամբ: Ղ. Աղայանը,

[1] «Աղբյուր», 1886, № 11, երկրորդ բաժին, էջ 3:

[2] Վ. Ս. Երկանյան, Պայքար հայկական նոր դպրոցի համար Անդրկովկասում (1870—1905), Երևան, 1970, էջ 105:

Ս. Մանդինյանը և ուրիշներ Ուշինսկու դասագրքերի («Родное слово», «Детский мир») հետևողությամբ դասագրքեր էին կազմում հայկական դպրոցների համար:

Մեծ կարևորություն էր տրվում նախադպրոցական դաստիարակության հարցերին: Մանկավարժության մեջ հմտացած մասնագետներ Սոֆյա Բաբայանը, Գայանե Հովհաննիսյանը, Սոֆյա Արղությանը և ուրիշներ մշակում էին ծրագրեր նախադպրոցական հասակ ունեցող երեխաների դաստիարակության գործը կազմակերպելու համար: Սոֆյա Բաբայանի անմիջական նախաձեռնությամբ 1882 թ. մայիսի 14-ին Թիֆլիսում բացվում է առաջին ժողովրդական մանկապարտեզը[3]:

Մանկավարժների կողմից մեծ աշխատանք էր տարվում երեխաների գեղագիտական ճաշակը զարգացնելու ուղղությամբ: Գեղագիտական դաստիարակության սկզբունքները մշակելիս նրանք ելնում էին Ֆրեոբելի և Պեստալոցցու դրույթներից: Ֆրեոբելը և Պեստալոցցին երեխաներին սովորեցնում էին դարերի խորքից եկող ժողովրդական, հատկապես օրորոցային երգերը: Մանկավարժական մամուլում ուսուցիչներին առաջարկվում էր դպրոցները, դասասենյակները զարդարել նկարներով, քանդակներով, որոնք կարթնացնեին երեխաների հարցասիրությունը, կկրթեին նրանց ոգին[4]: Կարևորություն էր տրվում և մանկական խաղերին, մանկական թատրոնին:

Զգալի աշխատանք էր տարվում դպրոցները մանկավարժական որակյալ կադրերով ապահովելու ուղղությամբ: Մանկավարժական մամուլում մասնագիտական հոդվածներ էին տպագրվում ուսուցիչների տեսական ու գործնական գիտելիքները հարստացնելու նպատակով: Պահանջվում էր հրավիրել ուսուցչական ժողովներ, քանի որ «ժողովրդական ուսուցիչների ընդհանուր ժողովները,—ինչպես գրում էր «Մանկավարժական թերթը»,—ամենաճշմարիտ միջոցներից մեկն են,

---

[3] Արևմտահայ իրականությունում մանկապարտեզները (մանկական ծաղիկոցները) ունեն ավելի վաղ շրջանի պատմություն: Այնտեղ առաջին մանկապարտեզը (Էրզրումի «Մանկական ծաղկոցը») բացվել է 1859 թ. (տե՛ս «Արձագանք», 1891, № 39):

[4] «Մանկավարժանոց», 1884, № 1, էջ 46:

որ բարձրացնելու են ուսուցիչների բարոյական դրությունը և ժողովրդական ուսումնարանների կատարելագործությունը»[5]։ 1874 թ. օգոստոսին Թիֆլիսում գումարված ուսուցիչների առաջին ժողովն արդեն տվել էր իր դրական արդյունքները։ 1882 թ. օգոստոսին Թիֆլիսում հրավիրվում է երկրորդ ժողովը՝ հայ ուսուցիչների առաջին համագումարը, որը էական նշանակություն է ունենում մատաղ սերնդի դաստիարակության գործում։ Ուսուցիչների անդրանիկ համագումարի և մանկավարժական մամուլի կողմից մշակվում էին տեսական դրույթներ մանկական ընթերցանության վերաբերյալ։ «Մանկական ընթերցանության գրքեր», «Ընթերցանությունը և նրա գործունեությունը» և այլ հոդվածներում այն միտքն էր զարգացվում, թե մանկական գիրքը պետք է ունենա «լավ մտածված բովանդակություն», գրված լինի «պարզ, մաքուր և ազնիվ լեզվով», «լինի գաղափարական, բայց մանկանը հասկանալի»։ Մանկական գրվածքը պետք է հետու պահի մանուկներին սնոտիապաշտությունից։ Մանկական ընթերցանության նյութը վերցված պետք է լինի իրական կյանքից, շրջապատի մարդկանց առօրյայից։ Այն պետք է արտահայտի այնպիսի գաղափարներ, որոնք նպաստեն մանուկների ճիշտ դաստիարակությանը, մղեն նրանց դեպի կյանք, հանրօգուտ աշխատանք։ Մանուկների համար իրական կյանքը նկարագրելիս պահանջվում էր անշափ զգույշ լինել։ Կյանքը նկարագրել, այդ դեռ չէր նշանակում գրել ամեն ինչի մասին։ Այդ կապակցությամբ «Մանկավարժական թերթը» մեջ էր բերում Բելինսկու հետևյալ խոսքերը. «Մանկանց համար պետք է լինեն ոչ թե մանկական գրեանք, որոնք հեղինակած են նույնիսկ հասակավորների համար, հրատարակություն, որոնց միջից պետք է դուրս ձգված լինի այն ամենը, ինչ որ մանկանց դեռ վաղ է գիտենալը»[6]։ Ահա թե ինչու անհրաժեշտ էր համարվում մանուկներին մատուցել «ճշմարիտ տաղանդավոր գրվածքներ», այնպիսի գրվածքներ, որպիսին էին Ղազարոս Աղայանի «Սրինգ հովվականը», Գարեգին Սրվանձտյանցի «Գրոց-բրոց» ժողովածուն, Ռափայել Պատկանյանի

[5] «Մանկավարժական թերթ», 1878, № 1, էջ 3։

[6] «Մանկավարժական թերթ», 1878, № 6, էջ 57։

«Մանկական ռահանավորները», թարգմանական մի քանի հեքիաթներ և այլն։ «Վարժարանը» բարձր գնահատելով Սրբվանձտյանցի «Գրոց-բրոց» ժողովածուն, գրում էր. «Նա ժողովրդական բանաստեղծության բոլոր տեսակներից ընտիր, ընտիր օրինակներ ներկայացրեց, թե՛ երգ, թե՛ առակ, թե՛ հեքիաթ, թե՛ զվարճախոսություն, և թե՛ մի դյուցազներգություն («Սասունցի Դավիթ»), որ չլսված բան էր մեզ համար»[7]։

Մամուլի էջերում մանկական ընթերցանության հարցերի քննարկմամբ հաճախ հանդես է գալիս Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի տեսուչ Սեդրակ Մանդինյանը։ Ուշագրավ է «Փորձ» ամսագրում տպագրված նրա «Ներսիսյան ազգային հոգևոր դպրոցի ուսման նախագիծը, շաբաթական դասուց ցուցակ և նախագծի մեկնություն»[8] հոդվածը, որտեղ աշակերտներին հանձնարարվում է կարդալ «Ոդիսականի ճանապարհորդությունը» և նման գրքեր, որովհետև դրանք վարժեցնում են պատանիներին «ճիշտ նկատողություններ և խուզարկություններ անելու մեջ»։ Ապա նա ընթերցանության լավագույն նյութ է համարում ժողովրդական ստեղծագործությունը։ «Հայտնի է,— գրում է Մանդինյանը,— որ ամենագեղեցիկ պատմիչներն են ժողովրդի լեզուն, ընտիր բանաստեղծները և կլասիկական հեղինակները, այդ պատճառով մեր նախագծի մեջ ընտրված են ժողովրդական առակներ, դուսանաց երգեր, սուրբ գրոց հատվածներ, Հոմերոս, Հերոդոտ, Աբովյանց և այլն։ Սորա են այն գանձերը, որոնց մեջ ոչ միայն հասակավորը, այլև մանուկը կյանքի և իր ընտանի աշխարհն է գտնում և մեջը ապրել է սկսում։ Սուտ է այն պատմությունը, որ ճիշտ աղբյուրներից չէ ուսումնասիրած»[9]։ Առաջադեմ մանկական գրողների գրվածքներում մեծ տեղ էր հատկացվում ժամանակի կյանքի, աշխատավոր ժողովրդի իրավիճակի, նրա հույզերի ու ապրումների ճշմարիտ նկարագրությանը։

1882 թ. արդեն Թիֆլիսում գործում էր Սոֆյա Արղությանի կողմից բացված մանկական գրադարան-ընթերցարանը, որտեղ, ինչպես Ս. Արղությանն էր գրում, «Ձեռք էին բերվում

---

[7] «Վարժարան», 1882, № 1, էջ 72։

[8] «Փորձ», 1876, № 2, Հավելված, էջ 13—14։

[9] Նույն տեղում։

այնօրինակ գրքեր և օրագիրներ, որոնք համապատասխանում էին ընթերցողների թե՛ զարգացման, թե՛ հասակին, թե՛ մտավոր կարողության»: Ընթերցանության նյութ ընտրելիս նկատի էր առնվում այն հանգամանքը, թե «որքան դժվար էր երեխաների նախակրթության և նախաուսման գործը ստանձնելը, այնքան էլ դժվար էր և մեծ զգուշություն էր պահանջում երեխաների ընթերցանությանը նպաստելու և առաջնորդելու գործը»[10]: 1881 թ. մանկական գրականության սիրահար Տիգրան Նազարյանը Շուշի քաղաքում հիմնում է «Հրատարակչական գրասենյակ» և հրատարակում մանուկների համար ընթերցանության գրքույկներ: Գիտակցելով սկսած գործի դժվարությունը, նա համառորեն շարունակում էր այն, խոստովանելով, որ «մի ուժ» միշտ խրախուսում էր իրեն: «Այդ ուժը,— գրում էր նա,— մեր կամքը, զգացմունքը ու անկեղծ սերն էր դեպի հայ մատաղ սերունդը»[11]: Այդ սերն իսկ նրան ստիպում է 1881 թ. Շուշուց տեղափոխվել Թիֆլիս: Այստեղ նա սերտ կապերի մեջ է մտնում մի խումբ մտավորականների հետ, որոնք 1880 թ. սկսած մշտապես հավաքվում էին Գայանյան դպրոցի ուսուցչուհի Նատալիա Տեր-Մարկոսյանի[12] տանը և քննարկում հայերեն մանկական գրականության ու պարբերական մամուլի ստեղծման հետ կապված հարցեր: «Այդ խմբիկը, որ հավաքվել էր օրիորդ Նատալիայի շուրջը, վճռել էր հայտնի ուղղությունով մանկական գրքույկների ամբողջ մի շարք հրատարակել, վճռել էր անգամ այդ հրատարակությունները ժամանակով պարբերական թերթ դարձնել...»[13]: Հանձին մտավորականների այդ խմբի, Շուշուց ազգի կրթական, լուսավորական գործին ծառայելու նպատակ-

---

[10] «Մեղու Հայաստանի», 1882, № 74, էջ 1:

[11] «Արձագանք», 1882, № 44, էջ 684:

[12] Ն. Տեր-Մարկոսյան (տիկ. Միրզոյան, 1860—1882): 1874 թ. ավարտել է Թիֆլիսի Գայանյան օրիորդաց դպրոցը, որտեղ սկզբում աշխատել է որպես ուսուցչուհու օգնական, ապա՝ մինչև 1881 թ. դասավանդել հայոց լեզու և աշխարհագրություն: Նա է արևելահայ երեխաների համար առաջին անգամ թարգմանել Վուչետիչի «Կարմիր լապտեր» պատմվածքը, Ջ. Դիկենսի «Հարս և սկեսուր» վիպակը, Բիչեր-Ստոուի «Թոմմաս եղբոր տնեակը» և մի շարք մանկական պատմվածքներ:

[13] «Աղբյուր», 1884, № 8—9, երկրորդ բաժին, էջ 33:

ներով Թիֆլիս եկած Տիգրան Նազարյանը դառնում է իր ակտիվ գործակցին, իր իղձերի ու ձգտումների իրագործողին և դաղափարական կապի մեջ մտնում խմբի անդամների հետ: Անդամներից Ա. Քիշմիշյանը իր հիշողություններում այդ մասին գրում է. «Տիգրան Նազարյանը կամեցել էր իր օվսաննն օգտակար լինել այդ դաղափարի իրագործման ասպարեզի մեջ, Թողնելով իր հայրենական տունը, բարեկեցիկ կյանքը և հարազատների գրվանքը: Նա նոր ծանոթացել էր Նատալիայի հետ և իմանալով, որ զբաղված է մանկական գրադարան հիմնելու գործով, առաջարկել էր նրան իր գործակցությունը: Հենց այդ երեկո հրավիրված էր Տիգրան Նազարյանը Նատալիայի մոտ խորհրդակցելու, թե ի՞նչ կերպով կարելի կլինի իրագործել այդ վերին աստիճանի կարևոր խնդիրը: Հարց արծարծվեցավ, թե ո՞րն է ավելի ձեռնտու ու օգտակար՝ ի լույս ընծայել պարբերաբար մանկական ընթերցանության գրքե՞ր, թե՞ հրատարակել մանկական ամսագիր ու մանուկներին մատչելի փոքրիկ գրույցների, ղվարճալիքների հետ լիներ և առանձին բաժին մանկավարժական հոդվածներով՝ ծնողների ու դաստիարակիչների համար: Թեր ու դեմ խոսակցությունից հետո հրավիրյալները եկան այն եզրակացության, թե ավելի հարմար ու օգտակար է ունենալ մի ամսագիր: Հենց նույն երեկո մկրտեցինք այդ ամսագիրը, տալով նրան «Աղբյուր» անունը, որի հրատարակությունն ու խմբագրությունը փոխանցեցինք Տիգրանի վզին»[14]: Տիգրան Նազարյանը այն գործիչներից էր, որ մատաղ սերնդի ճշմարիտ դաստիարակության մեջ էր տեսնում ազգության կենսական ուժերի ծաղկման նախադրյալները: Մանկական պատկերազարդ հանդես հրատարակելու համար նա թույլտվություն է խնդրում Կովկասի փոխարքայից:

1883 թ. հունվար ամսին լույս է տեսնում «Աղբյուր» ամսագիրը՝ արևելահայ մանուկների առաջին պատկերազարդ պարբերականը:

Ամսագրի լույս ընծայման առթիվ «Խմբագրության կողմից» հոդվածում ասված է. «Ճշմարիտ է, մենք ունինք պար-

[14] «Տօն և ձօն», Թիֆլիս, 1908, էջ 68—69:

«Աղբյուր» ամսագրի շապիկը

բերական հրատարակություններ, որոնք ամենայն անձնվիրությամբ (ամեն մեկը իր ուղղության ու նպատակի համեմատ) առաջնորդում են հայ հասարակությունները, տալիս են նրանց հայկոնի ուղղություն, ծանոթացնում են նրանց գրականության, արդի քաղաքական աշխարհի հետ, մինչև անգամ իրենց շըրջանակից դուրս նրանք հայ ժողովրդին ընթերցանության նյութ են մատակարարում, բայց մեր այդ թերթերը ծառայում են հասակ առած ժողովրդին և նրանց կոչումից բոլորովին դուրս է և առաջնորդել մատաղ հասարակությունները, ցանել նրանց մեջ աղնիվ մարդ լինելու սերմեր, զարթեցնել և զարգացնել նրանց մեջ աղնիվ, բարի ձգտումներ և արմատախիլ անել չար ու վնասակար որոմն...

Ահա այսպիսի մի հրատարակության անհրաժեշտությունն օր օրի վրա խիստ զգալի էր լինում մեր մեջ և ահա ինչու մենք ձեռնարկեցինք այս տեսակ մի հրատարակություն»[15]:

«Հասարակությանը պիտանի անդամ, պատվասեր, ճըշմարտության նախանձախնդիր, չարության վրիժառու ժողովուրդ պատրաստելու համար պետք է սկսել նրա մանուկ սերնդից»[16]: Այս նշանաբանով է իր գործունեությունը ծավալում արևելահայ մանուկների առաջին ամսագիրը: Մանկական պարբերականում արծարծված հարցերը ընդգրկում են ազգային մշակույթի, հոգևոր կուլտուրայի բոլոր բնագավառները՝ գրականություն, արվեստ, մանկավարժություն, պատմություն, բնական գիտելիքներ և այլն: Ամսագրի երևան գալը զուգադիպում է ռեալիստական արվեստի և գրականության զարգացմանը: Այդ հանգամանքը, ինչպես և կապը ռուսական, վրացական, արևմտաեվրոպական առաջադիմական գրականության և մանկական ամսագրերի հետ, իրենց դրական ներգործությունն են ունենում՝ նպաստելով «Աղբյուրի» թեմատիկայի ընդլայնմանն ու արտահայտչական միջոցների հարստացմանը:

Ամսագրի նյութերը տեղաբաշխված են երկու բաժիններում: Առաջին բաժինը նախատեսված է մանուկների ու պատանիների ընթերցանության, իսկ երկրորդ բաժինը՝ ծնող-

[15] «Աղբյուր», 1883, № 1, երկրորդ բաժին, էջ 1:

[16] Նույն տեղում:

ների ու դաստիարակների համար։ Առաջին բաժնում տպագրվում էին պատմվածքներ, մանրավեպեր, բանաստեղծություններ, հեքիաթներ, դրույցներ, առակներ, դիտության և արվեստի տարբեր ճյուղերի վերաբերյալ ուսանելի տեղեկություններ, ինչպես նաև «Այլ և այլք», «Զվարճալիք», «Հետաքրքրական տեղեկություններ» ենթավերնագրերով ուշագրավ նյութեր։ «Աղբյուրի» երկրորդ բաժնում զետեղվում էին մանկավարժության տեսությանը և պատմությանը վերաբերող հոդվածներ, գրախոսականներ, նամակներ, խառը լուրեր և այլն։ Երկրորդ բաժնի գրաքննադատական, գրախոսական, մանկավարժական հոդվածները հասցեագրված լինելով ծնողներին ու դաստիարակներին, ծանոթացնում էին այն նոր ու առաջավոր մեթոդներին, որ մուտք էին գործում մանկավարժության մեջ։ Ամսագրի նախընտրած դաստիարակչական նպատակների մասին Տիգրան Նազարյանը գրում է. «Աղբյուրի» նպատակն է՝ հայ սերնդի մեջ զարթեցնել պատվասիրության զգացմունքները, զարգացնել հայ երեխայի մեջ սեր դեպի իր շրջապատողները, բարի նախանձ դեպի ամեն վսեմը, ազնիվը և ատելություն դեպի ամեն վնասակարը և չարը»[17]։

Ընթերցանության համար ամսագրի խմբագրությունը ընտրում էր մանուկներին մատչելի լեզվով գրված, բովանդակալից, գաղափարական ու դաստիարակչական նպատակասլաց նյութեր։ Ամսագրի էջերում մեծ տեղ էին գրավում հեքիաթները, առակները։ «Աղբյուր»-ի ակները հոսում են ժողովրդական հեքիաթներից, խաղերից, ավանդություններից,— գրված է ամսագրում,— որոնք ոռոգելով մեր փոքրիկ և քաղցր ընթերցողների հոգին և սրտերը՝ պարարտ հող պետք է պատրաստեն ապագայում պտղաբեր սերմեր աճեցնելու մարդկության...»[18]։

«Աղբյուրը» ջերմ ընդունելություն էր գտնում ինչպես մանուկների, այնպես էլ մեծահասակների կողմից։ Ընդամենը 50 բաժանորդով լույս տեսած ամսագիրը մեկ տարվա ընթացքում ձեռք է բերում 800-ից ավելի բաժանորդ և, բացի

17 Նույն տեղում։

18 Նույն տեղում։

Թիֆլիսից, տարածվում 109 հայաբնակ վայրերում: Ամսագրի համարներն ավելի ու ավելի շատ տարածելու, բաժանորդների թիվը կրկնապատկելու, եռապատկելու նպատակներով խմբագրության կողմից ամսագրի համարների հետ միասին բաժանորդներին ուղարկվում էին մրցանակաբաշխումներ (պատկերազարդ դրքեր, ալբոմներ, լուսանկարներ և այլն):

1886 թ. ամսագրի բաժանորդների թիվը հասնում է 1060-ի, 1888 թվականին՝ 1735-ի: Տարիների հետ միասին աճում է բաժանորդների թիվը: Ընդ որում, անհրաժեշտ է նշել, որ «Աղբյուրը» ունեցել է այնքան բաժանորդ, որքան չի ունեցել ժամանակի հայ պարբերականներից և ոչ մեկը:

Նյութերի առատության հետևանքով ամսագրում հայտարարություն է տպագրվում այն մասին, որ «Աղբյուրը» լույս է տեսնելու 3—4 տպագրական մամուլ ծավալով: Հայտարարության մեջ նշվում է և այն, որ ամսագրում ավելի մեծ տեղ է տրվելու ինքնուրույն, քան թարգմանական գործերին: «...խնդրում ենք մեր աշխատակիցներին,—գրված է այնտեղ,—ջանալ ժողովրդական աղբյուրներից, մեր երկրի բնության և բնակչության նկարագիրներից կազմել ինքնուրույն հոդվածներ, թե չէ մանկական ամսագրին աշխատակցելու փափագը կամ պարտքը կատարած լինելու համար՝ դիմել ամենահեշտ միջոցին—թարգմանության՝ մեզ համար ցանկալի չէ և կարևոր ենք համարում խորհուրդ տալ, որ ինքնուրույն աշխատանքից խույս տվող գրողը մահացու կերպով կջլատի իր ուժերը...: Մեր գրականությունը հարստացնելու և ծաղկեցնելու տարրերը մեր ժողովրդի և մեր երկրի մեջն է նախ»[19]:

«Աղբյուր» ամսագիրը մանկական նոր գրականության ստեղծման գործում

«Աղբյուր» ամսագիրը տասնամյակների ընթացքում ստեղծել է բազմաբովանդակ և բազմաժանր գրականություն, հիմնական ելակետ ընդունելով դեմոկրատ-լուսավորիչ Խաչատուր Աբովյանի մանկավարժական դրույթները և ուսու-

[19] Նույն տեղում, էջ 2—3:

հայ հեղափոխական-դեմոկրատների կողմից մշակված ընկղբունքները:

Խաչատուր Աբովյանը մատաղ սերնդի կրթության և դաստիարակության հարցերը կապում էր բնության, շրջապատի իրերի, երևույթների ճանաչողության հետ: Նա ծառանում էր մանկական գրքերի ու դասագրքերի կրոնական, սխոլաստիկական ուղղության դեմ, առաջ քաշում բնական գիտությունների տարածման հարցը: Աբովյանը պայքարում էր մատաղ սերնդի դաստիարակության աշխարհականացման համար: Հումանիստ գրողը ստեղծում է դեմոկրատիզմի, ակտիվ հումանիզմի, ինտերնացիոնալիզմի գաղափարները տարածող, իրական կյանքը պատկերող գրվածքներ:

Խաչատուր Աբովյանից հետո մատաղ սերնդի դաստիարակության ռեալականացման, մանկական գրականության դեմոկրատականացման պահանջները առաջադրվում էին Ռափայել Պատկանյանի, հեղափոխական-դեմոկրատ Միքայել Նալբանդյանի և մյուսների կողմից: Սակայն մինչև 1880-ական թվականները դեմոկրատիզմի ոգով տոգորված մանկական գրվածքները սակավ էին լույս տեսնում: Այնպես որ մանուկների ընթերցանության գրքերը դարձյալ հիմնականում մնում էին Սաղմոսը, Ավետարանն ու ժամանակավրեպ հին դասագրքերը:

1880-ական թվականներից սկսած զարգացման նոր ընթացք է ստանում ընդհանուր գրականությունը, հրապարակախոսությունը, հայ մամուլում տպագրվում և առանձին գրքերով լույս են տեսնում դեմոկրատիզմի գաղափարներով հագեցած, կյանքը ճշմարտացիորեն պատկերող գրվածքներ: Հենց այս շրջանում էլ «ստեղծվում է քաղաքացիական այն գրականությունը, որն իր գաղափարական տենդենցիոզությամբ և հեղափոխիչ նպատակադրումով արտահայտում է ազգային և լուսավորական շարժման սոցիալ-պատմական բովանդակությունը»[20]:

Գրական-գեղարվեստական ստեղծագործություններում տիրապետող են դառնում սոցիալական-կենցաղային թեմա-

[20] Կ. Ա. Դանիելյան, Հայ մեծարային գրականության պատմությունից, Երևան, 1961, էջ 227:

նները, խորանում է գեղարվեստական գրվածքների գաղափարական բովանդակությունը: Մեծ թափ է հաղորդվում ռեալիստական գրականության զարգացմանը, որը չէր կարող իր բարերար ներգործությունը չունենալ մանկապատանեկան գրականության աճման ուղեգիծը ճշտելու գործում: Մանկական գրականությունը կազմելով ընդհանուր գրականության անբաժանելի մասը, ընթանում է զարգացման նույն ուղիներով, ինչ և ընդհանրապես գեղարվեստական գրականությունը: Միաժամանակ մեծ էր ռուս և արևմտաեվրոպական մանկական գրականության ազդեցությունը: Թարգմանվում էին ռուս առաջավոր գրողների մանկական գործերը, հայ մտավորականության առաջադեմ թևի ներկայացուցիչները յուրացնում էին գրական-տեսական այն դրույթները, որոնք մշակվել էին հեղափոխական-դեմոկրատներ Բելինսկու, Դոբրոլյուբովի, Նալբանդյանի կողմից: Բելինսկին մանկական գրքերի շուրջ գրած իր գրաքննադատական հոդվածներում մանկական գրողից պահանջում էր կյանքը վերարտադրել այնպես, ինչպես որ այն կա իրականում, միայն թե ոչ դիդակտիկ ձևերով, այլ գեղարվեստական ճշմարտացի պատկերներով, կենդանի օրինակներով: Մանկական գրականությունը կարող է ունենալ դաստիարակչական ներգործություն միայն այն դեպքում, երբ հավատարիմ լինի ճշմարիտ արվեստի սկզբունքներին, հարազատորեն վերարտադրի մանուկների հոգեբանությունը, համապատասխանի նրանց տարիքային առանձնահատկություններին: Բելինսկին միաժամանակ ցույց է տալիս, որ մանկական գրվածքը կոչված է դաստիարակելու մանուկների հուզական աշխարհը, զգացմունքները, մտքերը, նրանց մեջ մշակելու վերաբերմունք կյանքի և մարդկանց նկատմամբ: Չերնիշևսկին բարձր գնահատելով մանկական գրականության ուսուցողական և ճանաչողական դերն ու նշանակությունը, մանկական գրականության հիմնական խնդիրը համարում էր նոր մարդու դաստիարակությունը: Դոբրոլյուբովը պայքար հայտարարելով մանկավարժության և մանկական գրականության մեջ լայնորեն տարածում գտած սխոլաստիկական ուղղության դեմ, գրողից և մանկավարժից պահանջում էր՝ մանուկներին դաստիարակել ոչ թե «կույր

հնազանդության» ոգով, այլ նրանցից պատրաստել ապագա «մարտիկ քաղաքացուն», «հասարակական ճշմարտությունը սուից, բռնությունից» պաշտպանող, ժողովրդի շահերով ապրող քաղաքացուն:

«Աղբյուր» ամսագրի պատասխանատու քարտուղար Գ. Միրզոյանի[21] գրական-տեսական հոդվածներում նկատվում է հեղափոխական-դեմոկրատների գրականագիտական հայացքների ազդեցությունը: Նրա «Իմ նամակները»[22] հոդվածաշարում քննության են առնվում մանկական գրականության կյանքի հետ ունեցած կապի, դաստիարակչական և ճանաչողական դերի, ինչպես և լեզվի ու ոճի հարցերը:

Շահագործող հասարակարգում արատավոր միջավայրը բացասաբար էր անդրադառնում մատաղ սերնդի աշխարհայացքի ձևավորման և զգացմունքների դաստիարակության վրա: Միրզոյանը մանկական գրականությունը համարում է մատաղ սերնդի բարոյական դաստիարակության լավագույն միջոցներից մեկը: Նա մանկական գրողից պահանջում է ցույց տալ իրական կյանքը, վեր հանել նրա արատավոր կողմերը, հակասական բնույթը՝ սոցիալական անարդարությունները: Միրզոյանն արատավոր է համարում այն գրքույկները, որոնցում կեղծվում է իրականության ճշմարիտ պատկերը, ցույց է տրվում, թե տիրապետող դասակարգի ներկայացուցիչները «աղքատ դասի մեկենասներն են» և «պետք է օգտվել նրանց բարերարությունից ու հլու-հնազանդ ենթարկվել նրանց»:

---

21 Գաբրիել Միրզոյան (Գաբօ) *(1857—1902)*: *1883—1884 թթ.* եղել է «Աղբյուր» ամսագրի պատասխանատու քարտուղարը և գաղափարական ղեկավարը: *1885 թ.* ամսագրի նյութերի ընտրության և գաղափարական բովանդակության շուրջ խմբագրի հետ ունեցած վիճաբանությունից հետո նա հեռանում է «Աղբյուրի» խմբագրությունից: Նրա հոդվածները «Աղբյուրում» տպագրվել են Գ. Մ., իսկ «Իմ նամակները» հոդվածաշարը՝ Գաբօ ստորագրություններով: *1879 թ.* Գ. Միրզոյանը հիմնադրում է «Հայերեն մանկական գրքեր հրատարակելու» ընկերություն, որի հիման վրա Թիֆլիսում, *1880 թ.* ստեղծվում է «Թիֆլիսի հայերեն գրքերի հրատարակության ընկերությունը»: Գ. Միրզոյանը մանկավարժ էր: Նա մահացել է *1902 թ.* նոյեմբերի 10-ին:

22 «Աղբյուր», *1883*, № 1, երկրորդ բաժին, էջ 2—3, № 2, էջ 17—21, № 3, էջ 24—26, № 4, էջ 29—31:

Մինչդեռ, իրական կյանքը այլ բան էր սովորեցնում մանուկներին։ Իրականում «հարուստ բարեւարը» ամենևին մտահոգված չէր աշխատավոր ժողովրդի կյանքով։ Միրզոյանը իր հոդվածում ակնարկում է նաև այն մասին, որ գրականությունը, ինչպես և մանկական գրականությունը վաղուց արդեն ազատագրվել են աստվածաբանական, դիցաբանական ըմբռնումներից։ Մանուկներին շրջապատի կյանքին, մարդկային փոխհարաբերություններին ծանոթացնելու լավագույն միջոցներն են համարվում կենդանի խոսքը, իրական պատկերը, կերպարները, գեպքերի ու գործողությունների զարգացման բնական ընթացքի նկարագրությունը և այլն։ Այդ իսկ պատճառով քննադատելով սպիրիտիզմի[23] ոգով գրված մանկական գրքերը, նա գրում է. «Այդ վեպիկների մեջ շրջում են մի կողմից բուրժուական անշունչ ուվերները, մյուս կողմից կղերական բարեբարները, ոչ մի կենդանի պատկեր, ոչ մի կենդանի խոսք... բոլորը շինծու, փքուն ֆրազներ, մոլեռանդ հոգեպաշտություն, գերբնական ուժի վրա հիմնված ակնկալություններ, ամեն մի երեսի վրա հրաշքների նման անսպասելի, անբնական դեպքեր, նյութական վարձատրություններ»[24]։

«Աղբյուրի» խմբագրությունը ամսագրի շուրջ համախմբված հեղինակներից պահանջում էր մանուկների հետ խոսել ոչ թե մերկապարանոց սենտենցիաների, այլ գեղարվեստական պատկերների միջոցով։ ««Աղբյուրը»,—գրված է այնտեղ,—իրեն միշտ հեռու է պահել բարոյական խրատներից, այն բարոյական ուղղությունից, որ տիրապետում էր մինչև վերջին ժամանակները մյուս ազգերի մանկական գրականության մեջ»[25]։ Ամսագիրը պահանջում էր նաև ճշմարտացիորեն ներկայացնել այն վերաբերմունքը, որ նկատվում էր ժողովրդի մոտ հասարակական այս կամ այն երևույթի, կամ առօրյա կյանքի նկատմամբ։ Դիցուք գրողը ուզում է նկարագրել բանվորի աշխատանքը, դրա համար նա պետք է ցույց տա աշխատանքն իր ընթացքի մեջ, չմոռանալով միաժամանակ և

---

23 Սպիրիտիզմ՝ միստիկական հավատ անդրշիրիմյան կյանքի վերաբերյալ։

24 «Աղբյուր», 1883, № 2, երկրորդ բաժին, էջ 18։

25 «Աղբյուր», 1883, № 12, երկրորդ բաժին, էջ 44։

այն «հառաչանքները», որ հաճախ «դուրս են թռչում» աշխատավորների կրծքից։ Այդ հառաչանքները չէին նամամացնի աշխատանքի և աշխատավոր մարդու դերը, այլ, ընդհակառակը, կօգնեին մանուկներին բազմակողմանիորեն ճանաչելու կյանքը։ «Մի կեղծե՛ք մանուկների առաջ,— գրված է ամսագրում,— ցույց տվեք նրանց կյանքի և՛ փշերը, և՛ վարդերը, միայն ասածների մեջ լինի ճշմարտություն»[26]։ Առաջադրելով «պատկերել կյանքը այնպես, ինչպես որ այն կա» դրույթը, ամսագիրը նպատակ ուներ սովորեցնել մանուկներին՝ գնահատել չարքաշ աշխատանքը, սիրել աշխատավոր մարդուն, իմանալ, թե ովքե՞ր էին ակ.ափականացնում նրա արդար վաստակը և առելություն սերմանել նրանց արդար քրտինքը հափշտակողների հանդեպ։ Դրանով ամսագիրը գրականագեղարվեստական ստեղծագործությունների հասարակական խնդիրն էր համարում՝ պինել մանուկներին սոցիալ-հասարակական կյանքի ճանաչողությամբ, սովորեցնել պայքարել իր, ինչպես և այլ ժողովուրդների արդարացի իրավունքները ոտնահարողների դեմ, պաշտպանել արդարությունը, ճշմարտությունը, մարդկայնությունը։

«Մանուկները և նրանց ընթերցանությունը»[27] խմբագրական հոդվածում մանկական ընթերցանության լավագույն նյութ է համարվում ժողովրդական բանահյուսությունը։ Մասաղ սերնդի բարոյակրթական դաստիարակության գործում ժողովրդական ստեղծագործությունների մեծ դերն ու նշանակությունը հիմնավորելու համար որպես բնաբան վկայաբերվում են Բելինսկու հետևյալ խոսքերը. «Նոր սերունդները ներկայի հյուրերն են, իսկ ապագայի՝ տերերը, ապագայի, որը նրանց համար ներկա է դառնում և որը ժառանգում են առաջիկա հին սերունդներից։ Յուրաքանչյուր նոր սերունդ ապագայի սերմն է, մի նոր դաղափար է, որը պետք է փոխարինի հին դաղափարին։ Հենց սրա վրա է հիմնված մարդկության ընթացքն ու առաջադիմությունը»[28]։

---

[26] «Աղբյուր», 1884, № 3, երկրորդ բաժին, էջ 3։

[27] Նույն տեղում, էջ 1—4։

[28] Նույն տեղում, էջ 1։ Տե՛ս նաև Հոֆմանի հեքիաթների շուրջ գրած Բելինսկու դրախոսականը։

Մատաղ սերնդի դաստիարակության գործում, այսպիսով, վճռական նշանակություն էր տրվում հայ ժողովրդի անցյալի բարոյական լավագույն հատկանիշների, հոգևոր կուլտուրայի իմացությանը, որը միայն կարող էր ապահովել մատաղ սերընդի հոգևոր ու մտավոր կյանքի բնականոն զարգացման ընթացքը:

Դնելով մանկական նոր գրականության գեղագիտական սկզբունքների մշակման սկիզբը, ամսագիրը անդրադառնում է նաև լեզվաոճական հարցերի քննարկմանը: Բարձր գնահատելով Ղազարոս Աղայանի լեզուն, «Աղբյուրի» տեսաբանը գրում է. «Այո, պ. Աղայանցը ունի իր լեզուն, մանկական լեզուն, մի լեզու, որ Աստված է պարգևել նրան հատկապես մանուկների հետ խոսելու համար, թեև մեծերն ևս ամենայն հաճույքյամբ կլսեն միևնույն լեզուն, դա մի շինծու, ստեղծված լեզու չէ, ինչ լեզվով մեր պատվելի դաստիարակներից շատերը իրենց փոքր սանիկների հետ խոսելու միջոցին գործածելու սովորություն ունեն, միամտաբար կարծելով, որ կոտրատելով, աղավաղելով մեծերի լեզուն, կարելի է ավելի հասկանալի դառնալ մանուկներին»[29]:

Գեղագիտական այս սկզբունքները, որ առաջ էին քաշվում ամսագրի կողմից, գրական փորձի որոշակի ընդհանրացումներ էին: Այդ տարիներին «Հրապարակի վրա էին Պատկանյանի, Պռոշյանի, Աղայանի, Րաֆֆու, Սունդուկյանի, Դուրյանի, Պարոնյանի, Շերենցի ստեղծագործությունները, որոնք ազգային-հասարակական գաղափարաբանությամբ ու արդիական շեշտվածությամբ ճշմարիտ ուղու վրա են դնում հայ գրականության զարգացումը»[30]:

Ամսագրի «Մատենախոսություն» բաժնում տպագրվում էին տեսական հոդվածներ նաև ընդհանուր գրականության շուրջ: 1887 թ. Մոսկվայում լույս է տեսնում Հովհաննես Հովհաննիսյանի բանաստեղծությունների անդրանիկ ժողովածուն: «Աղբյուրը» առաջինն է հանդես գալիս Հովհաննիսյանի բանաստեղծությունների գնահատմամբ՝ տպագրելով Ղազարոս

[29] «Աղբյուր», 1883, № 3, երկրորդ բաժին, էջ 25:

[30] «Հայ նոր գրականության պատմություն», հատ. 3, Երևան, 1964, էջ 69:

Աղայանի և Սեդրակ Մանդինյանի գրախոսականները: Ալայանը հանձին Հովհաննիսյանի տեսնում էր մի նոր բանաստեղծի, որը ժամանակի նոր պայմանների ծնունդը լինելով, բարձրացնում էր բանաստեղծի կոչումը, ծառայեցնում այն ժողովրդի իղձերի ու ցանկությունների իրագործմանը, նրա «վշտերի ու ցավերի ամոքմանը»: Բանաստեղծի կոչման մասին նա գրում էր. «Բանաստեղծը մի շատ համեստ մարդ է. նա իր ժամանակի «խալխի նոքարն է», նրա թերությունների պախարակողը, նրա արժանավորությունների գովողը, նրա ցավին ցավակիցը, ուրախությանն ուրախակիցը: Բանաստեղծի ցավը, վիշտը ժողովրդինն է, ինչպես և ժողովրդինը՝ նրանը: Նա ունի նույն հավատը, որ ունի ժողովուրդը անցյալի վերաբերությամբ, նույն սերը, որ ունի ներկայում և նույն հույսը, որ ունի ապագայի վերաբերությամբ: Բանաստեղծը ժողովրդի լեզուն է, նրա սրտի հայտարարը և թարգմանը: Վերջապես բանաստեղծը ժողովրդի ծնունդն է և ոչ թե ժողովուրդը՝ բանաստեղծի»[31]:

Ղազարոս Աղայանը գրականության և արվեստի հարցերի նոր ըմբռնման տեսանկյունից է գնահատում ինչպես Հովհաննիսյանի, այնպես էլ Պռոշյանի, Րաֆֆու և մյուսների ստեղծագործությունները: Պռոշյանի «Սոս և Վարդիթեր» վեպը որպես ռեալիստական ստեղծագործության լավագույն նմուշ արժանանում է գրողի բարձր գնահատականին: Ո՞րն էր Պռոշյանի ոգևորության աղբյուրը և մինչև Պռոշյանը 1840-ական թվականներից սկսած ինչպիսի՞ գրական հոսանքներ և գրական ուղղություններ էին եղել հայ իրականությունում: Այս հարցերին է միաժամանակ անդրադառնում Աղայանը իր «Պերճ Պռոշյանը և իր «Սոս և Վարդիթերը» հոդվածում[32]: Մինչև 1840-ական թվականները մատաղ սերունդը ստանում էր կրոնական, սխոլաստիկական դաստիարակություն: Դրանից հետո դաստիարակությանը տրվում է հայրենասիրական ուղղություն, որը սակայն դուրկ էր «բուն ժողովրդական, բուն աշխարհիկ տարրերից»: Գրական գործերի համար հերոսներ էին ընտրվում թագավորները, մեծատոհմ իշխանները և

[31] «Աղբյուր», 1887, № 10, երկրորդ բաժին, էջ 92:

[32] «Աղբյուր», 1888, № 8—9, երկրորդ բաժին, էջ 57—66:

ոչ թե ժողովրդի զավակները։ Ապա գնահատելով Խաչատուր Աբովյանի դերը, նա գրում է. «Աբովյանը չընտրեց ոչ Հայկին, և ոչ Հայկանուշին, այլ Ազատուն և Նալլուին։ ...Աբովյանը ոչ միայն նորագույն գրականության ճանապարհը հարթեց մեզ համար, ոչ միայն քաղաքացիության արտոնություն տվավ աշխարհիկ լեզվին, որ մինչև այն ժամանակ կիսագրաբարի սարուկն էր, այլև, որ ամենից մեծն էր, նա մի հզոր հաղթանակ տարավ աշխարհականության կողմից հոգևորականության վրա»[33]։

Աղայանը գեղարվեստական գործերը գնահատում էր այն տեսանկյունից, թե որքանով էին դրանք արժեքավոր մանուկների դաստիարակության համար։ «Իմ ստացած տպավորությունները պ. Բաֆֆու «Կայծերի» երկրորդ հատորից» հոդվածում նա անդրադառնալով հայրենի բնաշխարհի գեղեցիկ նկարագրություններին, գրում է. «Ընթերցողը կարծես աչքովը տեսնում է իր հայրենիքի զմայլելի վայրերը և հիանում, սքանչանում, հետևապես նաև սիրում, և այցելելու միտք ու բալճանք հղանում...»[34]։

«Մատենախոսություն» բաժնում տպագրված են գրախոսականներ նաև թարգմանական գրականության մասին («Լիր արքա», «Գայլը», «Թուղթ», «Մայրական սեր», «Քնած գեղեցկուհի» և այլն)։ Ժուկովսկու «Քնած գեղեցկուհին» որպես մանկական ընթերցանության գիրք քննադատվում է «Աղբյուրի» էջերում այն բանի համար, որ նյութը վերցված է ոչ թե «իրական կյանքից», այլ «աներևույթ աշխարհից»։ «Արդի մանկավարժությունը,— գրված է ամսագրում,— պահանջում է տալ մանուկին այն, ինչ որ անհրաժեշտ է, ինչ որ հարկավոր է, որի մեջ համոզված ենք, որ ուղիղ է և նպատակահարմար»[35]։ Մինչդեռ, «Քնած գեղեցկուհին» հեքիաթը կառուցված է «անապատաշխարհումների», «նախապաշարմունքների» հիման վրա և սովորեցնում է մանուկներին հավատալ «չար ոգիներին»։ «Այդ դարերը վաղուց են անցել, և մենք իրավունք չունենք մանուկներին այսպիսի բաներ պատմել, որովհետև մենք

---

33 Նույն տեղում, էջ 58։

34 «Աղբյուր», 1887, № 8—9, երկրորդ բաժին, էջ 73։

35 «Աղբյուր», 1897, № 2, երկրորդ բաժին, էջ 92։

ինքներս չենք հավատում ոգիներին, և մեր հոգևոր աշխարհը, դարերի ընթացքում փոփոխության ենթարկվելով, այժմ ուրիշ պահանջներ ունի»[36]:

Այսպիսով, «Աղբյուր» ամսագրում մանկական դրականության հարցերի շուրջ մշակված տեսական դրույթները նշում էին այն ճշմարիտ ուղիները, որոնցով պետք է ընթանար հայ մանկապատանեկան նոր գրականության զարգացումը:

«Աղբյուր» ամսագրի մանկական գրականության թեմատիկան չէր զանազանվում ընդհանուր գրականության թեմատիկայից: Գեղարվեստական գրականությունը մանուկների կյանքում նույն դերն էր կատարում, ինչ և ընդհանուր գրականությունը մեծահասակների համար: «Աղբյուրի» պոեզիայում նկատվում են զարգացման նույն տենդենցները, ինչ և ժամանակի հայ քնարերգության մեջ: Անցած դարի 80-ական թվականների հայ քնարերգության մեջ գերիշխում էին սոցիալական բողոքի, ազատագրական պայքարի մոտիվները: Բանաստեղծներն իրենց գեղագիտական իդեալները՝ աշխատավոր մարդկանց ազատ ու երջանիկ տեսնելու մասին, փորձում էին իրականացնել ժողովրդական լայն մասսաների ազգային ու սոցիալական ինքնագիտակցությունը բարձրացնելու միջոցով: Նրանք գեղարվեստորեն հիմնավորում էին դարաշրջանի առաջավոր ըմբռնումները, ցույց տալիս, որ աշխատավոր մարդիկ իրենց բարոյականությամբ, հոգևոր հարստությամբ շատ ավելի բարձր են, քան նրանց կեղեքողները: Ամսագրի պոեզիայում նույնպես մեծ տեղ էր տրվում սոցիալական և կենցաղային թեմաներին:

Աշխատավոր ժողովրդի նյութական թշվառ իրավիճակը իր գեղարվեստական արտացոլումն է գտնում Ղ. Աղայանի մանկական ստեղծագործություններում: Առաջին անգամ «Աղբյուրում» է տպագրվում ցարական բռնակալական կարգերի դեմ ուղղված, ցարիզմի լծի տակ տառապող ժողովուրդների հալածական կյանքը պատկերող նրա «Զմեռ» բանաստեղծությունը՝ «Սառնամանիք»[37] վերնագրով: Այլաբանական եղանակով կառուցված այս ոտանավորում դաժան ձմռան նկարա-

[36] Նույն տեղում:

[37] «Աղբյուր», 1884, № 2, էջ 58—60:

գրությունը սոսկ պայմանական միջոց է։ Խոսքը վերաբերում է ցարիզմի՝ ինչպես այլ ժողովուրդների, այնպես էլ հայ ժողովրդի նկատմամբ վարած ազգահալած դաժան քաղաքականությանը։ Այդ քաղաքականությունը այստեղ պսակաղերծվում է պատկերների մի ամբողջ սիստեմով։ Հեղինակը հատկապես օգտագործում է հակադրության ձևը.

Մեկին տալիս են կճյա վառարան,
Մյուսին և ոչ մի խեցյա կրակարան
Մեկին թանկագին մազեղեն մուշտակ
Մյուսին և ոչ մի ցնցոտի մաշկյակ։

Յուրտ է սաստիկ ցուրտ, սիրուն երեխեք,
Եթե ինձ նման դուք էլ մրսում եք,
Եկեք միասին մի հնար գտնենք,
Ձմռան ճանկերից մեր գլուխն ազատենք։

Այս բանաստեղծությունն իր գաղափարական բովանդակությամբ հիշեցնում է Միքայել Նալբանդյանի «Կոմս Էմմանուելի հիշատակարանի» Թ գլխում տրված այլաբանական այն պատկերը, որ վերաբերում է «հյուսիսում բնակվող ցրտաշունչ և դաժան Բորյասին»։ Աղայանի «Ձմեռը» («Սառնամանիք») ոտանավորը որոշ չափով հիշեցնում է նաև ռուս հեղափոխական-դեմոկրատ Ն. Նեկրասովի հայտնի «Мороз, красный нос» *(1854)* և «О погоде» *(1865)* պոեմների առանձին հատվածները, պոեմներ, որոնք ուղղված են ցարական բռնակալության դեմ, դարաշրջանի դաժան սառնամանիքի, մահաշունչ ձմեռվա տիրապետության դեմ[38]։

Հայ ժողովրդի սոցիալական, կուլտուրական, լուսավորական կյանքի խնդիրները հուզում են բանաստեղծին։ Նա այս հարցերին անդրադառնում է մանկական այլ բանաստեղծություններում։ 1885 թ. հայկական դպրոցների փակման առթիվ Աղայանը գրում է «Հիշողություն» բանաստեղծությունը և տպագրում «Աղբյուր» ամսագրում[39]։ Այստեղ այլաբանորեն

[38] Տե՛ս «Հայ նոր գրականության պատմություն», հատ. 3, Երևան, 1964, էջ 304։

[39] «Աղբյուր», 1886, № 12, էջ 419—420։

այն միտքն է բարձրացվում, թե ցարական կառավարությունը որքան էլ խոչընդոտում է ազգային փոքրամասնություն կազմող ժողովուրդների, այդ թվում և հայ ժողովրդի հոգևոր կյանքի զարգացումը, այնուհանդերձ ժողովուրդը չի վհատվում:

Աշխատավոր ժողովրդի կյանքին, կենցաղին, նրա հոգսերով լի առօրյային մանուկներին ավելի մոտիկից ծանոթացնելու նպատակով Աղայանը օգտագործում է ժողովրդական երգի մոտիվները: Նրա «Ճախարակ» բանաստեղծությունը ժողովրդական նույնանուն երգի մշակումն է: «Աղբյուրում» է տպագրվում այդ բանաստեղծության երկու տունը[40] նոտագրերով:

Աղայանի մանկական բանաստեղծություններում գեղարվեստական մարմնավորում են ստանում հայրենի բնության նրբին պատկերները: «Աղայանցը բնության առաջ չէ կեղծում, որովհետև սիրում է նրան,— գրված է ամսագրում,— Աղայանը չի կարող չսիրել բնությունը և բուն՝ չմաշված, չփթած, չապականված ժողովրդին, քանի որ ինքը նույն իսկ ժողովրդից է դուրս եկած, նրա ամեն մի տողի մեջ ցոլանում է այդ սերը: Այո, նա անկեղծ սիրում է բնությունը, իսկ այն առարկայի առաջ, որ դու սիրում ես, կեղծել չես կարող և դա ամեն մի գրողի-բանաստեղծի գլխավոր արժանավորությունն է. գլխավորապես այդ է, ինչով գրավում է մեզ պ. Աղայանցը, ինչով նա մեզ մի տեսակ հոգեկան հանգստություն է պատճառում»[41]:

Ղաղարոս Աղայանը մանկական բանաստեղծություններ սկսել էր գրել 1882 թ., երբ հրավիրվել էր Սոֆյա Բաբայանի նորաբաց մանկապարտեզը՝ երեխաներին գրագիտություն սովորեցնելու: Նա մանուկների շրջապատում տեսնում է «բանաստեղծական մի աշխարհ», ոգևորվում և գրում է իր առաջին մանկական ոտանավորները, որոնք լույս են տեսնում 1882 թ. «Սիրնդ Հովվական» առանձին գրքույկով: Նրա մանկական ստեղծագործություններում գրողի և մանկավարժի հայացքները զուգորդվում են: Դրանցում բարոյախրատական կողմը արտահայտվում է ոչ թե մերկապարանոց, չոր ու ցա-

[40] «Աղբյուր», 1883, № 2, էջ 85:

[41] «Աղբյուր», 1883, № 3, երկրորդ բաժին, էջ 25:

մաք բարոյախոսության ձևով, այլ բխում է իրականության ռեալիստական պատկերման բուն էությունից:

Հարազատ մնալով գեղագիտական այն դրույթին, թե մանուկների ու պատանիների հետ կարելի է խոսել ամեն ինչի, դիցուք և սիրո մասին, միայն մատուցման ձևերի մեջ պահպանելով որոշակի սահմանափակություն, «Աղբյուր» ամսագիրը տպագրում է Աղայանի «Տորք Անգեղ և Հայկանուշ գեղեցիկ»[42] դյուցազներգական պոեմը: Այստեղ բանաստեղծը հնագույն առասպելի հիման վրա պոետական գեղեցիկ խոսքի միջոցով մարմնավորում է հայրենասիրության, սիրո երջանկության, առաքինության բարձր ու վսեմ գաղափարները: Տորք Անգեղի և Հայկանուշի կերպարները խտացված գույներով ներկայացնում են Աղայան-մանկավարժի իդեալը մարդու մասին, ցույց տալով, որ մարդու մեջ հոգեկան բոլոր առաքինությունները պետք է համապատասխանեն նրա մտավոր ու ֆիզիկական ուժերի ներդաշնակ զարգացմանը: «Տորք Անգեղ և Հայկանուշ գեղեցիկ» պոեմը ինչպես թեմատիկայի, այնպես էլ ժանրային առանձնահատկությունների տեսակետից նորություն էր հայ մանկական պոեզիայում:

Ելակետ ընդունելով մանկավարժական այն ճիշտ դրույթը, թե մանուկների, հատկապես նախադպրոցական հասակի երեխաների համար խաղը դաստիարակության, ինչպես և աշխարհճանաչողության լավագույն միջոց է, ամսագիրը մեծ տեղ է հատկացնում Աղայանի այն բանաստեղծություններին, որոնք մատուցվում են որպես «մանկական խաղ» («Տիկնիկ», «Ատամը փոխած» և այլն): Մանկական բանաստեղծության լեզուն Աղայանը մոտեցնում է խոսակցական լեզվին, հարստացնում ժողովրդական դարձվածքներով: Կարևորն այն է, որ մանուկներին ուղղված բանաստեղծական խոսքը նա աղատագրում է վերացականությունից և հաղորդում նրան ժողովրդական լեզվի հարստությունն ու արտահայտչական մատչելիությունը, պեղեցկությունն ու պարզությունը: Բանաստեղծը ուշադրություն է դարձնում պոետական խոսքի

---

[42] «Աղբյուր», 1888, № 3, էջ 104—118, № 4, էջ 161—170, № 5—6, էջ 228—241:

ղգայական կողմի վրա։ Նրա մանկական պոեզիայում մեծ տեղ են գրավում բառերի, պատկերների կրկնությունները, որոնք ուժեղացնում են ոտանավորի հուզական բովանդակությունը, ռիթմը, իսկ արտահայտած միտքը դարձնում են ավելի հատու։ Տիգրան Նազարյանը բարձր գնահատելով հայ մանուկներին Աղայանի մատուցած ծառայությունները, նրա 40-ամյա հոբելյանի առթիվ «Տարազում» գրում է. «...Հրճվանոք ողջունում եմ քառասնամյա հրաշափառ գրական գործունեությունդ... Խնդակից եմ այսօրվա քո թևև խոչընդոտներով, արգելքներով շղթայած, հաղթական տոնին...

Չէ՞ որ Աղայան, քո ամենաբնտիր գոհարները «Աղբյուր»-ի մեջ են սփռված և նրա անսխեմելի պարծանքն ու անգնահատելի պանծերն են»[43]։

«Աղբյուր» ամսագրում են տպագրվել Ղ. Աղայանի հեքիաթները։ Ամսագիրը մեծ տեղ տալով ընդհանրապես հեքիաթներին ու առակներին, գրել է. «Ժողովրդական առակները զարգացնում են այն սերտ կապը, որ կա մանուկների ներքին կյանքի մեջ և իր ժողովրդի մեջ, միմիայն այս ճանապարհով մանուկի զարգացումն ընթանում է իր բնական ճանապարհով»[44]։ Ժամանակի դեմոկրատ մտածող, առաջադեմ մանկավարժ Տիգրան Ռշտունյանը ամսագրում հանդես գալով հեքիաթների դաստիարակչական դերի գնահատմամբ, գրում է. «Բոլոր հեքիաթները մեր առջև բաց են անում երևակայության անհուն ծով, անվերջ հրաշքներ և սքանչելիքներ, մարդկային խելքի անընդհատ ստեղծագործություններ։ Ժողովուրդը երբեմն հեքիաթների մեջ փառաբանում է իր պատմական հերոսներին, երբեմն բաց է անում իր կրոնական հավատալիքներն ու սնոտիապաշտությունները, երբեմն պարզում է իր աշխարհայացքը բնության ու բնական երևույթների մասին»[45]։

Ժողովուրդը հազարամյակներ շարունակ իր իղձերն ու ցանկությունները է ներդրել այդ ստեղծագործությունների մեջ, մշակել է բարոյականության այն նորմաները, որոնցով

---

[43] «Տարազ», 1911, № 5—6, էջ 78։

[44] «Աղբյուր», 1884, № 3, երկրորդ բաժին, էջ 2։

[45] «Աղբյուր», 1908, № 2, էջ 32։

սերունդներ են դաստիարակվել, ցույց տալով միաժամանակ ժողովրդի արդարամտությունը, աղատասիրությունն ու մարդասիրական իդեալները։ Ժողովրդի հերոսությունն ու խիզախությունը, նրա վսեմ երազանքները լայն արտահայտություն են գտել ժողովրդական բազմաթիվ հեքիաթներում։ Անդրադառնալով հեքիաթի տարածման գործում ամսագրի կատարած դերին, «Մուրճը» գրում է. «Հեքիաթները ունենալով մանկական պատմության բոլոր գլխավոր առանձնահատկությունները՝ պարզություն ու հարուստ բանաստեղծություն, բարոյական հանգամանքներ, հրահանգիչ բովանդակություն, մնայուն արժեք և ձգտումների ու իդեալների միություն, նպատակահարմար են։ Այս հանգամանքն է, որ նկատի է ունեցել «Աղբյուր»-ը և առաջին հերթին մեծ տեղ տվել հեքիաթներին»[46]։

«Աղբյուրում» տպագրված Աղայանի հեքիաթները մանուկների ու պատանիների մեջ սերմանում են բարոյական բարձր հատկանիշներ՝ քաջություն, անվեհերություն, աշխատասիրություն, անձնազոհություն, հայրենասիրություն և ամենակարևորը՝ մարդկայնություն և մարդասիրություն։ Ժամանակին մանկավարժ Հովհաննես Տեր-Միրաքյանը Աղայանին նմանեցնելով դանիացի հռչակավոր հեքիաթագիր Անդերսենին, միանգամայն իրավացիորեն գրել է. «Գեղեցիկ նյութեր ամբարված են գլխավորապես «Աղբյուրի» մեջ, մանավանդ հայ Անդերսենի՝ Աղայանի շնորհով...»[47]։

Մեծ է Աղայանի հեքիաթների ինչպես ճանաչողական ու դաստիարակչական, այնպես էլ գեղագիտական արժեքը։ Նրա ստեղծած պատկերները, կերպարները տպավորիչ են, հրաշապատում ձևը՝ ներգործուն։ Հեքիաթներում արտահայտված գաղափարները իրականությունից կտրված իդեալներ չեն, այլ ունեն իրենց ժողովրդական հիմքերը։ Աղայանի հեքիաթները հայ մանուկների մեջ միաժամանակ զարգացնում են գեղարվեստը ըմբռնելու և հասկանալու ճաշակ։ «Առհասարակ պ. Աղայանցի հեքիաթները անշափ գեղարվեստական են,— գրում է Գ. Միրզոյանը,— որ ես խորհուրդ կտայի մեր դաստիարակներին՝ հայ մանուկների մեջ գեղարվեստական ճաշակ զար-

[46] «Մուրճ», 1895, № 8, էջ 278։

[47] «Մուրճ», 1898, № 10—11, էջ 1492։

գացնելու միջոցներից մեկը այդ հեքիաթները համարել ու դործի դնել»[48]։

Հրաշապատում ձևով դրված հեքիաթների շուրջ, որ առաջին անգամ Աղայանի շնորհիվ մուտք են գործում հայ մանկական գրականության մեջ, մամուլի էջերում արտահայտվում են զանազան կարծիքներ։ «Մշակ» թերթը Ղազարոս Աղայանի «Օձամանուկ և Արևհատ» հեքիաթում իրերի ու երևույթների ֆանտաստիկական նկարագրությունները համարում է ավելորդ, քանի որ առանց այդ նկարագրությունների, հեքիաթը, ըստ նրա, «ավելի դյուրամարս և հասկանալի կլիներ, եթե բոներ երկու կամ երեք երես»[49]։ «Ֆանտազիայի մասին պետք է միայն ճաշակ տալ,— գրում է թերթը,— և ոչ թե սովորեցնել նրա մասին մտածել»[50]։ Ի դեպ, հոդվածագիրը դեմ չէ ընդհանրապես հեքիաթի ժանրի տարածմանը, «քանի որ նրա մեջ խոսում էր ժողովուրդը, քանի որ նրա հոգին պատկերանում էր նրա մեջ», այլ դեմ էր նրա ֆանտաստիկական բնույթին, հրաշապատում ձևին։ Իսկ «Մուրճ» ամսագիրը Աղայանի «Ջանգի-Ջրանգի», ինչպես և «Նղեկնուհի» հեքիաթը հասցեագրված համարելով միաժամանակ և նախադպրոցական հասակ ունեցող երեխաներին, անվանում էր «ծայրադույն հրաշապատում ձևով դրված հեքիաթներ»։ Նման քննադատների կողմից անտեսվում էին հեքիաթի յուրահատուկ կողմերը։ Իր հեքիաթների դաստիարակչական նշանակության մասին Աղայանը «Մուրճ» ամսագրին ուղարկած պատասխան-հոդվածում գրում է. «Իմ նպատակն է եղել և է՝ հեքիաթով հեքիաթական աշխարհը մտցնել երեխային և այդ աշխարհում կրավորական դեր չտալ նրան, այլ ներգործական, որ երեխան իր երևակայությամբ մտնե հերոսի դերի մեջ, այն անե, ինչ որ հերոսն է անում, նրա պես քաջասիրտ լինի, նրա պես անվեհեր, նրա պես հնարագետ, նրա պես վեհանձն և ազնիվ»[51]։ Բարձր գնահատելով հեքիաթի դերը, հատկապես նրա հրաշապատում ձևի ազդեցությունը մատաղ սերնդի բարոյական

---

48 «Աղբյուր», 1886, № 12, էջ 431։

49 «Մշակ», 1884, № 48, էջ 1։

50 Նույն տեղում։

51 «Աղբյուր», 1890, № 4, էջ 192—193։

կերպարի ձևավորման վրա, Ղազարոս Աղայանը հեքիաթը համեմատում է մայրական կաթի հետ, արտահայտելով այն միտքը, թե հեքիաթը մանուկների բարոյական ու մտավոր զարգացման համար նույն դերն է կատարում, ինչ մայրական կաթը նորածին երեխայի ֆիզիկական աճի համար: Հեքիաթի ժանրը տարբերվում է դրական մյուս ժանրերից իրերի ու երևույթների հրաշապատում նկարագրություններով: Կյանքի չարն ու բարին, մարդկային այս կամ այն հատկանիշն ավելի ընդգծված ձևով ներկայացնելու համար հեքիաթում անհրաժեշտ է դառնում կախարդների, դևերի ու վիշապների մասնակցությունը: «Էլ ինչ Հերկուլես,— գրում է նա,— եթե նրա սպանած վիշապը պետք է մի հասարակ օձ լինի և ոչ մի հիդրա բազմագլուխ, որ երբ մի գլուխը կտրեն, մյուսը տեղը բռնի: Եթե այդ վիշապը զարհուրելի է, որքան առավել հիանալի է Հերկուլեսի սիրտը, նրա անվեհերությունը, նրա քաջությունը, նրա հնարագիտությունը»[52]:

Ղազարոս Աղայանից հետո Ալեքսանդր Ծատուրյանն էր այն հեղինակը, որ ջերմորեն կապված էր ամսագրի հետ: Որբ մանկան հոգեվիճակը խորապես ապրած բանաստեղծն իր ինքնուրույն ստեղծագործություններից առաջինը՝ «Ձմեռ»[53] վերնագրով «Սնար» ստորագրությամբ տպագրում է «Աղբյուր» ամսագրում: Այն խստաշունչ ձմռան նկարագրությանը նվիրված սոսկ մի բնանկար չէ, այլ իրական կյանքի ճըշմարտացի պատկեր, որ անպայման սոցիալական բովանդակություն ունի.

Հարուստը քրտնած ծաղրում է ձմռան
Իսկ խեղճ աղքատը՝ սարսռում ու դողում:

Ալ. Ծատուրյանի շատ բանաստեղծություններ թեև անմիջականորեն հասցեագրված չեն մանուկներին, բայց տպագրվում են ամսագրում, լինելով մարդկային լավագույն հույզերի ու ապրումների, բարոյական առաջավոր ըմբռնումների գեղարվեստական ինքնատիպ արտահայտություններ: Նրա բանաստեղծությունները համակում են ընթերցողին ջերմ սի-

[52] Նույն տեղում, էջ 193:

[53] «Աղբյուր», 1887, № 2, էջ 67—68:

րով՝ հանդեպ մայրը, հարազատները, շրջապատի մարդիկ, հայրենիքը, աշխատավոր ժողովուրդը («Որբիկ», «Մոր գերեզմանի վրա» և այլն)։ Մատուրյանը չի վհատեցնում մանուկ ընթերցողին, այլ կենսասիրության, լավատեսության ղեկցումով է համակում նրան։ Նրա բանաստեղծություններում կյանքի դառն պատկերներին հակադրվում են բնության սքանչելի տեսարանները։ Իր մի շարք բանաստեղծություններում («Գետակ», «Ե՛կ, գարնան անձրև» և այլն) Մատուրյանը սիմվոլիկ պատկերների միջոցով արտահայտում է աղատ և երջանիկ կյանքի մասին փայփայած իր երազանքները, հուսադրում ընթերցողին, թե կբացվի մարդկության կյանքի արշալույսը։ Ամսագրի գրական էջերը Մատուրյանը միաժամանակ հարստացնում է Շիլլերից, Լերմոնտովից, Պուշկինից, Կոլցովից, Պլեշչեևից և ուրիշներից արված թարգմանություններով։

Բանաստեղծ Հովհ. Հովհաննիսյանը նույնպես իր գրական մկրտությունը ստանալով Նաղարյանի ամսագրում, շարունակում է աշխատակցել ամսագրին։ Նրա պոեզիան, ներշնչված վառ երազանքներով, հուսադրում է ընթերցողին, սովորեցնում երբեք չվհատվել, այլ սպասել վաղվա դալիք պայծառ օրվան։ Այդ իսկ պատճառով Տիգրան Նաղարյանը նրա մասին գրում է. «Նրա ջերմ կրծքի տակ սակայն սեղմված սերը միշտ մատնում էր նրան»[54]։

Ամսագրին մեծ սիրով աշխատակցում էր և Ավետիք Իսահակյանը («Գիշերն եկավ», «Աշղի խաղերը» և այլն)։ Հույզը, տրամադրությունը կապելով բնության գողտրիկ տեսարանների նկարագրության հետ, Իսահակյանը գեղեցիկ պատկերներով է հարստացնում «Աղբյուրի» պոեզիան։ Նրա բանաստեղծությունները, զրված լիրիկական ջերմ շնչով, մանուկներին ու պատանիներին զգացնել են տալիս պատկերավոր խոսքի գեղարվեստական հմայքը, հմայք, որ միաժամանակ նուրբ ու քնքուշ զգացումներ է առաջացնում մանուկների հոգում, խորացնում հայրենիքի նկատմամբ ունեցած նրանց սերը։

---

[54] «Աղբյուր», 1913, № 4, էջ 125։

«Աղբյուրը» թեև լինելով մանկապատանեկան ամսագիր, այնուհանդերձ իր վերաբերմունքն է ցուցաբերել ժամանակի քաղաքական-հասարակական կարևոր իրադարձությունների նկատմամբ: Խմբագրությունն իր որոշակի ուղղությունը ջանացել է անցկացնել՝ հաղթահարելով և՛ գրաքննական, և՛ զանազան այլ արգելքներ: Համաշխարհային առաջին պատերազմի, ինչպես և մեծ եղեռնի օրերին ամսագիրը պրոպագանդում էր ազատասիրության, հայրենասիրության գաղափարներ, տպագրում Մ. Նալբանդյանի ազատասիրական շնչով գրված բանաստեղծությունների վերլուծությանը նվիրված հոդվածներ: Մեկ հոդվածում[55], որ նվիրված է հեղափոխական-դեմոկրատ Մ. Նալբանդյանի կյանքի և գործունեության լուսաբանմանը, Մ. Նալբանդյանը համարվում է «Հյուսիսափայլ» ամսագրի «լուսաշող փայլը», «գրական կյանքի մեջ շարժում առաջ բերող ոգի, մեր կյանքի ճահճի մեջ քար նետող խիզախ կտրիճ»: Դեռևս 1903—1904 թթ., երբ արգելված էին Նալբանդյանի ազատաշունչ երգերը, ամսագիրը ինչ-որ ձևերով, նոտագրերով տպագրում էր նրա «Երգ ազատության»[56], «Իտալացի աղջկա երգը»[57] բանաստեղծություններից մեկական քառյակներ: 1909 թ. «Աղբյուրում» տպագրվել է «Երգ ազատության» ամբողջ բնագիրը[58]:

Ի դեպ, պետք է նշել, որ ամսագրին ոչ միշտ էր հաջողվում խուսափել ցարական գրաքննական կոմիտեի հետապնդումներից: Թիֆլիսի պետական պատմական արխիվում պահպանվում են այն բոլոր գործերը, որոնք գրված են եղել «Աղբյուրի» համար, բայց բռնագրավվել ու արգելվել են Կովկասի գրաքննական կոմիտեի կողմից: Նման գործերից մեկում՝ «Մի աշխարհ» ոտանավորում (հեղինակ՝ Ք. Թադևոսյան) այսպես է նկարագրված կյանքը սուլթանական բռնապետության օրոք.

---

55 «Աղբյուր», 1916, № 4—5, էջ 98—106:
56 «Աղբյուր», 1903, № 4, էջ 191:
57 «Աղբյուր», 1904, № 12, էջ 320:
58 «Աղբյուր», 1909, № 11, էջ 206—207:

Այնտեղ արտերը արյամբ են ներկված
Խոփի տեղ թշնամու սուրն է շողշողում,
Իսկ եղնների տեղ լծում են մարդկանց
Նրանց միջքին է մարակը իջնում[59]:

Արգելվել է նաև ֆրանսերենից թարգմանված «Կարիճին» բանաստեղծությունը, որտեղ կոչ է արվում՝ շտապել փշրելու «եղբոր տանջալի շղթան»[60]:

Գրաքննական կոմիտեի կողմից արգելված նյութերը վկայում են նաև այն մասին, որ հոգևոր դասը հակակրանք է տածել «Աղբյուր» ամսագրի նկատմամբ և անգամ էջմիածնի սինոդը հատուկ հանձնարարականով պարտադրել է քահանաներին՝ «խոչընդոտ լինել ամսագրի տարածմանը հայոց ուսումնարաններում»[61]:

Մոռյլ իրականության դաժան պատկերը երբեմն էլ ներկայացվում էր արտաքուստ անմեղ թվացող մանկական ոտանավորների միջոցով: Այսպես, Շուշանիկ Կուրղինյանին կյանքի մռայլ օրերում միակ ուրախացնողը և վշտերն ամոքողը եղել են մանուկները, որոնց մասին նա գրել է.

Վրան նայելիս
Վիշտդ կմոռնաս,
Ձայնը լսելիս՝
Ապրել կցանկաս[62]:

«Աղբյուրի» էջերում մանկական պոեզիան ներկայացված է ինչպես հարուստ թեմատիկայով, այնպես էլ դեղարվեստական ձևերի բազմազանությամբ: Այստեղ տպագրված են պոեմներ, բալլադներ, եղերերգություններ, ձոներ, սոնետներ, իսկ նախադպրոցական հրեխաների համար՝ մանկապարտեզային երգեր, մանկական խաղեր, խմբերգեր և այլն: Պոեմներն ու բալլադները հիմնականում ժողովրդական ավանդությունների հիման վրա գրված գործեր են, որ հետապնդում

---

59 *Տե՛ս ՎՊԿՊԱ, ֆ. 480, ց. 1, գործ 938:*

60 *Նույն տեղում, գործ 1053:*

61 *Նույն տեղում:*

62 *«Աղբյուր», 1904, № 4, էջ 148:*

են բարոյագաստիարակչական որոշակի նպատակներ (Հ. Թումանյանի «Արև ու լուսին», Լեոյի «Սպանվածի հայրը» և այլն)։

Դաստիարակչական նույն ուղղությունը, մանկավարժական նույն սկզբունքները շարունակում են պահպանվել և 1900-ական թվականներից հետո։ Այդ տարիներին ամսագրի էջերում ավելի հաճախ են տպագրվում գեղարվեստական գործեր նախադպրոցական հասակի երեխաների համար։ Այդ շրջանում, ինչպես Խ. Գյուլնազարյանն է գրում, «...ամսագրի խմբագրությունը ցույց է տալիս իր հատուկ պատկերացումը ընթերցողների տարիքային առանձնահատկությունների հետ կապված պահանջների մասին»[63]։

«Աղբյուրի» կողմից օգտագործվում էին նաև առաջադեմ գրողների՝ մեծահասակներին հասցեագրված ստեղծագործությունները։ «Աղբյուրում» է առաջին անգամ տպագրվում Րաֆֆու «Պարույր Հայկազն»[64] վիպակը, որտեղ ցույց է տըրվում լուսավորության, կրթության կարևոր դերը ազգային կյանքի զարգացման գործում։ Առաջին անգամ դարձյալ «Աղբյուրում» է տպագրվել «Կայծեր» վեպի Վարագ[65] անախիտ գրչախիտը, ուր հեղինակը պատմում է Խրիմյան Հայրիկի լուսավորական գործունեության մասին։ Այստեղ ընդգծված է հատկապես այն հանգամանքը, որ Հայրիկը գործում է հալածված, հարստահարված դասակարգի համար։ «Հայրիկի բարեկամները,— գրված է այնտեղ,— քաղաքի արհեստավորներն են, անտուն, անտեղ, անհող, անճար սորուկներն են ու բանվորներն են»։

Որպես մանկական դեղարվեստական ստեղծագործություն, ուշագրավ է հատկապես Պ. Պռոշյանի «Տարվա ամիսները»[66] պատմվածքաշարը, որը ամիսների սոսկ նկարագրությունը չէ, այլ յուրաքանչյուր եղանակի, յուրաքանչյուր ամսվա հետ կապված հայ ժողովրդի սպասելիքների, վառ

---

63 Խ. Մ. Գյուլնազարյան, *Ակնարկներ հայ մանկական գրականության պատմության*, էջ 70։

64 «Աղբյուր», 1884, № 1—6։

65 «Աղբյուր», 1885, № 4, էջ 141—164։

66 «Աղբյուր», 1892, № 1—12։

նրա ազգանքների, նրա նյութական թշվառ իրավիճակի արտահայտությունը:

Ամսագրում իրենց տեղն ունեն նաև գյուղական կյանքից վերցված պատմվածքները: Ջալալ Տեր-Գրիգորյանը, Հարություն Ճուղուրյանը, Նիկողայոս Տեր-Ավետիքյանը և ուրիշներ պատկերում են գյուղացու չարքաշ առօրյան: Ջալալ Տեր-Գրիգորյանի «Գյուղի մանուկը» պատկերում ցույց է տրվում, որ խեղճ ու աղքատ գյուղացուն դժբախտություն պատճառողները գյուղի բեգերն են, աղաները:

Ուսուցողական և ճանաչողական բնույթի գիտական ակնարկներ մանուկների համար տպագրվել են դեռևս հայ մանկապատանեկան մամուլի առաջին օրգաններում («Բուրաստան ս. Սահակեան», «Թատրոն բարեկամ մանկանց», «Բուրաստան մանկանց» և այլն), սակայն դրանք չէին հասնում այն դեղարվեստական կատարելությանը, որն առկա էր «Աղբյուրի» գիտագեղարվեստական ակնարկներում: «Աղբյուրի» կողմից դաստիարակչական կարևոր ուղղություն էր ճանաչվում «բնագիտական դաստիարակությունը միացած բանաստեղծական դաստիարակության հետ»[67]: Ամսագրում գիտական ակնարկները մատուցվում էին գեղարվեստական հետաքրքիր ձևերի մեջ: Դրանով իսկ սկիզբ էր դրվում գիտագեղարվեստական ակնարկի զարգացմանը հայ մանկապատանեկան գրականության մեջ: Մանուկ ընթերցողների համար բնության երևույթների գիտական բացատրություններ շուրջ հանրամատչելի և հետաքրքիր ակնարկներ էին գրում Կոստանդին Մելիք-Շահնազարյանը («Թե բույսերը ինչպես են ճանապարհորդում» և այլն), Ջալալ Տեր-Գրիգորյանը («Բույսերի ձմեռվա քունը»), Ն. Նիկողոսյանը («Բույսերի և կենդանիների աշխարհից») և ուրիշներ:

Մարդկային հասարակության պատմության, հայ և այլ ժողովուրդների կյանքի ու կենցաղի, նրանց զբաղեցրած տեղավայրերի աշխարհագրական դիրքի, բնակլիմայական պայմանների մասին համապատասխան գիտելիքներ էին հաղորդում պատմաաշխարհագրական ակնարկները: «Աղբյուրը»

[67] «Աղբյուր», 1890, № 1, երկրորդ բաժին, էջ 21:

նպատակ ունենալով մասսայականացնել նման ստեղծագործությունները, օգտագործում էր նաև մեծահասակների համար գրված, բայց մանուկներին նույնպես հետաքրքրող ակնարկներ, ճանապարհորդական նոթեր և այլն։ Բաֆֆու «Ջրաբերդ»[68] պատկերը ծանոթացնում է մանկանը հայրենի Ղարաբաղի լեռնաշխարհին, նրա ծերպերից մեկի վրա անցյալում կառուցված Ջրաբերդ ամրոցին ու այդ ամրոցի հետ կապված հերոսամարտերին։ Բնության պատկերն այստեղ այնքան տպավորիչ է նկարագրված, որ ռուս նկարիչ Կարագինը կարդալով ակնարկը, նկարում է մի գեղեցիկ բնանկար՝ պատկերելով Ջրաբերդ ամրոցը, ներքևում հոսող Թարթառ գետը ու նրա ափով անցնող գեղջուկին։ Այս բնանկարը 35 տարի շարունակ զարդարել է «Աղբյուրի» շապիկը։

Ճանապարհորդական նոթերը ընդհանրապես խրախուսվել են մամուլի և ժամանակի առաջադեմ մտավորականների կողմից։ «Մշակ» թերթը Բաֆֆու «Ջրաբերդ» ակնարկի առթիվ գրել է. «Ճանապարհորդական գրվածքները միշտ պիտի օգտակար լինեն ոչ միայն երեխաների, այլև ամեն դասակարգի մարդկանց համար։ Եվ «Ջրաբերդ» հոդվածը, վերցված պ. Բաֆֆիի ճանապարհորդությունից Ղարաբաղում, իսկապես գեղեցիկ և գրավիչ է։ Հարգելի հեղինակի ոճը նրբության և գեղարվեստի կողմից ուրիշ ոչինչ սպասելի տեղ չէ թողնում։ Ընթերցողը նրա հետ գնում է, պատում է նրա հետ, տեսնում է ամեն ինչը, և հոգեպես տրամադրվում է այնպես, ինչպես և է ճանապարհորդը»[69]։

Ամսագրի էջերում մեծ տեղ է տրվում նաև կենսագրական ակնարկներին։ Գիտության, արվեստի, կուլտուրայի բնագավառներում աչքի ընկած գործիչների մասին պատմող ակնարկներում («Կամքի ուժը») ցույց է տրվում, թե ինչպիսի համառ ջանքեր գործադրելով, ինչպիսի դժվարություններ հաղթահարելով, նրանք հասնում են իրենց նպատակին։ Պատմակենսագրական ակնարկներում միաժամանակ լուսաբանվում էին ընդհանուր պատմությանը («Նաթան Հալլ», «Մարտին Լութեր», «Վիլհելմ Թելլ»), հասարակագիտությանը

[68] «Աղբյուր», 1883, № 2, էջ 68—79։

[69] «Մշակ», 1884, № 48, էջ 1։

(«Արխատոտել», «Տպագրության գյուտը»), աշխարհագրությանը («Ֆրիտյոֆ Նանսենի ճանապարհորդությունը դեպի Հյուսիսային բևեռ»), բնագիտությանը («Դարվինի կենսագրությունը»), ֆիզիկային («Միքել Ֆարադեյ») վերաբերող հարցերը։ Ժամանակի կարևոր պահանջն էր նաև հայ գործիչների կյանքի լուսաբանումը։ Այդ առթիվ Հ. Տեր-Միրաքյանը «Մուրճ» ամսագրում գրում է. «Մեր նշանավոր գործիչներն էլ կարող են օրինակելի լինել, նրանց կյանքը հարկադրված է լինում ասիական աներևակայելի խոչընդոտների դեմ մաքառելով զգալի արդյունք առաջացնել։ Նրանց բնավորության ուժն ու բարերար կյանքը կարող են ազդել դևռահասի ներքին աշխարհի վրա»[70]։ Եվ հայ մանուկ ընթերցողների համար առաջին անգամ «Աղբյուրում» տպագրվում են Խաչատուր Աբովյանի, Միքայել Նալբանդյանի, Պերճ Պռոշյանի, Հովսեփ Շիշմանյանի (Շերենց), հրապարակախոս Գրիգոր Արծրունու, հասարակական գործիչ, կաթողիկոս Խրիմյան Հայրիկի, մանկավարժ Առաքել Բահաթրյանի, երգահան Կարա-Մուրզայի, պատմաբան Ալեքսանդր Երիցյանի և մյուսների կյանքին ու գործունեությանը նվիրված գիտահանրամատչելի ակնարկներ։

Մանուկների ու պատանիների կրթական ընդհանուր մակարդակը թերի կարող էր լինել, եթե նրանք ձեռք չբերեին տարրական գիտելիքներ՝ կենցաղային հարցերի և ամենօրյա առողջապահական կանոնների մասին։ Անդրադառնալով այդ հարցին, Հ. Տեր-Միրաքյանը «Մուրճ» ամսագրում գրում է. «Ինչ վերաբերում է արվեստներին, մեր ո՛չ մանկական, և ո՛չ էլ ժողովրդական գրականությունը նրանց մասին գաղափար չի տվել։ Մինչդեռ, ինչպես այլ առիթով տեսանք, նրանք քաղաքակրթության շոշափելի տարրեր լինելով, անտես չպետք է առնվեն։ Շատ թերի կլիներ մեր աշխարհայացքը, եթե գաղափար չունենայինք գոնե ամենագործածական ու հետաքրքրական արտադրությունների մասին։ Մի՞թե քիչ թե շատ զարգացած մարդու պարտականությունը չէ բավարարություն տալ մանկան, օրինակ, հետևյալ հարցերին, թե ինչպե՞ս են շինում թուղթը, ինչի՞ց և ինչպե՞ս ապակեղենը, շաքարը, օ-

[70] «Մուրճ», 1899, № 2—3, էջ 222։

ճառը...: Հարց է, թե ինչո՞ւ մարդիկ շատ բնական են համարում պատմության, աշխարհագրության, լեզվի դասագրքերում կցկտուր տեղեկություններ տալ այդ մասին, իսկ կատարյալ գաղափար տալը՝ ոչ»[71]: «Աղբյուրը» ձգտում էր բավարարել նորագույն մանկավարժության այդ պահանջը ևս, տպագրելով առօրյա գործածական իրերի կազմության, նյութերի բաղադրության մասին գեղարվեստական լեզվով շարադրված հանրամատչելի ակնարկները («Ջուր», «Ինչպես շինել արհեստական մագնիսը», «Սառեցրած կաթ», «Օդի բարեխառնությունը քաղաքներում» և այլն): Տպագրվում էին նաև ակնարկներ, որոնք ներկայացնում էին առողջապահական կանոնների վերաբերյալ գիտագեղարվեստական հանրամատչելի ղրույցներ («Մի օրվա կյանքը» և այլն):

* *
*

«Աղբյուր» ամսագրում զգալի տեղ էր տրվում թարգմանություններին: Ռուսական և արևմտաեվրոպական գրականությունից թարգմանվում էին պատմվածքներ, նովելներ, վիպակներ, վեպեր, բանաստեղծություններ: Դրանք թեև գրված էին տարբեր ժամանակաշրջաններում, գրական տարբեր ճաշակ ունեցող գրողների կողմից, բայց դաստիարակչական ուղղվածությամբ համապատասխանում էին ժամանակի առաջադիմական ոգուն: Համաշխարհային գրականության հարուստ գանձարանից ընտրվում էին գրվածքներ, որոնք հոգեհարազատ էին հայ մանուկներին: «Աղբյուրի» թարգմանություններն աչքի էին ընկնում բովանդակության խորությամբ, դաստիարակչական նպատակասլացությամբ, արտահայտչական ձևերի բազմազանությամբ: Ռուս և համաշխարհային մանկական գրականությունից ընտրվում էին գործեր, որոնցում ցույց էր տրվում, թե իրականությունն ու ժամանակն էին իրենց դաժան ճշմարտությամբ ողբերգական դարձնում խեղճ ու անօգնական մանուկների առօրյան (Վ. Կորոլենկոյի «Սոորներկրյա մանուկները», Չեխովի «Փոքրիկ Վանյան» և այլն):

---

[71] Նույն տեղում, էջ 232—233:

«Աղբյուրի» թարգմանական գործերը կրթում, դաստիարակում էին մանուկ ընթերցողի զգացմունքային աշխարհը, հարստացնում հոգին, կազմավորում բնավորությունը: Տուրգենևի «Լորը»[72] (մանկական տպավորություններ), «Ճընճղուկը»[73] և գեղարվեստական այլ պատկերներ կենդանիների կյանքը նկարագրող պատմություններ էին, որ դաստիարակում էին մանուկների մեջ մարդկային ամենալավագույն զգացումները՝ սեր և խղճմտանք: Մայրական սիրո ուժգնությունն է ընդգծվում նրա «Ճնճղուկը» հուզիչ պատկերում: Նկարագրելով մայր ճնճղուկի անձնազոհ արարքը, հեղինակը եղրակացնում է. «Սերը, մտածում էի ես, մահից էլ, մահվան երկյուղից էլ զորեղ է: Միայն նրանով, միայն սիրով է պահպանվում և շարժվում կյանքը»: Սերը որպես մարդկային կյանքի շարժիչ ուժ ներկայացված է Տոլստոյի մանկական ստեղծագործություններում: Գրողը սովորեցնում է մանուկներին՝ սիրել մարդկանց, լինել լավ ու բարի, ազնիվ, ընկերասեր, առաքինի («Գայլը»[74], «Ասարհադոն թագավորը»[75] և այլն):

«Աղբյուրի», 1910 թ. 11-րդ համարը ամբողջովին նվիրված է Լև Տոլստոյի հիշատակին: Այդ համարում է տպագրված մանուկներին ուղղված նրա նամակը, որտեղ գրված է. «Խորհուրդ եմ տալիս սիրելի մանուկ, ամբողջ կյանքումդ սկսած այս օրվանից մինչև մահդ, բոլոր ուժերը լարես սովորելու, որ դերազանցորեն բարի լինես ամենքի վերաբերմամբ, որոնց հետ պատահես կյանքումդ: Դա շատ էլ հեշտ բան չէ. այդ էլ պիտի սովորել այնպես, ինչպես մարդիկ սովորում են կարդալ, գրել, նվագել...»:

«Աղբյուրը» պատանիներին ծանոթացնում էր աշխարհահռչակ գրողներ Շիլլերի[76], Գյոթեի[77], Հայնեի, Բերանժեի, Մո-

---

72 «Աղբյուր», 1883, № 10, էջ 333—340:

73 «Աղբյուր», 1890, № 11, էջ 397—398:

74 «Աղբյուր», 1910, № 1, էջ 5:

75 «Աղբյուր», 1903, № 12, էջ 415:

76 Գ. Բարխուդարյանի թարգմանությամբ տպագրվել են Շիլլերի «Օդլեանի կուլսը», «Վիլհելմ Թելլ», «Դոն-Կարլոս» դրամաներից հատվածներ:

77 «Աղբյուր», 1888, № 4, էջ 179: Գյոթեի «Վարդը» ոտանավորը «Մանկական երգ» վերնագրով տպագրվել է Հ. Հովհաննիսյանի թարգմանությամբ:

պատանի, Զոլայի, Հյուգոյի, Դիկկենսի և մյուսների հետ ու բարձր գնահատում նրանց ստեղծագործությունները։

Գերմանական հանճարեղ բանաստեղծ Գյոթեի կյանքի ու գործունեության մասին 1896 թ. առաջին երեք համարներում տպագրվել է Ն. Տեր-Ավետիքյանի ընդարձակ ակնարկը։ «Աղբյուրում» ըստ արժանվույն են գնահատվել Էմիլ Զոլայի ստեղծագործությունները։ «Զոլայի վեպերում,— գրված է այնտեղ,— հերոսները, գործողությունները, նկատուկացը ոչ թե կարդում ենք, այլ կարծես մեր իսկական աչքերով «ափաշկարա» տեսնում ենք։ Ահա է. Զոլայի ամենամեծ արժանավորությունը։ Նա երբեք փաստը, իսկությունը զոհ չէ բերել տենդենցիային։ Եվ որ ամենագլխավորն է, նա գործով էլ ապացուցեց, որ ճշմարտության կողմնակից է և նույնիսկ իր կյանքը Դրեյֆուսի գործի ժամանակ վտանգի մեջ դրավ, բայց ասպետի պես ճշմարտության պաշտպան հանդիսացավ և փառավոր հաղթանակներ էլ տարավ»[78]։

«Աղբյուրում» բարձր են գնահատվում Շեքսպիրն ու նրա դրամաները։ «Շեքսպիրյան դրամաների հմայքի ու աղդեցության ծանրության կենտրոնը,— գրված է այնտեղ,— կայանում է նրանում, որ այդտեղ պատկերացվում են համամարդկային հավիտենական տիպեր, հոգեկան կրքեր, զգայմունքներ ու իդեալներ»[79]։

Անհրաժեշտ է նշել, որ «Աղբյուր» ամսագիրը միշտ չէ, որ հարազատ է մնացել իր իսկ էջերում բարձրացված գրական-տեսական առաջավոր դրույթներին։ Երբեմն տպագրվել են նյութեր, որոնցում քարոզվել են բուրժուական կեղծ բարեպաշտության և կրոնական զաղափարներ («Քրիստոս հարեավ ի մեռելոց», «Ջատկական զրույց» և այլն)։

Հաճախ էլ դրաքննության հալածանքներից հետու մնալու համար, կամ այլ հանգամանքներից ելնելով, ամսագիրը խուսափել է պատմական ժամանակաշրջանի հետ կապված քաղաքական կարևոր հարցերին արձագանքելուց։ 1917—1918 թթ., հեղափոխական իրադարձությունների պայմաններում ամսագրի էջերը լրացվել են անցած տարիների հա-

[78] «Աղբյուր», 1902, № 9, էջ 318։

[79] «Աղբյուր», 1887, № 1, էջ 27։

մարների նյութերից ընտրված արտատպություններով։ Բայց այս ամենը, իհարկե, որակ չէին կազմում, ուստի և չէին խաթարում ամսագրի ընդհանուր դաստիարակչական ուղղությունը։ «Աղբյուրի» էջերում ստեղծվում է մարդասիրության, ինտերնացիոնալիզմի, հայրենասիրության բարձր գաղափարներով հագեցված գեղարվեստական գրականություն, որով և սկիզբ է դրվում հայ մանկական նոր, ռեալիստական գրականության զարգացմանը։ Հենց դրանով էլ արժեքավոր է ամսագրի դերը մանկական գրական անդաստանում և պարբերական մամուլի պատմության մեջ։

«Աղբյուրի» դաստիարակչական սկզբունքները

Անցած դարի 80-ական թվականներին մանկավարժական մտքի աշխուժացման պայմաններում մեծ ակտիվություն էր ցուցաբերում «Աղբյուր» ամսագիրը։ Ամսագրին կից լույս էր տեսնում երկրորդ բաժինը, որտեղ տպագրվում էին նյութեր՝ ծնողների և դաստիարակների համար։ Ամսագրի հրապարակախոսական ամբողջ գործունեության հիմքում ընկած էր պայքարը սխոլաստիկական դաստիարակության դեմ՝ հանուն ժողովրդական կրթության ու դաստիարակության նոր, առաջավոր խնդիրների իրականացման։ Այս առումով նշանակալից է Ղազարոս Աղայանի ծառայությունը հայ նոր մանկավարժությանը։ Շարունակելով հեղափոխական-դեմոկրատ Միքայել Նալբանդյանի մանկավարժական ավանդները, նա այդ գաղափարները զարգացնում է ինչպես իր տեսական հոդվածներում, այնպես էլ մանկավարժական պրակտիկայում։ Նա ամսագրի էջերում («Զրիակերություն»[80]) քննադատում է այն մեծատուններին, որոնք չեն հետաքրքրվում հայ ժողովրդի բախտով, նրա լուսավորության, կրթության գործով։ Նա մեղադրում էր մտավորականության այն ներկայացուցիչներին, որոնք բավական չէր «շարունակ առաջադիմելու, շարունակ լույս տալու հատկություն չունեին», խոչընդոտում էին այն նորն ու առաջավորը, որ մուտք էին գործում լուսավորու-

[80] «Աղբյուր», 1889, № 11, երկրորդ բաժին, էջ 123—125։

թյան, կուլտուրայի և այլ բնագավառներում («Մի նկատողություն»[81]): Ապա հակադրվելով «խավարամիտներին», որոնց կողմից ամեն մի առաջադիմական միտք, ամեն մի առաջավոր քայլ համարվում էր փոփոխամտության արդյունք, Աղայանը գրում էր. «Եթե ես մի դասագիրք եմ հորինում և տարիների ընթացքում նորանոր հոդվածներով ճոխացնում, թույլերը հանում և լավերը մացնում, հաստատ մնալով հիմնական գաղափարի վրա, իմ այս արարմունքը փոփոխություն է, ժամանակի հետ առաջ գնալ է, հաստատամտություն է և ոչ փոփոխամտություն»[82]: Աղայանը բացատրում է նրանց, որ փոխվել են ժամանակներն ու պայմանները, դրանց հետ միասին և բարոյագիտական նորմաները, դաստիարակչական մեթոդներն ու մանկավարժական սկզբունքները: Աղայանն իր մանկավարժական հոդվածներում բարձրացնում է մատաղ սերնդի ֆիզիկական, մտավոր ու բարոյական միասնական դաստիարակության անհրաժեշտության հարցը: Նա խիստ մեծ կարևորություն է տալիս երեխաների խաղերին, սպորտին, մարմնավարժությանը, ձեռքի աշխատանքին[83]: Աղայանը հեղափոխական-դեմոկրատ Չերնիշևսկու, Դոբրոլյուբովի և ուրիշների նման դաստիարակության գործում մերժում էր մարմնական պատիժը:

Դաստիարակությունը Աղայանը դիտում էր որպես համաժողովրդական մեծ գործ, որպես մարդկանց «բարոյական վերքերը ամոքող» ամենալավագույն միջոց: Ժողովրդի գեղեցիկ ու երջանիկ ապագան նա տեսնում էր բարոյական բոլոր ախտերից մաքրված, բարի ու առաքինի մարդկային հասարակության մեջ, հասարակություն, որը, ըստ նրա, կարող էր ստեղծվել մարդկային բարձր բանականության գերիշխանության պայմաններում: Աղայանի այդ մեծ ու վսեմ իդեալները չէին կարող իրականություն դառնալ, մինչև չվերափոխվեր ամբողջ հասարակարգը իր սոցիալ-հասարակական արմատներով: Այդ նույն ժամանակաշրջանում բուրժուական բարոյա-

---

[81] «Աղբյուր», 1890, № 5—6, երկրորդ բաժին, էջ 245—249:

[82] Նույն տեղում, էջ 246:

[83] Ա. Մ. Շավարշյան, Հայ մանկավարժներ, գիրք Ա, Երևան, 1958, էջ 342:

կանության սկզբունքները բոլորովին այլ բան էին թելադրում մանկավարժությանը, դպրոցներին։ Վ. Ի. Լենինը անդրադառնալով դաստիարակության հարցերին, գրում է. «Իրականում դպրոցը ամբողջովին վերածվել էր բուրժուազիայի դասակարգային տիրապետության գործիքի, նա ամբողջովին տոգորված էր կաստայական բուրժուական ոգով, նրա նպատակն էր կապիտալիստներին տալ պատրաստակամ ծառաներ և բանիմաց բանվորներ»[84]։

Այն պայմաններում, երբ բարոյագիտական հարցերի քննարկումը ընթանում էր հասարակական հակադիր հոսանքների ու ուղղությունների պայքարի բովում, բնական էր, որ ամսագիրը չէր կարող չեզոք դիրք գրավել։ Եվ եթե խմբագիրը հայտարարում էր, թե «ամսագիրը ամեն տեսակ բանակռիվներից հեռու կպահի իրեն և երբեք չի մասնակցի թե՛ մանկավարժական, թե՛ գրականական, և թե՛ այլ վեճերում»[85], ամենևին էլ այդպես չէր։ «Աղբյուրը» հակադրվում և մերկացնում էր այն գործիչներին, որոնք սխալ ուղղություն էին տալիս մատաղ սերնդի դաստիարակության գործի կազմակերպմանը, ձգտելով հարմարեցնել այն բուրժուազիայի դասակարգային շահերի պաշտպանությանը։ «Մեր բարոյական զարգացումն» հոդվածում[86] ուրվագծվում էին բարոյական դաստիարակության այն հիմնական սկզբունքները, որոնց պաշտպանությամբ հանդես էր գալիս ամսագիրն իր գործունեության ամբողջ ընթացքում։ Հոդվածում նշավակվում էին բուրժուական եսապաշտական դաստիարակության տխուր հետևանքները։ «Նայեցեք,— գրված է այնտեղ,— լավ նայեցեք ամեն տեսակ դասակարգերի, ամեն տեսակ զգացմունք ունեցող մարդկանց վրա. տեսնում եք մի ուսուցիչ, այո ուսուցիչ՝ մատաղ սերնդի կրթող, դաստիարակող, ինչ ու ինչ միջոցներ չի գործ դնում այս կամ այն պաշտոնը ստանալու համար, քանի կեղտոտ ինտրիգներ է սարքում... տեսնում եք մի հրապարակախոս, որն ամսական մի քանի դրոշների համար ինչ տեսակ օյինբազություններ ասես, պատրաստ է

---

84 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 28, էջ 92։

85 «Աղբյուր», 1883, № 1, երկրորդ բաժին, էջ 1։

86 «Աղբյուր», 1884, № 8—9, երկրորդ բաժին, էջ 25—27։

անելու...»[87]: Եվ այդ բոլորի պատճառը համարվում էր «ամենանեղ եսականությունը», որը մարդկաց կյանքի միակ նպատակն էր դարձնում անձնական շահը, անձնական վայելքներն ու երջանկությունը: Հատկանշական է, որ այս հոդվածում ուշադրություն չէր դարձվում հարցի այն կողմի վրա, թե արատավոր էին մարդիկ այն պատճառով, որ արատավոր էին սոցիալական-հասարակական պայմանները: Հոդվածում հասարակության բարոյական անմխիթար վիճակը բացատրվում էր հիմնավոր դաստիարակության բացակայությամբ և հաստատուն (բնական) դիտելիքների անբավարար տարածմամբ:

Բուրժուական հասարակությունում հասկանալի է, որ միայն դաստիարակության միջոցով չէին կարող իրականացվել իրավահավասարության մասին ամսագրի բարձրացրած գաղափարները: Այնուհանդերձ այդ գաղափարները ժամանակի համար կարևոր էին, քանի որ պայքար էին հայտարարում բարոյագիտության այն նորմաների դեմ, որոնք հնացած էին, բայց դեռևս պաշտպանվում էին հոգևորականների և ռեակցիոն գործիչների կողմից: Իր գաղափարական թշնամիների հասցեին ամսագիրը գրում էր. «Մենք բոլորովին չենք զարմանում, երբ հայտնի կուսակցության մարդիկ հարձակվում են «Աղբյուր»-ի ուղղության դեմ. մենք բոլորովին չենք զարմանում, երբ իրենց կճեպի մեջ կուչ եկած նեղ եսականները «Աղբյուր»-ի բռնած ուղղությունը վնասակար են համարում: Դա շատ բնական է. այլապես չէր էլ կարող լինել, «Աղբյուր»-ը «նեղ ես»-ի ամենաոխերիմ թշնամին է: «Աղբյուր»-ը ձգտում է նպաստել բարոյական դաստիարակության գործին, իսկ «ես»-ը առանց «դու»՝ անբարոյականության հիմնաքարն է»[88]:

Հոգևորական և ռեակցիոն գործիչները փորձում էին ապացուցել, որ ճակատագրի կանխորոշությամբ, նախախնամության ուժով էին մարդիկ դառնում շար կամ բարի: Մինչդեռ «Աղբյուր» ամսագիրը շարունակելով անցյալի դեմոկրա-

[87] Նույն տեղում, էջ 25:

[88] Նույն տեղում, էջ 27:

տական մանկավարժության առաջավոր դրույթները, ցույց էր տալիս, որ ընդհակառակը. դաստիարակությունն ու միջավայրն էին նրանց դարձնում այդպիսին: Ժամանակի առաջադեմ մանկավարժ Սարգիս Բեկնազարյանը իր «Երկու խոսք բարոյական կրթության մասին»[89] հոդվածում վերլուծում էր դաստիարակության այն հիմնական գործոնները, որոնք կարեվոր և վճռական դեր ունեին մատաղ սերնդի հոգևոր կրթության, մտավոր զարգացման, բնավորության կազմավորման գործում: Այդ գործոններն էին՝ բնածին հակումների և ընդունակությունների կանոնավոր զարգացումը, ընտանիքի, միջավայրի ազդեցությունը, ինչպես նաև մանկան խառնվածքը, առողջական վիճակը, բնակարանային պայմանները և այլն: Եվ ինչպես հեղափոխական-դեմոկրատ Միքայել Նալբանդյանը բարձր գնահատելով դաստիարակության դերը, գտնում էր, որ մարդու առաքինի կամ վատթար լինելը «կախված է նորա դաստիարակությունից և կրթությունից, նորա ընկերությունից և շրջապատից», այնպես էլ Սարգիս Բեկնազարյանը դաստիարակությանը տալով հոգեկան բոլոր կարողությունների «և՛ մտաց, և՛ զգացման, և՛ կամաց» կրթության դեր, հաստատում էր մատերիալիստական այն դրույթը, թե ինչպիսին մարդու դաստիարակությունն ու միջավայրն են, այնպիսին կլինեն նաև նրա բնավորությունն ու բարոյական կերպարը: «Ոչինչ այնպես չի ազդում մանկան հոգու վրա,— գրում է նա,— ինչպես որ կենդանի խոսքը, օրինակը, վարքագիծը. վարժությունը, գործողությունը և արարքը»[90]:

Հոդվածագիրը ընտանիքի և ամուսնության երջանկության միակ նախապայմանը համարում էր սերը, փոխադարձ, մաքուր, անկաշառ սերը: Բարոյական բարձր հիմքերի վրա ստեղծված ընտանիքում, որպիսին պատկերացնում էր հեղինակը և որպիսին պետք է լիներ այն իրականում, սերը լինելու էր անմար և հավիտենական: «Սերը, այդ տեսակ հիմունքների վրա հաստատված սերը,— գրում էր նա,— երբեք չի կորչում, չի նվազում, չի վհատում: Նրա հոգը չեն տարիները: Սերը մնում է. նա չի կերպարանափոխվում հարգանքի, պատվի, բարե-

[89] «Աղբյուր», 1887, № 1, երկրորդ բաժին, էջ 1—7:

[90] Նույն տեղում, էջ 4:

կամության, թեև այդպես ասում են, այլ շարունակում է գալ սերեցյալի հմայքը, և միշտ փայլուն է նրա համար այն, ինչ որ նրա անկորնչելի գեղեցկությունն է եղել միշտ»[91]:

Ընտանիքի և ընտանեկան դաստիարակության խնդիրները համարվում էին կենսական նշանակություն ունեցող կարևոր հարցեր և ամսագիրն առաջարկում էր ուսուցիչների ու ծնողների միացյալ ջանքերով լուծել այդ հարցերը: Սեդրակ Թառայանը «Աղբյուրում» տպագրում է իր «Ընտանի՞ք, թե դպրոց» հոդվածը[92], ուր հրավիրում է բոլոր հայ ծնողներին՝ մամուլի էջերում հանդես գալ ընտանեկան և դպրոցական դաստիարակության հարցերի շուրջ: Ուշագրավ է, որ այս հոդվածում մատաղ սերնդի դաստիարակության հարցերը քննարկվում էին ժամանակի սոցիալական-հասարակական պայմանների հետ սերտորեն կապակցված: Առաջադրվում էին ինչպես մանկավարժական սիստեմի բարելավման, այնպես էլ սոցիալական-տնտեսական պայմանների բարեփոխման պահանջները: Ճշմարիտ բարոյական դաստիարակության համար հեղինակը պահանջում էր բարվոքել ընտանիքի տնտեսական վիճակը: Ըստ նրա, ընտանիքը չէր կարող բարոյապես նորմալ լինել, քանի որ «հասարակական ամբողջ կազմը աննորմալ էր»: Նա բարոյապես աննորմալ էր համարում և՛ այն ընտանիքը, որը գտնվում էր տնտեսապես անբարենպաստ պայմաններում, և՛ այն, որը «սեփական աշխատություն չունենալով, ուրիշ ընտանիքների հյութն էր ծծում»: Ըստ նրա բուրժուական ապականված ընտանիքում բարոյական և կրթական դաստիարակությունը նորմալ ընթանալ չէր կարող, քանի որ այնտեղ մանուկը կարող էր դաստիարակվել մասնավոր սեփականության անձեռնմխելիության գաղափարներով:

«Աղբյուրի» մանկավարժական հոդվածներում խթախուսվում էր երկսեռ ուսուցումը: Աթաբեկ Խնկոյանի «Երկու սեռերի խառն ուսուցումը Միացյալ Նահանգներում»[93] հոդվածում համոզիչ փաստերով ցույց է տրվում երկսեռ ուսուցման կարևորությունը դպրոցներում: Տղաների ու աղջիկների հա-

[91] «Աղբյուր», 1890, № 4, երկրորդ բաժին, էջ 192:

[92] «Աղբյուր», 1898, № 11, երկրորդ բաժին, էջ 452—458:

[93] «Աղբյուր», 1896, № 3, երկրորդ բաժին, էջ 141—144:

մատեղ ուսուցման դեպքում երեխաները իրենց մտավոր ընդունակություններով և վարքագծով ազդում են միմյանց վրա, որը և օգտակար է լինում ինչպես տղաների, այնպես էլ աղջիկների մտավոր զարգացման, բնավորության ու վարքագծի կազմավորման համար։ «Կինը փակվելով իր կանացիության մեջ, երբեք չի կարող օգտավետ լինել, եթե կրթության հետ չի բերում առնական ուժ, տոկունություն և համարձակություն»[94]։

Ծնողների և ուսուցիչների անձնական օրինակը համարվում էր բարոյական դաստիարակության կարևոր գործոններից մեկը։ Ուստի, ամսագրի աշխատակիցները ծնողների և ուսուցիչների պարտքն էին համարում ինչպես սեփական փորձով, այնպես էլ անցյալի նշանավոր մարդկանց առաքինի գործերով ցույց տալ մանուկներին, որ մարդու երջանկությունը պահանջում է ապրել փոխադարձ սիրով և օգնությամբ։

Ամսագիրը տպագրում է մի ընդարձակ հոդվածաշար[95], որտեղ հանգամանորեն քննության է առնվում տարբեր խառնըվածքի (սանգվինիկ, խոլերիկ, մելանխոլիկ, ֆլեգմատիկ) երեխաների դաստիարակության հարցը։ Հոդվածի հիմնական նպատակն էր ցույց տալ, թե ի՞նչ կերպ պետք է վարվել այս կամ այն խառնվածքի երեխայի նկատմամբ։ Ամսագրում առաջարկվում էր դաստիարակության այդ կարևոր սկզբունքը կիրառելի դարձնել հայկական ժողովրդական դպրոցներում, քանի որ յուրաքանչյուր աշակերտի նկատմամբ առանձնակի մոտեցումը կնպաստեր երեխայի բնածին հակումների և մտավոր ընդունակությունների օրինաչափ ու ճիշտ զարգացմանը։

Ամսագրի էջերում լուսաբանվում էին նաև մանուկների հոգեբանության հետ կապված խնդիրները։ Ժամանակի առաջադեմ մանկավարժներից Տիգրան Ռաշմաճյանը տպագրում է «Երեխաների հոգեբանությունից»[96] հոդվածը, որտեղ ցույց է տրվում, թե ինչպիսի նշանակություն ունի երևակայությունը մատաղ սերնդի և ընդհանրապես մարդկանց բարոյական կյանքի զարգացման գործում։

---

[94] Նույն տեղում։

[95] «Աղբյուր», 1899, № 2, № 3, № 4—5։

[96] «Աղբյուր», 1908, № 2, երկրորդ բաժին, № 3, № 4։

Մեծ տեղ հատկացնելով բնագիտական առարկաների դասավանդմանը, ամսագիրը պրոպագանդում էր բնական գիտելիքների ուսուցման մեթոդները։ Գր. Խոջամիրյանի «Համառոտ հայացք բնագիտական առարկաների դասատվության մեր դպրոցներում և «ուսումնական զբոսանքների» իրև նրան օժանդակ միջոցի վրա»[97] հոդվածում բարձրացվում է ուսումնական զբոսանքների, գործնական աշխատանքների կարևորության հարցը։ Հոդվածի համար բնաբան են ծառայում Յան Ամոս Կոմենսկու հետևյալ խոսքերը. «զգայաբար ընդունածը հարյուր անգամ ավելի հաստատ և հիմնավոր է տպավորվում, քան սովորածը»։ Ուսումնական զբոսանքը հնարավորություն է տալիս աշակերտներին ավելի մոտիկից ծանոթանալու բնության երևույթներին, բույսերի տեսակներին, ուսումնասիրելու նրանց կազմությունը, շոշափելու առանձին մասերը և այլն։ Սեփական ձևքերով շոշափածը, անմիջականորեն տեսածն ավելի խոր տպավորություն է թողնում մանուկների վրա։

«Աղբյուր» ամսագիրը լույս էր տեսնում այնպիսի ժամանակներում, երբ բնական գիտությունների զարգացումը, բնության և կենդանական աշխարհի ուսումնասիրությունները նոր խոսք էին ասում բնագիտապատմական բնագավառներում, և բնության ու հասարակական կյանքի զարգացման նկատմամբ նախկին մետաֆիզիկական մտածողությանը փոխարինում էր դիալեկտիկական մտածողությունը։ Ամսագրում տպագրված ռուս բնագետ Վ. Լունկևիչի «Կենդանիների աշխարհում»[98] հոդվածաշարում ցույց էր տրվում, որ բնության մեջ ու կենդանական աշխարհում, ամենուրեք, օվկիանոսների հատակում ամենամանր կենդանիների մոտ անգամ, գոյություն ուներ շարժում, որը պարզ ու հասարակ շարժում չէր, այլ անցում պարզից դեպի բարդը, աստիճանական զարգացում։ Նա մատնանշում էր նաև այն հանգամանքը, որ այդ շարժումը միաժամանակ գոյության կռիվ էր, պայքար ուժեղի և թույլի, հալածողի և հալածվողի միջև։ Եվ այդ պայքարի էությունն ավելի պատկերավոր ներկայացնելու համար նա

[97] «Աղբյուր», 1884, № 3, երկրորդ բաժին, էջ 4—13։

[98] «Աղբյուր», 1897, № 2, № 3, № 4, № 5, № 7—8։

գրում է. «Այստեղ էլ (բնության ու կենդանական աշխարհում) կյանք կա, այստեղ էլ կան թե հալածողներ, թե հալածվողներ, և թե ճնշվողներ»[99]: Պրոպագանդելով գործնական աշխատանքի դերը տեսական դիտելիքների յուրացման գործում, «Աղբյուրը» հակադրվում էր բուրժուական մանկավարժության մեջ XIX դարի երկրորդ կեսին լայն տարածում գտած ինչպես «ձևական կրթության», այնպես էլ «նյութական կրթության» միակողմանի սկզբունքներին: «Ձևական կրթության» կողմնակիցները գտնում էին, որ ուսուցման մեջ կարևորը մտավոր ընդունակությունների կրթությունն է և ոչ թե փաստերի ընկալումն ու դրանցից արվող ընդհանրացումները, իսկ «նյութական կրթության» կողմնակիցներն ամենագլխավորը համարում էին միայն պրակտիկան, պրակտիկ գիտելիքները: Այդ երկու տեսություններից ոչ մեկը և ոչ էլ մյուսը չէին կարող բավարարել մատաղ սերնդի համակողմանի դաստիարակության պահանջները: «Աղբյուրը» չէր առաջնորդվում ո՛չ առաջին, ո՛չ էլ երկրորդ տեսություններով, քանի որ վերջիններն ելնելով իդեալիզմի դիրքերից, իրենց առջև չէին դնում մանուկներին օբյեկտիվ իրականության ճանաչողությամբ զինելու պահանջը: Ամսագիրը հանդես էր գալիս տեսականը գործնականի հետ շաղկապելու պահանջով, մի պահանջ, որ առաջադրվել էր դեռ Միքայել Նալբանդյանի կողմից և մինչև օրս համարվում է մանկավարժական կարևոր սկզբունքներից մեկը:

Մատաղ սերնդի հոգևոր և մտավոր կրթության գործում մեծ նշանակություն էր տրվում հայ և այլ ժողովուրդների պատմության իմացությանը: Ամսագրի էջերում հոդվածներ էին տպագրվում ոչ միայն ժողովուրդների պատմության, այլև Հայաստանի ու այլ երկրների աշխարհագրական դիրքի, բնակլիմայական պայմանների, ազգաբնակչության, կենցաղի, կուլտուրայի մասին: Եվ դա արվում էր այն ժամանակներում, այնպիսի պայմաններում, երբ ռուսական կայսրի հրամանով, Կովկասի կառավարչապետի կողմից բոլոր նահանգապետ-

---

[99] «Աղբյուր», 1893, № 2, էջ 89:

ներին ուղարկված շրջաբերականով[100] սահմանափակվում էին ազգային դպրոցների զարգացման շրջանակները: Նման պայմաններում «Աղբյուր» ամսագիրը համարձակ գործ էր կատարում, իր ընթերցողներին ծանոթացնելով հայ ժողովրդի պատմությանը, նրա զավակների հերոսական գործերին, ազատության ու անկախության համար նրանց մղած պայքարին: Ուշագրավ էր հատկապես Լևոն Մարկոսյանի հոդվածաշարը[101], նվիրված հայ ժողովրդի պատմությանը (սկզբնավորման օրից ակսած):

«Աղբյուր» ամսագրի էջերում պայքար էր ծավալվում հայոց լեզվի մաքրության, անաղարտության, մանուկների լեզվի բառապաշարի հարստացման համար: Ամսագիրը հայոց լեզվի դասավանդման վերաբերյալ ուսուցիչներին մեթոդական ճիշտ ցուցումներ էր տալիս, տպագրելով Ղազարոս Աղայանի, Սեդրակ Մանդինյանի, Տիգրան Ռաշմաճյանի հոդվածները՝ դրված լեզվական հարցերի շուրջ: Առանձնապես ուշագրավ էին Ղազարոս Աղայանի «Հայոց լեզու», «Լեզու ուսումնաթերթի» լեզվի առիթով», «Մի թեթև հրահանգ մեր լեզվի ուղղագրության մասին «Աղբյուր»-ի աշխատակիցների համար» և այլ հոդվածները: Աղայանը ծանոթացնում էր ուսուցիչներին հայոց լեզվի ծագման, զարգացման պատմության հարցերին, ցույց տալիս աշակերտներին քերականական կանոնները սովորեցնելու ձևերը:

Ամսագիրը քննության է ենթարկում լեզվական և այլ ապատ ունեցող երեխաների ուսուցման հարցը: Տպագրվում են մանուկների մոտ նկատվող կակազության վերացնելու ուղղությամբ մեթոդական ցուցումներ պարունակող հոդվածներ: Սեդրակ Մանդինյանի «Կակազության բժշկությունը» հոդվածում, որի նյութը շարադրված է գերմանացի ուսուցիչ Գյունտերի[102] կատարած փորձերի հիման վրա, տրվում են

---

[100] Շրջաբերականը ամբողջությամբ տպագրված է «Աղբյուր» ամսագրում, տե՛ս «Աղբյուր», 1889 թ., № 5—6, երկրորդ բաժին, էջ 73—74:

[101] «Աղբյուր», 1903—1905 թթ. համարներում:

[102] Գյունտերը 1874 թ. գերմաներեն հրատարակել է կակազության բուժման մասին իր գիրքը, որն իր տեսակի մեջ առաջինն է:

մեթոդական ցուցումներ բուժական մանկավարժության սկզբունքների կիրառման վերաբերյալ:

«Աղբյուր» ամսագիրն իր օգտակար խորհուրդներով օգնում էր ծնողներին ու դաստիարակներին՝ ֆիզիկական առողջ սերունդ դաստիարակելու գործում: «Երեխաների ֆիզիկական կրթությունը»[103] հոդվածում ընդգծվում է այն հանգամանքը, որ հայոց դպրոցներում մանուկների ֆիզիկական դաստիարակության գործը դրված չէր գիտական հաստատուն հիմքերի վրա: Դեռ ավելին, ցույց էր տրվում, թե մարմնամարզական այն վարժությունները, որ կատարվում էին այնտեղ, մանուկների առողջության համար վնասակար էին: «Առողջապահական կանոններ դպրոցական պատանիների համար»[104], «Դպրոցական առողջապահություն»[105] հոդվածներում քննադատվում էին դպրոցներում տիրող հակաառողջական վիճակն ու սանիտարական վատ պայմանները: «Հայկական դպրոցներում,— գրում է բժիշկ Վ. Արծրունին,— թե՛ շենքի, թե՛ նստարանների, թե՛ դասատվության ձևի անկանոնությունները մանուկներին այնպիսի անհաջող պայմանների մեջ են դնում, որ նրանց կազմվածքը թուլանում է և նրանք տրամադիր են դառնում դեպի զանազան տկարություններ: Կա այսօր ընդարձակ գիտություն, որն անվանվում է «դպրոցական առողջապահություն» և որի նպատակն է հարմարեցնել դպրոցը մանկանը, որպեսզի կարելին չափ հաջող պայմաններում պահվի նրա փափուկ օրգանիզմը: Դպրոցի վրա մի ահագին պարտք է դրված՝ բավականություն տալ այս պահանջներին»[106],

Երաժշտական կրթությունը համարելով գեղագիտական դաստիարակության լավագույն միջոց, ամսագիրը տպագրում էր երաժշտության պատմությանը և տեսությանը, ինչպես նաև երաժշտագետների կյանքին ու գործունեությանը նվիրված ակնարկներ («Մոցարտի կյանքից», «Անտոն Ռուբինշտեյն» և այլն): Երաժշտության տեսության հարցերի շուրջ

---

[103] «Աղբյուր», 1899, № 4—5, երկրորդ բաժին, էջ 298—300:

[104] «Աղբյուր», 1894, № 5—6, էջ 233—234:

[105] «Աղբյուր», 1885, № 1, էջ 41—42:

[106] Նույն տեղում:

հոդվածներով հանդես էր գալիս Սեդրակ Մանդինյանը։ Նա իր «Մի երկու խոսք երգեցողության մասին»[107] հոդվածում բացատրում էր մանուկներին երաժշտության այբուբենը։ «Ինչպես որ լեզուն ունի քերականություն,— գրում է նա,— այնպես էլ երգեցողությունը ունի իր տեսական մասը, որի դեմ որ մեր սովորական երգեցողությունը խիստ մեղանչում է։ ...Ի լրումն այս ամենայնի մեր հմուտ երաժիշտները, որոնք լավ են հասկանում արվեստը, իրենց գիտեցածը զլանում են հաղորդել մեզ»[108]։ Մանդինյանը միաժամանակ խնդիր էր դնում հայ երաժշտագետների առաջ՝ հայկական երգերի վերլուծմամբ բացատրել մանուկներին երաժշտության տարրական կանոնները, սովորեցնել նոտագրերը կարդալ, ձայները տարբերել և այլն։ Խոսքը ուղղելով հայ երաժշտագետներին, նա գրում էր. «Նրանք մեր մանուկներին մեծ շնորհ արած կլինեն, եթե 10 հատ ազգային երգ տան կանոնավորած, բոլոր վերլուծություններով»[109]։ Ամսագրի միջոցով և առանձին հավելվածներով տարածվում էին հայկական ժողովրդական երգերը («Ջան գյուլում»[110] և այլն)։ «Հայ ժողովրդական երաժըշտություն» խորագրի տակ տպագրվել են Կոմիտասի «Գարուն ա» և մի շարք այլ երգերի նոտագրերը։

Մանուկների և պատանիների գեղագիտական դաստիարակությանն էին ծառայում նաև «Զվարճալիք», «Այլ և այլք» բաժիններում տպագրված մանկական խաղերը, զվարճախաղերը, ռեբուսները և այլն։ Այնտեղ տպագրված Աղայանի, ինչպես և մյուսների մանկական խաղերն այսօր էլ շարունակում են մնալ որպես մանկական զվարճալիքի լավագույն նյութեր։ Եվ, ընդհանրապես, ամսագրի էջերը պարունակում են մանկական խաղերի, ռեբուսների, խաչբառերի, խնդիրների մի հարուստ դանձարան, որտեղից լավագույն նմուշները կարող են ընտրվել և առանձին ժողովածուով լույս ընծայվել։

«Աղբյուրում» մեծ տեղ էին գրավում նաև նկարները։ Թերևս այդ նկարների մի մասը լինելով պատահական ընտ-

---

[107] «Աղբյուր», 1889, № 8—9, երկրորդ բաժին, էջ 99—109։

[108] Նույն տեղում, էջ 99։

[109] Նույն տեղում, էջ 109։

[110] «Աղբյուր», 1884, № 2-ի հավելված։

րության արդյունք, չէր ծառայում ամսագրի նախընտրած նպատակներին, չէր նպաստում մանուկների բարոյական և գեղագիտական դաստիարակությանը: Դրանցում գերիշխողը կրոնական թեմատիկան էր («Հիսուս և սամարացի կինը»[111], «Հույս և հավատ»[112], «Մանուկ Հիսուսը և Տիրամայրը»[113] և այլն): Նման նկարների տպագրությունը արդյունք էր այն բանի, որ խմբագիրը հաճախ ստիպված էր լինում օգտագործելու ռուսական ու արտասահմանյան երկրների ամսագրերում օգտագործված պատրաստի կլիշեները, որոնց մեջ լինում էին և կրոնական թեմաներով արված նկարներ: Իհարկե, նման նկարները չէին նսեմացնում ամսագրի դերը, քանի որ դրանց կողքին մեծ թվով տպագրվում էին մանուկներին հոգեհարազատ նկարներ («Նապաստակի տունը», «Աղվեսն ու գայլը» և այլն), որոնք ունեին ճանաչողական և ուսուցողական նշանակություն: Մի շարք նկարներ մանուկ ընթերցողներին օգնում էին ծանոթանալու հայրենի բնությանը («Գարունը մոտ է», «Աշնանը» և այլն), գեղատեսիլ վայրերին (Սևանա լիճը», «Շիրակի դավառի հնություններըե և այլն): Տպագրելով բազմաբովանդակ ու հետաքրքրական նկարներ, ամսագիրը միաժամանակ մանուկների մոտ զարգացնում էր գեղագիտական ճաշակ և նկարչական ձիրք ու շնորհք: «Աղբյուրը» պատկերազարդ դարձնելու խնդիրը,—գրված է ամսագրում,—միայն այն նպատակը չուներ, որ գրավիչ դարձներ ամսագիրը իր փոքրիկ ընթերցողների համար, կամ նպաստեր բովանդակության հեշտաւսվ, իրականապես և հիմնավոր յուրացնելու, այլև որ պատկերները գեղարվեստականապես նկարված և տպագրված լինեին և կրթիչ ճաշակ արծարծող նկարչական շնորհք»[114]: Առանձնապես ուշագրավ էր ամսագրի գեղեցիկ ու ճաշակով ձևավորումը:

Լինելով արևելահայ մանուկների ու պատանիների առաջին ամսագիրը, այն գրավել է ժամանակի հայ մտավորականության և մամուլի օրգանների ուշադրությունը: «Գուցե նո-

111 «Աղբյուր», 1890, № 4, էջ 179:

112 «Աղբյուր», 1893, № 3, էջ 99:

113 «Աղբյուր», 1905, № 1, էջ 5:

114 «Աղբյուր», 1886, № 11, երկրորդ բաժին, էջ 1:

րության համար միայն շատերին զարմանալի թվա,— գրված է «Մուրճ» ամսագրում,— բայց մենք վստահանում ենք հայտնել, որ 80-ական թվականների գրականական ֆոնի վրա մենք միայն մեկ նոր գործիչ ենք նշմարում՝ մթնոլորտը ճնշող հայ օրաթերթերի կողքին. դա «Աղբյուր» մանկական ամսագիրն է, որով մեղնում սկիզբ դրվեց մանկական գրականության: 80-ական թվականներին գրական աշխույժը մենք նշմարում ենք ավելի այդ համեստ թերթում, քան որևէ այլ տեղ. նա արտահայտել և իր կոչումը գտնել տվեց մի գրողի— որ Ղազարոս Աղայանն է. և այդ համեստ թերթում նույնիսկ միխիթարության էր գտնում ստեղծագործել մի ոչ մանկական գրող՝ Րաֆֆին: Մանկական գրականությունը, գտած լինելով իր հերոսին, ճիշտ է, չկարողացավ հարատև շկոլայի հիմնական գծերը ամուր գծագրել, բայց նա մի գործի սկիզբ դրեց, որ պիտի հարատևեր»[115]:

«Աղբյուրին» արժանի գնահատական է տվել Կոստանդնուպոլսում լույս տեսնող «Բուրաստան մանկանց» ամսագիրը: «Թուղթը լավ է և տպագրությունը պարզ, նույնպես պարունակեալ նյութերն ընտիր և հրահանգիչ են և օգտակար ծառայություններ պիտի կարենա մատուցել աղգին մանկըտոյն»[116]:

Ռափայել Պատկանյանն ամսագրից ստացած իր տպավորությունների մասին գրել է. « «Աղբյուր» մանկական օրագրի խմբագրիչը մեծ բարեխղճությամբ կատարում է իր ստանձնած պարտավորությունները. թե նյութերի ընտրությունը, թե յուրաքանչյուր գրքույկը այս օգտավետ օրագրին ըստ ամենայնի լցնում են հայ երեխաների պիտույքը և ընդամին մեծապես օգնում ընտանեկան դաստիարակության և դպրոցական կրթության նոցա: Ցանկալի էր, որ «Աղբյուր»-ը ավելի և ավելի մուտք գործեր մեր հայ ընտանիքի մեջ և նյութական հնարների շատանալուն, անշուշտ, կճոխանար նրա ներքին բովանդակությունը և արտաքին շքեղությունը»[117]: Իսկ Շուշանիկ Կուրղինյանը, որի ընթերցանության առաջին դիրքն է

115 «Մուրճ», 1897, № 1, էջ 11:

116 «Բուրաստան մանկանց», 1883, № 10, էջ 159:

117 «Արձագանք», 1887, № 26, էջ 395:

Եղել «Աղբյուր» ամսագիրը, գրել է. «Հիշում եմ, պատմվածքները մանկական աշխարհից, սիրած կենդանիների կյանքից և նամանավանդ նկարները մեծ հրճվանք պատճառեցին ինձ հենց սկզբից։ Երկա՜ր, շատ երկա՜ր ես տարվում էի իմ կարդացածով և հափշտակված ընկնում մանկական ջինջ, հստակ երազանքի մեջ...»[118]։

Ուշագրավ են Հակոբ Աղաբաբի հիշողությունները։ «Ուսուցիչը բացի դասերից, մեզ համար կարդում էր զանազան մանկական գրքեր,—գրում է նա,—հեքիաթներ, ոտանավորներ, հանելուկներ և այդ հանգամանքը մեզ ավելի էր մոտեցնում ուսուցչին, ու մեր ուրախությանը չափ չկար։ Շատ անգամ մեր ուսուցիչը կարդացած գրքի միջից (այդ գիրքը «Աղբյուր» ամսագիրն էր) մեզ զանազան պատկերներ և նկարներ էր ցույց տալիս, և այդ բանը մեզ համար զվարճալի և դուրեկան էր լինում։ Մեր հետաքրքրությունն օր-օրի վրա մեծանում էր, թե դեպի կարդացված գրքերն, և թե դեպի նրանց մեջ եղած պատկերները»[119]։ *Առանձնապես հետաքրքրական է Աշոտ Աբանասյանի պատմածը։ Նա հիշում է, որ երեխաներով հաճախ հավաքվում էին մի գաղտնի վայրում և կարդում «Աղբյուր» ամսագիրը։ Նրանց վրա խոր տպավորություն էր թողել ամսագրում տպագրված «Հսկա մրջյունը» պատմվածքը։ «Չգիտեմ ինչո՞ւ և որտեղի՞ց,—գրում է նա,—մեր մեջ այն համոզմունքն էր հիմնավորվել, որ դա այլաբանական մի գրվածք է, ուստի և մենք ամեն ինչ բացատրում էինք այլաբանորեն և սաստիկ վախենում, որ պոլիցիան կարող է մեզ բռնել և որպես հեղափոխականների աքսորել։ Եվ որպեսզի մենք դրանից խուսափենք, մենք «Հսկա մրջյունը» կարդում էինք խոր այգիներում, ձորերում, գերեզմանոցներում և հետո մեկիկ-մեկիկ անցնում էինք մեր տները»*[120]։

Պատմաբան Լեոն (Առաքել Բաբախանյան) «Մշակ» թերթում տպագրված իր գրախոսականում գրում է. ««Աղբյուր»-ը մեր մեջ իր տեսակետից առաջին օրգանն է։ Նրա ծրագրով և նշանակությամբ մեզ մոտ պարբերական հրատա-

---

118 *«Տօն և Ազն», 1908, Թիֆլիս, էջ 34։*

119 *Նույն տեղում, էջ 10—11։*

120 *Նույն տեղում, էջ 7։*

րակութիւններ նրանից առաջ չկար։ Այն կթեթևացնի մթնոլորտը, կլինի ընկեր դպրոցից դուրս, կսովորեցնի նրան սիրել ուսումը, կզարգացնի նրա մէջ աղնիւ զգացմունքներ՝ սեր դեպի բնութիւնը...»[121]։ *Նա միաժամանակ գտնում էր, որ «մանկավարժութիւնն ու իրական կեանքը զուգընթաց զարգանալով պիտի ապրեն» տեսական դրույթը պրոպագանդվում էր ամսագրի էջերում։*

«Աղբյուրի» դերին և նշանակութեանն է անդրադառնում ռուսական մանկական «Родник» ամսագիրը Բաֆֆու մահվան առթիվ տպագրված հոդվածում[122]։ *Այնտեղ նշվում է այն մասին, որ XIX դարի վերջին տասնամեակում ավելի ու ավելի զգալի էր դառնում մանկական պարբերականների, հատկապես մանկական գրականութեան պահանջը հայ իրականութեունում։ Այդ պայմաններում երևան եկավ «Աղբյուր» ամսագիրը, որը կարճ ժամանակում ձեռք բերեց հայ հասարակութեան լավագույն մասի համակրանքը։ Հոդվածում այն կարծիքն է հայտնվում, թե «Աղբյուրը» կարճ ժամանակում իր շուրջն է համախմբում մեծ թվով բաժանորդների և հասնում մեծ հաջողութեունների նաև շնորհիվ այնտեղ տպագրված Բաֆֆու ստեղծագործութեունների։ «Մենք «Աղբյուր»-ի ամբողջ հաջողութեունը, իհարկե, չենք վերագրում միայն Բաֆֆուն,—գրված է այնտեղ,—բայց միաժամանակ, չի կարելի չընդունել, որ ամսագիրն իր հաջողութեան համար մեծ մասամբ պարտական է Բաֆֆուն, որի անունը համակրանք էր առաջացնում այն ամսագրի հանդեպ, որին աշխատակցում էր Բաֆֆին»*[123]։

«Աղբյուր ամսագիրը լինելով ոչ միայն մանուկների ու պատանիների, այլ նաև ուսուցիչների ու ծնողների սիրված գիրքը, լուսավորական ու դաստիարակչական մեծ գործունեութեուն էր ծավալում ժողովրդական լայն խավերի մեջ։ Ահա թե ինչու «խաթաբալա» երգիծական շաբաթաթերթը միանդամայն իրավացիորեն գրում է. «Մեր փոքրիկ ազգը կատա-

---

121 *«Մշակ», 1884, № 47, էջ 1։*

122 *Տե՛ս* „Родник“ *ամսագրին կից* „Воспитание и обучение“ *մանկավարժական հավելված, 1888, № 7, էջ 255—261։*

123 *Նույն տեղում։*

րելով այդ անդրանիկ ու երկար տարիների նաև եղակի մանկական թերթի քառորդ դարյան հոբելյանը՝ կատարած պիտի լինի իր իսկ կուլտուրականության դարավոր ֆակտորներից մեկի տոնը»[124]: Իսկ Հալեպում լույս տեսած «Բուրաստան» ամսագիրն իր ընթերցողներին համառոտակի ծանոթացնելով հայ մանկապատանեկան մամուլի օրգաններին, «Աղբյուրի» մասին գրում է. «...«Աղբյուրը» մեր մանկապատանեկան գրականության մեջ մտցուց հայկական տաք շունչ մը, որմէ զուրկ էին Պոլիս հրատարակված և զինք թվականով կանխող մանկապատանեկան մյուս երեք թերթերը: Պարզ է ուրմէն, որ մեծ եղավ դերը հայոց մեջ «Աղբյուր» մանկապատանեկան ամսագրին և նա է, որ հանդիսացավ նախատիպար 20-րդ դարու մեջ քանակով աճած և որակով բարձրացած մեր մանկապատանեկան թերթերուն»[125]:

«Աղբյուրի» խմբագրությունը միաժամանակ վարում էր և կազմակերպչական աշխատանք: Քաղաքներում և հատկապես գավառներում մանկական գրադարաններ ստեղծելու դործը դյուրացնելու նպատակով խմբագրությունը ամեն տարի հրապարակում էր լույս տեսած մանկական լավագույն գրքերի ցանկը և առաջարկում իր ընթերցողներին:

Տարին մի քանի անգամ իբրև հավելված կամ մրցանակաբաշխության ընթերցողներին էին ուղարկվում հետաքրքիր բովանդակություն ունեցող և մանուկներին օգտակար գեղարվեստական գրքեր: «Աղբյուրի» հրատարակությամբ լույս տեսած գրքերի թիվը հասնում է մոտ 100-ի:

Անհրաժեշտ է նշել, որ «Աղբյուրը» իր գոյության ամբողջ ընթացքում ունեցել է գաղափարական ու դաստիարակչական միևնույն ուղղությունը, պահպանել դեմոկրատական առաջադիմական ոգին: Միայն 1914թ. համաշխարհային առաջին պատերազմի տարիներին հասարակական ու քաղաքական խառն ու բարդ իրադարձությունները և նյութական անբարենպաստ պայմանները հետացրել են գրողներին «Աղբյուր» ամսագրից: Խմբագիրը ստիպված է եղել նյութերի պակասը լրացնել նախորդ տարիների համարներից կատարված

124 «Խաթաբալա», 1908, № 26, էջ 305:

125 «Բուրաստան», Հալեպ, 1951, Ա տարի, 6 պրակ, էջ 111:

արտասպություններով։ Պատերազմական օրերն էլ պատճառ են եղել «Աղբյուրի» դադարեցման։

Հանրագիտարանի բնույթ ունեցող արևելահայ մանուկների առաջին ամսագիրը խոր և անջնջելի հետք է թողել հայ մանկապատանեկան մամուլի, մանկական գրականության, մանկավարժության և ընդհանրապես հասարակական մտքի պատմության մեջ։ Մանուկներին ու պատանիներին հասցեագրված ամսագիրն իր թեմատիկայի հարստությամբ, գաղափարական ու դաստիարակչական ուղղվածությամբ, ինչպես և արտաքին ձևավորմամբ առաջինն իր անհրաժեշտ կոչման ծառայեցրեց մանկական պարբերականը։

«Աղբյուրի» աշխատակիցները և խմբագիրը

«Աղբյուրը» լինելով արևելահայ մանուկների առաջին ամսագիրը, մեծ հետաքրքրություն է առաջ բերում հասարակության լայն շրջաններում։ Տարբեր մասնագիտությամբ, տարբեր զբաղմունքի տեր, տարբեր ազգության պատկանող անձինք ձգտում են օգտակար լինել մանկական պարբերականի հրատարակման աշխատանքներին, պատրաստակամություն են հայտնում օգնել խմբագրությանը՝ նյութերի ընտրության, ամսագրի ձևավորման և այլ հարցերում։ «Աղբյուրի» շուրջն են համախմբվում ժամանակի բոլոր առաջադեմ գրողները։ Ամսագրի մշտական աշխատակիցներն են դառնում Բաֆֆին, Շիրվանզադեն, Պերճ Պռոշյանը, Ղ. Աղայանը, Ավ. Իսահակյանը, Հովհ. Հովհաննիսյանը, Հովհ. Թումանյանը, Վրթ. Փափազյանը, Լեոն, Կոստանդին Մելիք-Շահնազարյանը, Արշակ Մհհրաբյանը, Սարգիս Քամալյանը, վրացական «Նոբաթի» («Նվեր») մանկական ամսագրի խմբագիր Ղուլաձեն, ադրբեջանցի մանկավարժ Սուլթանովը, մանկավարժներ Հովհ. Տեր-Միրաքյանը, Առաքել Բահաթրյանը, նկարիչներ Գևորգ Բաշինջաղյանը, Վարդգես Սուրենյանցը, նկարիչներ Կարապինը, Պետրովը, Դավիթ Օքրոյանը, փորագրիչ Ռաշևսկին, ցինկոգրաֆ Սարգիս Սողոմոնյանը և ուրիշներ։

«Աղբյուրի» հրատարակման առաջին տարիներին Նար-Դոսը և Ալ. Ծատուրյանը սովորում էին Թիֆլիսի Միքայելյան

արհեստագիտական դպրոցում։ Նրանք անհուն սիրով կապված էին ամսագրի խմբագրության հետ։ Նար-Դոսը «Աղբյուրում» տպագրում է իր առաջին գրական փորձը՝ «Նավը» բանաստեղծությունը, իսկ Ծատուրյանը՝ դպրոցի ռուսաց լեզվի ուսուցիչ և «Աղբյուր» ամսագրի պատասխանատու քարտուղար Գաբրիել Միրզոյանի հանձնարարությամբ թարգմանում է ռուս մանկական գրողների պատմվածքները։

1905 թ., երբ ժամանակավորապես փակվում է «Նոր-դար» թերթը, Նար-Դոսը, Տիգրան Նալբանյանի առաջարկով, տեղափոխվում է «Աղբյուր» ամսագրի խմբագրատուն և ստանձնում ամսագրի պատասխանատու քարտուղարի ծանր գործը։ 1908 թ. լինելով ամսագրի 25-ամյակը նշող հանձնաժողովի քարտուղարը, նա լույս է ընծայում «Քսան և հինգ ամյակ «Աղբյուր» մանկական ամսագրի» գրքույկը, ուր բարձր է գնահատում Տիգրան Նալբանյանի կյանքն ու գործը։

«Աղբյուրի» էջերում իրենց գրական մկրտությունն են ստացել նաև բանաստեղծներ Հ. Թումանյանը («Արև և լուսին»[126]), Հ. Հովհաննիսյանը («Ջինջ 'երկնքից ոսկի արև...»[127]), Լ. Մանվելյանը (Լեռնային վտակ»[128]) և շատ ուրիշներ։

«Աղբյուրի» աշխատանքներին ակտիվ մասնակցություն է ունեցել ռուս գրող Նիկոլայ Ալեքսանդրովիչ Սոլովյով-Նեսմելովը[129]։ Նա փոքրիկ պատմություններ էր գրում խեղճ ու

---

[126] «Աղբյուր», 1890, № 8—9, էջ 291—293։

[127] «Աղբյուր», 1883, № 4, էջ 135։

[128] «Աղբյուր», 1887, № 11, էջ 430—431։

[129] Ն. Ա. Սոլովյով-Նեսմելովը (1848—1902) ծնվել է Սարատովի նահանգում։ Սովորել է Սարատովի հոգևոր սեմինարիայում։ Ավարտել է Կազանի հոգևոր ակադեմիան։ Որոշ ժամանակ հայրենի Սարատովում մանկավարժությամբ զբաղվելուց հետո, մեկնել է Պետերբուրգ և նվիրվել գրական աշխատանքին։ Հանդես է եկել գրական և մանկավարժական մամուլում, կազմել է դասագրքեր («Մանկական աշխարհիկ» և այլն), երգերի ժողովածուներ։ Նրա լավագույն պատմվածքները լույս են տեսել առանձին գրքերով և հետաքրքրությամբ կարդացվել ինչպես երեխաների, այնպես էլ մեծահասակների կողմից։

1882—1884 թթ. Ս. Նեսմելովը ապրել է Թիֆլիսում և եղել «Աղբյուր» ամսագրի մշտական աշխատակիցը (տե՛ս «Աղբյուրի ակունք», պրակ I, 1908, էջ 6, «Детское чтение», 1902, № 2, էջ 291—295)։

աղքատ երեխաների կյանքից («Ուրախություն և վիշտ», «Հասկուլ», «Տիկնիկ» և այլն)։ Ռուս մանկական գրողը թեև կարճ ժամանակ է աշխատակցում ամսագրին, բայց կատարում է շնորհակալ գործ հայ մանուկների համար։ Այդ իսկ պատճառով խմբագրությունը երախտագիտությամբ է հիշատակում նրա անունը։ «Այդ պատվավոր անձնավորությունը,— գրված է ամսագրում,—մանուկների ու մանկական գրականության սիրահարը ամենայն անկեղծությունով վերաբերվեց դեպի հայոց մանուկները և հայ մանկական գրականությունը և ամենայն սիրով ձգեց իր լուման մեր աղքատիկ մանկական գրականության մեջ։ Այլապես չէր էլ կարող լինել, ով սիրում է մանուկներին ու մանկական գրականությունը, նա ոչ ցեղ է հարցնում և ոչ աղգություն»[130]։ Սոլովյով-Նեսմելովն իր հերթին բարձր գնահատելով ամսագրի դերը, խմբագրին նվիրած իր լուսանկարի մակագրության մեջ նշում է. « «Աղբյուրը» որպես թարմ վտակ կարող է ձուլվել մեծ գետին, ծովին, բայց երբեք չի կորչի նեղ պատերի արանքում, ճահճում, նա ունի իր ուղղությունը, իր խնդիրը՝ ափ դուրս բերել պարզ կանաչը։..... Ապրի՛ր «Աղբյուր», ապրի՛ր ժողովուրդ»[131]։

«Աղբյուր» ամսագրում արձակ բանաստեղծություններով հանդես էր գալիս Կոստանդին Մելիք-Շահնազարյանը։ Նա սերտորեն կապված էր գյուղի աշխատավորության կյանքի հետ և կրում էր միաժամանակ նարոդնիկական հայացքների ազդեցությունը։ Հենց դրանով էլ պետք է բացատրել իշխող դասակարգի նկատմամբ նրա գրված ներհակ դիրքը։ Կոստանդին Մելիք-Շահնազարյանը գրաքննության հետապնդումներից խուսափելու համար դիմում է այլաբանական ձևերի օգնությանը։ Նրա սոցիալական թեմաներով գրված առակները, զրույցները, ֆելիետոնները դրա լավագույն ապացույցներն են։ Հատկանշական է նաև այն, որ Կոստանդին Մելիք-Շահնազարյանն իր ֆելիետոններով աչքի ընկնող ավանդ է ներդնում հայ մանկական գրականության մեջ։ «Աղբյուրում» կատարած նրա շուրջ 35 տարիների անբասիր աշխատանքը բարձր է գնահատվում խմբագրության կողմից։ Շնոր-

130 «Աղբյուր», 1884, № 8—9, երկրորդ բաժին, էջ 36—37։

131 «Աղբյուր»-ի ակունք, 1908, պրակ I, էջ 6։

հավորելով նրա 35-ամյա արդյունավետ գործունեությունը, ամսագիրը գրում է. «Ահա «Աղբյուր»-ի մի կենարար ջինջ ու բյուրեղ ակն, որ 35 անընդհատ տարիներ ջրել, ոռոգել է մանկական անդաստանը: Հեղ, իբրև գարնանաբույր մանուշակ, Կոստանդին Մելիք-Շահնազարյանը, գիտնականին հատուկ համեստությամբ, ամբոխային ծափերից ազատ, նա մեր արդի ականավոր մանկական գրողն է և նշանավոր ֆելիետոնիստ «Տմբլաչի խաչանը»[132]:

«Զվարճալիք» ու «Այլ և այլ» բաժիններում տպագրվում էին Լ. Մելիք-Ադամյանը[133] (պատասխանատու քարտուղար), Ադամ Արևշատյան-Սարդարյանը: Վերջինի դրչին են պատկանում շատ հանելուկներ, թվաբանական ռեբուսներ և այլն: Նա է ամսագրում տպագրված «Պատկերազարդ թվաբանություն»[134] հոդվածի հեղինակը: Ադամ Արևշատյան-Սարդարյանը ժամանակին հայտնի էր նաև որպես դրամատուրգ՝ «Ոշտունի» կեղծ անունով:

«Աղբյուրի» երկրորդ բաժնի համար նյութեր էին պատրաստում Տ. Ռաշմաճյանը, Փ. Վարդանյանը, Գ. Խոջամիրյանը և ուրիշներ: Ամսագրի պատկերազարդումը հաճախ դժվարություններ էր ստեղծում խմբագրի ու նրա աշխատակիցների համար: Չկար ցինկոգրաֆիական արհեստանոց, չկային և համապատասխան մասնագետներ: Այդ գործում նրանց օժանդակում էին ռուսական մանկական ամսագրերի («Родник», «Детское чтение») խմբագրությունները: Սակայն նկարներ ու կլիշեներ այլ խմբագրություններից ձեռք բերելն այնքան էլ դյուրին չէր: Այդ ժամանակ Թիֆլիսում իր զարդա-

---

132 «Աղբյուր», 1917, № 5—6, էջ 89:

133 Լևոն Մելիք-Ադամյանը ծնվել է 1859 թ., Շուլավերում (այժմ՝ ՎՍՍՀ Շահումյանի շրջան): 1870—1876 թթ. սովորել է Թիֆլիսի Ներսիսյան վարժարանում: Դպրոցն ավարտելուց հետո որպես ուսուցիչ աշխատել է Թիֆլիսի Մարկոսյան օրիորդաց դպրոցում: Եղել է «Փորձ» հանդեսի, ինչպես և մի շարք պարբերականների ու գրքերի սրբագրիչը: Նա միաժամանակ զբաղվել է թարգմանությամբ: Թարգմանել է արևմտաեվրոպական ժողովուրդների գրականությունից հին զրույցներ, հեքիաթներ, վեպեր, ինչպես նաև գիտական գրքեր:

134 «Աղբյուր», 1917, № 1, էջ 4:

նկարներով հայտնի է դառնում Դիգո Տատիշվիլին (Ֆիգարո)[135], որը միաժամանակ տառեր էր փորագրում փայտի վրա։ Նա սիրով համաձայնվում է դառնալ «Աղբյուրի» մշտական աշխատակիցը։ «Ֆիգարոն, միշտ ղվարթ ու ծիծաղը երեսին Ֆիգարոն էր, որ «Աղբյուր»-ի համար նույնքան ջերմ սիրով Անիի և մյուս հնությունների օրնամենտներից փայտի վրա ղարդեր, տառեր էր փորագրում, ինչպիսի սիրով նա նույնանման գործ կատարում էր վրաց հրատարակությունների համար»[136]։

1901 թ. Փարիզում կլիշեներ պատրաստելու արվեստի մեջ հմտացած Սարգիս Սողոմոնյանը Թիֆլիսում հիմնում է ցինկոգրաֆիական նոր արհեստանոց։ Պետք է նշել, որ նկարչական արվեստում գիտելիքներ ձեռք բերելու գործում Սողոմոնյանին օժանդակում էր Տիգրան Նազարյանը[137]։

«Աղբյուր» ամսագրի շուրջ համախմբված աշխատակիցները, լինելին նրանք հայ, թե այլ ազգությունների պատկանող գրողներ, մանկավարժներ, արվեստագետներ ու նկարիչներ, սրտանց նվիրված էին մանկական ամսագրին և իրենց ստեղծագործական կարողությունները մեծ սիրով ներդնում էին հայ մանուկների բարոյական ու էրթիական դաստիարակության, նրանց գեղագիտական ճաշակի բարձրացման գործում։

«Աղբյուրի» աշխատակիցները փոխադարձ կապերի մեջ լինելով ռուս, վրաց, ադրբեջանական ժողովուրդների մանկական ամսագրերի հետ, օգնում էին դրանց նյութերի ընտրության, կլիշեների պատրաստման, նկարազարդման աշխա-

---

135 Դիգո Տատիշվիլի (1849—1911)։ Զբաղվել է փորագրությամբ։ Հրատարակել է պատկերազարդ ալբոմներ, որոնցից մեկը հայ և վրաց օրնամենտներից ձեռագրության համար պատրաստած ալբոմն է։ Այդ ալբոմը Փարիզի համաշխարհային ցուցահանդեսներից մեկում պարգևատրվել է ոսկեմասնական դիպլոմով։ 1889 թ. Դ. Տատիշվիլին հրատարակել է «Տետր հայկական նշանագրերի» գիրքը, որպես նվեր հայկական իգական արհեստագործական ուսումնարաններին։

136 «Տարազ», 1911, № 7—8, էջ 94։

137 Տե՛ս Սուրեն Ավչյան. Արհեստ և արվեստ, Թիֆլիս, 1930, էջ 17։

տանքներում։ Այդ մասին են վկայում վրացական «Ջեջիլի»[138] մանկական ամսագրի 20-ամյա հոբելյանի առթիվ «Աղբյուրի» կողմից ուղարկված ողջույնի հետևյալ խոսքերը. « «Աղբյուրը» և «Տարազը» ցնծությամբ ողջունում են սիրելի հոբելյարին, նրա բեղմնավոր գործունեությունը մեր երկրի գրական անդաստանում։ «Աղբյուրը» կրկնակի է ողջունում, որովհետև «Ջեջիլին» «Աղբյուրի» ընդգծած ուղիով է կարկաչում և հասունացնելով նրան իր օրորներով, դայլայլիկներով, դարերից ավանդ մնացած սրբազան հայրենիքի նվիրական պատգամներով ու այդ բոլորը գիտության, ճշմարտության բյուրեղ բովով պայծառացրած։

«Աղբյուրը» սերտ եղբայրական օգնություն է ցույց տվել «Ջեջիլուն» («Միլ») և նրա «Կվալուն» («Ակոս»)[139]։

«Աղբյուր» ամսագիրը լույս է տեսել շուրջ 35 տարի (մինչև 1918 թվականը)։ Այդ ընթացքում ամսագրի խմբագիր-հրատարակիչն է եղել Տիգրան Նազարյանը, որի կյանքն ու գործունեությունը տակավին չեն արժանացել առանձին ուսումնասիրության։ Համառոտակի ծանոթանանք նշանավոր հրատարակչի ու լրագրողի կյանքին ու գործունեությանը։

Տիգրան Հակոբջանի Նազարյանը[140] ծնվել է 1858 թ. սեպտեմբերի 29-ին, Ղարաբաղի Շուշի քաղաքում։ Հայրը՝ Հակոբջանը կարդացած և խելացի մարդ էր, մայրը՝ տիկին Զարուհին Հախումյան անվանի տան դուստրն էր, բարի և առաքինի մի կին։ Տիգրանը ծնողների միակ զավակն էր։ Հախունց Տեր-Կարապետի մոտ գրաճանաչություն սովորելուց հետո, նրան տեղափոխում են լեզվագետ Գալուստ Փափազյանի դպրոցը, ուր դասավանդվում էին հայերեն, ռուսերեն,

---

138 «Ջեջիլի» վրացական մանկական ամսագիրը հիմնադրվել է 1890 թ. Անաստասիա Սերեթելի-Թումանովայի կողմից։ Ա. Սերեթելի-Թումանովան վրաց հայտնի հրապարակախոս Գեորգի Սերեթելու կինն էր, հրապարակախոս Գեորգի Թումանյանի (Թումանով) քույրը։

139 «Տարազ», 1910, № 6, էջ 82։

140 Տիգրան Նազարյանի կենսագրական տվյալները վերցված են Նարդոսի «Քսան և հինգ ամյակ «Աղբյուր» մանկական ամսագրի» գրքից, ՀՍՍՀ գրականության և արվեստի թանգարանում պահվող Տ. Նազարյանի արխիվից, «Տարազ» շաբաթաթերթում և ժամանակի մամուլում նրա գործունեության վերաբերյալ տպագրված հոդվածներից։

ֆրանսերեն և գերմաներեն։ Ընդունակ պատանին սովորում է այդ լեզուները։

Տանը Տիգրանի դաստիարակներն են եղել Պ. Պռոշյանը, նկարիչ Ստ. Ներսիսյանը և ուրիշներ։

Դեռ պատանի հասակում առանձին հակում ունենալով դեպի թատերական գործը, Նազարյանը Հայրենի քաղաքում կազմակերպում է թատերական խումբ, գրում պիեսներ[141], որոնք բեմադրվում են իր իսկ խմբի անդամների կողմից։ Նազարյանը հասարակական լայն աշխատանք է ծավալում Շուշիում։ Նրա օգնությամբ աղջիկ աշակերտուհիներով է համալրվում Հախումյան ամուսինների հիմնած օրիորդաց դպրոցը, կարգի է բերվում 60-ական թվականներից մոռացության մատնված քաղաքային գրադարանը։ Իսկ 1879 թ. 21-ամյա երիտասարդ Տիգրանը Շուշիում հիմնում է հրատարակչական գրասենյակ։ Նրա առաջին հրատարակությունն է Նիկողայոս Տեր-Ավետիքյանի «Քնար խոսնակ» ժողովածուն, որտեղ զետեղված են հեղինակի ինքնուրույն և թարգմանական բանաստեղծությունները։ Ինքը թարգմանում ու հրատարակում է լեհ գրող Հենրիկ Սիենկևիչի «Պողնանի ուսուցչի օրագրից» պատմվածքը (ռուսերենից), Ալֆոնս Դոդեի «Երկու մանրավեպ» (բնագրից) և այլ գործեր։ Այդ գրքերի ընտրությունն ու թարգմանությունն ինքնին վկայում են նրա դեղագիտական ճաշակի և գրական նախասիրությունների մասին։ Լեհ գրող Հենրիկ Սիենկևիչին նա համարում է գրական նոր, ռեալիստական դպրոցի ներկայացուցիչը։ «Լիտվոսը[142],— գրում է նա,— նոր է անուն հանել իր ազգային գրականության մեջ և խոստանում է լինել մին ժամանակակից հոգվույն համաձայն գրող արդյունաշատ տաղանդներից, և այդ երևում է նրանից, որ նա ներկայացնում է մեզ պարզապես հետևող այն շարժման, որ նկատվում է լեհական մատենագրության մեջ, այն է՝ անցումն ռոմանական գրական ոճից դեպի ավելի իրական դրսե-

---

141 Նրա «Ճըպատրդ քոլադ կորի» և «Ղալի ադաթներան» պիեսները հրատարակվել են 1887 թ. «Աղբյուր» խմբագրության կողմից։ Նազարյանը գրել է նաև հինգ գործողությունից բաղկացած «Արոզա» պիեսը, որը հրատարակվել է 1913 թ. Թիֆլիսում։

142 Հենրիկ Սիենկևիչի գրական կեղծանունը։

րոցը, որի աղբյուրը բացառապես չէ ֆանտազիան, այլ նկատողությունն ու մեզ շրջապատող իրական կյանքի ուսումնասիրությունը, որի համար ֆանտազիան է մի օգնական՝ գրական շենքը կառուցանելու համար»[143]։

Տիգրան Նազարյանի մոտ վաղ հասակից, պատանեկան և երիտասարդական տարիներից իսկ մշակվում է ճաշակ «գեղեցիկի» մասին։ Նա ըմբռնում է արվեստի ու կյանքի միջև եղած փոխադարձ կապը և հասարակական մեծ դեր ու նշանակություն վերագրելով ինչպես արվեստին, այնպես էլ գրականությանը, իր ժողովրդի առաջադիմության գործը կապում է ազգային գրականության, ազգային կուլտուրայի զարգացման հետ։ 1880 թ. գալով Թիֆլիս, նա ձեռնամուխ է լինում խմբագրական և հրատարակչական գործին։

Նա դեռ հայրենի քաղաքում եղած ժամանակ թղթակցում էր «Մշակ» թերթին՝ «Շուշեցի», «Արցախեցի» ստորագրություններով։ «Լրագրական իմ թոթովանքը,— գրում է նա,— ես «Մշակի» մեջ եմ սկսել»[144]։

«Աղբյուր» ամսագիրը շնորհիվ նրա հեռանդուն ջանքերի, դառնում է հայ մանուկների ամենասիրած ընթերցանության գիրքը։ «Աղբյուրի» էջերում նա է առաջինը ոգևորել ու խրախուսել գրեթե այն բոլոր բանաստեղծներին ու գրողներին, որոնք տարիներ հետո մեծ ճանաչում են գտել ու իրենց գրական գոհարներով հարստացրել հայ գրականությունը։ Հովհ. Թումանյանը 1919 թ. արտասանած իր հոբելյանական խոսքում այդ առթիվ նշել է. «Դեռ Մոսկվայի իմ առաջին ժողովածուն դուրս չեկած՝ առաջին անգամ իմ բանաստեղծությունները տպվել են «Աղբյուրում», երբ ես դեռ անհայտ մի պատանի էի, պ. Տիգրան Նազարյանը որոնում էր ինձ և ինձպիսիներին և մեր երկերը տպագրելով «Աղբյուրում» խրախուսում էր մեզ։ Մոսկվայի իմ առաջին ժողովածվի լույս ընծայվելուց հետո էլ, լավ հիշում եմ, բժշկապետ Նավասարդյանը՝ պատահելով ինձ՝ գովաբանեց և խրախուսեց ինձ, և այդ բանը իսկապես ինձ տվավ ինձ։ Դա նշանակալից է մանավանդ, այն պատճառով, որ ես ու իմ շրջանի մյուս սկսնակ բանաս-

143 «Աղբյուր», 1916, № 12, էջ 261։

144 «Տարազ», 1912, № 5, էջ 108։

ֆրանսերեն և գերմաներեն։ Ընդունակ պատանին սովորում է այդ լեզուները։

Տանը Տիգրանի դաստիարակներն են եղել Պ. Պռոշյանը, նկարիչ Ստ. Ներսիսյանը և ուրիշներ։

Դեռ պատանի հասակում առանձին հակում ունենալով դեպի թատերական գործը, Նազարյանը Հայրենի քաղաքում կազմակերպում է թատերական խումբ, գրում պիեսներ[141], որոնք բեմադրվում են իր իսկ խմբի անդամների կողմից։ Նազարյանը հասարակական լայն աշխատանք է ծավալում Շուշիում։ Նրա օգնությամբ աղջիկ աշակերտուհիներով է համալրվում Հախումյան ամուսինների հիմնած օրիորդաց դպրոցը, կարգի է բերվում 60-ական թվականներից մոռացության մատնված քաղաքային գրադարանը։ Իսկ 1879 թ. 21-ամյա երիտասարդ Տիգրանը Շուշիում հիմնում է հրատարակչական գրասենյակ։ Նրա առաջին հրատարակությունն է Նիկողայոս Տեր-Ավետիքյանի «Քնար Խոսնակ» ժողովածուն, որտեղ զետեղված են հեղինակի ինքնուրույն և թարգմանական բանաստեղծությունները։ Ինքը թարգմանում ու հրատարակում է լեհ գրող Հենրիկ Սենկևիչի «Պողնանի ուսուցչի օրագրից» պատմվածքը (ռուսերենից), Ալֆոնս Դոդեի «Երկու մանրավեպ» (բնագրից) և այլ գործեր։ Այդ գրքերի ընտրությունն ու թարգմանությունն ինքնին վկայում են նրա գեղագիտական ճաշակի և գրական նախասիրությունների մասին։ Լեհ գրող Հենրիկ Սենկևիչին նա համարում է գրական նոր, ռեալիստական դպրոցի ներկայացուցիչը։ «Լիտվոսը[142],— գրում է նա,— նոր է անուն հանել իր ազգային գրականության մեջ և խոստանում է լինել մին ժամանակակից հոգվույն համաձայն գրող արդյունաշատ տաղանդներից, և այդ երևում է նրանից, որ նա ներկայացնում է մեզ պարզապես հետևող այն շարժման, որ նկատվում է լեհական մատենագրության մեջ, այն է՝ անցումն ռոմանական գրական ոճից դեպի ավելի իրական դրսե-

---

141 Նրա «Ճրպատրդ քոլադ կորի» և «Ղալի ադաՒներան» պիեսները հրատարակվել են 1887 թ. «Աղբյուրի» խմբագրության կողմից։ Նազարյանը գրել է նաև հինգ գործողությունից բաղկացած «Արուզա» պիեսը, որը հրատարակվել է 1913 թ. Թիֆլիսում։

142 Հենրիկ Սենկևիչի գրական կեղծանունը։

ցոցը, որի աղբյուրը բացառապես չէ ֆանտազիան, այլ նկատողությունն ու մեզ շրջապատող իրական կյանքի ուսումնասիրությունը, որի համար ֆանտազիան է մի օգնական՝ գրական շենքը կառուցանելու համար»[143]:

Տիգրան Նազարյանի մոտ վաղ հասակից, պատանեկան և երիտասարդական տարիներից իսկ մշակվում է ճաշակ «գեղեցիկի» մասին: Նա ըմբռնում է արվեստի ու կյանքի միջև եղած փոխադարձ կապը և հասարակական մեծ դեր ու նշանակություն վերագրելով ինչպես արվեստին, այնպես էլ գրականությանը, իր ժողովրդի առաջադիմության գործը կապում է ազգային գրականության, ազգային կուլտուրայի զարգացման հետ: 1880 թ. գալով Թիֆլիս, նա ձեռնամուխ է լինում խմբագրական և հրատարակչական գործին:

Նա դեռ Հայրենի քաղաքում եղած ժամանակ թղթակցում էր «Մշակ» թերթին՝ «Շուշեցի», «Արցախեցի» ստորագրություններով: «Լրագրական իմ թոթովանքը,—գրում է նա,—ես «Մշակի» մեջ եմ սկսել»[144]:

«Աղբյուր» ամսագիրը շնորհիվ նրա հոգատար ջանքերի, դառնում է հայ մանուկների ամենասիրած ընթերցանության գիրքը: «Աղբյուրի» էջերում նա է առաջինը ոգևորել ու խրախուսել գրեթե այն բոլոր բանաստեղծներին ու գրողներին, որոնք տարիներ հետո մեծ ճանաչում են գտել ու իրենց գրական գոհարներով հարստացրել հայ գրականությունը: Հովհ. Թումանյանը 1919 թ. արտասանած իր հոբելյանական խոսքում այդ առթիվ նշել է. «Դեռ Մոսկվայի իմ առաջին ժողովածուն դուրս չեկած՝ առաջին անգամ իմ բանաստեղծությունները տպվել են «Աղբյուրում», երբ ես դեռ անհայտ մի պատանի էի, պ. Տիգրան Նազարյանը որոնում էր ինձ և ինձպիսիներին և մեր երկերը տպագրելով «Աղբյուրում» խրախուսում էր մեզ: Մոսկվայի իմ առաջին ժողովածվի լույս ընծայվելուց հետո էլ, լավ հիշում եմ, բժշկապետ Նավասարդյանը՝ պատահելով ինձ՝ գովաբանեց և խրախուսեց ինձ, և այդ բանը իսկապես ինձ տվավ ինձ: Դա նշանակալից է մանավանդ, այն պատճառով, որ ես ու իմ շրջանի մյուս սկսնակ բանաս-

143 «Աղբյուր», 1916, № 12, էջ 261:

144 «Տարազ», 1912, № 5, էջ 108:

տեղծները անբարյացակամ ընդունելություն գտանք շատերի կողմից։ Ջ. Տեր-Գրիգորյանն[145] էլ, իբրև իմ վաղեմի բարեկամ ու ընկեր, միշտ թե հեռվից նամակներով, թե անձամբ ինձ խրախուսել է ու դրվատել. հենց էս հոբելյանն էլ նրա սարքածն է. իբրև մեր գրականության նախանձախնդիր մի անձն, նա բացավ իմ ծննդյան տարեդարձի այս գաղտնիքը ու պատճառ դարձավ այսքան բանի»[146]։

Ալեքսանդր Ծատուրյանը «Աղբյուրի» 25-ամյակը անձամբ շնորհավորելու հնարավորություն չունենալով, Նար-Դոսին ուղղած նամակում գրում է. «Խնդրում եմ, Միքայել, իմ կողմից անկեղծ ու հազար-հազար շնորհավորանքներով պինդ սեղմիր Տիգրան Նազարյանի ձեռքը և ասա, որ նրա 25-ամյա չարքաշ գործն ու աշխատանքը, հիրավի, մի մարտիրոսություն է, բայց նվիրական մարտիրոսություն, թող չվհատվի, չկորցնի իր թափն ու եռանդը, որովհետև մարտիրոսների ամենամեծ վարձն ու բարոյական խորին մխիթարանքը մեզ պես լուսազուրկ ազգի մեջ՝ հենց ինքը մարտիրոսություն է...։ Ասա, որ ես միշտ երախտագիտությամբ եմ հիշում նրա անցյալ խնամալից վերաբերմունքը դեպի իմ ծանր վիճակը պատանեկության տարիներին։ Երախտապարտ եմ և հոբելյար «Աղբյուր»-ին, որն համարյա առաջինը խրախուսեց իմ գրական առաջին թոթովանքները»[147]։

Իրոք մեծ է եղել Տիգրան Նազարյանի դերը հայ գրողներին անուն և համբավ բերելու գործում։ Եվ միանգամայն տեղին է մեջբերել «Բուրաստան» ամսագրում տպագրված հետևյալ խոսքերը. «...որքան ալ մեծ ըլլա դերը Աղայաններու և Բումանյաններու, որոնք մեր մանկապատանեկան գրականությունը ծաղկեցուցին ու ճոխացուցին, մեծ է դերը նաև անոնց, որոնք թերթեր հիմնելով գրողներու համար ասպարեզ պատրաստեցին և խթան ու մղիչ եղան, որ անոնք իրենց հոյակապ գրություննները գրի առնեն ու տպագրության հանձնեն։

---

[145] Ջ. Տեր-Գրիգորյանը «Աղբյուր» ամսագրի ակտիվ աշխատակիցն էր, հայ առաջադեմ դյուզագիրներից մեկը։ Կենսագրական տեղեկություններ նրա մասին տե՛ս «Տարազ», 1919, № 12, էջ 72։

[146] «Տարազ», 1919, № 12, էջ 84։

[147] «Գրական ժառանգություն», գիրք 1, 1961, էջ 71։

Արդարև մեծ է դերը անոնց, որոնք ոչ միայն իրենց միտքըն ու ժամանակը, այլև իրենց հարստությունը տրամադրեցին հայոց մեջ մանկական ու պատանեկան գրականությունը զորացնելու և տարածելու համար։ Մեկը ահա այս տեսակի անձնազոհներեն՝ եղավ Տիգրան Նազարյանը»[148]։

Նազարյանը որպես խմբագիր կատարում էր նյութերի ճիշտ ընտրություն և լավագույնները հրամցնում մանուկներին։ Այն նյութը, որն իր դաստիարակչական ուղղվածությամբ հակասում էր գիտական մանկավարժության սկզբունքներին, մերժում էր խմբագիրը և ուղարկում հեղինակին՝ բացատրական նամակով։ Թղթակիցներից մեկին խմբագիրը պատասխանում է. «Ստացել ենք, բայց մեր ընթերցողներին հարմար չէ»[149]։ Շատ անգամ էլ ոգևորիչ խոսքեր են ասվել հեղինակներին։ Այսպես, Վ. Ագուլիս ուղարկված մի նամակում ասված է. «Ձեր ոճը շատ դեղեցիկ է և պարզ, հույս ունենք կշարունակեք»[150]։

Մանկական ամսագիրը իրականացնում էր Բելինսկու այն պահանջը, թե մանուկների համար պետք է գրել այնպես, որ մեծահասակն էլ կարդա մեծ հետաքրքրությամբ։ Մինչդեռ մի շարք գործիչներ այդ պատճառով էլ «Աղբյուրը» համարում էին վնասակար ուղղություն ունեցող ամսագիր։ Նազարյանը նրանց, հատկապես «Նոր-դար» թերթի խմբագրին, պատասխանում է. « «Նոր-դարը» չենք իմանում ինչու՞, զարմանում է այդ բանի վրա, նա մեզ հարց է առաջարկում, թե այդ ի՞նչ նյութ է մատակարարում «Աղբյուր»-ը, որ մեծն ու փոքրը միևնույն հետաքրքրությունով կարող են կարդալ...։ Եթե «Նոր-դար»-ի պ. խմբագիրը ոչնչով չզանազանվեր իրան շրջապատողներից, մենք իհարկե մեր կողմից չէինք զարմանալ նրա հարցի վրա, բայց քանի որ նա համարվում է փոքրիշատե զարգացած մարդ, նա պետք է իմանար, որ կա մանկական գրականության մեջ մի ուղղություն (ձևի կողմից), այդ ուղղության ներկայացուցիչներն են՝ Կոտ-Մուռիկա, Անդերսեն և այլք, որոնց գրվածքների ամենադլխավոր արժանավորու-

148 «Բուրաստան», Հալեպ, 1951, Ա տարի, ե պրակ, էջ 109։

149 «Աղբյուր», 1889, № 4, էջ 72։

150 Նույն տեղում, 1888, № 12, երկրորդ բաժին, էջ 48։

թյունը հենց նրանում է, որ այդ տեսակ գրվածքներն ամեն հասակի մատչելի են և հետաքրքիր»[151]:

Տիգրան Նազարյանը գաղափարական առաջավոր դիրքերից ըմբռնելով մանկական գրականության հարցերը, ամսագրի միջոցով տարածում էր անցյալի և ժամանակի դեմոկրատ գրողների լավագույն մանկական ստեղծագործությունները:

Իր հրապարակախոսական գործունեությունը է՛լ ավելի լայն շրջանակներում ծավալելու նպատակով Տ. Նազարյանը 1889 թ. ապրիլին դիմում է ներկայացնում Կովկասի գրաքննական կոմիտե՝ «Աղբյուրին» կից «Նորաձևության և ձեռագործի» բաժին հրատարակելու համար: Այդ մասին գրաքննական կոմիտեն իր միջնորդությունն է ուղարկում Պետերբուրգի մամուլի գործերի գլխավոր վարչությանը[152]: Մամուլի գործերի գլխավոր վարչությունը 1889 թ. մայիսի 18-ի գրությամբ իրավունք է տալիս Տ. Նազարյանին՝ «Աղբյուրին» կից հրատարակելու «Տարազ» հավելվածը[153]: 1890 թ. Նազարյանը լույս է ընծայում «Տարազ» շաբաթաթերթը:

1892 թ. Նազարյանին հաջողվում է ձեռք բերել նաև ռուսերեն «Анонсъ» ամենօրյա պարբերականի լույս ընծայման թույլտվությունը: Բայց շուտով այդ երեք պարբերականները և «Արօր» սեփական տպարանը ու այլ հրատարակություններ (օրացույցներ, ալմանախներ, ծոցի օրացույցներ և այլն) նրան մեծ ծախսերի առաջ են կանգնեցնում: Նա ստիպված է լինում վաճառել «Արօր» տպարանը, Հայրական տունը Շուշիում, Թիֆլիսում ունեցած կահկարասիքը, գրավ դնել երեք թերթերի հրատարակության իրավունքը: Սակայն, չկարողանալով մարել իր պարտքերը, նա ստիպված էր 1892 թ. դեկտեմբերին «Աղբյուր», «Տարազ», «Анонсъ» պարբերականների հրատարակության գործը կապալով հանձնել Գ. Միրզոյանին և Ստ. Լիսիցյանին: Բայց որովհետև վերջիններս Կովկասի գրաքննական կոմիտեի կողմից ճանաչված էին որպես անբարեհույս անձնավորություններ, ուստի պաշտոնական ժամա-

---

151 «Աղբյուր», 1884, № 12, երկրորդ բաժին, էջ 41:

152 Տե՛ս ՍՍՀՄ Պետական կենտրոնական պատմական արխիվ, ֆ. 776, ց. 12, գործ 78, էջ 2—3:

153 Նույն տեղում:

նակավոր խմբագիր է հաստատվում պետական խորհրդական Դանիել Լիսիցյանը[154]: Փաստական խմբագիրներ շարունակում են մնալ Գ. Միրզոյանն ու Ստ. Լիսիցյանը: Նրանց օրոք արմատական փոփոխություն է նկատվում «Տարազի» գաղափարական ու դաստիարակչական ուղղության մեջ: Այդ առթիվ Կովկասի գրաքննական կոմիտեն զեկուցում է Մամուլի գործերի գլխավոր վարչության պետին. «Այսպես կոչված, հայկական երիտասարդական կուսակցությունը ձեռք գցելով խմբագրությունը, ձգտում է «Աղբյուրի» «Տարազ» պատկերազարդ հավելվածը վերածել քաղաքական, կուսակցական թերթի: Այդ հանգամանքը առանձնապես նկատվում է Գր. Արծրունու մահից և «Մշակի» ժամանակավոր դադարումից հետո: Գաղափարական նման ուղղությունը չպետք է թույլ տրվեր գրաքննության կողմից»[155]: Դրանից հետո գրաքննական կոմիտեն էլ ավելի է ուժեղացնում հսկողությունը «Տարազի» հանդեպ: 1893 թ. գրաքննական կոմիտեի կողմից արգելվում է «Տարազի» 34-րդ համարը՝ այնտեղ տպագրված քաղաքական ու հասարակական հարցերի շուրջ տենդենցիոզ բնույթ ունեցող հոդվածների համար: Մեկ տարի հետո, 1893 թ. վերջերին Գ. Միրզոյանն ու Ստ. Լիսիցյանը հրաժարվում են ստանձնած պարտավորություններից կատարելուց և խմբագրությունը նորից իր ձեռքն է վերցնում Տիգրան Նազարյանը: Նրան մեծ ջանքերի գնով հաջողվում է ձեռք բերել «Տարազի» ծրագիրը ընդարձակելու իրավունքը[156]: Աստիճանաբար «Տարազը» դառնում է առանձին պարբերական, որտեղ տպագրվում են ինչպես նորաձևության, արվեստի, կուլտուրայի, այնպես էլ հասարակական-քաղաքական հարցերի շուրջ գրված հոդվածներ՝ իհարկե Կովկասի գրաքննական կոմիտեի մշակած և Մամուլի գործերի գլխավոր վարչության կողմից հաստատված ծրագրի համաձայն: Տ. Նազարյանը տարիների ընթացքում ընդարձակելով ծրագիրը, կարողանում է ավելացնել «Տարազի» հավելվածները («Փարիզի մոդաներ», «Իլյուստրա-

---

154 Նույն տեղում, էջ 21—22:

155 Նույն տեղում, էջ 23:

156 Նույն տեղում, էջ 105—108, 141:

ցիոն», «Հիգիենա» և այլն), որոնք լույս են տեսնում տարին մեկ անգամ «Տարազի» № 12-ի հետ։

1904 թ. Կովկասյան գրաքննական կոմիտեի հետապնդումների ուժեղացման պայմաններում, երբ, ինչպես Նար-Դոսն է գրում. «...ազգային ամեն մի հիմնարկություն, այնպես և մամուլն օրհասի մեջ էր»[157], 4 ամիս ժամանակով (հունիս—հոկտեմբեր) փակվում են «Աղբյուր» ամսագիրն ու «Տարազ» շաբաթաթերթը։ Պարբերականների փակման պատճառ է դառնում «Տարազ» շաբաթաթերթում տպագրված «Կույր արծվի կոչը» այլաբանական պատկերը,[158] որը պայքարի կոչ էր՝ ուղղված ցարական բռնակալության դեմ։ Կովկասյան գրաքննական կոմիտեն ուշի-ուշով հետևում էր Նազարյանի լրագրական գործունեությանը։ Այդ մասին Նազարյանը գրում է. «Թերթել պետք է Թիֆլիսի գրաքննական ատյանի և Պետերբուրգի մամուլի գլխավոր վարչության արխիվները, որպեսզի ռելիեֆ լինեն տասնյակ տարիներ մեր քաշած դաժան, համառ պայքարն ու վիշտը»[159]։

Տիգրան Նազարյանը «Տարազ» շաբաթաթերթում գրական-գեղագիտական, քաղաքական հարցերի շուրջ տպագրում է մի շարք հոդվածներ։ «Ռադամես» ստորագրությամբ գրված «Նամակներ օրիորդ Հուսիկյանին» հոդվածաշարում նա արտահայտում է իր հայացքները արվեստի, գրականության, կուլտուրայի հարցերի վերաբերյալ։ Դեմ լինելով «արվեստը արվեստի համար» տեսությանը, նա հանդես էր գալիս ռեալիստական արվեստի սկզբունքների պաշտպանությամբ։ Ըստ նրա՝ գեղագետ կարող էր դառնալ նա, ով «կյանքից ոսկ պատճեններ չէ վերցնում և ֆոտոգրաֆիական ճշտությամբ արտահայտում, այլ նա, ով այդ պատճեններին տալիս է կյանք, ներշնչում է հոգի և լուսաբանում է»[160]։ Նա քննադատաբար է անդրադառնում գրական անկումային հոսանքներին

---

157 Նար-Դոս, Քսան և հինգ ամյակ «Աղբյուր» մանկական ամսագրի, Թիֆլիս, 1908, էջ 62։

158 Տե՛ս ՎՊԿՊԱ, ֆ. 480, ց. 1, գործ 938։

159 «Խոսք և գործ», Թիֆլիս, 1914, էջ 5։

160 «Տարազ», 1901, № 47, էջ 429։

և «դեկադենտների անհեթեթ ուղղությունը» համարում «ֆրանսիական նատուրալիզմի ծայրահեղության արդյունք»։

Նազարյանը «Տարազի» և ժամանակի մամուլի այլ օրգանների էջերում հանդես է եկել քաղաքական, հասարակական հարցերին նվիրված հոդվածներով։ Գտնելով հանդերձ, որ բուրժուական հասարակարգը կառուցված է անարդար հիմքերի վրա և պետք է այն անխուսափելիորեն վերափոխել, նա, սակայն, հետու էր հարցի ճշմարիտ լուծում տալուց։ Չնայած, որ Նազարյանը ապրել է ժողովրդական հուզումների և ռուսական երեք հեղափոխությունների ժամանակաշրջանում, սակայն իր աշխարհայացքի սահմանափակության պատճառով չի տեսել սոցիալական չարիքի դասակարգային արմատները։ Այս է պատճառը, որ սոցիալական-հասարակական հարաբերությունները նա հանգեցրել է չարի ու բարու սկզբունքների պայքարին և գեղեցիկ ապագային հասնելու հույսը կապել մարդկանց մեջ լավի, բարու տարածման ու հաղթանակի հետ։ «Մեր զենքը գեղեցիկն ու ճշմարտությունն է»,—գրում էր նա,—«մենք ձգտում ենք այդ զենքով զինված տեսնել մեր շուրջը մարդկությունը»[161]։

Նազարյանը մանկավարժության, գրականության, պատմության և արվեստի հարցերում կողմնորոշվելիս ելնում էր ժողովրդի, հատկապես աշխատավոր խավերի շահերից ու պահանջներից։

Պաշտպանելով այն դրույթը, թե գրականությունն ու հրապարակախոսությունն առաջ են ընթանում, զարգանալով կյանքի առաջադեմ պահանջների թելադրանքով, Տիգրան Նազարյանն արվեստագետի, պատմաբանի, հրապարակախոսի, գրողի պարտքն է համարում՝ հետևել ժամանակի առաջադրած խնդիրներին։ «Պարբերական հրատարակության ուղղություն տվողը կյանքն է, կյանքի հոսանքը և պայմանները,—գրում է նա,—հասարակ մահկանացուներս մի՞թե կարող ենք փոխել։ Հրատարակության նյութերը կյանքն է տալիս, որի մեջ է ամփոփված հրատարակչի ծրագիրը։ Գոհացնել այդ կյանքի պահանջները, համաձայնեցնելով հասարա-

---

161 «Տարազ», 1907, № 1, էջ 1։

կության պահանջների հետ, դա կլինի ծրագրի գործադրությունը. փքուն խոսքերի, վերացական դատողությունների էլ ի՞նչ պետք կա այստեղ»[162]:

«Տարազը» օգտակար դեր է կատարել սոցիալ-դեմոկրատական ուժերը համախմբելու գործում: Այդ մասին է վկայում «Հայ սոցիալ-դեմոկրատների միության» հիմնադիրներից մեկի՝ Արշակ Զոհրաբյանի «Քաղցր հիշողություններ» հոդվածը[163]: «Ես, իհարկե,—գրում է Զոհրաբյանը,—չգիտեմ ինչ օգուտ եմ բերել իմ հոդվածներով «Տարազ»-ին ու նրա ընթերցողներին, բայց քաջ գիտեմ, որ ես իմ նպատակին հասա, հատ ու կենտ ինտելիգենտներ, լավ ինտելիգենտներ, հեղափոխական երիտասարդներ, որոնք մինչև օրս աշխատում են մեր, կամ բոլշևիկների շարքերում, արձագանք տվին և մենք սկսեցինք հող պատրաստել հայ բանվորական իրականության մեջ»[164]: Նա նշում է նաև այն մասին, որ որոշ ժամանակ անց իր աշխատակցելը թերթին դառնում է վտանգավոր, գրաքննությունը և ոստիկանությունը պատրաստվում են իրեն բանտարկել, իսկ «Տարազը»՝ փակել: Ստիպված Զոհրաբյանը հեռանում է «Տարազից» և անցնում անլեգալ աշխատանքի: «Մենք բոլորս մեր ուժերը թափեցինք անլեգալ մի օրգան ստեղծելու համար,—շարունակում է նա,—և ահա 1902 թվականի աշնանը, մեծագույն դժվարությունները հաղթահարելով, մենք լույս ընծայեցինք «Պրոլետարիատի»[165] առաջին համարը...:

Այդպիսով «Տարազը» մեծ ծառայություն մատուցեց մեզ՝ հայ սոցիալ-դեմոկրատ ինտելիգենտներիս և դա այն ժամանակ, երբ մենք հալածված միապետական կառավարության կողմից, հայկական իրականության մեջ արհամարհված և դարձած ծաղր ու ծանակի առարկա, տանում էինք մեր թույլ ուսերի վրա բանվորական շարժման ծանր լուծը... Եվ այժմ, երբ մենք բաժանված ենք այդ տեղից երկար ու ձիգ, ծանր, անդադար պայքարով լի տարիներով, ես ետ եմ նա-

---

162 «Տարազ», 1904, № 14, էջ 126—127:

163 «Տարազ», 1919, № 6, էջ 42:

164 Նույն տեղում:

165 Առաջին հայերեն լենինյան իսկրայական անլեգալ թերթը:

յում և տեսնում նորից այդ լուսավոր բծերը մեր անցյալում և ասում եմ. «Թող չմոռանա հայ մարքսիստական ինտելիգենցիան, թող գիտենա հայ բանվորությունը, որ նրա պայքարում ու ստեղծագործող աշխատանքի մեջ «Տարազ»-ը կատարել է թող փոքրիկ, շատ փոքրիկ, փույթ չէ, գործ, և մեր շարժման մեջ կան նաև «Տարազ»-ի արյան և քրտինքի կաթիլները...»[166]:

1917 թ. փետրվարյան հեղաշրջման օրերին Նազարյանը ողջունում է ցարիզմի կործանումը, գրելով. «Գիտակցենք բոպեի վեհությունը և ազատության լուսաճաճանչ արշալույսը ողջունենք լիաբերան, անելը աջակցելով արդարության, հավասարության, ազատության համար հաղթանակած նոր կառավարության՝ ամրապնդելու և իր ցանցերը սփռելու բոլոր մութ ու խոնավ հեռավոր անկյունները մեծ Ռուսիայի»[167]:

Անցյալ դարի 80-ական թվականների առաջադեմ հայացքների տեր խմբագրի համար հեշտ չէր հրապարակախոսական գործունեություն ծավալելը, հատկապես մանկական պարբերական հրատարակելը: Ջկար մանկական գրականություն, գրաքննական կոմիտեն վերահսկում էր, եսադեմ հայացքների տեր մտավորականության ներկայացուցիչները ահռիթ էին փնտրում ամսագրի գոյությունը վտանգելու համար: Շատ անգամ էլ ոստիկանական գործակալների միջոցով բռնագրավվում էին ինչպես ամսագրի համարները, այնպես էլ խմբագրության գույքը: Այդ մասին Նազարյանը գրում է. «Հիշե՞լ արդյոք, թե ինչպես մեր խմբագրական սեղանի վրա սուդերնի պրիստավը իր արձանագրություններն էր կազմում, կատարման թղթերը (испол. листы) ձեռքին խմբագրության գույքը վերգրում, այն սեղանի, որի վրա շատ հազար անգուն գիշերներ ենք լուսացրել, քաղցր հույսերով բարվոյ, գեղեցիկի գաղափար ցանելով»[168]:

Տիգրան Նազարյանի և նրա պարբերականների նկատմամբ թշնամաբար էին տրամադրված նաև հոգևոր դասի ներկայացուցիչները: Երբ «Աղբյուր» ամսագրում լույս է տեսնում Դա-

166 «Տարազ», 1919, № 6, էջ 42:

167 «Տարազ», 1917, № 2, էջ 1:

168 «Տարազ», 1909, № 50, էջ 1151:

զարոս Աղայանի հոդվածը «Մուրճ» ամսագրի մասին, ուր հեղինակը օգտագործում է հետևյալ արտահայտությունը. «Մեր եկեղեցում թույլ է տրվում քամահաճ բղավոց ու գոռոց, բայց թույլ չի տրվում երկնային ներդաշնակություն ունեցող երգեհոնի նվագելը»[169], հոգևորականներից մի քանիսը բողոք են ներկայացնում էջմիածին, Մակար կաթողիկոսին: Վերջինս մի կիսապաշտոնական շրջաբերականով արգելում է ամսագրի տարածումը հայկական դպրոցներում: Նար-Դոսը այդ առիթով գրում է. «Սակայն Տ. Նազարյանը ոչ միայն չընկճվեց այդ հալածանքներից, այլև ինքը մղվեց նրանց դեմ»[170]: Իր մասին Նազարյանը գրում է. «Խոչընդոտները և անհաջողությունները մեզ չեն կարող վհատեցնել: Որքան մենք այսօր շղթայված լինենք ծանր, նույնիսկ դաժան հանգամանքներով, այնուամենայնիվ աներկբա հավատում ենք, որ մեր գործը բարի ապագա ունի, որ նա օգտակար է հայությանը»[171]:

Տիգրան Նազարյանը իր ժրաջան և գործունյա բնավորությամբ շարժում է ժամանակի գրական ու հասարակական գործիչների հետաքրքրությունը: «Մաղքոս» ստորագրությամբ Շիրվանզադեն «Տարազում» գրում է. «Ես զարմանում եմ Տիգրան Նազարյանի տոկունության և եռանդի վրա: Կարծես ինձ հետ զարմանում են և շատ շատերը: Տարիների ընթացքում աշխատել, վազվզել դես ու դեն, տպագրել, խմբագրել, գրաշարների հետ կռվել, ամեն օր տպարանում և փոստատանը արյուն պղտորել, ծախսել անվերջ, ենթարկվել փոքրոգի մարդկանց ծաղրին ու կատակին, քայքայել այն հարստությունը, որ ամենից թանկն է և դարձյալ շարունակել գործել, այս իրավ որ ապշեցուցիչ է»[172]:

Տիգրան Նազարյանը խմբագրական-հրատարակչական աշխատանքի հետ միասին վարում էր նաև հասարակական ակտիվ գործունեություն: Հրատարակչական և տպագրական գործը բազմակողմանիորեն ուսումնասիրելու նպատակով 1887թ. նա առաջին անգամ մեկնում է Պետերբուրգ: Այստ

---

169 «Աղբյուր», 1889, № 2, երկրորդ բաժին, էջ 42:

170 Նար-Դոս, Քսան և հինգ ամյակ «Աղբյուր»-ի, 1908, էջ 54:

171 «Տարազ», 1898, № 40, էջ 889:

172 «Տարազ», 1903, № 33, էջ 285:

տարբեր առիթներով լինում է ռուսական և արևմտաեվրոպական քաղաքներում, ծանոթանում դրանց գրական ու կուլտուրական կյանքին: Այն ճանապարհորդությունները, որ նա կատարում էր գրեթե ամեն տարի, կարևոր դեր էին խաղում նրա հասարակական-քաղաքական հայացքների կազմավորման գործում: 1911 թ. Նազարյանը Իտալիայում եղած ժամանակ (ուր գնացել էր Միջազգային մամուլի միության կոնգրեսին մասնակցելու համար), Կապրի կղզում հանդիպում է Մ. Գորկուն, զրույց ունենում նրա հետ: Գորկին որպես հիշատակ նրան է նվիրում իր լուսանկարը՝ մակագրությամբ: Նազարյանը «Տարազում» լայն տեղ է հատկացնում Գորկու ստեղծագործություններին, իսկ «Աղբյուրում» տպագրում կյանքի վերաբերյալ նրա իմաստուն խոսքերը և «Մոխրագույնը» այլաբանական պատկերը:

1894 թ., երբ թուրքական կառավարության Սասունում կազմակերպած հայ ժողովրդի կոտորածների բոթը հասնում է Կովկաս, Նազարյանը շտապում է Եվրոպա՝ պետական-քաղաքական գործիչների միջամտությունը հայցելու: Սակայն, որևէ դրական պատասխան չստանալով, հուսահատ վերադառնում է հայրենիք: Նազարյանը վերջնականապես համոզվում է, որ եվրոպական տերությունները, բացի զավթողական պատերազմներից, ոչինչ չեն կարող տալ ազգային փոքրամասնություն կազմող ժողովուրդներին: «Քաղաքակրթություն տարածելու համար,—գրում է նա,—Ֆրանսիան չքաշվեց մադագասկարցիներին ճանճի նման կոտորելուց: Անգլիան կոտորեց բուրերին, Գերմանիան տիրեց Դամասկոսին, Եփրատի հովիտներից մինչև Պաղեստին: Եվրոպան այսքանով չբավականանալով, ոտք դրեց չինական պարիսպները»[173]:

Նազարյանը հայ ժողովրդի ազատության հույսը կապում էր Ռուսաստանի, իհարկե ոչ ցարական, այլ ազատագրված Ռուսաստանի հետ: 1905—1906 թթ., երբ ցարիզմը հայ, թուրք և այլ ժողովուրդների միջև ազգամիջյան կռիվներ էր հրահրում, նա ազգերի միջև եղբայրության, խաղաղության դաշափարներ սերմանելու նպատակով 1906 թ. խմբագրությանը

---

[173] «Տարազ», 1905, № 23, էջ 213:

կից կազմակերպում է իր առանձին կազմով մի հաստատություն, անվանելով այն «Գրական-գեղագիտական սալոն»։ Սալոնը ներկայացնում էր տարբեր ազգերի պատկանող մտավորականների ու հասարակական գործիչների հավաքատեղի, ուր կազմակերպվում էին ազգերի համերաշխության ու եղբայրության գաղափարների ջատագովմանը նվիրված երեկոներ, հավաքույթներ։ Այստեղ են նշվել Հովհ. Թումանյանի, վրաց բանաստեղծ Ակ. Ծերեթելու, վրաց երգահան Զ. Փալիաշվիլու, դերասան Հ. Աբելյանի, երգիչ Շալյապինի և ուրիշների հոբելյանները։ Սալոնը գործել է շուրջ տասներեք տարի (1906—1919)։ Գեղագիտական սալոնում կազմակերպված երեկոներից մեկում արտասանած իր ճառում վրաց հրապարակախոս Եոսիֆ Իմեդաշվիլին սալոնը նմանեցրել է մի ստվերախիտ ծառի, որի շվաքի տակ նա միշտ հանգիստ է գտել։ «Այստեղ,— ասել է նա,— թող ազգերի համերաշխության առթիվ պատրաստած բոլոր բարակ թելերը միացվեն կազմելու մի հաստ պարան, որն այլևս ոչ ոքի ձեռքով կարելի չլինի կտրել»[174]։

Ժամանակի մամուլը նույնպես բարձր է գնահատել Տ. Նազարյանի գրական-գեղագիտական սալոնի ինտերնացիոնալիստական գործունեությունը։ «Համբավաբեր» թերթը գրել է. «Կարելի է մխիթարվել հոգով, թե ինչպես Տ. Նազարյանցի ձեռներից և հնարագետ ոգու այս հաստատությունը դառնում է մի քրիստոնեական ապագի-ագապ՝ սիրո հաստատություն, ուր բոլոր ազգերը միմյանց հաշտության ու միաբանության ձեռք են մեկնում»[175]։

Կուլտուրայի ու արվեստի բնագավառներում եղբայրության ժողովուրդների միջև համագործակցություն հաստատելու նպատակով նա փորձեր է անում ռուսերեն «Թատրոն և երաժշտություն» առանձին պարբերական հրատարակելու իրավունք ձեռք բերելու ուղղությամբ։ Սակայն նրան հաջողվում է լույս ընծայել «Թատրոն և երաժշտություն» թերթը որպես «Տարազի» հավելված։

1907 թ. Նազարյանն իրավունք է ստանում մասնակցե-

---

174 «Տարազ», 1919, № 12, էջ 78։

175 «Համբավաբեր», 1916, № 12, էջ 279։

լու Լիսաբոնում (Պորտուգալիա) բացված «Գրականագետների, արվեստագետների և խաղաղության միջազգային ընկերության» կողմից կազմակերպված ցուցահանդեսին։ Այստեղ նա ներկայացնում է V դարի հայ պատմիչների գործերի մեկական օրինակները։ Ցուցահանդեսը փակվելուց հետո հայկական բաժնի նյութերը դառնում են Պորտուգալիայի ազգային մատենադարանի սեփականությունը։ Մատենադարանը նոր բաժնով հարստացնելու համար Նազարյանը ընտրվում է «Գրականագետների, արվեստագետների և խաղաղության միջազգային ընկերության» պատվավոր անդամ, որպիսի պատվի արժանանում են Եվրոպայից՝ Ջուդեքմանը, Կարմեն Սիլվան, Հաուպտմանը, Ֆլամարիոնը, Ռուսաստանից՝ Լև Տոլստոյը և Մաքսիմ Գորկին։ 1908 թ. նույն ընկերությունը տոնում է Լև Տոլստոյի հոբելյանը։ Տիգրան Նազարյանին որպես պատգամավորի և լիազոր ներկայացուցչի հանձնարարվում է անձամբ ներկայանալ Տոլստոյին և նրան մատուցել ընկերության շնորհավորանքի ուղերձը։ Տոլստոյի ծննդավայր՝ Յասնայա Պոլյանա կատարած ուղևորությունը Նազարյանը մանրամասն նկարագրում է իր «Ուխտագնացություն Լև Տոլստոյին» հոդվածում[176]։ Հանդիպումը հանճարեղ գրողի հետ անչափ ջերմ էր, զրույցը՝ սրտաբուխ։ Մեծ հումանիստը հետաքրքրությամբ է լսում կովկասցի խմբագրին։ Նազարյանը Տոլստոյին է հանձնում «Աղբյուրի» և «Տարազի» այն համարները, որոնք նվիրված էին գրողի հոբելյանին։ Այդ հանդիպման ժամանակ Տոլստոյը Նազարյանին է նվիրում իր լուսանկարը[177]։

1915 թ., երբ արևմտահայ գաղթական որբերը դիմում էին Թիֆլիս՝ ապաստան ու սնունդ գտնելու, Նազարյանը հանդես էր գալիս որբերի համար ապաստարան ստեղծելու կոչով և առանձին ֆոնդ հատկացնում Խրիմյան Հայրիկի ու Իզմիրլյանի 2000 օրինակ նկարների վաճառքից գոյացած գումարից։ Այդ գումարով նա բացում է «Հրատապ սփոփանք մայր հայաստանցիներին» ապաստարանը, ուր սնունդ և բժշկական օգնություն է տրվում որբերին։

176 «Տարազ», 1910, № 22, էջ 105—109։

177 Նույն տեղում, էջ 108—109։

Նազարյանը նախադպրոցական հասակ ունեցող որբուկների համար բացում է «Վասպուրական դպրոց» մանկապարտեզը, աղջիկների համար կազմակերպում արհեստանոց, աշխատանքի է տեղավորում մոտ 540 գաղթականների։

Ժամանակի նշանավոր գրողներն ու գործիչները (Շիրվանզադե, Նար-Դոս, Մուրացան, Հ. Հովհաննիսյան, Հ. Թումանյան, Ա. Ծատուրյան և ուրիշներ) իրենց հիշողություններում արժեքավորելով նրա բացառիկ աշխատանքը, գնահատում են այն որպես լուսաշող մի փարոս, ուղեցույց ամառ ժամանակի խավար իրականությունում։ Ուշագրավ է հատկապես վրացական «Թեատրի դա ցխովրեբա» («Թատրոն և կյանք») ամսագրի էջերում Նազարյանի գործունեությանը տրված գնահատականը։ Հոդվածի հեղինակ Իոսեփ Արիմաթիելին բարձր գնահատելով Նազարյանի խմբագրական-հրատարակչական գործունեությունը, ուշադրության է արժանացնում հատկապես նրա դերը որպես համերաշխության, ազգերի միջև եղբայրության, խաղաղասիրության գաղափարները տարածողի։ «Նրա բարձր արժեքը կայանում է նրանում,— գրում է նա,— որ չի առաջնորդվում նեղ, շովինիստական հայացքներով։ Նրա նպատակը շատ մեծ է, թո՛ղ ապրի նրա նպատակը և գործունեությունը մեր ժամանակի խավար կյանքում»[178]։

1918 թ. դադարում է լույս տեսնելուց «Աղբյուրը», իսկ մեկ տարի հետո՝ «Տարազը»։ Նազարյանը ժամանակավորապես մեկնում է արտասահման։ Իսկ երբ իմանում է Հայաստանում սովետական կարգերի հաստատման մասին, նա դիմում է համապատասխան օրգանների՝ հայրենիք վերադառնալու և սոցիալիստական ազատ իրականությունում գործելու ցանկությամբ։ Արտասահմանում եղած ժամանակ (1919—1924) Նազարյանն իր կյանքն ապարդյուն չի անցկացնում։ Փարիզում լույս տեսնող «Ապագա» և այլ թերթերում նա տպագրում է հոդվածներ Սովետական Հայաստանի տնտեսական ու կուլտուրական կյանքում եղած նվաճումների մասին և հրապարակում «Բիքա» գրական երկերի ժողովածուն։ Իր

---

[178] «Թեատրի դա ցխովրեբա» («Թատրոն և կյանք»), 1918, № 7, էջ 5։

ուրախությունն արտահայտելով հայ ժողովրդին՝ ռուս, վրացի, աղրբեջանցի ու այլ ժողովուրդների հետ ձեռք-ձեռքի տված խաղաղ շինարարության մեջ համագործակցելու առթիվ, նա գրում է. «Խորապես համոզված, որ Կովկասի բարօրը կախված է լայնատարած Ռուսիայի բարգավաճումից, տարիների ընթացքում մի կողմից կշտամբել եմ խարդախ, արյունարբու, վաշխառու Եվրոպին, իսկ մյուս կողմից էլ ցարիզմի բռնակալական սկզբունքներով կառավարությանը։ Սակայն աներկբա եմ եղել, որ կգա հեղափոխությունը. հիմնովին կհեղաշրջե Ռուսիան և բազմալեզու, բազմացեղ ժողովուրդները կստանան ներքին անկախ, անկաշկանդ ազատություն, միմյանց հետ շաղկապված մի խոշոր ամբողջություն»[179]։

Ոգևորված Սովետական Հայաստանի ձեռք բերած նվաճումներով և լի սոցիալիստական երկրում գործելու բուռն ցանկությամբ, 1925 թ. Նազարյանը վերադառնում է հայրենիք, բնակություն հաստատում Թիֆլիսում։ Հարազատ ժողովրդին օգտակար լինելու նպատակով նա ստանձնում է Ղարաբաղի օգնության կոմիտեի փոխնախագահի պաշտոնը, ծրագրում հրատարակել «Կարմիր աղբյուր» պարբերականը։ Սակայն մահը անկատար է թողնում նրա նպատակները։ 1926 թ. սեպտեմբերի 14-ին, Թիֆլիսի Միքայելյան հիվանդանոցում մահանում է մեծավաստակ գործիչը։ Նրա դին ամփոփվում է Թիֆլիսի Վերայի գերեզմանատանը։

[179] ՀՍՍՀ գրականության և արվեստի թանգարան, Տ. Նազարյանի արխիվ, թղթ. 233, հուշատետր 25, էջ 33։

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ՀԱՅ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ 1900—1917 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

XX դարի առաջին տասնամյակից սկսած սոցիալ-դեմոկրատական շարժումների ազդեցությամբ Անդրկովկասում կազմակերպված աշակերտական դաղտնի խմբակները ուսումնասիրում էին մարքսիզմը, քննարկում հասարակական-քաղաքական հարցեր։ Վ. Ի. Լենինը ողջունելով Ռուսաստանի հարավի աշակերտների միության հեղափոխական առաջին քայլերը, գրել է. «Ամբողջ հոգով ողջունելով աշակերտների եռանդուն նախաձեռնությունը, մենք մեր կողմից նրանց այսպիսի ընկերական խորհուրդ կտանք։ Ջանացեք ձեր կազմակերպության գլխավոր նպատակը դարձնել ինքնակրթությունը, ձեզանից համոզված, կայուն և տոկուն սոցիալ-դեմոկրատներ պատրաստելը»[1]։

XX դարի սկզբներից հայկական դպրոցների բարձր դասարանների աշակերտների ուժերով նույնպես ստեղծվում են ինքնակրթության խմբակներ, դաղտնի ընկերություններ, որոնք բողոքի ձայն են բարձրացնում դպրոցների վարչության, տիրապետող դասակարգի կամայականությունների դեմ։ Նրանք նախաձեռնում են աշակերտական խմորատիպ ու ձեռագիր պարբերականների հրատարակման գործը։

1913 թ. Շուշիում թեմական դպրոցի աշակերտները լույս են ընծայում «Աշակերտ»[2] խմորատիպ գրական-գեղարվեստական շաբաթաթերթը։ Առաջին համարը բաղկացած է 8 է-

[1] Վ. Ի. Լենին, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 7, էջ 83։

[2] «Աշակերտ» շաբաթաթերթի 1913 թ. № 1—7-ը պահվում են ՀՍՍՀ գրականության և արվեստի թանգարանում, Պահարանի ֆոնդում։

ջից, հաջորդ համարներից յուրաքանչյուրը ունի 16 էջ։ Ժողովըրդին նյութական ծանր իրավիճակից դուրս բերելու լավագույն միջոցը ամսագիրը համարում է գիտության տարածումը, ինքնազարգացումը։ Նկատվում է, որ պարբերականի աշխատակիցները հրապարակախոսական գործունեությունից բացի, միաժամանակ ծավալել են նաև հասարակական ու կազմակերպչական աշխատանքներ։ Այդ մասին է վկայում նրանց կողմից Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի սաներին ուղարկված բաց նամակը. «Օգուտ տալ որևէ կերպ մեր ազգին, այդ է մեր նպատակը և կարծեմ մեղնից շատերն էլ նույն կերպ կմտածեն։ Եվ մեր նպատակին հասնելու համար մնում է մեզ աշխատել անվերջ, անդադար, հոգնել, բայց աշխատել։ Եկեք միանանք և այնպես աշխատենք։ Իմ միտքն է ստեղծել մեր և ձեր մեջ մի կապ, մի միություն, որի նպատակը լինի աշխատել, զարկ տալ աշակերտի ինքնաճանաչությանը և նոր հոսանքի մեջ նոր ոգի մտցնել։

Չգիտեմ ինչպիսի վերաբերմունք կտածեն տեղիդ աշակերտության մեծամասնությունը իմ այս առաջարկի նկատմամբ, բայց համոզված եմ, որ կգտնվեն այնպիսի անձնավորություններ (որոնց թիվը իմ կարծիքով այնքան էլ քիչ չի լինի), որոնք սրտի անհուն բերկրանքով կթոթափեն հեռվից մեկնած ձեռքը և ջերմ զգացմունքով լցված կասեն. «Եղբայր ենք մենք... Այնժամ ուրեմն կեցցե՛ դիտակից աշակերտության միությունը»[3]։

Աշակերտական ձեռագիր թերթ էին հրատարակում և Մոսկվայի Լազարյան ճեմարանի սաները։ Նրանք սերտ կապերի մեջ էին գտնվում Համալսարանի ուսանողների հետ[4], Համալսարանի, որը Մոսկվայի հեղափոխական շարժումների կենտրոնն էր այն ժամանակ։ Ճեմարանի ներսում կազմակերպվում էին դասադուլներ, բողոքի ցույցեր, պահանջվում էր ուսումնական ծրագրերում մտցնել «Հայոց պատմություն» առարկան և ավելացնել հայոց լեզվի դասաժամերը։

1905 թ. հետո, որքան էլ ուժեղանում էին ոստիկանական խուզարկություններն ու վերահսկողությունը սովորող երիտա-

[3] «Աշակերտ», 1913, № 5, էջ 7։

[4] Տե՛ս Ա. Հ. Իգնատյան, Լազարյան ճեմարան, Երևան, 1969, էջ 258։

սարդության շրջաններում, այնուհանդերձ, ճեմարանցինները շարունակում էին իրենց արդարացի պահանջները դնել ճեմարանի ղեկավարության առջև և մասնակցություն ցույց տալ ցարիզմի դեմ ուղղված հեղափոխական շարժումներին։ Ճեմարանի սաների մի մասը ներգրավվում է ՌՍԴԲԿ III համագումարի որոշումները պրոպագանդելու, զինված ապստամբությունը նախապատրաստելու ուղղությամբ տարվող աշխատանքների մեջ։ Բանվորական շրջաններում այդ ժամանակ պրոպագանդիստական մեծ աշխատանք էր կատարում ճեմարանի սան Ալ. Մյասնիկյանը։

Լազարյան ճեմարանի սաների վիմատիպ պարբերականների մեջ ուշագրավ տեղ է գրավում 1908 թ. արևելյան լեզուների ֆակուլտետի ուսանողների լույս ընծայած «Ուսանող»[5] պարբերականը, որի բնաբանն էր՝ «Նշանաբան—քննիլ, դատիլ, ստեղծիլ»[6], իսկ խմբագրության կողմից արված հայտարարության մեջ ասված է՝ «Ընկերնե՛ր, ամեն մի նոր, ըմբոստ, ազնիվ, հանդուգն բնավորություն կրող գրվածք կգտնեն իր տեղը։ Սովորենք գրելու, ստեղծագործելու։ Կյանքի էությունը ստեղծագործությունն է։ Մեր մտքի արտադրությունները պետք է ամփոփենք մի ընդհանուր վերնագրի տակ և այս օրգանի միջոցով ցնցենք, բորբոքենք ամեն մի պաղ մտածողություն։ Եկե՛ք, բոլոր մեռած փողերին խոսեցնենք, բորբոքենք ամեն մի պաղ մտածողություն։ Այդ մենք կարող ենք»[7]։

«Ուսանողը» լույս էր տեսնում երկու կամ երեք շաբաթը մեկ անգամ, վեց էջ ծավալով։ Ուներ հետևյալ բաժինները. «Աշակերտական կյանքի երևույթներ», «Ուսուցումը դպրոցներում», «Աշակերտական բանաստեղծություններ», «Աշակերտ միությունների շուրջը», «Աշակերտների և ուսուցիչների փոխադարձ հարաբերությունները» և այլն։

---

[5] «Ուսանող», 1908, 2, 3, 5, 6 համարները պահպանվում են ՀՍՍՀ գրականության և արվեստի թանգարանում, Լազարյան ճեմարանի արխիվում, ֆ. 177, վավ. 47։

[6] «Ուսանող», 1908, № 2, էջ 1։

[7] Նույն տեղում։

Ճիշտ ըմբռնելով ժամանակի առաջադրած հասարակական-քաղաքական կարևոր պահանջները (կապը աշխատավոր լայն մասսաների հետ, ժողովրդի ճշմարիտ դաստիարակության կազմակերպման խնդիրները, գյուղացիության և բանվոր դասակարգի դաշինքի հարցը, բուրժուազդայնական կուսակցությունների գաղափարական-քաղաքական էության մերկացումը և այլն), թերթը դիմելով աշակերտությանը, կոչ էր անում՝ հետաքրքրվել ժողովրդի, հատկապես գյուղացիության կյանքով, լուսավորել գյուղացուն, ժամանակի առաջընթացի հետ միասին, «առաջ շարժվել»։ «Առաջարկում ենք ընկերներին,—գրված է այնտեղ,—գնալ, պտույտներ կատարել, խոսել գեղջուկների հետ, նրանց հասկանալ»։ «Շարժվենք ընկերնե՛ր, նոր բաներ տեսնելու համար, ըմբռնատանանք կատարյալ մարդ լինելու համար, «մարդ» այդ միշտ դեպի նորը, գեղեցիկը, վեհը ձգտող է, մարդն է միշտ վազող, հարվածող, արհամարհող, սիրող, ըմբռնատացող։ Ըմբռնատությունն է, որ միանգամից ճահճացած կյանքը իր ընթացքից հարյուրավոր վերստներ հետու է ձգում, ահագին թռիչք գործել տալիս»[8]։ Նշանակում է, «Ուսանողի» խմբագիր-հրատարակիչներն աներկբայորեն կանգնած են եղել բանվորական-հեղափոխական շարժման նոր ուղու վրա։ Մանր-մունր տնտեսական բարեփոխումների համար մղած պայքարը այլևս չէր հետաքրքրում, չէր բավարարում նրանց։ «Ուսանողի» մի քանի համարների ուսումնասիրությունը համոզում է, որ այն գործել է ժամանակի առաջընթաց շարժմանը համահնչուն։

Այդ նույն ժամանակաշրջանում աշակերտական խլրտումները սուր բնույթ են ստանում նաև էջմիածնում։ Գևորգյան ճեմարանի սանները կազմակերպում են բողոքի ցույցեր՝ ուղղված ճեմարանի ղեկավարության և հոգևորականության դեմ։

Պաշտոնական տպագիր օրգան հրատարակելու իրավունք չստանալով, նրանք ձեռնամուխ են լինում ձեռագիր և խմորատիպ պարբերականների հրատարակմանը։ ՀՍՍՀ Պետական կենտրոնական պատմական արխիվում պահպանվում են Գևորգյան ճեմարանի սանների լույս ընծայած ձեռագիր և խմո-

[8] «Ուսանող», 1908, № 5, էջ 3։

թատիպ երկշաբաթաթերթերը[9] («Կողով» 1910, «Նոր փարոս» 1912, «Երաժշտություն» 1914, «Գրական-գեղարվեստական և զավեշտական ժողովածու» 1916 և այլն)։ Այս պարբերականները ծանոթացնում են ճեմարանի սաների ուսման բնագավառում ձեռք բերած հաջողություններին, նախասիրություններին, ժամանակի կյանքի իրադարձությունների հանդեպ ունեցած նրանց վերաբերմունքին։ Դրանք դասարանական թերթեր էին, որոնց կրկնօրինակները ձեռագրով բազմացվում և ուղարկվում էին աշակերտուհյանը։

Յուրաքանչյուր դասարանական թերթ ուներ «ներքին տեսություն», «լուրեր», «գրական» բաժինները։ Հարցերը քննարկվում էին ժամանակի քաղաքական ու հասարակական կյանքի անցուդարձերի հետ շաղկապված։ Թերթը քննադատաբար էր անդրադառնում ճեմարանում, ինչպես և ընդհանրապես ժողովրդի կյանքում տեղ գտած արատավոր երևույթներին։ «Իսկի հոգ չի տարվում մեր կյանքը կենդանի, արդյունավետ դարձնելու վրա,—գրում էին աշակերտները,—մեզանում յուրաքանչյուր աշակերտ թողնված է իր կամքին, ապրում է առանձին, չկա միասին աշխատելու ձգտում և չի էլ մտածվում այդ մասին»[10]։ Ճեմարանական այդ թերթերում տպագրվում են հայ ժողովրդի անցյալի կյանքը պատկերող հոդվածներ։ «Կովկասի հայերի վիճակը ռուսաց տիրապետությունից առաջ»[11] հոդվածում համառոտ ներկայացված է հայ ժողովրդի իրավիճակը թուրքական ու պարսկական հարստահարիչների տիրապետության օրոք։ Քննադատվում է օտար բռնակալների վարած աղգահալած քաղաքականությունը։ «Հայոց լեզուն դառնում էր մի խառնուրդ, կորցնում էր իր առանձնահատկությունները։ Լեզվի անկումը հասցնում էր այն բանին, որ շատ գյուղեր ու ավաններ խոսում էին թուրքերեն... օրեցօր Կովկասի հայերի այդ շրջանը խլում էր հայերից զոհեր ամբողջ գյուղերով, համայնքներով....»[12]։ Եվ կարևորը այն էր, որ փառաբանվում էր և մեծ ու կարևոր իրադարձու-

---

[9] Տե՛ս ՀՊԿՊԱ, ֆ. 312, թ. 57, վավ. 3, 4, 7։

[10] «Նավակ», 1901, № 14, էջ 3։

[11] «Նոր փարոս», 1911, № 4, էջ 14

[12] Նույն տեղում։

թյուն էր համարվում Հայաստանի միացումը Ռուսաստանին։ «Բայց այդ օրհասական րոպեին,—շարունակում է հոդվածագիրը,—գալիս է մի փրկարար ձեռք ազատելու հայերին կորըստի վտանգից։ Այդ փրկարար ձեռքը ռուսաց տիրապետությունն էր»[13]։

Գևորգյան ճեմարանի ձեռագիր պարբերականներում մեծ տեղ էր տրվում գեղարվեստական ստեղծագործություններին։ Ճեմարանականների գրական առաջին թոթովանքների համար բնաբան էին ծառայում հայ բանաստեղծների ազատաշունչ ոգով գրված ոտանավորներից մեջբերված քառյակները։ «Կողովի» 8—9 միացյալ համարի առաջնորդող հոդվածի համար բնաբան է հանդիսացել Ռ. Պատկանյանի հետևյալ երկտողը.

> Եղբայր հայե՛ր, առե՛ք խոփը, տվեք ւ՛սրբնին կռելու
> Կռել-կոփել սուր ու սուսեր, Հայաստանը փրկելու։

«Կողով» աշակերտական ձեռագիր թերթը տարածում էր գտել նաև այլ քաղաքներում։ Թերթի «Լուրեր» բաժնում տպագրված էր Լոնդոնից «Կողով» երկշաբաթաթերթին ուղարկված շնորհավորական հեռագիրը։ Այդ նույն բաժնում գրված էր նաև այն մասին, որ «Կողովը» մեծ հաճույք է պատճառել Լև Տոլստոյին[14]։

Գևորգյան ճեմարանի սանները գիտակցելով գեղադիտական դաստիարակության մեծ դերն անհատի համակողմանի զարգացման գործում, հրատարակում էին նաև առանձին մասնագիտացված պարբերականներ («Երաժշտություն», 1914, «Գրական-գեղարվեստական, զավեշտական ժողովածու», 1916 և այլն)։

«Երաժշտություն» ձեռագիր երկշաբաթաթերթը հանդիսանում էր ճեմարանի երաժշտասեր սանների օրգանը։ Այն խմբագրում էին Ալ. Դանիելյանը, Կ. Ղազարյանը, Հմ. Տարախչյանը։ Յուրաքանչյուր համար բաղկացած էր 50 էջից։ Թերթի աշխատանքներին օգնում էին երաժիշտ մասնագետները։ Նրանք հանդես էին գալիս առանձին հոդվածներով և

---

13 Նույն տեղում։

14 Տե՛ս «Կողով», 1910, № 3, էջ 1։

ցույց տալիս երաժշտության դաստիարակչական, կրթական դերն ու նշանակությունը։ Աշակերտները հոդվածներ էին տպագրում ճեմարանում հաճախ կազմակերպվող գրական-երաժշտական երեկույթների մասին, երեկույթներ, որոնք ինչպես թերթն էր նշում, «զարգացնում էին աշակերտների գեղագիտական ճաշակը, տալիս նրանց որոշ հոգեկան բավականություն»[15]։ Անկասկած, այդ տարիներին զգացվում էր նաև մանկական երգերի պահանջը։ Ուստի, քիչ թե շատ ստեղծագործելու շնորհք ունեցող սաներին հորդորվում էր գրել մանկական երգեր։ «Մանկական երգերի կարիքը»[16] հոդվածում ցույց էր տրվում, թե ինչ բովանդակություն պետք է ունենար, և ինչպես պետք է գրված լիներ մանկական երգը։ Պահանջվում էր գրել «ուրախ, իր բովանդակությամբ պարզ, մանկան ներքին աշխարհին համապատասխանող երգեր»։ Միաժամանակ հարց էր բարձրացվում երաժշտության դասագրքեր կազմելու, երգերի տեքստեր ու նոտագրեր հավաքելու, առանձին մանկական երգերի ժողովածուներ լույս ընծայելու մասին։

Գևորգյան ճեմարանի ձեռագիր պարբերականները ժամանակին ձեռքից-ձեռք են անցել և լայն տարածում գտել հայ երիտասարդության մեջ։ Նյութերը վկայում են Գևորգյան ճեմարանի սաների բազմակողմանի գիտելիքների և գեղագիտական բարձր ճաշակի մասին։

Աշակերտական ձեռագիր հանդեսներ են հրատարակվել նաև Նոր Նախիջևանում։ 1915 թ. նոյեմբերից մինչև 1916 թ. նոյեմբերը Նոր Նախիջևանի հայոց հոգևոր թեմական դպրոցի հինգերորդ դասարանի աշակերտները հրատարակել են «Դասընկեր»[17] գրական-գեղարվեստական շաբաթաթերթը։ Հիմնադիրներն էին աշակերտներ Բաղդասար Տոմբայանը, Ղևոնդ Բոսնակյանը, Խաչատուր Հախնազարյանը, հրատարակիչն էր՝ Վահան Սարաֆյանը։ Ուշադրավ էր այն հանգամանքը, որ «Դասընկերը» պատկերազարդ էր։ Հոդվածների հիմնական

---

[15] «Երաժշտություն», 1914, № 2, էջ 4։

[16] Նույն տեղում, № 3, էջ 17—19։

[17] «Դասընկեր» շաբաթաթերթի 1915—1916 թվականների լրիվ համարները պահպանվում են ՍՄԿԿ կկ-ին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական մասնաճյուղի գրադարանում։

նյութը ազգային կյանքն էր, արևմտահայ հատվածի հայ ժողովրդի կոտորածների մասին հաղորդվող լուրերը։ Ճիշտ է դրանք առանց փաստական տվյալների նկարագրություններ էին, սակայն հայրենասիրության կրակ էին արթնացնում հայ մատաղ սրտերում։ Թերթը հորդորում էր աշակերտությանը՝ ինչով հնարավոր էր օգնել ցեղասպան բանդաներից մազապուրծ ժողովրդի զավակներին, որոնք ապաստան էին գտել Ռուսաստանում։ Կոչ էր արվում դպրոցական պատանիներին ու աղջիկներին՝ գնալ Հայաստան, մասնակցել դաշտային աշխատանքներին, փոխարինել ռազմաճակատ մեկնած աշխատավորներին։ «Սիրելի ընկերնե՛ր,— գրված է այնտեղ,— այսօր մեզ վրա մեծ պարտավորություն է դրված։ Հայ մշակը հույսերով լի թաղել է հացահատիկը և այսօր ղենքը ձեռքին կռվում է թուրքի դեմ։ Նոր նախիջևանցիները պետք է օգնեն հայ գաղթականներին։ Պետք է հայրենակիցների հետ միասին աշխատել դաշտերում, որով մենք կարժանանանք շատ օրհնանքների և գովեստների»։ Պարբերաբար տպագրվում էին Հայաստան դաշտային աշխատանքների մեկնած աշակերտների ցուցակները։ Թերթի էջերում գովաբանվում էին հայ կամավորական շարժման ղեկավարները, գովերգվում էր թուրք բռնակալների դեմ մղած նրանց հերոսական պայքարը։ Ղևոնդ Բոսնակյանը ազգային հերոս Անդրանիկին նվիրած իր բանաստեղծության մեջ գրում է.

Շատ տարիներ սար ու ձորեր շրջեցիր,
Սուրդ թշնամու արյամբ ներկեցիր
Կյանքումդ դեռ չես կրել պարտություն
Ճակտիդ միշտ պսակվում է հաղթություն։

Եվ այս անգամ, երբ նույն վրեժով վառված
Քեզ պես հայդուկների գլուխն անցած
Դու դիմել ես այս նույն կռվին դարձյալ
Հուսա, որ կկատարվի քո իդեալ[18]։

Թերթը կոչ էր անում աշակերտությանը՝ զինվել գիտությամբ, հարազատ ժողովրդի անցյալի ու ներկայի պատմու-

[18] «Դասընկեր», 1916, № 21։

թյան խմացությամբ. «Մենք պետք է իմանանք, թե ի՞նչ ազգ ենք եղել, ինչ ենք ունեցել, ո՞վ ենք եղել»[19]: Պարբերականի էջերում մեծ տեղ էր տրվում հայ ժողովրդի անցյալի հերոսական դրվագների նկարագրություններին («Օրբելյանք և Մամիկոնյանք տոհմերի ծագման մասին»)[20]:

1916 թ. հունիսին աշակերտները դադարեցնում են իրենց շաբաթաթերթը, այն հույսով, որ հաջորդ ուսումնական տարվանից նորից կարողանան վերաբացել: 1916 թ. լույս է տեսնում թերթի ընդամենը երեք համարը («Նոր սերունդ» վերնագրով), որից հետո այն ընդմիշտ դադարում է:

Արևելահայ աշակերտական խմորատիպ և ձեռագիր մամուլն անպայման հետաքրքրություն է ներկայացնում: Այն պատկերացում է տալիս 1900—1917 թթ. հայկական դպրոցների աշակերտության կյանքի, դեպի հասարակական-քաղաքական իրադարձություններն ունեցած նրա կենդանի հետաքրքրության, հայրենիքի ազատագրման համար մղված պայքարին զինվորագրվելու նրա պատրաստակամության մասին:

1900-ական թվականներից սկսած, երբ որոշակի առաջընթաց զարգացում է ապրում դպրոցը, աշխուժանում է նաև հայ մանկապատանեկան տպագիր մամուլը:

Կոմս Վորոնցով-Դաշկովի Կովկասի փոխարքա նշանակվելուց հետո վերաբացվում են իշխան Գոլիցինի օրոք փակված հայկական դպրոցները: Կազմակերպվում են ուսուցչական միություններ: 1906 թ. հրավիրվում է հայ ուսուցիչների բազմամարդ համագումարը, որը հիմք է դնում կովկասահայ դպրոցների ուսուցչության միությանը[21]: Հեղափոխական տրամադրություններով համակված ուսուցիչների շնորհիվ ձևավորվում է հայ մանկավարժության մարքսիստական թևը: Անդրադառնալով դպրոցական հարցին, Ստ. Շահումյանը գտնում է, որ բանվորական դեմոկրատիան պետք է ձգտի ստեղծել այնպիսի դպրոցներ, որոնք իրենց ծրագրով, իրենց

---

19 «Դասընկեր», 1916, № 9:

20 «Դասընկեր», 1916, № 25:

21 1907 թ. ստեղծվում է «Կովկասահայ դպրոցների միությունը», որը մեկ տարի հետո հրատարակում է «Նոր դպրոց» ամսագիրը:

ուղղությամբ համապատասխանեն ժողովրդի առաջադիմության և պրոլետարիատի ազատագրության գործի շահերին[22]։

Ուշադրության կենտրոնում են դրվում մատաղ սերնդի հասարակական-քաղաքական, բարոյական, գեղագիտական, ինչպես և ֆիզիկական դաստիարակության հարցերը։ 1908 թ. առաջ է քաշվում «նորագույն առարկաներով ճոխացրած» դպրոցական նոր ծրագիր ստեղծելու պահանջը։ Ուշադրության են արժանանում մանկական ընթերցանության հարցերը։ Լույս են ընծայվում Նիկ. Տեր-Ղևոնդյանի «Մայրենի լեզու», Հ. Թումանյանի, Ստ. Լիսիցյանի, Լ. Շանթի «Լուսաբեր», Տ. Ռաշմաճյանի, Ա. Չիլինգարյանի և Ավ. Իսահակյանի «Դասընկեր» դասագրքերն ու մանկական մի շարք գեղարվեստական գրքեր։ Հայկական դպրոցներում ստեղծվում են մանկական երգեցիկ խմբեր, կազմակերպվում են ցերեկույթներ, փորձեր են արվում մանկական օպերաներ կազմակերպելու ուղղությամբ[23]։ 1912 թ. Թիֆլիսում ստեղծվում է հայկական երաժշտական ընկերությունը, իսկ 1916 թ. երաժշտագետ Սարգիս Բարխուդարյանի և մյուսների կողմից հարց է բարձրացվում հայկական երաժշտական դպրոց հիմնելու մասին։ Մանկավարժներ Իս. Հարությունյանը, Ստ. Լիսիցյանը, Գ. Էդիլյանը և ուրիշներ մատաղ սերնդի բարոյական և գեղագիտական դաստիարակության հարցերը դիտում են սերտ միասնության մեջ։ «Դաստիարակությունը պետք է հոգեբանական ճիշտ սկզբունքներով երիտասարդության սիրտն ու կյանքը այնպես զարգացնե,— գրում է Իս. Հարությունյանը,— որ բարոյականի և գեղեցիկի իդեալներին ծառայե»[24]։

Հայ առաջադեմ մանկավարժները, գրողները, երաժշտագետները նորանոր միջոցներ էին փնտրում մատաղ սերնդի բարոյական և գեղարվեստական դաստիարակության գործը լավագույն ձևերով կազմակերպելու համար։ Երևան են գալիս մանկապատանեկան մամուլի նոր օրգաններ («Հասկեր», «Փնջիկ», «Պատանի» և այլն)։ Այդ նույն ժամանակաշրջանում

---

22 Տե՛ս Ստ. Շահումյան, Ընտիր երկեր, Երևան, 1948, էջ 403։

23 Տե՛ս «Մշակ», 1911, № 23, էջ 3։

24 «Հայ մանկավարժներ», գիրք Բ, Երևան, 1961, էջ 521։

առաջընթաց զարգացում է ապրում արևմտահայ մանկավարժական միտքը։

1908 թ. «երիտասարդ թուրքերի» հեղափոխությունից հետո, երբ հիմնվում է սահմանադրական-ռամկավարական կուսակցությունը, քաղաքական-հասարակական կյանքի փոքրիշատե ազատություն է տրվում հայ ժողովրդին։ Նորից ստեղծվում է թերթերի ու հանդեսների առատություն։ Երևան են գալիս նաև մանկապատանեկան բազմաբովանդակ ամսագրեր ու շաբաթաթերթեր։ Մատաղ սերնդի համակողմանի դաստիարակության հարցերն առավելապես զբաղեցնում են մանկավարժների ուշադրությունը։ Արևմտահայ առաջադեմ մանկավարժները ուշի-ուշով հետևում են արևմտաեվրոպական մանկավարժության ու հոգեբանության բնագավառներում արծարծված սկզբունքային հարցերի քննարկմանը։ Մշակվում են նոր միջոցներ աղջիկների ու տղաների բարոյական, մտավոր, ֆիզիկական, գեղագիտական դաստիարակության գործը լավ կազմակերպելու համար։

Արևմտահայ փրականությունում այդ ժամանակաշրջանում ստեղծվում են աշակերտական սպորտային, երաժշտական, թատերական և այլ ընկերություններ։ Այդ ընկերությունները հիմնում են իրենց օրգանները։ Այսպես, Կոստանդնուպոլսի Կարապետյան վարժարանի ուսանողական միությունը 1910 թ. լույս է ընծայում «Հայ ուսանող» ամսագիրը, 1914 թ. պետական բարձրագույն դպրոցների հայ ուսուցիչների և ուսանողների ջանքերով կազմակերպվում է «Հայ դպրոց» մանկավարժական պատկերազարդ ամսագրի հրատարակության գործը։

Հայ առաջադեմ մտավորականների ու մանկավարժների ջանքերով Կոստանդնուպոլսում, ինչպես և գավառներում հիմնադրվում են մանկապատանեկան մամուլի առանձին օրգաններ, նվիրված մատաղ սերնդի ֆիզիկական («Մարմնամարզ»), գրական-գեղարվեստական («Հայկունի», «Բողբոջ», «Տաճար մանկանց» և այլն) դաստիարակության հարցերին։

Ոչ միայն Թուրքիայում, այլև աշխարհի տարբեր անկյուններում ստեղծված հայկական օջախները հանդես էին գալիս կուլտուր-կրթական նոր ձեռնարկումներով, մամուլի նոր օր-

դանների ստեղծմամբ։ Այսպես, Վիեննայի Մխիթարյան վարժարանի սանները 1911 թ. հրատարակում են «Ուսումնարան» մանկավարժական, գիտական և գրական ամսաթերթը։

XX դարի առաջին երկու տասնամյակում արևմտաեվրոպական երկրներում հրապարակախոսական ակտիվ գործունեություն էին ծավալում հայ երիտասարդական կազմակերպությունները։ Անգլիայում պատանիների ու երիտասարդության շրջաններում մեծ հեղինակություն էր վայելում Լոնդոնի «Վերնահարկ» կոչված տանը կազմակերպված «Երիտասարդաց քրիստոնեական ընկերությունը», որի հիմնական նպատակն էր՝ համախմբել երիտասարդության ուժերը բարի, օգտակար, ազգօգուտ և հայրենասիրական գործերի շուրջ։ Ոգևորված ընկերության քարոզած գաղափարներով, լոնդոնաբնակ մի խումբ հայ պատանիներ ազգին, հարազատ ժողովրդին օգտակար ծառայություն մատուցելու միտումներով կազմում են պատանեկան միություն։ «Նպատակ դրած ենք բարի տրամադրություն ունեցող երիտասարդաց և պատանեաց բարոյական միություն մը երևան հանել,— գրված է նրանց ծրագրում,— և անոր բերանը (օրկան) և հասարակաց ժամադրավայրը ըլլալ, ուր կարենան նոքա հանդիպելով, իրարու դաղափար ճանչնալ և հարգել։ Կուզենք մեր թարմ ուժերը, որք մեր մեջ հաճախ կանարգվին կամ երեսի վրա անմշակ կթողնվին առանց գործածության, հավաքել և հետզհետե աճող մոլության և բարուց ապականացման դեմ մաքառելով նոր սերունդը ինքն իրեն և հասարակության օգտակար ու ապրած երկրին բարի և պատվավոր քաղաքացիներ պատրաստել»[25]։

Հայ պատանիների միության մի խումբ անդամներ միավորվելով, ձեռնամուխ են լինում ազգային լեզվով պարբերական հրատարակելու գործին։ Նրանց նպատակն էր ստեղծել մի ամսագիր, որը տարածվեր ոչ միայն Լոնդոնի, այլև աշխարհի բոլոր վայրերում ցրված հայ պատանիների ու երիտասարդության մեջ, դաստիարակեր նրանց դարի առաջադիմական ոգով, պատրաստեր նրանցից իր ժողովրդի և հասարակության համար պիտանի քաղաքացիներ։ Նրանք

---

[25] «Պատանի», 1902, № 1, էջ 2։

իրենց ձեռքի տակ ունենալով փոքրիկ տպարան՝ հայերեն ու անգլերեն տառերով, տպագրական մամուլով և կաղմարանով, լույս են ընծայում «Պատանի»[26] հանդեսը։

«ՊԱՏԱՆԻ»
(1902—1907)

Պատանի խմբագիր-հրատարակիչներն իրենք էին շարում նյութերը, իրենք էին տպագրում ամսագիրը։ Նրանք պարբերականի տարածումը ապահովելու, գրաքննական արգելքներից խուսափելու նպատակներով հայտարարում էին, որ ամսագրի նախընտրած նպատակներից «քաղաքական և կրոնական կամ դավանական խնդիրները բոլորովին դուրս են»[27]։ Մինչդեռ իրականում ամսագրի հիմնական նպատակն էր՝ դաստիարակել ժողովրդի առօրյա հոգսերով ապրող, հայրենիքի ազատության համար պայքարող քաջ ու հայրենասեր քաղաքացիների։ Այդ իսկ պատճառով ամսագիրը չէր խուսափում ժամանակի կյանքի և՛ սուվերոտ, և՛ լուսավոր կողմերը պատանի ընթերցողներին ներկայացնելուց։ Խոսքը ուղղելով պատանի սկսնակ թղթակցին, խմբագիր-հրատարակիչները գրում էին. «Հաճեմ մահկանացուացս ճշգրիտ վիճակը տեղեկագրել, գուցե ով գիտե, իր ամենատես աչքերեն վրիպած ենք. ցուցուր, թե ինչպես այս աշխարհի ցավերը շատ ու երկար են և ուրախությունները քիչ ու վաղանցիկ, թե ինչպես ծաղիկը կթառամի ու փուշը միշտ իր խայթն ունի, թե մեր կյանքը կարճ ու լի է ցավոք ու հեծութեամբ»[28]։ Իրականության ճշմարիտ պատկերը ներկայացնող փոքրածավալ ակնարկներում փորձեր էին արվում նաև ցույց տալու սոցիալական թշվառությունների պատճառները։ Սակայն հեղինակները չըմբռնելով հասարակության պատմական զարգացման օրինաչափությունները, մեծ մասամբ քաղաքակրթության տարածման հետ էին կապում սոցիալական չարիքի հիմնա-

---

[26] Ամսագիրը 1903 թ. լույս է տեսնում պատկերազարդ և ավելի մեծ չափերով։

[27] «Պատանի», 1902, № 1, էջ 2։

[28] Նույն տեղում, էջ 9։

կան պատճառները։ Քաղաքակիրթ երկրներում, հատկապես Անգլիայում իշխող էր «ամենեն բարձր ազնվականն ու ամենեն սուրին ռամիկը» միտքը։ Ամսագրում քաղաքակրթությունը երբեմն բարբարոսության հետ կը զարգանա» դրույթը հաստատելու համար տպագրվում էին տիրապետող խավի ներկայացուցիչների տմարդի վերաբերմունքը արտահայտող փոքրածավալ պատկերներ։ Պատանի խմբագիր-հրատարակիչները այն համոզմունքին էին, թե «կրթությունն ու հանգամանքները կը կրթեն, կը դաստիարակեն, բայց իրարու հավասարեցնելու անմիտ փորձեր չեն ըներ»[29]։ Միակ միջոցը «իրարու հավասարեցնելու» ինքնակատարելագործման մեջ է, որը նշանակում է. «....ինքնդինքը ճանչնալ, իր իրավունքեն անդին չանցնիլ, իր արարքներն առ այլն սիրով կատարել, ուրիշները սիրել և հարգանքով վարվիլ անոնց հետ։ Ասոնք պատվաստվելու են բնական մարդուն վրա մանկության ժամանակ, ինչպես ազնիվ խնձորը կը պատվաստեն վայրի խնձորի կոճին վրա»[30]։ Նրանք գտնում էին, որ մատաղ սերունդը, ընդհանրապես մարդկությունը «մաքուր և ազնիվ ոսկենման նկարագիր մը պիտի ունենա»[31]։ Մի շարք ակնարկներում ցույց է տրվում, որ աշխատավոր ժողովրդի մոտ են պահված մարդկության հոգևոր կյանքի թանկագին գանձերը, և որ ժողովուրդն է ամենամեծ ուսուցիչն ու դաստիարակը։ Այդ միտքը պարզորոշ ձևով արտահայտված է «Ազնիվ ընթացք»[32] ակնարկում, որտեղ նկարագրված է ս. Հեղինե կղզում Ն. Բոնապարտի կյանքից վերցված մի դիպված։ Կալանավորված Նապոլեոնը նեղ լեռնանցքով անցնելիս հանդիպում է բեռը շալակին մի մարդու և առաջինը ինքն է ճանապարհ տալիս նրան։ «Այն Նապոլեոնը,—գրված է ամսագրում,—որին երբ բախտը իր երեսին կծիծաղեր, մտքեն անգամ չէր անցներ, թե բեռով, հոգսով, հարստահարությունով ծանրաբեռնյալ մարդը հարգվելու և նախապատվություն ունենալու է»[33]։ Ապա

---

29 «Պատանի», 1907, № 11, էջ 95։

30 «Պատանի», 1907, № 6, էջ 42։

31 «Պատանի», 1902, № 2, էջ 29։

32 «Պատանի», 1904, № 9, էջ 156։

33 Նույն տեղում։

հեղինակը եզրակացնում է. «Ս. Հեղինե փոքր կղզին էր նրան այդ դասը տվողը, և ոչ թե Եվրոպայի կայսերական գահը»: Իսկ մեկ այլ պատկերում այն միտքն է զարգացվում, թե ինքնակատարելագործման միջոցով կարելի է հասնել բարձրին, վեհին, ազնիվին («Եղերուք կատարյալ»)[34]:

Հատկանշական էր այն, որ մեծ տեղ էր տրվում անցյալի հայ նշանավոր գործիչների կյանքի և գործունեության նկարագրություններին (Գր. Նարեկացի, Շ. Շահամիրյան, Հ. Ջուղայեցի, Ղ. Ալիշան, Ն. Աշտարակեցի և ուրիշներ): «Նարեկացին,— գրված է ամսագրում,— իրեն հատուկ բանաստեղծությունը ունի, նոր և բոլորովին ինքնատիպ գրականության սեռի մը հիմնիչը եղած է, թեև սակայն հետևողը ունեցած չէ: Չափազանցած չենք ըլլար, երբ ըսենք, թե Նարեկը մեր հին գրականության գլուխգործոցն է, իր տեսակին մեջ միակը, կատարյալ և ճշմարտապես հայկական արտադրություն մը»[35]: Իսկ Ղ. Ալիշանի մասին գրված է. «...տաղանդավոր պատանի մը էր, որ ուսումնակիցներուն մեջ դուրս կը ցատկեր ոչ միայն իրեն ազնիվ և կիրթ բնավորությամբ, այլ նաև կարգե դուրս ընդունակությամբը, սովորականեն դուրս մտածելու կերպովը, զգացումներու փափկությամբը»[36]:

Ամսագրում տպագրված գրական-գեղարվեստական ստեղծագործությունները հայ պատանի ընթերցողների ուշադրությունը դարձնում էին պանդուխտ որբուկների վրա («Հայ որբը», «Միտքես չի ելլեր» և այլն): Ամսագրում քիչ տեղ չեն գրավել մանկավարժական հոդվածներն ու հայ դպրոցի անցյալի պատմությանը վերաբերող ակնարկները («Ժէ դարու վերածնութիւնը»[37] և այլն):

«Պատանին» լինելով լոնդոնաբնակ հայ պատանիներին հասցեագրված առաջին պարբերականը, մեծ դեր է կատարել մատաղ սերնդի բարոյակրթական գործը ճիշտ կազմակերպելու ուղղությամբ: Այդ իսկ պատճառով ամսագիրը բարձրը է գնահատվել ժամանակի գործիչների և մամուլի օրգան-

---

34 «Պատանի», 1907, № 10, էջ 75:

35 «Պատանի», 1904, № 7, էջ 115:

36 «Պատանի», 1902, № 3, էջ 41:

37 «Պատանի», 1904, № 2, էջ 74—75:

ների կողմից։ «Մշակ»-ը գրել է. «Դա մի շատ փոքրիկ ամսաթերթ է «Պատանի» անունով..., մաքուր հայերենով գրված մի պարբերական հրատարակություն։ Ունի որոշ ծրագիր, նույնիսկ ուղղություն։... մեզ դուր է գալիս այս պատանեկան խիզախությունը։ Երանի թե մեզանում հասակավոր, ուսում և գիտություն ստացածները այս եռանդի գոնե կես մասը ունենային, հասկնային, որ կարելի է պարապո և գուցե երբեմն ալ քնոյ ժամերից գողնալ՝ հասարակության կարիքներին ծառայեցնելու համար»[38]։ «Արմենիա» թերթը գրում է. «Թեև պատանիներու ուղղված է, բայց հասակավոր մարդերն ալ կրնան օգտվիլ և գրական հաճույք մը վայելել»[39]։

Նյութերի և թղթակիցների պակասը ստիպում է պատանի խմբագիրներին 1907 թ. դադարեցնել «Պատանի» ամսագրի հրատարակության գործը։

1905 թ. սկսած արևելահայ իրականությունում իր ստեղծած լավագույն ավանդույթներով, դաստիարակչական նշանակությամբ և գաղափարական բովանդակությամբ աչքի ընկնող տեղ է գրավում «Հասկեր» ամսագիրը։

«ՀԱՍԿԵՐ»
(1905—1917, 1922)

Անվանի մանկավարժ-հրատարակիչներ Կատարինե և Ստեփան Լիսիցյանները 1905 թ. Թիֆլիսում լույս են ընծայում «Հասկեր» ամսագիրը։ «Հասկերի» խմբագրական կազմի մեջ էին մտնում Հակոբ Աղաբաբը, Մարգար Ավետիսյանը, Սոֆյա Գալաչյանը, Դերենիկ Դեմիրճյանը, Սոֆյա Զավարյան-Հակոբյանը, Սիմակ Սահակյանը, Ստեփան Քափանակյանը, Սեյրին (Ա. Գուլոյան) և ուրիշներ։

«Հասկերին» կից գոյություն ուներ «Նվեր մանուկներին» հրատարակչական ընկերությունը (փոխնախագահ Ս. Բարխուդարյան, նախագահ Ստ. Լիսիցյան, գանձապահ Ն. Սերեբրակյան)։ Ամսագրի շուրջն էին համախմբված հասարակական-մանկավարժական մտքի ամենաառաջավոր ներկա-

38 «Պատանի», 1902, № 3, էջ 37—38։

39 Նույն տեղում։



ԳԱՌՆԻԿ ԱԽՊԻՐ

Հայ ժողովրդական ճէմիաթ

I

Գարիկը մեռաւ, հարիկը մեռաւ
Մանուկն ու Մանուշ անուշը մրմռացին.
Մարդիկ անկչտում, ծարդիկ անխրատ,
Փորդիկ որբերին նկան դրկեցին։

Ու նրբանք անուան, նրբանք հարուծուած
Եան, բրտնեցին իրարու ձեռքից,
Ընծանօթ ճամբով, արկիր ու սուած
Հետացան, կոյան էն չար աշխարքից։

II

Երկու որբեր,
Քոյր ու ախպէր,
Կորած պիտում են հետս.

«Հասկեր» ամսագրի առաջին էջը

յացուցիչները (Հ. Տեր-Միրաքյան, Տ. Ռաշմաճյան, Իս. Հարությունյան, Ալ. Շիրվանզադե, Հովհ. Հովհաննիսյան, Վ. Փափազյան, Ղ. Աղայան, Ավ. Իսահակյան, Ալ. Ծատուրյան, Ա. Խնկոյան, Հ. Հայրապետյան և ուրիշներ):

Մատաղ սերնդի դաստիարակության գործը ամսագրի էջերում քննարկվում է ժամանակի հասարակական-քաղաքական կարևոր իրադարձությունների հետ շաղկապված: XX դարի առաջին տասնամյակում նոր հասարակարգի կառուցման համար մղված պայքարում առաջնակարգ տեղ է տրվում մատաղ սերնդի դաստիարակության ճիշտ կազմակերպման գործին: Դաստիարակությունը,—գրված է ամսագրում,—լայն մտքով առած պետք է թեթևացնի մեր հասարակության մեջ կատարվող հեղափոխությունը և օդնի նոր սերունդներին ըստ կարելվույն չնչին սխալանքներով անցնելու հին նահապետական շրջանից նոր եկող շրջանին»[40]: Դարի շունչը թելադրում էր՝ պատրաստել ազգային արժանապատվության զգացումով համակված, այլ ազգություններ նկատմամբ բարեկամաբար տրամադրված, ինտերնացիոնալիզմի ոգով դաստիարակված սերունդներ հասարակության համար: Ահա թե ինչու, ելնելով ժամանակաշրջանի հիմնական պահանջներից, ամսագիրը գրում էր. «Այժմ հայը ավելի քան ղգում է, թե ինքը անքակտելի շահերով կապված է իրեն շրջապատող մարդկանց հետ, ոչ միայն համերկրացիների, այլև ավելի հեռավոր ազգությունների հետ.....: Աչքից չպետք է թողնենք այն, որ մեր երկիրն էլ մտնում է լայն ինքնավարական շրջանը, և որ նոր սերունդները կոչվելու են ավելի ու ավելի այն սկզբունքի համար, թե ամեն մի երկիր նախ և առաջ պատկանում է իր մեջ բնակվող ժողովրդին: Ընտանիքը, դպրոցը, ամբողջ հասարակությունը պիտի աշխատեն կենդանի, անմիջական սեր ներշնչել մատաղ սերնդին դեպի մայրենի բնությունը և այնտեղ ապրող մարդիկ, մի անկեղծ բարեկամություն դեպի իր ազգի և ամեն ազգի անդամները»[41]:

Ամսագիրը դիմելով ծնողներին, պահանջում էր նրանցից՝

---

40 «Հասակեր», 1905, Մանկավարժական բաժին, № 1, էջ 1:

41 Նույն տեղում, էջ 5:

ներեխաների միջից արմատախիլ անել «անբան հպատակության սաղմերը», այսինքն, դաստիարակել բանական, կյանքի անարդարությունների դեմ պայքարող, ազնիվ, քաջ, պատվասեր սերունդ հասարակության համար։ «Ամսագրի նպատակն է,— գրված է այնտեղ,— ա. ներշնչել մանուկ ընթերցողներին վսեմ ձգտումներ, արծարծելով նրանց մեջ սեր դեպի մարդը, հայրենի միջավայրը, բ. տալ նրանց ճիշտ հասկացողություններ բնության և մարդու մասին, դ. զարգացնել նրանց ճաշակը, դ. ուրախություն և աշխույժ մտցնել մանկական կյանքի մեջ»[42]։

«Հասկեր» ամսագրի էջերում մեծ տեղ էր տրվում ժողովրդական հեքիաթներին, ավանդություններին, քանի որ դրանցում խտացված դույներով ներկայացված էին մարդկային բարձր ու վեհ հատկանիշները։ Ամսագրի համար ժողովրդական հեքիաթներ էին մշակում Հ. Թումանյանը, Ղ. Աղայանը, Ա. Խնկոյանը, Ս. Լիսիցյանը և ուրիշներ։ Ամսագրի անդրանիկ համարը բացվում է Հովհ. Թումանյանի «Գառնիկ ախպերը» հեքիաթով, որտեղ ներկայացված երկու որբուկները օժտված են մարդկային ամենաբարձր հատկանիշներով՝ ազնվությամբ ու համեստությամբ։ Հեքիաթի նպատակն է ցույց տալ, թե ամեն դեպքում և ամեն ժամանակ չար ուժերին (հասարությունն և դաժանությունը) հաղթողը մարդկային բարձր էությունն է։ Հովհ. Թումանյանի հեքիաթներում իշխողը զվարթ ու պայծառ ոգին է, կենսախինդ տրամադրությունը («Անբան Հուռին», «Քաջ Կիվիվը» և այլն)։ Հովհ. Թումանյանի թարգմանությամբ «Հասկերում» տպագրվում են ռուսական («Դեղեցկուհի Վասիլիսան» և այլն), իտալական (Որոտ թագավորը»), իռլանդական («Կախարդի քսակը») և ժողովրդական այլ հեքիաթներ։ Հ. Թումանյանի պատմվածքների, զրույցների, հեքիաթների մեծ մասը առաջին անգամ տպագրվում է «Հասկերում»։ Թումանյանն իր պատմվածքներում անդրադառնում է սոցիալական կյանքի հակասություններին, պատկերում առևտրավաշխառուական կապիտալի զարգացման հետևանքով գյուղում և քաղաքում ստեղծված աշխա-

---

42 Նույն տեղում։

տավոր մասսաների թշվառ կացութիւնը։ Թումանեանի մանկական բանաստեղծութիւնները («Աղվեսը», «Առավոտ», «Փխրիկի դանգատը», «Ամենից լավ տունը» և այլն) ծանոթացնում են մանուկ ընթերցողներին բնութեան երևոյթներին, շրջապատի իրերին, կենդանական աշխարհին։

«Հասկեր» ամսագրին աշխատակցած հեղինակներից հայ մանուկների սիրելին էր նաև Աթաբեկ Խնկոյանը։ «Հասկերում» են տպագրվել նրա գրեթե բոլոր բանաստեղծութիւնները, առակները, հեքիաթները, ավանդութիւնները, լեգենդները և այլն։ Աթաբեկ Խնկոյանը լինելով մանկավարժ, լավ գիտեր մանուկների հոգեբանութիւնը, գիտեր, թե ինչը կարող էր ամենից ավելի հետաքրքրել երեխաներին։ Ա. Խնկոյանի մի շարք ոտանավորներ նմանվում էին շուտասելուկների, որ իսկույն անգիր էին արվում ընթերցողների կողմից։ Ա. Խնկոյանի առակները վերաբերում էին նաև հայկական կոտորածներին։ 1915 թ. մեծ եղեռնի օրերին ամսագրում տպագրվում է նրա «Գարունը չեկավ» բանաստեղծութիւնը.

Մեր աշխարհը
Սուգ ու շիվան
Չկա օրենք
Աստծու դիվան...[43]

Ուսուցողական և բարոյախրատական բնույթ ունեն հատկապես Հակոբ Աղաբաբի և Հայրապետ Հայրապետյանի բանաստեղծութիւնները։ «Հասկերում» տպագրված նրանց մանկական ստեղծագործութիւնները երգերի են վերածվել և մինչև այսօր լայն տարածում են գտել հայ մանուկների ու պատանիների մեջ։

«Հասկեր» ամսագրի էջերում մեծ տեղ էին գրավում նաև նախադպրոցական հասակ ունեցող երեխաների համար գրված արձակ ու չափածո ստեղծագործութիւնները։ Առանձնապես աչքի էին ընկնում Ստեփան և Կատարինե Լիսիցյանների, Սիմակի, Վ. Փափազյանի, Գևորգ Բաշինջաղյանի և ուրիշների գործերը։ Ստեփան Լիսիցյանի պատմվածքները («Ինչո՞ւ ես էլ գողութիւն չարի», «Սավառնակը» և այլն) դաստիարակ-

[43] «Հասկեր», 1915, № 1, էջ 162։

չական մեթոդների առաջադրման տեսակետից օգտակար էին նաև ծնողների համար։ Նրա լավագույն գործերից է «Աբու Հասանի մաշիկները» հեքիաթ-պրոյեկտը, որտեղ խարազանվում է մարդկային բնավորության արատավոր կողմերից մեկը՝ ժլատությունը։

Ամառգրի էջերը հետաքրքրական են դարձնում նաև Սիմակ Սահակյանի ստեղծագործությունները։ Նրա մանկական գործերում շեշտը դրվում է մանկան հոգեբանության նկարագրության վրա։ Սիմակի պատմվածքները ջատագովում են մանկական ջերմ ու անկեղծ մտերմությունը («Մանուշակի խաշինջեր»), երեխաների միամտությունն ու պարզությունը («Խաչոն և կրակը»)։

Նախադպրոցական և դպրոցական ցածր տարիքի երեխաների ուշադրությունը գրավում էին հատկապես «Մարիամ տատիկի հեքիաթները» և «Մարիամ տատիկի տոպրակից» խորագրերով տպագրված հեքիաթները, գրույցները, առակները։ Այդ նյութերը գրում էին աշակերտները, բայց մշակվում և խմբագրվում էին Մարիամ Թումանյանի[44] կողմից։

---

[44] Մարիամ Թումանյանը (1870—1947) ծնվել է Թիֆլիսում։ Գայանյան դպրոցում մի քանի տարի սովորելուց հետո, ծնողների հետ տեղափոխվել է Բոժի Պրոմիսլ կոչված բնակավայրը։ 17 տարեկան հասակում Մարիամ Թումանյանը վերադարձել է Թիֆլիս և ամուսնացել հրապարակախոս Գեորգի Թումանյանի (Թումանով) հետ։ Ամուսնու միջոցով ծանոթանալով ժամանակի գրական-հասարակական գործիչների հետ, ծավալել է աղքատ գործունեություն։ 1892 թ. ընտրվել է Կովկասի հայոց հրատարակչական ընկերության կազմում, եղել է ազգագրական, դրամատիկական, հայուհյաց բարեգործական և այլ ընկերությունների անդամ։ 1908 թ. կազմակերպել է «Իշխ. Մ. Թումանյան և ընկ.» հրատարակչությունը, հրատարակել է մանկական գրքեր։ Զբաղվոր աշակերտների, ուսանողների և գործադուլավորների օգտին կազմակերպել է երեկույթներ, համերգներ, ներկայացումներ, պարահանդեսներ, զրոսանքներ։ 1915—1916 թթ. Թիֆլիսում և 1919—1920 թթ. Դիլիջանում գաղթած հայերի համար հիմնել է արհեստանոցներ և որբանոցներ։

Սովետական իշխանության հաստատումից հետո դառնալով Հայաստանի օգնության կոմիտեի (ՀՕԿ) անդամ, մեծ եռանդով ու ոգևորությամբ շարունակել է իր հանրօգուտ գործունեությունը, աշխատակցել «Կարմիր ծիլեր», «Արշալույս», «Պրոլետար» և այլ պարբերականների (տե՛ս «Աղբյուրի ակունք», պրակ IV, 1911, էջ 69—72, Ա. Ինճիկյան, Հովհաննես Թումանյան, Երևան, 1969, էջ 404—421)։

Մարիամ Թումանյանը օգտակար խորհուրդներ էր տալիս աշակերտներին, սովորեցնում նրանց, թե ինչի մասին և ինչպես պետք է գրել։ Ինչպես պարզվում է ՀՍՍՀ գրականության և արվեստի թանգարանի արխիվային բաժնում պահվող Ստ. Լիսիցյանի՝ Մ. Թումանյանին հասցեագրված նամակներից, Մ. Թումանյանը եղել է «Հասկեր» ամսագրի խմբագիր-հրատարակչի ամենամերձավոր բարեկամը և խորհրդատուն։ Ստ. Լիսիցյանը հաճախ է դիմել նրան օգտակար խորհուրդներ ստանալու նպատակով։

1911 թ. Մարիամ Թումանյանը ժամանակավորապես հեռանում է Թիֆլիսից։ Այդ օրերին Ստ. Լիսիցյանը նրան գրում է. «...մի առանձին հոգեկան մխիթարանքով հիշում եմ Ձեզ, որ ամսագրի դառն րոպեին այնպիսի անկեղծ քաջալերությամբ մոտեցաք խմբագրությանը։ Մանավանդ այժմ, երբ «Հասկեր» № 11-ի և № 12-ի մեջ չեմ տեսնում «Մարիամ տատիկի տոպրակից» և «Պատասխաններ» բաժինները, կարծես թերթի համ ու հոտից մի ահագին բան է պակասել, ուղիղ է, մի քանի ամիս Ձեր հեռանալուց հետո, դուք նյութեր չէիք ուղարկում, բայց խմբագրությունն ամեն կերպ աշխատում էր այդ բաժինները չթուլացնել, Ձեր հոգին, Ձեր ուղղությունը, խոսելու Ձեր եղանակը մեջը պահելով»[45]։

Ապրելու, գործելու, աշխատելու ուժ ու կամք էին հաղորդում մանուկ ընթերցողներին «Հասկեր» ամսագրում տպագրված Ավետիք Իսահակյանի ստեղծագործությունները («Ամենապետքական բանը աշխարհում», «Արևի մոտ» և այլն)։

Մանկական այս ամսագրում տպագրվել են նաև Պ. Պռոշյանի «Հուշիկներից» մի հատված[46], որտեղ նկարագրված է Խաչատուր Աբովյանի Աշտարակի ուսումնարան կատարած այցելությունը, Շիրվանզադեի «Իմ կյանքից»[47] հուշագրությունը և այլ գործեր։ Շիրվանզադեն իր խոսքն է ուղղել մանուկներին. «Սիրելի մանուկներ, ես ուզում եմ ձեզ մի քանի

---

45 ՀՍՍՀ գրականության և արվեստի թանգարան, Մ. Թումանյանի արխիվ, վավ. 351։

46 «Հասկեր», 1907, № 11, էջ 367—371։

47 «Հասկեր», 1910—1911 թթ.։

բաներ պատմել։ Կարծում եք դևերի, չար ոգիների մասին։ Ոչ, իմ տեսածների, լսածների և իմ մասին»։

Առանձին հոդվածներով ամսագիրը պատանի ընթերցողներին ծանոթացրել է Խ. Աբովյանի, Հովհ. Հովհաննիսյանի, Ալ. Շահուրյանի, Գ. Սունդուկյանի, Րաֆֆու, Ղ. Ալայանի, Լեոյի և այլ գործիչների կյանքին ու համառոտ գործունեությանը։

Պատանի ընթերցողին իր հարազատ ժողովրդի անցյալով ոգևորելու նպատակով ամսագրում մեծ տեղ է տրվել հայրենի առասպելներին ու վեպերին («Արամ», «Շամիրամ և Արա Գեղեցիկ», «Տիգրան» և այլն)։ Այս նյութերը, որ պատկանում էին Ստ. Լիսիցյանի գրչին, տպագրված էին քարտեզներով և պատմական հարուստ տեղեկություններ էին հաղորդում ընթերցողներին։

«Հասկերը» մանկական համառոտ պատմվածքներով անդրադարձել է նաև ժամանակի հասարակական-քաղաքական կարևոր իրադարձություններին։ 1903—1905 թթ. ցարական կառավարության կողմից հրահրված հայ-թուրքական կոտորածների ժամանակ ամսագիրը հանդես է եկել ժողովուրդների բարեկամությանը նվիրված թեմաներով, տպագրել մանկական գողտրիկ պատմվածքներ, որոնք վկայել են երկու ազգերի աշխատավոր խավերի ու նրանց երեխաների ընկերական, բարեկամական հարաբերությունների մասին։ Այսպես, «Ջարմիկի ավարը»[48] պատմվածքում ցույց է տրված, թե ինչպես հայ պատանին հրդեհի բոցերից փրկում է թուրք երեխային։ Քիչ էջեր չեն նվիրվել նաև հայ տարագիրների կյանքի նկարագրությանը («Ապուշ Կրպոն» և այլն)։

«Հասկերի» խմբագրությունը երեխաներից նվիրաբերություններ է ընդունել Ադանայի ջարդերից տուժածների օգտին։ Այդ առթիվ ընթերցողներին ուղղված կոչ-դիմումում գրված է. «Փոքրիկ ընթերցողներ, չը մոռանաք, որ ամեն մի կոպեկ ձեր դժբախտ երեխաների և քույրերի համար ահագին մխիթարություն և օգնություն է։ Օրեցօր ավելի ու ավելի սոսկալի լու-

---

[48] «Հասկեր», 1913, № 4, էջ 116—125։

րեր են գալիս Ադանայի աղետեալների մասին։ Սփոփեցեք նրանց վշտերը»[49]։

Խաղաղասիրության, եղբայրասիրության, բարեկամության գաղափարներով են հագեցած հատկապես ամսագրի 1914 թ. համարների նյութերը։ Դրանցում այն միտքն էր անցկացվում, որ թեպետ համաշխարհային պատերազմը շարունակվում էր, այնուհանդերձ թե՛ ավստրիացի, թե՛ ֆրանսիացի, թե՛ այլ երկրների հասարակ զինվորներն իրար հանդեպ համակված էին դրացիական, բարեկամական զգացումներով։

«Հասկերի» էջերում մեծ տեղ են գրավել ռուս և արևմտաեվրոպական գրողները, մշակույթի գործիչները։ Այստեղ տպագրվել են Նեմիրովիչ-Դանչենկոյի («Մահմեդի զավակները»), Լև Տոլստոյի («Հանկարծ», «Երկու վաճառական», «Պառավ ձին», «Երեխաների համար»), Չեխովի («Օհանը»), Կռիլովի, Պլեշչեևի և ուրիշների ստեղծագործությունները։ Ուշագրավ է այն, որ առանձին բաժին է նվիրված Ուկրաինայի ազատաշունչ բանաստեղծ Տարաս Շևչենկոյի 100-ամյակին[50]։ Պարզ և անպաճույճ լեզվով ամսագիրը ծանոթացնում է մեծ երգչի՝ «անմոռանալի Տարասի» մանկությանն ու պատանեկությանը։ Տեքստը պատկերազարդ է։ Տպագրված են մեծ բանաստեղծի դիմանկարը, գերեզմանը պատկերող նկարը և մի նկար հեռակայ մակագրությամբ. «Կոբզարը (աշուղը) երգում է մալոռուսական գյուղում»։ Տեքստի վերջում տպագրված է նաև նրա «Կտակը» բանաստեղծությունը։

Ամսագրի էջերը զարդարել են նաև արևմտաեվրոպական գրողների ստեղծագործությունները (Վիկտոր Հյուգոյի «Խեղճ մարդիկ», Անդերսենի հեքիաթներն ու առակները և այլն)։ Որպես ամսագրի հավելված երեխաներին ձրի ուղարկվել են պատմվածքներ, վեպեր։ Այսպես, ամսագրի պատանի բաժանորդները ստացել են Պուշկինի «Քնած գեղեցկուհին», Մարկ Տվենի «Մահվան օղակը», Ամիրան Դարեջանիձեի առասպելները և այլ գեղարվեստական ստեղծագործություններ, ինչպես նաև բնագիտական, աշխարհագրական, ազգագրական պատկերազարդ ղրույցներ։

---

[49] «Հասկեր», 1910, № 1, էջ 4։

[50] «Հասկեր», 1914, № 5, էջ 153—157։

Ուշագրավ են «Հասկեր» ամսագրի բնույթյան երևույթների բացատրությանը նվիրված, կենդանական աշխարհին վերաբերող գիտամասսայական ակնարկներն ու զրույցները։ Դրանք գրված են մատչելի լեզվով և ունեն դաստիարակչական նշանակություն։ Գիտական զրույցների մեծ մասը պատկանում է գրող-բնագետ Ռուբեն Գաբրիելյանի գրչին։ Գիտամասսայական ակնարկներ են տպագրվել նաև պատմական թեմաներով։ «Գագիկ Ա Բագրատունի Հայաստանի թագավորը» ակնարկը պատանի ընթերցողին ծանոթացնում է Ն. Մառի՝ Անիում կատարած հնագիտական աշխատանքներին։

«Հասկերը», ինչպես բոլոր մանկական ամսագրերը, ուներ «Զվարճալիք», «Այլ և այլք», «Դեսից դենից» բաժինները։ «Զվարճալիք» բաժնում զետեղվում էին հանելուկները, մանկական խաղերը, խմբական երգերը, շուտասելուկները։ Նյութերի մեծ մասը պատրաստում էին Հ. Աղաբաբը, Համլիկ Թումանյանը, ինչպես և աշակերտները՝ Մարիամ Թումանյանի օգնությամբ։

Մանուկների համար նորություն էր «Իմ Հասկերը» ձեռագիր հանդեսը, որը խմբագրում էր նկարիչ Գևորգ Բաշինջաղյանը։ Նյութերը պատրաստում էին ընթերցողները։

«Հասկեր» ամսագիրն ուներ մանկավարժական բաժին, որ բաղկացած էր 24 էջից։ Առաջին երկու տարում այն լույս տեսավ յուրաքանչյուր համարին կից, իսկ հաջորդ տարիներին՝ որպես առանձին հավելված։ Այս բաժնում էին տպագրվում խմբագիր-հրատարակչի՝ Ստ. Լիսիցյանի և ժամանակի մանկավարժների ու գրողների հասարակական, քաղաքական, մանկավարժական հայացքները լուսաբանող հոդվածները։ Առաջին իսկ համարին կից մանկավարժական բաժնում լույս տեսած Ստ. Լիսիցյանի «Կյանքն ու դպրոցը» հոդվածը ուշագրավ երևույթ էր ժամանակաշրջանի հասարակական կյանքը հարազատորեն ներկայացնելու տեսակետից։ Առաջադեմ մանկավարժ Ստ. Լիսիցյանը քննադատաբար էր անդրադառնում իրենց դարն ապրած հասարակական հոսանքների, հատկապես պահպանողականների գործունեությանը։ Նա գտնում էր, որ սխալվում էին պահպանողականները, կարծելով թե կարելի կլիներ հետու պահել հայկական կյանքն այն

հոսանքներից, որոնք «արմատական փոփոխությունների էին ենթարկել բոլոր քաղաքակիրթ ազգերին»։ Մերժելով նրանց այն տեսակետը, ըստ որի ազգության հիմքը համարվում էր լեզուն և կրոնը, և քննադատելով ընդհանրապես նրանց հնացած հայացքները. նա գրում էր. «Պահպանողականներն աշխատում էին կարկատաններով, այս կամ այն երկրորդական կետում ղիջում անելով կյանքին, փրկել իրենց աշխարհայեցողության ամբողջությունը. բայց սրանով միմիայն ավելի արագացրին իրենց անկումը։ Եվ ահա այսօր կյանքի օրինական պահանջները ճանաչել չը ցանկացող այդ կուսակցությունը մի տեսակ հալվել, անհետացել է»[51]։ Կյանքի առաջընթաց զարգացումը նոր պահանջներ և խնդիրներ էր դնում ազգի առջև, յուրաքանչյուր ընտանիքի և դպրոցի առջև։ Ազգության ամբողջությունը պահպանելու համար, ինչպես Ստ. Լիսիցյանն է գրում, «պետք է ավելի իրական, ավելի ազդու միջոցներ գտնել, քան թե լոկ լեզուն է և կրոնը»։ Ապա գտնում է, որ «Պետք է տալ երիտասարդ սերնդին այնպիսի գիտելիքներ, որ նա այլևս, մի կողմ ձգելով գուցե և հրապուրիչ նախապաշարմունքները, կույր չը շրջե բնության և մարդկանց մեջ և ճիշտ որ կարողանա պահպանել իր անձնական և ազգային ինքնուրույնությունը»[52]։

Մատաղ սերնդի դաստիարակության գործում մեծ կարևորություն էր տրվում դպրոցին և ընտանիքին։ Ամսագիրը հետևողական պայքար էր մղում դպրոցական գործը բարելավելու ուղղությամբ։ 1905 թ. օգոստոսի 1-ին Նիկոլայ II-ի կողմից ընդունված՝ հայ եկեղեցական գույքը վերադարձնելու և եկեղեցական-ծխական դպրոցները վերաբացելու մասին հրամանագրի հաստատումից հետո որոշ իրավունքներ են տրվում դպրոցներին։ Հավանաբար այդ հրամանագիրը նկատի ուներ ամսագիրը, երբ գրում էր. «Արթնացավ հասարակական ոգին, որը վերջապես քաղաքացիական քաջություն ունեցավ համարձակ վեր կենալու և սեփական ուժերով իրականացնելու ապագայի հիմունքները, անհնարին է, որ աչքաթող աներ Ռուսաստանի դպրոցական կյանքի թերությունները և չփորձեր

51 «Հասկեր», 1905, № 1, Մանկավարժական բաժին, էջ 4։

52 Նույն տեղում։

կյանք ներշնչել նաև երիտասարդ սերնդի կրթության գործին, որից մինչև այսօր պետությունը դիտմամբ հեռու էր պահել ժողովրդի դիտակցող տարրերը»[53]: Նույն տեքստում հեղինակը (Ստ. Լիսիցյան) անդրադառնում է ծնողների ու դպրոցի միջև եղած կապի ամրապնդման, ծնողական խորհուրդների աշխատանքների կազմակերպման հարցերին:

Դպրոցական կանոնադրության նկատմամբ ցուցաբերելով քննադատական վերաբերմունք, Լիսիցյանը գրում է. «Եկե՛ք դպրոց, ուր մենք զանազան իրավունքներ խոստանալով և խեղդելով ամեն մասնավոր ձեռներեցություն, բոնի հավաքել ենք մեր երեխաներին, և օգնեցեք մեզ, խոսեցեք որքան ցանկանում եք, վճռեցեք ինչ ուզում եք, բայց բանը, որ գործադրելուն գա, չհանդգնեք ոչինչ ասել: Ոչ թե մենք՝ ուսուցիչներս պիտի գնանք ձեզ հետ, այլ դուք՝ ծնողներդ պիտի գաք մեզ հետ, և մենք ենք ձեր զավակների լիակատար տերը»[54]: Իհարկե, պետությունը մի կողմից դպրոցներին տալիս էր որոշ իրավունքներ, մյուս կողմից ուժեղացնում էր հսկողությունը մատաղ սերնդի դաստիարակության գործի կազմակերպման վրա:

«Հասկերի» էջերում մեծ նշանակություն էր տրվում նաև մատաղ սերնդի գեղագիտական դաստիարակությանը: «Նկարչությունը ընտանիքում», «Մանկապարտեզն ընտանիքում» և այլ հոդվածներում բարձր է գնահատվում նկարչության ուսուցման դերը երեխաների թե՛ ֆիզիկական, թե՛ իմացական և թե՛ բարոյական կյանքի զարգացման գործում:

Գ. Լևոնյանը, որի գրչին են պատկանում գեղագիտական դաստիարակության հարցերին նվիրված հոդվածները, գտնում է, որ նկարչության, երգ և երաժշտության ուսուցումը քնքշացնում է երեխայի զգացմունքները, աղնվացնում նրա հոգին, կրթում ճաշակը:

«Հասկերի» էջերում մեծ տեղ է տրվում նաև ֆիզիկական դաստիարակության հարցերին: Մանկավարժ Գուրգեն Էդիլյանը իր «Ուսումնարան և մարմնամարզություն»[55] հոդվածում

---

[53] «Հասկեր», 1905, № 3—4, Մանկավարժական բաժին, էջ 66—68:

[54] Նույն տեղում:

[55] «Հասկեր, 1905, № 2, Մանկավարժական բաժին, էջ 37—47:

պահանջում է հիմնել մարզարաններ, ուսումնարաններում պարտադիր դարձնել մարմնամարզություն առարկայի դասավանդումը։ «Իդեալական ուսումնարանը հոգեպես և մարմնապես,— գրում է նա,— առողջ և նորմալ սաներ պետք է տա մարդկությանը, խեղաթյուրվածները չեն կառավարում կյանքը, այլ առողջ ոգիները և բազուկները»[56]։ Մեկ այլ՝ «Ֆիզիկական կրթության սիստեմը Ճապոնում» հոդվածում[57] առավել սուր է դրվում հայ մատաղ սերնդի ֆիզիկական դաստիարակության խնդիրը։ Հոդվածագիրը հարցի կարևորությունը կապում է քաղաքական իրադարձությունների հետ, դտնելով, որ 1905 թ. ռուսական հեղափոխության ժամանակ հայ երիտասարդների սուվար մեծամասնությունը չի կարողացել ունենալ հոդեկան այն տոկունությունը, որը անհրաժեշտ էր «արյունալի փորձությունից դուրս գալու և կյանքը նոր սկզբունքներով վերանորոգելու համար»[58]։ Հեղինակը քննադատում է հայկական դպրոցներում տիրող կրթական սիստեմը, որը «պատրաստում էր թուլակազմ, ջղային, առանց կամքի և դիմացկունության, շուտով ընկճվող և հուսահատվող սերունդ»[59]։

«Հասկերի» խմբագրությունը մանկավարժական բաժնում տպագրված հոդվածներից բացի, որպես ամսագրի հավելված «Մանկավարժական գրադարան» ընդհանուր խորագրի տակ հրատարակում էր մանկական հոգեբանությանը և ընտանեկան դաստիարակությանը նվիրված գրքեր (Հենրիկ Վերնիցի «Երեխայի կրթությունը մինչև վեց տարեկան հասակը», Կ. Ելնիցկու «Սովորություններ և նրանց նշանակությունն ու կրթությունը» և այլն)։

1915 թ., անկասկած, պատերազմական իրադարձությունները խմբագրին կանգնեցնում են տպագրական դժվարությունների առջև։ Այդ առթիվ խմբագիրը հայտարարում է. «Չնայած մեր հայրենիքի տագնապներին և պատերազմից առաջացած տպագրական դժվարություններին, վարչությունս կարողացավ լրիվ լույս ընծայել բոլոր խոստացած համար-

56 Նույն տեղում, էջ 43։

57 Նույն տեղում, № 3—4, Մանկավարժական բաժին, էջ 66—68։

58 Նույն տեղում, էջ 66։

59 «Հասկեր», 1905, № 3—4, Մանկավարժական բաժին, էջ 66։

նները»[60]: Այդ թվականին լույս է տեսել 6 համար, յուրաքանչյուր երկու ամիսը մեկ անգամ: Հաջորդ տարում լույս է տեսել ընդամենը 3 համար, առանց ամսաթվի: Յուրաքանչյուր համարի վրա նշված է 1916—1917 թվականը: 1922 թվականին վերահրատարակվում է ամսագիրը, բայց լույս է ընծայվում միայն մեկ համար:

«Հասկերը» իր գոյության ամբողջ ընթացքում (1905—1917, 1922) ստեղծեց մանկական ընթերցանության հարուստ նյութ՝ հագեցված դեմոկրատիզմի, հումանիզմի, ինտերնացիոնալիզմի, ժողովրդասիրության վառ գաղափարներով: «Հասկերը» ստեղծեց ընթերցանության այնպիսի նյութ, որը համապատասխանում էր մանկավարժ Հ. Տեր-Միրաքյանի կողմից դեռ դարասկզբին մշակված հետևյալ դրույթին. «Մանկական ընթերցանությունը իր թեթև ձևով լուրջ պետք է լինի, որպեսզի մանուկն զգա, որ նրանից բեղմնավորվելով կազդուրվում են իր մտավոր ուժերը, որ նա անհատնում ուրախության աղբյուր է»[61]:

«Հասկերի» խմբագիր Ստ. Լիսիցյանը անցյալի հայ մանկական ամսագրերի այն խմբագիրներից է, որ գրական ասպարեզ է հանել անվանի մանկագիրներին, զարգացման մի նոր աստիճանի վրա դնելով նախահոկտեմբերյան շրջանի հայ մանկական գրականությունը: Ստ. Լիսիցյանի հասարակական, մանկավարժական, գիտական գործունեությունը սերունդների համար փայլուն օրինակ է: Համառոտակի ուրվագծենք հայ ժողովրդի մեծ երախտավորի կյանքի և գործունեության անցած ուղին:

Ստեփան Լիսիցյանը[62] ծնվել է 1865 թ. սեպտեմբերի 22-ին, Թիֆլիսում: Սովորել է տեղի գիմնազիայում: 1889 թ. ավարտել է Վարշավայի համալսարանի պատմաբանասիրական ֆակուլտետը: Վերադառնալով հայրենիք, նա երկու տարի որպես ուսուցիչ աշխատել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում: 1891 թ. ազատվել է աշխատանքից՝ մեղադրվելով

60 Նույն տեղում, 1915, № 6, էջ 32:

61 «Մուրճ», 1893, № 9, էջ 1209:

62 Կենսագրական տվյալները վերցված են Ստ. Լիսիցյանի ինքնակենսագրությունից (Ձեռագիր):

ճեմարանի վարչության դեմ ուսանողական ելույթներ կազմակերպելու մեջ։

Ստ. Լիսիցյանը 1894—1915 թթ. պաշտոնավարել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում։ Միաժամանակ 1905—1917, 1922 թթ. խմբագրել ու հրատարակել է «Հասկերը», հանդես գալով Սագալյան, Պ. Ս. Կ., Ս. Լ. և այլ կեղծանուններով։

Ստ. Լիսիցյանը սիրել է մանկավարժական աշխատանքը և ամբողջ կյանքը նվիրել դրան։ Նա կազմել ու հրատարակել է ուշագրավ դասագրքեր։ Հայտնի է Հ. Թումանյանի՝ Լ. Շանթի հետ կազմած «Լուսաբեր» դասագիրքը։ Այն 1911 թ. լույս է տեսել նաև Կոստանդնուպոլսում՝ արևմտահայ երեխաների համար։ «Լուսաբերը» հրատարակվել ու վերահրատարակվել է մինչև 1923 թվականը, մեծ տպաքանակով։

1911 թ. Լիսիցյանը մասնակցել է իր կնոջ՝ Կատարինե Լիսիցյանի հիմնադրած գիմնազիայի ղեկավարման աշխատանքներին։ Դասընթացների կազմակերպման ժամանակ նա օգտագործել է արևմտաեվրոպական մանկավարժների փորձը, որին ծանոթացել էր Շվեյցարիայում, Ֆրանսիայում, Ավստրիայում, Գերմանիայում։ Վրաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո գիմնազիան վեր է ածվել տեխնիկումի, որի վարիչն է եղել Ստ. Լիսիցյանը։ 1924 թ. տեխնիկումը կազմալուծվելուց հետո Լիսիցյանն ընտրվել է Վրաստանի Լուսժողկոմատին կից գիտական խորհրդի անդամ։

Ստ. Լիսիցյանը 10 տարի շարունակ (1893—1903) եղել է «Թիֆլիսի հայկական հրատարակչական ընկերության» խմբագրական հանձնաժողովի քարտուղար-անդամը։ Նա հրատարակել է հեղափոխական ոգով գրված ծավալուն վեպեր («Մի գյուղացու պատմությունը», «Բոռը», «Գյուղացի Բյուտնարը» և այլն)։ Նրա խմբագրությամբ լույս է տեսել Ստ. Շահումյանի թարգմանած Կ. Մարքսի «Վարձու աշխատանք և կապիտալ» աշխատությունը։ Ստ. Լիսիցյանը լեհերենից թարգմանել է Հ. Սենկևիչի «Հո՞ երթաս», Տիմիրյազևի «Դարվինը և նրա ուսմունքը» և այլ գրքեր։ Նրա խմբագրած և հրատարակած գրքերի թիվը հասնում է 200-ի։

1924 թ. հայտնի մանկագիրն ու մանկավարժը տեղափոխվել է Երևան։ Այստեղ ընտրվել է Հայաստանի Լուսժող-

կոմսատի մեթոդ-բյուրոյի անդամ և դարձել Երևանի պետական համալսարանի առաջին դասախոսներից մեկը: Նա ունի մի շարք գիտական աշխատություններ, որոնք նվիրված են գյուղատնտեսական ազգագրությանը: Նախընտրած բնագավառում ուսումնասիրությունները խորացնելու նպատակով նա եղել է Կոստանդնուպոլսում, աշխատել է Վիեննայի Մխիթարյանների գրադարանում:

Ստ. Լիսիցյանը մանրազնին ծանոթացել է Հայկական լեռնաշխարհի և հարևան վայրերի աշխարհագրությանը: ՀՍՍՀ ֆիզիկական աշխարհագրությանը նվիրված նյութերը 1940 թ. լույս է ընծայել առանձին գրքով: Նա միաժամանակ մասնակցել է Լինչի «Հայաստան» գրքի (I և II մասեր) թարգմանության գործին:

Անվանի ազգագրագետը եղել է «ՀՍՍՀ աշխարհագրական ընկերության» կազմակերպիչներից մեկը և նրա վարչության անդամը, երկու տարուց ավելի կատարել է այդ ընկերության նախագահի պարտականությունները:

1928 թ. Ստ. Լիսիցյանը ղեկավարել է Հայաստանի պետական թանգարանի ազգագրության բաժինը: Նրա նախաձեռնությամբ գիտարշավներ են կազմակերպվել Լեռնային Ղարաբաղ, Մեղրի, Աշտարակ, Սիսիան, Գորիս, Լենինական և այլ վայրեր՝ ազգագրական տվյալներ և թանգարանային նյութեր հավաքելու համար: Նա լույս է ընծայել «ՀՍՍՀ ֆիզիկական աշխարհագրությունը», «Ազգագրական հարցարան» և այլ ձեռնարկներ: 1969 թ. լույս տեսավ նրա «Ջանգեզուրի հայերը» աշխատությունը: Գիտական և մանկավարժական երկարամյա բեղմնավոր գործունեության համար 1941 թ. նա ստացել է պրոֆեսորի, իսկ 1945 թ.՝ գիտության վաստակավոր գործչի կոչումներ:

Ստ. Լիսիցյանը մահացել է Երևանում, 1947 թվականին:

«ՀԱՅԿՈՒՆԻ»
(1910—1912)

Մարզվանի մի խումբ հայ մտավորականներ Գագիկ Օզանյանի խմբագրությամբ լույս են ընծայում «Հայկունի»

գրական-գեղարվեստական ամսագիրը։ Հանդեսի հիմնական խնդիրն էր՝ մշակել գրական ճաշակ հայ պատանիների մեջ և նրանցից պատրաստել պիտանի քաղաքացիներ։ Որպես գործունեության նշանաբան հանդեսի համար ծառայում էին Գյոթեի «Լույս, ավելի լույս» խոսքերը։

«Հայկունին» լույս էր տեսնում հարուստ ծրագրով։ Խմբագրական հոդվածներից մեկում գրված էր. «Չմտածված, վայրկենական ձեռնարկ մը չէ «Հայկունիին» հրատարակությունը. ոչ ալ գրական քմահաճույքներու արդյունքը։ Անիկա գործնականացման սկզբնավորությունն է խորհված, կշռված ու հաշվի առնված ծրագրի մը, որ կոչված է որոշ դեր մը կատարել մեր նորահասներու կյանքին մեջ»[63]։ Համանաբար գրաքննական արգելքներից խուսափելու նպատակով հայտարարված է. « «Հայկունի» կուսակցական ոչ մեկ հանգամանք ունի։ Անոր համար ոչ կուսակցական խոիր կա և ոչ ալ խնդիր։ Անիկա կպատկանի մեկ կուսակցութեան միայն,—նորահաս երիտասարդներու և պատանիներու կուսակցութեան»[64]։

«Հայկունին» ուներ վարչական ու խմբագրական մարմիններ։ Առաջինը կոչված էր ապահովելու նյութական կողմը, իսկ երկրորդը՝ իրականացնելու գրական-խմբագրական աշխատանքները։ Խմբագրական կազմի մեջ էին մտնում օր. Պերճուհի Շատմերյանը, Մամիկոն Վարժապետյանը, Անդրանիկ Գնունին, Նշան Ենիճեյլյանը, Թադեոս Ժամկոչյանը, Արամ Գազանճյանը և Գագիկ Օզանյանը (խմբագիր)։

Ամսագիրն ուներ հետևյալ բաժինները՝ գիտական, պատմական և կենսագրական, գրական և բանաստեղծական, հայապատում, հայուհիին, քաղաքացիական, մեր հարևանները, լուսաբանական էջեր, օտար էջեր, գեղարվեստական, բեմական գոհարներ, դպրոցական կյանք, մամուլ և գրախոսական։ Այս ծրագիրն ուներ մեկ ընդհանուր նպատակ՝ ազգային ինքնագիտակցության ոգի արթնացնել պատանիների ու երիտասարդության մեջ։ Խմբագիրը և խմբագրական մարմնի անդամներն ազգային կյանքի զարգացման խնդիրները կապում էին սահմանադրության և սահմանադրական կարգերի հետ։

63 «Հայկունի», 1910, № 1, էջ 1։

64 Նույն տեղում, էջ 2։

«...Նախասահմանադրական ռեժիմի օրով օսմանյան քաղաքացիներ չէինք,— գրում էին նրանք,— այլ պարզապես սարուկներ, որոնք կապրեին միմիայն բռնակալ կառավարության մը քմահաճույքներուն հագուրդ տալու համար այս կամ այն կերպով, որով շատ հաճախ իրենց կյանքը, պատիվն ու ստացվածքը վրա կուտային»[65]:

Ամսագրում տպագրված «Քաղաքացիական կրթություն» հոդվածաշարում մանրազնին քննարկվում են այն պայմանները (միջավայր, մարդկային փոխհարաբերություններ, նյութական ու կուլտուրական միջոցներ և այլն), որոնց մեջ ձևավորվում է անհատի բարոյական կերպարը: Անհատը, որ ապրում է հասարակության մեջ իր անձնական ու հասարակական կյանքով, պետք է ծառայի ընդհանուրի, ժողովրդի երջանկությանը: «Աշխարհի մեջ գոյություն ունեցող ամեն բան, թե՛ բնական արտադրություններ, թե՛ մարդուն հանճարեն ծնունդ առնող արվեստական կամ գեղարվեստական արտադրություններ և թե՛ մարդկային զանազան կազմակերպություններ, պետք է անպայման ձգտին առաջ բերելու երջանկություն»[66]: Եվ քանի որ հասարակական կյանքի նպատակը երջանկություն հայթայթելն է, ուրեմն «աշխարհի բոլոր հասարակությունները իրենց հավաքական ուժերով ու ծրագրած միջոցներով» պետք է ձգտեն դրան՝ «իրենց կոչումին ծառայած ըլլալու համար»: Խմբագրության կարծիքով անցել էին այն ժամանակները, երբ «Համիդ սպանել կուտար հայը, կողոպտել կուտար հայուն տունը, կը բանտարկեր, կը խոշտանգեր և հայուհիներու պատիվը կը բռնադատեր...»[67]: Նրանք միամտորեն հավատում էին երիտթուրքերի սահմանադրության մեջ գրված խոսքերին, նրանց կեղծ խոստումներին, հայ ազգային կյանքում նրանց կողմից կատարված ժամանակավոր բարեփոխումներին (կառավարական շրջաններում հայերին պաշտոններ տալը և այլն): Ամսագիրը հորդորում էր հայ պատանիներին՝ սովորել նաև օսմանյան լեզուն՝ կառավարական

---

65 Նույն տեղում, էջ 5:

66 «Հայկունի», 1910, № 3, էջ 42:

67 «Հայկունի», 1911, № 16—18, էջ 264:

շրջաններում պաշտոններ գրավելու նպատակով։ Ըստ ամսագրի, նախկինում նորահասը ատեց այդ լեզուն, որովհետև այդ լեզվով «բռնապետը հայհոյեց իր սրբություններըը», որովհետև դրանով «գրվեցան բյուրավոր անմեղներու չարաչար կոտորման պիղծ հրամանները», «կատարվեցան շատ մը դավադրություններ»[68]։

Ամսագրի հրատարակիչների համոզմամբ «պետական-վարչական ու քաղաքական ճնշումը երբ կը դադարի, կամ կը մեղմանա, անոր կը հաջորդե տնտեսական գործունեության ուղին մը, որուն մեջէն պիտի քալե խեղճ ժողովուրդը՝ կողոպտված, հարստահարված ու փշացած բոլորովին՝ բռնապետական հիդրային այլազան գործակատարներէն»[69]։

Այն հանգամանքը, որ հայկական դպրոցների «է» կարգի շրջանավարտներին թույլատրվում էր հաճախելու պետական դպրոցների դասընթացները, մեծ հույսեր էր ներշնչում «Հայկունի» հանդեսի խմբագիր-հրատարակիչներին, որոնք ոգևորված գրում էին. «Վերածնող հայրենիքը կը սպասէ իր նորահաս ուժերէն, որ նոր գաղթականութեամբ մը, նոր ուսանողական արշավանքով մը դեպի Նոր-Աթենքը, Նոր-Բյուզանդիոնը լեցվին և տարիներ հետո, ծանոթություններով զարգացած՝ վերադառնան, որոնց այնքան պետք ունի, այնքան կարոտը կը քաշե»[70]։ Նրանք դրա մեջ տեսնում էին նաև հասարակական կյանքում որոշ իրավունքներ ձեռք բերելու հեռահար նպատակներ, գտնելով, որ վերջապես կլուծվի «ըստ բուն վիճակին վերջ մը տալով, զայն գիտակցության բերելու և իր դերին մեջ դնելու հարցը»։

Ամսագրի էջերը պարբերաբար ծանոթացրել են ընթերցողին հայ ժողովրդի պատմությանը։ Այստեղ է տպագրվել Գաղիկ Օզանյանի «Հայուն պատմական դերը» աշխատությունը, որը լույս է տեսել նաև առանձին գրքույկ[71]։ Գրքում, ինչպես հեղինակն է գրում, «փորձ է արվում ընդգրկելու հայ ցեղին

---

68 «Հայկունի», 1911, № 6, էջ 81։

69 «Հայկունի», 1911, № 5, էջ 65—66։

70 «Հայկունի», 1911, № 6, էջ 84։

71 Գ. Օզանյան, Հայապատում, Հայուն պատմական դերը, Մարզվան, 1912։

պատմության մեջ տիրող ընդհանուր ոգին, ձգտումը և սեփական նկարագիրը, վերլուծելով պատմական բոլոր եղելությունները և անոնցմե հանելով եղրակացություններ»։

Աշխատությունը պատմական փաստերի լոկ շարադրանք չէ, այլ ցույց է տալիս, թե հայ ազատամարտիկների առաջապահ գունդը ինչ ձևերով է պայքարել թուրքական բռնապետության դեմ, ինչպես է նպաստել ազգային կյանքի պահպանման վեհ գործին։ Ամսագիրը էջեր է նվիրել և այն հայագետների (Պիեռ Քիյեաո[72] և ուրիշներ) կյանքի և գործունեության լուսաբանմանը, որոնք պաշտպանել են հայկական դատը և հայ ժողովրդի հարուստ անցյալն ու «հայոց տառապանքներու պատկերն ուրվագծել են քաղաքակիրթ աշխարհին առջև»։ Այդ տեսակետից արժեքավոր էր Ամերիկայում անգլերեն լույս տեսած «Արմենիա» թերթի դերը։ Անդրադառնալով թերթի գործունեությանը, ամսագիրը գրում է. «Այդ գեղազանցապես օգտակար ու գնահատելի ձեռնարկներեն մին էր նաև Ամերիկայի մեջ հիմնված անգլերեն «Արմենիա» թերթը, որ կոչված էր մեծ դեր կատարելու անգլախոս աշխարհին մեջ՝ ծանոթացնելով հայ ժողովուրդն այն բոլոր քաղաքակրթյալ ժողովուրդներուն, որոնք բոլորովին հեռու մեր երկրեն, առիթը չունեին մոտ ճանչնալու այս ցեղը...»։

«Հայկունին» թե՛ նախորդ, և թե՛ իր ժամանակի մանկապատանեկան պարբերականների մեջ առաջինն էր, որ բարձրացրեց հայ ժողովրդի պատմության հարցերը, որ հայ պա-

---

72 Պիեռ Քիյեաո (1864—1912)։ 1893 թ. Կոստանդնուպոլսի Բերայի հայոց դպրոցում ֆրանսերեն է դասավանդել։ 1894թ., երբ Սասունի ապստամբության հետևից Տալվորիկի ու շրջակա վայրերի ահեղ ջարդը, որը ցնցեց ամբողջ աշխարհը, Պիեռ Քիյեաոը այդ մասին հոդված գրեց «Revue de Paris» թերթում։ 1896 թ. թուրք կառավարությունը բանտարկեց նրան, անվանելով «հայ խռովարար»։ Ազատվեց բանտից ֆրանսիական դեսպանի միջնորդությամբ։ Նրա մասին առաջին անգամ «Ծաղիկ» հանդեսում (1895) հոդված տպագրեց Արշակ Ջոպանյանը։ Նա հայկական դատը պաշտպանելու համար Փարիզում հիմնադրել է «Pro Armenia», կիսամսյա թերթը և 10 տարի շարունակ բողոքել «կարմիր գազանի»՝ սուլթան Աբդուլ Համիդի գազանությունների դեմ։ Սուլթան Աբդուլ Համիդը նրա դեմ դատ է բաց արել՝ իրեն «կարմիր գազան» անվանելու համար (Տե՛ս «Հայկունի», 1912, № 7, էջ 78—97)։

տանիներին ծանոթացրեց համիդյան դաժան ռեժիմին և դրա դեմ հայ զավակների մղած հերոսական պայքարին: Դրանով իսկ «Հայկունին» որոշակի դեր կատարեց նորահաս սերունդների քաղաքական-գաղափարական դաստիարակության կազմակերպման գործում:

Մեծ էր «Հայկունի» ամսագրի դերը մատաղ սերնդի բարոյական, գեղագիտական դաստիարակության բնագավառներում: «Ապրելու դեղարվեստը» (հեղինակ՝ Նշան Խորանյան) հոդվածաշարում բարոյական բարձր կերպար է համարվում նա, ով ունի վսեմ սիրտ, հրաշագեղ հոգի, «սիրո գողար նվագ լեղու»: Նրա համոզմամբ մարդկային հաստատակության մեջ կարևորը անհատի վարքագիծն է: «Ի՞նչ օգուտ ունի մարդուս նկարիչ ըլլալը, եթե իր մեջ հրաշագեղ հոգի մը չէ նկարած,... արձանագործ ըլլալը, եթե իր կյանքը առաքինության հոյակապ անդրին չէ կանգնած»[73]: Ամսագիրն անդրադառնում է նաև ժամանակի սոցիալ-քաղաքական կյանքի հարցերին. «Հոյակապ ապրանքներու, մեծադանգված ու փառավոր շենքերու մեջ չէ, որ կը կերավի քաղաքակրթությունը, այլ՝ աշխատավորներու խոնարհ ու համեստ գործատեղերուն մեջ, ուր դյուցազուններ կը նահատակվին անվերջ շահագործողական բիրտ ձեռքերու մեջ»[74]: Նման համարձակ մտքեր արտահայտելով, ամսագիրը միաժամանակ նպաստում է պատանիների ու երիտասարդության քաղաքական հայացքների ձևավորմանը:

«Հայկունի» ամսագրի էջերում զգալի տեղ է հատկացվում իգական սեռի դաստիարակության հարցերին: Ստեղծվում է առանձին «Հայկուհիին բաժինը», ուր տպագրված հոդվածներում բարձրացվում է այն միտքը, որ «կինն մը կրթել սերունդներ պատրաստել է»: Առաջ է քաշվում կնոջ ազատ, անկաշկանդ դաստիարակության հարցը: «...կինը ազատ տեսնել ընկերության մեջ,—գրված է այնտեղ,—ազատ՝ իր պատշաճ, օրինավոր ու կնավայել շարժ ու ձևերուն, նիստ ու կացին, ճաշակին, վայելչության և ըմբռնումներուն մեջ»[75]:

---

[73] «Հայկունի», 1911, № 5, էջ 69:

[74] «Հայկունի», 1911, № 12, էջ 179:

[75] «Հայկունի», 1911, № 7, էջ 103:

Ամսագրում ուշադրության են արժանացել նաև նախադպրոցական հասակ ունեցող երեխաների դաստիարակության հարցերը։ «Մանկանոցի սեմեն է, որ պիտի սահմանվի, և եթե մենք սրտանց մեր ազգի վերածնութեան գործին փափագողներ ենք, պետք է նվիրվենք նախ փոքրիկները զարգացնելու վսեմ գործին»[76]։ Մանկան երկրորդ օրորոցն է համարվում մանկանոցը, ուր արմատավորվում են մանկան մեջ «առողջ նկարագրի հիմունքները»։

«Հայկունին» դեռահասներին ծանոթացնում է արևելահայ և արևմտահայ գրողների ու հասարակական գործիչների կյանքին ու գործունեությանը (Շիրվանզադե, Մ. Նալբանդյան, Միսաք Մեծարենց, Ներսես Վարժապետյան, Խրիմյան Հայրիկ, Մատթեոս Իզմիրլյան և ուրիշներ)։ «Շիրվանզադեն,— գրված է ամսագրում,— ռուսահայ գրականության փայլուն աստղերեն մին է, և իբրև վիպագիր ու թատերագիր որչափ ծանոթ, համբավավոր, նույնչափ ալ վարպետ ու սիրված գրիչ մը, որ երեսուն տարիներե ի վեր գնահատելի գործունեություն մը ցույց տված է և իր որոշ ազդեցությունը ներգործած է ռուսահայ մտավորական ու գրական կյանքին մեջ»[77]։

Միանգամայն ճիշտ դիրքերից են գնահատված հեղափոխական-դեմոկրատ Միքայել Նալբանդյանի ստեղծագործությունները։ Նա համարվել է «Հայ ժողովրդի դարավոր սոսկության դեմ պայքարողը և անոր խոպան սրտերուն մեջ առաջին անգամ ազատության սերմերը ցանողներեն մին բանաստեղծ»։ «Հինգ հարյուր տարիներէ ասդին,— գրում է Արամ Օղանյանը,— լալկանութեան վարժված, սոսկացած ժողովրդի մը, որպիսին է հայ ժողովուրդը, ընդվզումի և ըմբոստության գոռ ձայնն էր, որ կը բարձրանար դեպի վեր, շատ վեր, ամպերեն ալ վեր, աստղերեն ալ վեր՝ սարսափեցնելու համար գահը այն Աստծոյն, որ մինչև այն ժամանակը խուլ էր ձևվացած նահատակ ժողովրդի մը հառաչներուն, ողբերուն ու աղաղակներուն։ Ահա այդ գոռ ձայնը, այդ հսկա շեփորը հնչեցնողը Նալբանդյանն էր, հայ ժողովրդի դարավոր սոսկ-

[76] «Հայկունի», 1911, № 12, էջ 183։

[77] Նույն տեղում, էջ 191—192։

կության դեմ պայքարողը և անոր խոպան սրտերուն մեջ առաջին անգամ ազատության սերմերը ցանողներեն մին»[78]։ Ամսագրի շուրջ համախմբված հեղինակների մոտ նկատվում է ազգային-ազատագրական գաղափարների ազդեցությունը։ Այդ մասին է վկայում Մ. Իսպիրյանի «Արաբ ֆէտայիներուն երգը»[79] բանաստեղծությունը.

Թող ծովեզերքն իտալացիք կաշկանդեն,
Անապատի ավազներուն արգանդէն
Սիմունին պես մահասարսուռ ու անգութ,
Ֆէտայիներս ահա կուգանք դունդագունդ»[80]։

Մարզվանից Արշակ Բուբունճյանը գրում է.

«Հայորդին եմ, Հայկա գարմին,
Ջավակը քաջ հավատարիմ
Ազգիս համար արյան գետէն
Անցնիլ կ՛ըղձամ անվախորեն[81]։

Այս և նման այլ բանաստեղծություններ ազգային-ազատագրական պայքարի ոգով էին դաստիարակում պատանի ընթերցողներին։

«Հայկունի» ամսագիրն էջեր էր տրամադրում նաև առօրյա կենցաղային հարցերի քննարկմանը («Առևտրական առողջ սկզբունքները», «Մարդու պետքը», «Պայքար ախտածին մանրեներու դեմ» և այլն)։

Ընդամենը երկու տարի գոյություն ունենալուց հետո ամսագիրը փակվում է։ Այն իր ժամանակին ինչ-որ չափով ծառայել է մատաղ սերնդի դաստիարակության գործին։ Դրանով իսկ ամսագիրն իր արժանի տեղն է գրավում հայ մանկապատանեկան մամուլի պատմության մեջ։

«Հայկունի» ամսագրի լույս տեսնելուց մեկ տարի հետո, 1911 թ. Մարզվանում հրատարակվում է «Բողբոջ» գրական-գեղարվեստական ամսագիրը։

---

78 «Հայկունի», 1912, № 13, 14, էջ 214։

79 «Հայկունի», 1912, № 10, էջ 147։

80 Նույն տեղում։

81 «Հայկունի», 1912, № 7, էջ 101։

«ԲՈՂԲՈՋ»
(1911—1914)

«Բողբոջը» լույս էր տեսնում ամիսը մեկ անգամ և տարածվում Թուրքիայի հայաբնակ բոլոր գավառներում։ Խմբագրում էր այն Մամիկոն Վարժապետյանը, տնօրենն էր Ալեքսանդր Սողկատյանը։ Մամիկոն Վարժապետյանն այն մտավորականներից էր, որոնք մեծ հույսեր էին կապում սահմանադրական կարգերի հետ և գտնում էին, թե «ամեն մարդ ազատ է ու պետք է որ այս պատեհություններեն օգտվի իր ընդհանուր զարգացման համար»[82]։ Գրականությունը համարելով հոգևոր կյանքի ընդհանուր զարգացման հիմնական ուղիներից մեկը, նա նպատակադրվում է ամսագրի էջերում հնարավորության սահմաններում մշակել գրականության զարգացման ճշմարիտ սկզբունքները, ստեղծել գրական սերունդ, որը կարողանար գոհացնել նորահաս սերնդի հոգևոր պահանջները։

Խմբագրությունը գավառներում ուներ իր գործակալները (Ամասիայում՝ Հայկ Սրապյան, Գոնիայում՝ Արամ Տիլտիլյան, Գասթեմունիում՝ Սեդրակ Սանթրոսյան, Էրզրումում՝ Վահրամ Վարժապետյան, Կյուրինում՝ Հովհաննես Եազլյան և ուրիշներ)։

Ամսագրի հիմնական նպատակն էր՝ հոգևոր և մտավոր քավարար սնունդ տալ գավառի երիտասարդությանը, թափանցել աշխատավոր, ընչազուրկ ժողովրդի զավակների շրջանները, արթնացնել նրանց մեջ սեր՝ հանդեպ գիրն ու գրականությունը։ «Անցյալին մեջ,— գրված է այնտեղ,— մենք գավառացիքս ամեն կերպով կաշկանդված, չէինք կրնար որևէ դիտակցական լուրջ շարժում մը ստեղծել ու մեր ընդհանուր ոահվիրան էր անկենդան ու փտած կենտրոնը։ Ու այսօր քանիսը մասնավոր չափով կրնանք ազատ շարժիլ, քաջալերենք գավառի պզտիկները, որոնք վաղը հայ գրականության փառքը պիտի կազմեն»[83]։

Ամսագրում առաջին իսկ համարից տպագրվում էին հոդ-

---

82 «Բողբոջ», 1912, № 2, էջ 20։

83 «Բողբոջ», 1911, № 4, էջ 60։

վածներ սկսնակ գրողների «մտքի թռիչքներին» սլացք տալու, նրանց քաջալերելու, ոգևորելու նպատակներով։ Խմբագրությունն այդ հոդվածների հեղինակներին խորհուրդ էր տալիս զգուշորեն արտահայտվել այս կամ այն հեղինակի «գրչի թերացումների» մասին, քանի որ անփույթ արտահայտությունները կարող էին հուսահատեցնել նրանց։ Խրախուսանքի լավագույն միջոցներից էր համարվում պատանիների գրական գործերին մամուլում տեղ տալը, կամ առանձին հրապարակելը։ «...ամեն մարդու անկեղծ վկայութեամբ հաստատված շատ պարզ իրականություն մըն է,—գրված է այնտեղ,—թե երբ իրենց որևէ մեկ գրվածքը արժանացած է հրատարակութեան, ու մանավանդ քիչ թե շատ ալ գնահատութեան, իրենք ներքին մեծ եռանդ մը զգացած են ուրիշ մը ևս գրելու, լավագույն մը ևս արտադրելու...»[84]։ Այդ առիթով խմբագիրը հիշում է իր սեփական փորձը[85]։

«Բողբոջը» առաջին հերթին օժանդակում էր նրանց, որոնք գրելու շնորհք ունեին, բայց տպագրվելու հնարավորություններ չունեին։ Նրանք այն պատանիներն էին, որոնց կյանքը նետել էր «գործի կոշտ ու կոպիտ խավերուն մեջ»։

Գիտակցելով ամսագրի դերն ու նշանակությունը, իրենք՝ պատանիները գրում են. «Այսօր «Բողբոջը» մեր՝ հայ արհեստավոր պատանի դասակարգին առջև կբանա ասպարեզ մը, ուր մենք պարտինք մտնել, որպեսզի հայ գրականության մեջ զարգացած հրիտասարդներ ըլլանք, իսկ եթե անտարբեր. պաղ վերաբերում մը ունենանք, դարձեալ պիտի մնանք առաջվա թերուս արհեստավոր դասակարգը»[86]։

«Հայկունի» ամսագիրը մեծ հույսեր էր կապում «Բողբոջի» հետ, գրելով. «Ինքնին գնահատելի ձեռնարկ մը անշուշտ, որ կոչված է որոշ դեր մը կատարել դպրոցականներու կյան-

[84] «Բողբոջ», 1911, № 1, էջ 2։

[85] 1886 թ., 16 տարեկան հասակում Մամիկոն Վարժապետյանն իր առաջին բանաստեղծությունը «Հարց մը առ կույս» ներկայացնում է «Մասիսի» խմբագիր Արփ. Արփիարյանին։ Վերջինս հորդորում է նրան գրել արձակ և չափածո գործեր՝ «Մասիսի» մեջ հրատարակելու համար։ Հետևանքը լինում է այն, որ «Մասիսը» իրար հետևից տպագրում է Մ. Վարժապետյանի գրական ստեղծագործությունները։

[86] «Բողբոջ», 1911, № 1, էջ 5։

քին մեջ։ Կհուսանք, թե դպրոցականներ և սկսնակներ պիտի բոլորվին անոր շուրջը»[87]։

«Բողբոջի» նպատակն էր թափանցել աշխատավոր խավերի «արհեստանոցները, լինել երկաթագործին մուրճին քով, հյուսնին ուրագին մոտ» ցույց տալու համար իրական կյանքի ճշմարիտ պատկերը։ Թադևոս Ժամկոչյանն իր «Ինչ և ինչպես պետք է գրել» տեսական հոդվածում առաջարկում էր գրելու համար «գրական հին ճամփան թողնելով, նորը ընդգրկել», ունենալ «իրերն ու երևույթները դիտող ոդի», և «շրջապատող նյութերուն պատկերները կանոնավորապես դասավորելու կարողություն»։ Այստեղ հեղինակը անդրադառնում է ճշմարիտ արվեստի հարցերին, համոզված լինելով, թե սահմանադրական կարգերի հաստատմամբ նոր հեռանկարներ են բացվել, զարգացման ազատ շրջան է սկսվել գրականության համար։ «...գրել, ճշմարիտ գրականության հետևիլ,—գրված է ամսագրում,—այս է ամեն դպրոցականի, ամեն զարգացականի պարտքն ու պահանջը, վասնզի գրիչը՝ հրաշագործ ձեռքի մոգական այդ ամենաճարտար գավազանն է, որ կարող պիտի ըլլա հին կարգերու և հին ունակություններու ժանգոտ շղթաները խորտակել, և այդպես բանալ վաղվան պայծառ արշալույսը»[88]։

Ամսագրի խմբագիրը համոզված այն բանում, որ լուսավոր գաղափարների տարածումը միայն բավական չէ կյանքը վերափոխելու համար, գտնում է, որ ժամանակը պահանջում է «գործել՝ երազելէ ավելի»։ «Գործ՝ ոչ թե խոսք,—ասված է այնտեղ,—ահա ներկա մարդկութեան նշանաբաններէն մին ալ»[89]։ Հայորդիների մեջ հայրենասիրության կրակն վառ պահելու միտումներով նա ամսագրին աշխատակցող սկսնակ բանաստեղծներից պահանջում է արցունքի փոխարեն «ժպիտի երգը երթռռացնել», քանի որ այդ է «կյանքի հրամայական պահանջը»[90]։ Հոռետեսական տրամադրություններ արտահայ-

87 «Բողբոջ», 1911, № 6, էջ 95։

88 «Բողբոջ», 1911, № 1, էջ 7։

89 «Բողբոջ», 1911, № 3, էջ 36։

90 «Բողբոջ», 1911, № 5, էջ 82։

տող բանաստեղծություններից մեկի հեղինակին խմբագիրը պատասխանում է այս քառյակով.

«Թե ես ըլլայի երիտասարդ քեզ նման,
Փոխան լացի, կը գոռայի «Մա՛յր, երգե՛,
Հայ քաջ տղուն ռազմի երգը աննման,
Ես չեմ վախնար մարտէ, մահէ ու վերքէ»[91]:

Ամսագրի էջերում գովերգվել է Սասունի ազատագրական պայքարը («Սասուն»[92] և այլն), տպագրվել են «Ազատորդի ուսանողական միության» քայլերգը (հեղինակ՝ Մ. Վարժապետյան), «Հայուհիին աղոթքը» և ազատաշունչ ոգով գրված այլ բանաստեղծություններ:

Ամսագրի էջերում պայքար էր ծավալվում դաստիարակության հին սիստեմի դեմ, որը պատրաստում էր կամազուրկ, հլու-հնազանդ, «ամեն բան ծնողքներեն, ուսուցիչներեն, պատրիարքարանեն և կառավարությունեն սպասող» սերունդ:

«Բողբոջ» ամսագիրը քննադատաբար էր անդրադառնում բուրժուական աշխարհի արատավոր երևույթներին, ցույց տալով մարդկային փոխհարաբերություններում տեղ գտած եսասիրության, փառամոլության վնասաբեր հետևանքները: «Անհատներ, թե ժողովուրդներ,—գրված է ամսագրում,—զարգացման որ մակարդակին վրա ալ գտնվին, երբ զուրկ են ինքնաճանաչության խոհականութենեն, երբ կանգիտանան Սոկրատի ավանդած այդ բարձրագույն իմաստության կարևորությունը ու կանսան սոսկ ճղճիմ ես-ին, անխորհուրդ անձնասիրության և հիմար փառամոլության մղումներուն, իրենց պարտությունն ու անկումը, իրենց ձախողությունն ու կորուստը անխուսափելիորեն վրա կհասնի, վաղ, թե անագան»[93]:

Իր էջերում սկսնակ երիտասարդ գրողներին մեծ տեղ տալու համար ամսագիրը քննադատվել է ժամանակի մի շարք մտավորականների կողմից[94]:

---

[91] «Բողբոջ», 1911, № 8, էջ 128:

[92] «Բողբոջ», 1911, № 1, էջ 10:

[93] «Բողբոջ», 1913, № 4, էջ 73:

[94] «Հառաջի» 1911 թ. № 3-ում տպագրվել է «Բողբոջի» դեմ ուղղված Մկրտիչ Պարսամյանի՝ «Երկրի մամուլը» հոդվածը: Խմբագիրը՝ Մ. Վարժապետյանն այդ հոդվածի հեղինակին պատասխանել է, վկայաբերելով

«Բողբոջը», որ գոյատևեց ընդամենը երեք տարի, կարողացավ իր շուրջ համախմբել շնորհալի պատանիների, որոնք հետագայում դարձան վիպասաններ, բանաստեղծներ (Վեսպեր և ուրիշներ), հասարակական գործիչներ և իրենց տեղը գրավեցին գրականության ու հասարակական մտքի պատմության մեջ։

1910-ական թվականներից երևան են գալիս նաև մանկապատանեկան սպորտային պարբերականներ։ Կոստանդնուպոլսում լույս է տեսնում ֆիզիկական կրթության ու դաստիարակության հարցերին նվիրված «Մարմնամարզ» պատկերազարդ ամսագիրը։

«ՄԱՐՄՆԱՄԱՐԶ»
(1911—1914)

Նախորդ շրջանի մանկապատանեկան մամուլի էջերում առանձին բաժիններ են հատկացվել ֆիզիկական դաստիարակության հարցերին, բայց այն ազդեցությունն ու նշանակությունը չեն ունեցել, ինչ մասնագիտացված առանձին պարբերականը։

Եթե նկատի ունենանք, որ հայ ժողովրդի կյանքում պատմական այդ ժամանակաշրջանում ֆիզիկական կրթության ճիշտ ու կանոնավոր կազմակերպումը նույնքան կարևոր էր, որքան հոգևոր ու մտավոր դաստիարակությունը, ապա հասկանալի է, թե ինչու հենց այդ տարիներին լույս տեսավ «Մարմնամարզ» պատկերազարդ ամսագիրը։

Սուլթան Աբդուլ Համիդի անկումից հետո, սահմանադրական կարգերում վերջապես «լիիրավ ազատություն» վայելելու ակնկալություններով հայ մտավորականները վերստին ձեռնամուխ եղան ինչպես հոգևոր ու մտավոր, այնպես էլ ֆիզիկական դաստիարակության կազմակերպման գործին։ Նրանցից Շ. Քրիսյանը լույս է ընծայում «Մարմնամարզ» ֆիզի-

---

Վ. Հյուգոյի հետևյալ խոսքերը. «Նվիրական է ինձի համար ամեն նոր սկսնակ բանաստեղծ, որչափ ալ փոքր ըլլայ իր տեղը մատենագրության մեջ, միշտ մնկուսի պիտի քաշվիմ ճամփա տալու նորեկ բանաստեղծի մը» (տե՛ս «Բողբոջ», 1912, № 3, էջ 44)։

կական դաստիարակությանը նվիրված մանկապատանեկան օրգանը։ Շավարշ Քրիսյանը սովորել էր Կոստանդնուպոլսի Ռոբերտ կոլեջում։ Նա սպորտի մեջ խորացել էր Լոնդոնում։ Սահմանադրության հաստատումից հետո նա ստանում է մասնագետի վկայական և վերադառնում Կոստանդնուպոլիս, նվիրվում հրապարակախոսությանը՝ նպատակ ունենալով «իր ազգակիցներուն ու հայրենակիցներուն տալու առողջություն, ուժ և այդ երկուքին միացումեն բխող երջանկություն»։ Բարոյական դաստիարակությունը կապելով ֆիզիկական կրթության հետ, նա գրում է. «Մեկ խոսքով, մեր նպատակը պիտի ըլլա մարդ պատրաստել և մարդեր են, որ մեզի կը պակսին»[95]։

Ամսագրում տպագրվում էին մարմնամարզության դասընթացներ, որոնք բաղկացած էին տեսական և գործնական բաժիններից։

1912 թ. ամսագիրը դառնում է երկշաբաթաթերթ, իսկ 1913 թ. ավելացվում են «Մանկավարժական», «Առողջապահական-բնախոսական», «Կանանց», «Սբոռի կյանք», «Հայ պոյ-սքաուտների» բաժինները։

Դպրոցներում ֆիզիկական դաստիարակության կազմակերպման հարցերով հանդես է եկել մանկավարժ Հ. Հինդլյանը[96]։ Նա իր հոդվածներում ցավով է նշում այն հանգամանքը,

---

[95] «Մարմնամարզ», 1911, № 1, էջ 2։

[96] Հ. Հինդլյանը (1866—1950) արևմտահայ մանկավարժական մտքի և դպրոցական գործի ականավոր ներկայացուցիչներից էր։ Ծնվել է Կ. Պոլսում։ Սովորել է սկզբում Ներսիսյան-Երմոնյան վարժարանում, ապա Ռ. Պերպերյանի հիմնած դպրոցում։ 1882 թ. ավարտելով միջնակարգը, Հինդլյանը անցնում է աշխատանքի Պեշիքթաշի Մաքրուհյան վարժարանում։ Ձեռք բերած մանկավարժական գիտելիքները հարստացնելու նպատակով, նա ամառային արձակուրդներին ճանապարհորդել է Շվեյցարիայի քաղաքներում, ծանոթացել այդ երկրի դպրոցական աշխատանքի դրվածքին ու դասավանդման մեթոդներին։ Վերադառնալով Կ. Պոլիս, նվիրվել է մանկավարժական գործունեությանը։ Նա միաժամանակ զբաղվել է մանկավարժության տեսական հարցերով, կազմել դասագրքեր, հրատարակել աշխատություններ։ Եղել է դեմոկրատական, հումանիստական մանկավարժության զարգացման կրողը, ուսումնադաստիարակչական աշխատանքներում պաշտպանել նորը, առաջավորը (տե՛ս Ա. Մ. Շավարշյան, Հայ մանկավարժներ, գիրք Բ, Երևան, 1961, էջ 405—420)։

Ա. ՏԱՐԻ — ԹԻՒ 1 1911 ՓԵՏՐՎԱՐ



«Մարմնամարզ» ամսագրի շապիկը

որ ֆիզիկական դաստիարակությանը «դեռ չէ հաջողած քաղաքացության իրավունք ստանալ մեր բարքերուն մեջ և վանել հոնկե միջնադարյան դաստիարակությունը»[97]: Նա իր մի շարք հոդվածներում քննարկում է հոգու և մարմնի փոխհարաբերության հարցերը: «Բնախոսական-հոգեբանական հետախուզություններ» հոդվածաշարում ցույց է տրված, թե ինչպիսի կապ և փոխհարաբերություն գոյություն ունի հոգու և մարմնի միջև: Որքան առողջ լինի մարմինը, այնքան առողջ կլինի հոգին:

Ամսագրի կողմից առաջարկվում էր լուրջ բարեփոխություններ մտցնել ուսումնական ծրագրում, «զայն պատշաճեցնել ներկա կյանքի պահանջքներուն և իրականության, ինչպես նաև զայն ազդակ մը ընել ազգային վերածնության, գիտնալով, որ ամեն բան նախապես կախված է կրթական վերածննդէ մը»[98]: Առաջարկվում է նաև ազգային դպրոցների ծրագրերում մտցնել «Երկրագործություն» առարկան, քանի որ այն «հիանալի մարզանք է» աշակերտության համար: Որպես լավագույն օրինակ վկայաբերվում է այդ ուղղությամբ արևմտաեվրոպական զարգացած երկրներում կիրառվող փորձը: Նրա «ֆիզիկական կրթությունը հունգարական վարժարաններուն մեջ»[99] հոդվածը ծանոթացնում է գիմնազիաներում և գյուղական երկրորդական վարժարաններում մարմնամարզության դասավանդման մեթոդին զենքի գործածության ձեվերին: Այդ տարիներին թուրքահայ երիտասարդության համար զինվորագրության կարգը, որ ընդունված էր սահմանադրությամբ, խրախուսվում էր ամսագրի կողմից և առաջարկվում էր դպրոցական ծրագրերում պարտադիր դարձնել «զինվորական տարրական շարժուձևներուն վարժությունները»: Ահա թե ինչու ամսագիրը տպագրում է օսմանյան կառավարության պատերազմական նախարարի կոչը, որտեղ միաժամանակ ցույց են տրվում այն վարժությունների կատարման ձևերը, որ պետք է սովորին աշակերտները մինչև զորակոչվելը: Ամսագիրը գտնում է, որ այդ կոչը ամենից առաջ իր

97 «Մարմնամարզ», 1911, № 1, էջ 3:

98 «Մարմնամարզ», 1914, № 1, էջ 2:

99 Նույն տեղում, էջ 29:

արձագանքը պետք է գտնի հայ ժողովրդի մեջ, տարածվելով Կոստանդնուպոլսից մինչև Վան, Իզմիր, Խարբերդ և այլուր։ «Ազատամարտից» արտատպվում է այն խմբագրականը, որտեղ առաջարկվում է կազմել առանձին ծրագիր և այդ ծրագրով հայկական բոլոր վարժարաններում մտցնել սպորտի դասընթացը՝ ապագա հայ սերունդը «ավելի կայտառ, ավելի դիմացկուն և ավելի նախաձեռնող սերունդի մը վերածելու» համար։ Ամսագրի էջերում կոչ էր արվում բոլոր թաղերի, գավառների, քաղաքների երիտասարդությանը՝ խմբվել ու հիմնել մարմնամարզական ակումբներ և մրցումների ու սպորտային խաղերի միջոցով պատրաստել առողջ սերունդ, ցույց տալ մարդկությանը, որ «թե հայ ծնած գնդերն ու արյուներ տոկուն ու ազնիվ տեսակ են, իսկ իր մինչև հիմա միջազգային ու տեղական մրցումներու չմասնակցելուն պատճառն ալ՝ ոչ թե իր մկաններուն ու իր արյունին այլասերած ըլլալն էր, այլ այդ տեսակ մրցումներու գոյության անգիտանալն ու անոնց պատրաստված չըլլալը»[100]։

Ինչպես քաղաքի, այնպես էլ գավառի երիտասարդությանը մարմնամարզական ակումբների շուրջ համախմբելու մասին առաջին լուրջ հոդվածը պատկանում է Ռոբերտ կոլեջի սան Վահրամ Փափազյանի գրչին։ Խանդավառ պատանին հայտնում է, թե սիրում է սպորտը, նրա մեջ տեսնում ավելի հեռահար նպատակներ՝ ազգի գոյության ու պահպանման երաշխիքը, երիտասարդության ուժերը ազգօգուտ գործերի շուրջ կենտրոնացնելու լավագույն միջոցներից մեկը։ Սպորտային ակումբները կանջատեին երիտասարդներին այն միջավայրից, ուր նրանք «ժամանակին կըսպանին թուղթ կամ նարդ խաղալով ու գիշերը երթալիք տեղերնին որոշելով կամ առջի գիշեր գացած տեղերնին նկարագրելով»[101]։ «Իմ անկեղծ իղձս եղած է,— գրում է Փափազյանը,— որևէ միջոցով մը մարմնամարզական ոգի մը մշակել մեր հայ երիտասարդության բաժան-բաժան խավերուն մեջ, որուն շնորհիվ վստահ եմ, թե միության ոգին շուտով մեր մեջ ալ մուտ պիտի գըտ-

100 «Մարմնամարզ», 1911, № 1, էջ 30։

101 «Մարմնամարզ», 1911, № 2, էջ 56։

նե[102]։ Վ. Փափազյանի հոդվածը միաժամանակ հասցեագրված էր նաև հայ հարուստներին. «Մեր հարուստները երբ տեսնեն, թե նամակագրին հիշած ծրագիրը ու այդ ծրագրին նպատակը ազգօգուտ և ազգին պատիվը բարձր բռնելու կծառայեն, չպիտի վարանին, նյութապես ու բարոյապես օժանդակելու»[103]։ Նամակը (հոդվածը) կարճ ժամանակամիջոցում իր արձագանքն է գտնում Կոստանդնուպոլսի հայության մեջ։ Առաջինը գործի են անցնում Գուրու-Չեշմեի հայ երիտասարդները, որոնք կազմում են «մարմնամարզական ակումբ»։ Այս ակումբի անդամները մուծում էին բաժնեգին (ամսական մեկ ղրուշեն մինչև 5 ղրուշ)։ Նրանց հետևում են նաև գավառների երիտասարդները և կազմում առանձին խմբակներ։ Կոստանդնուպոլսում սկսում են գործել «Արշալույս», «Կոնտոր», «Որբանոց», «Սասուն», «Վարագ», «Տորք» ակումբները, ըստեղծվում է հայկական ֆուտբոլի խումբը (լիկը)։

«Մարմնամարզի» անմիջական նախաձեռնությամբ կազմակերպվում են հայկական առաջին օլիմպիական խաղերը։ Օլիմպիականը բոլորովին նոր ու արտակարգ իրողություն էր հայ երիտասարդության համար։ Եվ ցավալի էր, որ նման նշանակալից երևույթն արձագանք չգտավ ժամանակի պարբերական մամուլի էջերում։ Այդ հարցին անդրադարձավ «Մարմնամարզը», գրելով. «...դրամի՞ կը սպասեք քաջալերելու, շոյելու, շողոմելու համար այս գործը։ Իսկ հին աւոր չեք սպասեր, հապա ի՞նչ է ձեր լռութիւնը, ձեր պապանձումը։ Երբ ազգին բոլոր ցավերուն վրա կոկորդիլոսի արցունք կը թափեք, երբ նույնիսկ հեռավոր Եվրոպայի էն ետին եղելութիւններուն վրա էջեր կը լեցնեք, երբ օրվան ղվվելի ոճիր մը ձեր թերթերուն մեջ իր սյունակները կունենա, ինչո՞ւ կը դեղեվիք տեղ տալով «այս շարժումին, հայ մարմնակրթարանի շարժումին»։ Այս շարժումը կուսակցությանը մը չի պատկանիր, մի վախնաք, դուք որ ամեն տեղ, ամեն բոպե, կուսակցությանց ուրուականովը կը հալածվիք, «այս շարժումը համազգային է»՝ ազային, էֆենտիին, արհեստավորին ու լրա-

---

102 Նույն տեղում։

103 Նույն տեղում, էջ 58։

գրատերին տղուն համար է հավասարապես»[104]: Ապա բարձր գնահատելով օլիմպիական խաղերի նշանակությունը, ամսագիրը գրում է. «....ազգային ընդհանուր շահերու շուրջ ամենքս ալ որևէ կուսակցության պատկանելե առաջ հայեր ենք ու պարտավոր ենք իրարու ձեռք կարկառել ու մեր ուսերը տրամադրել հայության արդեն այնքան խարխուլ շենքը հաստատուն բռնելու համար. ահա մեզի առաջնորդող տեսակետը և օլիմպիական խաղերը հայության համար միության կապ մը նկատելով, մեր բոլոր խանդով անոր փարեցանք»[105]: Կոստանդնուպոլսում օլիմպիական խաղերը սիստեմատիկ բնույթ կրեցին, կազմակերպվեցին երկրորդ, երրորդ օլիմպիականները:

Հայկական օլիմպիական խաղերի նկատմամբ իր համակրանքն է արտահայտել նաև Կոմիտասը: Ներկա լինելով օլիմպիական երրորդ մրցախաղին, նա հանդես է եկել «Ազգային գոյության պայքարին մեջ երիտասարդության կատարելիք դերի մասին» ճառով, ապա մարմնամարզիկներից յուրաքանչյուրին հանձնել մրցանակներ[106]:

Օլիմպիական խաղերը «արտաքին ոտնձգություններից, սնափառական հետապնդումներից» զերծ պահելու համար 1911 թ. ամսաթերթի խմբագիր Շավարշ Քրիսյանի նախաձեռնությամբ և նրա գաղափարներին համակիր անձերի օժանդակությամբ կազմակերպվում է հայ մարմնամարզական ընդհանուր միությունը: Միության նպատակների մասին հրապարակված շրջաբերականում գրված է. «Պիտի ըլլայ հավաքում մը՝ ուր հայ մարմինին և հայ միտքին աշխատավորները ձեռք ձեռքի տված՝ պիտի ճշտեն բոլոր այն միջոցները, որոնք անհրաժեշտ են մեր ներկա թմրած ու թուլամորթ սերունդին տեղ՝ վաղվան առողջ ու կայտառ սերունդը ստեղծելու համար»[107]: Այդ նույն թվականին ստեղծվում է նաև հայ սկաուտների կազմակերպությունը, որի նպատակների մասին մանկավարժ Հ. Հինդլյանը գրում է. «Հետևաբար, հի-

104 «Մարմնամարզ», 1912, № 12, էջ 202:

105 «Մարմնամարզ», 1913, № 4, էջ 66:

106 Տե՛ս «Մարմնամարզ», 1913, № 6, էջ 111:

107 «Մարմնամարզ», 1912, № 12, էջ 219:

մակուհիմա ևս պիտի փափագեի, պզտիկ բարեկամներս, որ ոչ թե Պոլսոյն Բաուրլ զորավարին հիմնած պոյ սքաուդներու ակումբ մը հիմնելու նեռևէ ըլլանք, այլ ձեր բարքերուն մեջ մտցնենք այդ ձեռնարկին ոգին, որ կը հավատամ թե շատ հարմար է ազնվացնելու մեր ցեղը, և գիտեք թե մեր ցեղը որքան պետք ունի ազնվանալու։ Այդ բանը ընելով՝ ամենէն արդարակշիռ ազգասիրության գործը կատարած պիտի ըլլանք»[108]։

Հայ սկաուտների շարքերը ընդունվում էին 12 տարեկանից բարձր տարիք ունեցող դպրոցական և ոչ դպրոցական պատանիները, իսկ հայ մարմնամարզական ընդհանուր միությանը կարող էին անդամագրվել ավելի տարեցները։ Հայ սկաուտները համարվում էին հայ մարմնամարզական ընդհանուր միության ապագա անդամները։ Երկու միությունների հիմնադիր և ղեկավար անդամները առաջնորդվում էին ռամկավարական գաղափարներով[109]։ Այդ միությունների նպատակը էր «աղքատ և միջակորևար դասակարգին տաղանդը և ուժը օգտագործելու, այն դասակարգին, որ նյութական դյուրություններե զուրկ է մասնավոր վարժարաններ կամ մարզարաններ այցելելու համար»[110]։

Այդ տարիներին Կոստանդնուպոլսում գոյություն չունեին առանձին վարժարաններ, որոնք գործնական դասաժամերով կարողանային օժանդակել մատաղ սերնդի ֆիզիկական դաստիարակության գործին։ «Մարմնամարզը» իր էջերում ստեղծում է «Մարմնամարզական դասընթացներ» բաժինը, որը բաղկացած էր և՛ տեսական, և՛ գործնական մասերից։ Տեսական մասում մեկնաբանվում էին ֆիզկուլտուրայի և սպորտի գիտական սկզբունքները, իսկ գործնական մասում ցույց էին տրվում մարմնամարզական վարժությունների կատարման ձևերը՝ տղամարդկանց և կանանց համար։ Պարտավորեցնելով կանանց կատարել նշված և պատկերված (նկարներով) բոլոր վարժությունները, ամսագիրը գրում է. «Պիտի ունենանք առողջ, գեղեցիկ, պարտաճանաչ հայ կիներ, որոնք հա-

108 «Մարմնամարզ», 1912, № 12, էջ 203։

109 «Մարմնամարզ», 1913, № 4, էջ 62։

110 «Մարմնամարզ», 1913, № 8—9, էջ 145։

կառակ անցյալին մեջ իբր անարգանք նկատված հայուհիկի անունով որոշվելուն, չպիտի կարմրին, այլ հպարտ ժպիտով մը ուրախանան, որովհետև նույն բառին հին իմաստովը չպիտի նկատվին ու բնորոշվին»[111]:

Հատկանշական է այն, որ ամսագրում ֆիզիկական դաստիարակության հարցերը քննարկվում էին բարոյական դաստիարակության խնդիրների հետ շաղկապված: Վարժարանները, լսարանները, մարմնամարզական ակումբները, ըստ ամսագրերի, պատրաստելու էին մի սերունդ, որը «խանդավառությամբ կարողանար միշտ անհատականը զոհել հանրայինին, անձը զոհել սկզբունքին»[112]: «Եղբայրակցիլ,— գրված է ամսագրում,— այս պետք է ըլլա նոր հայ սերունդին կարգախոսը, ու այդ զգացումին տարածման համար կը տրամադրենք մեր թերթին սյունակները և ամեն տեսակ օժանդակություն»[113]:

Խոսքը ուղղելով ծնողներին, ամսագիրը հորդորում է նրանց՝ հեռու մնալ ոգելից խմիչքների ազդեցությունից, թողնել բոլոր մոլի հատկությունները, ձգտել դեպի լավը, բարձրը, գեղեցիկը, սիրել սպորտը, դաշտային խաղերը, զվարճությունները: Դրանցում միայն չկան զգացումների բթացում, բարոյական ու ֆիզիկական անկում: «Մենք համոզված ենք,— գրված է այնտեղ,— որ ֆիզիկական լավ, մեթոդիկ ու հարատև դաստիարակության մը շնորհիվ, այլասեռված ամբողջ ազգ մը կրնա վերածնիլ, վերաստեղծվիլ և դառնալ ուժեղ ու կորովի»[114]:

Ինչպես վկայում են նյութերը, «Մարմնամարզ» ամսագիրը կարևոր դեր է կատարել ոչ միայն մատաղ սերնդի, այլև ամբողջ ազգի բարոյական ու ֆիզիկական դաստիարակության կազմակերպման գործում: Ամսագիրը սեր ու համակրանք է արթնացրել հայ պատանիների ու երիտասարդության մեջ դեպի սպորտն ու ֆիզկուլտուրան:

---

111 «Մարմնամարզ», 1911, № 2, էջ 49:

112 «Մարմնամարզ», 1914, № 1, էջ 6:

113 Նույն տեղում:

114 Նույն տեղում, էջ 8:

ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

Հայ մանկապատանեկան անցյալի մամուլը սկիզբ առնելով աշակերտական պարբերականներից, տարիների ընթացքում ձեռք է բերում ոչ միայն դաստիարակչական, այլ նաև հասարակական ու կազմակերպչական նշանակություն: Ազգային կյանքի զարգացմանը համընթաց մամուլը դառնում է դեմոկրատական-լուսավորական շարժման կարևոր լծակներից մեկը և իր տեղը գրավում ժամանակի գաղափարական պայքարում: Որպես մատաղ սերնդի մտավոր կրթության և բարոյական դաստիարակության լավագույն միջոցներից մեկը, այն իր զարգացման երկրորդ շրջանում (1870—1880), հանձինս հայ առաջադեմ գրողների, մանկավարժների, մտածողների (Հ. Պարոնյան, Մ. Մամուրյան, Ղ. Աղայան, Տ. Նազարյան, Ստ. Լիսիցյան, Հ. Թումանյան և ուրիշներ), դառնում է լուսավորական գաղափարների և նորագույն մանկավարժության առաջավոր դրույթների տարածողն ու պրոպագանդողը: Տարիների ընթացքում մանկական մամուլի էջերում հնազանդության ոգին քարոզող, կրոնի դոգմանները պրոպագանդող նյութերին փոխարինում են անարդարության ների դեմ պայքարի ոգևորող, տիրապետող վերնախավի հանդեպ ատելություն սերմանող գեղարվեստական պատկերները:

1900-ական թվականներից զրվում է մասնագիտացված պարբերականների ստեղծման անհրաժեշտության հարցը: Լույս են տեսնում պատանիների ու աղջիկների ֆիզիկական, գեղագիտական դաստիարակությանը նվիրված առանձին համարներ:

XIX դարի երկրորդ կեսի և XX դարի սկզբի հայ մանկապատանեկան մամուլը ստեղծում է մանկավարժական առողջ սկզբունքների վրա հիմնված գեղարվեստական ընթերցանու-

թյան հարուստ նյութ, սկիզբ դնելով հայ նոր, ռեալիստական մանկապատանեկան գրականության զարգացմանը:

Անցյալի մանկապատանեկան մամուլի ստեղծած լավագույն ավանդույթները (իրական կյանքի ճշմարտացի արտացոլում, դաստիարակչական նպատակասլաց ուղղվածություն, գաղափարապես հագեցված բովանդակություն, գեղարվեստական կենդանի պատկերներ, մատչելի լեզու, պարզ ու հստակ ոճ և այլն) հիմք հանդիսացան սովետահայ մանկապատանեկան մամուլի ստեղծման ու հետագա զարգացման համար:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Մ Ա Մ Ո Ւ Լ

«Բուրաստան ս. Սահակեան», 1851—1853:
«Բուբակ Հայկազեան», 1854—1855:
«Երկրագունդ», 1870—1871:
«Թատրոն բարեկամ մանկանց», 1876—1878:
«Բուրաստան մանկանց», 1882—1888:
«Աղբյուր», 1883—1918:
«Արձագանք», 1883—1886:
«Մշակ», 1884:
«Մեղու Հայաստանի», 1884:
«Նաղիկ մանկանց», 1889—1893:
«Մուրճ», 1889, 1898—1899:
«Տարազ», 1891—1919:
«Պատանի», 1902—1907:
«Հասկեր», 1905—1915, 1922:
«Փնջիկ», 1907:
«Ծաղիկ» (տղոց համար), 1908:
«Հայկունի», 1910—1912:
«Պատանի», 1910—1915:
«Բողբոջ», 1911—1914:
«Մարմնամարզ», 1911—1914:
«Տաճար մանկանց», 1913—1914:
«Մարտակոչ», 1926:
«Կարմիր ծիլեր», 1926:
«Родник», 1888.
«Детское чтение», 1902.
„თეატრი და ცხოვრება“ («Թատրոն և կյանք»), 1918:

Ա Ր Խ Ի Վ Ա Յ Ի Ն Ն Յ Ո Ւ Թ Ե Ր

ՍՍՀՄ պետական կենտրոնական պատմական արխիվ (Լենինգրադ), ֆ. 776, ց. 12, գ. 78:
Հայկական ՍՍՀ պետական կենտրոնական պատմական արխիվ՝ Գևորգյան ճեմարանի ֆոնդ:

Վրացական ՍՍՀ պետական կենտրոնական պատմական արխիվ՝ ֆ. 480, ց. 1, գ. 721, 938, 1053։
Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան՝ Տիգրան Նազարյանի, Մարիամ Թումանյանի, Պահարեի արխիվները։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Մարքս Կ. Արվեստի մասին, Երևան, 1948։
Էնգելս Ֆր. Գրականության մասին, Երևան, 1948։
Լենին Վ. Ի. Երկերի լիակատար ժողովածու, հատ. 2, 4, 7, երկեր, IV հրատ., հատ. 28։
Ալպոյաճյան Ա. Պատմություն հայ դպրոցի, Կահիրե, 1946։
Աղայան Ղ. Երկերի ժողովածու, հատ. 1, 2, 3, Երևան, 1963։
Սասուներ Հ. Դիմաստվերներ, Կ. Պոլիս, 1921։
Գյուլնազարյան Խ. Ակնարկներ հայ մանկական գրականության պատմության, Երևան, 1961։
Երզնկյան Գ. Պատմություն մանկավարժության, Թիֆլիս, 1895։
Երիցյան Ա. Պատմություն 75-ամյա գոյության Ներսիսյան հայոց հոգևոր դպրոցի, Թիֆլիս, 1883։
Երկանյան Վ. Պայքար հայկական նոր դպրոցի համար Անդրկովկասում (1870—1905), Երևան, 1970։
Զորայան Ն. Ընթերցասիրություն, կամ գիրք կարդալու միջոցավ մտավորական մշակության հասնելու օգտակար խրատներ, Կ. Պոլիս, 1852։
Թումանյան Ա. Հայրենիքի պահանջները և հայ դյուղացին, Թիֆլիս, 1881։
Լեո, Հայ գրքի տոնը, Թիֆլիս, 1918։
Կարինյան Ա. Ակնարկներ հայ մամուլի պատմության, հատ. 2, Երևան, 1960։
Կոմենսկի Յ. Մեծ դիդակտիկա, Երևան, 1962։
Կրուպսկայա Ն. Դաստիարակության և ուսուցման մասին, Երևան, 1949։
Հակոբյան Մ. «Աղբյուր» ամսագիրը (ՀՍՍՀ ԳԱ ակադեմիայի «Տեղեկագիր», 1959, № 2)։
«Հայ նոր գրականության պատմություն», հատ. 2, Երևան, 1962, հատ. 3, 1964։
Հովհաննիսյան Ա. Նալբանդյանը և նրա ժամանակը, գիրք 1, Երևան, 1955, գիրք 2, 1956։
Ղազարյան Հ. Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը 1800—1870 ԹԹ., Երևան, 1967։
Մակարենկո Ա. Մնողական հեղինակության մասին, Երևան, 1958։
Մեղինսկի Ե. Մանկավարժության պատմությունը հասարակության տնտեսական զարգացման հետ կապված, Երևան, 1926։

Մխիթարյան Մ. «Հյուսիսափայլ» ամսագիրը, Երևան, 1956։
Նազարյան Տ. Խոսք և գործ, Թիֆլիս, 1914։
Նագիկյան Գ. Արևմտահայ մանկավարժական միտքն ու դպրոցը, Երևան, 1969։
Նար-Դոս, Քսան և հինգ ամյակ «Աղբյուր» մանկական ամսագրի (1883—1908), Թիֆլիս, 1908։
Ուշտունի Վ. Հայ հասարակական հոսանքների պատմությունից, Երևան, 1956։
Սահակյան Գ. Հակոբ Պարոնյան (Կյանքը և հրապարակախոսությունը), Երևան, 1964։
Ուշինսկի Կ. Մանկավարժական ընտիր երկեր, Երևան, 1958։

Ա. Ն Վ. Ա. Ն Ա. Ց Ա. Ն Կ

Աբելյան Հ. 154
Աբովյան Խ. 11, 86, 92, 93, 100, 115, 179, 180
Աթանասյան Ա.. 133
Ալիշան Ղ. 172
Ալպոյաճյան Արշ. 27, 28
Աղաբաբ Հ. 133, 173, 177, 182
Աղայան Ղ. 85, 96, 98—108, 118, 120, 128, 130, 136, 152, 175, 176, 180, 209
Աղավնի Ստ. 15
Այվազյան Ա. 16
Այվազյան Գ. 40, 63
Այտնյան Հար. 17
Անդերսեն 72, 79, 145, 181
Անդրանիկ 165
Աշտարակեցի Ն. 172
Ասքանազ Մ. 78
Ավետիսյան Մ. 173
Ավետիսյան Պ. 28
Ավչյան Ս. 140
Արիմաթիելի Ի. 158
Արծրունի Գ. 147
Արծրունի Վ. 129
Արղուբյան Ս. 84, 86
Արփիարյան Արփ. 197
Արևշատյան-Սարդարյան Ա. 139

Բաբայան Ս. 33, 84, 103
Բահաթրյան Աս. 33, 34, 115, 136
Բայրոն Ջ. 77
Բաշինջաղյան Գ. 136, 177, 182
Բարխուդարյան Ս. 167, 173
Բելինսկի Վ. 85, 94, 97
Բեկնազարյան Ս. 83, 123
Բերանժե Պ. 117
Բիչեր-Ստոու Հ. 87
Բոսնակյան Ղ. 164, 165

Գաբրիելյան Հովհ. 17
Գաբրիելյան Ռ. 182
Գազանճյան Ա. 189
Գալաչյան Ս. 173
Գալեմքեարյան Գր. 22, 28
Գարագաշյան Ա. 80
Գալստյան Ս. 28
Գալուստյան Գր. 46, 50, 51
Գալֆայան Ա. 63
Գյոթե Ի. 117, 189
Գյուլնազարյան Խ. 7, 77, 112
Գնունի Ա. 189
Գոլիցին Գ. 166
Գորկի Մ. 153, 155
Գրիգոր Նարեկացի 172

Դանիելյան Ալ. 163
Դանիելյան Կ. 93
Դավթյան Մ. 46
Դարևջանիձե Ա. 181
Դեմիրճյան Դ. 173
Դիկկենս Ջ. 77, 118
Դիտեերվեդ Ֆ. 83
Դյումա Ալ. 81
Դոբրոլյուբով Ն. 94, 120
Դոդե Ա. 10, 79, 81, 142

Եաղլյան Հ. 196
Եաղմաճյան Կ. 67
Ելնիցկի Կ. 185
Ենիճելյան Ն. 189
Եողկատլյան Ա. 196
Եսայան Վ. 65
Երեմյան Գ. 15, 21
Երիցյան Ալ. 115
Երկանյան Վ. 83

Զավարյան-Հակոբյան Սոֆ. 173
Զարուհի 141
Զոլա Է. 118
Զոհրաբյան Ա. 150
Զորյան Ն. 10, 11, 15
Զուգերման Հ. 155

Էդիլյան Գ. 167, 184

Թադևոսյան Ք. 110
Թառայան Ս. 124
Թյուլյան Հար. 16
Թումանյան Գ. 141
Թումանյան Համլ. 182
Թումանյան Հովհ. 60, 112, 136, 137, 143, 154, 167, 178, 187, 209
Թումանյան Մ. 178, 179, 182

Ժամկոչյան Թ. 189, 198
Ժուկովսկի Վ. 100

Իգնատյան Ա. 159
Իզմիրլյան Մ. 155, 194
Իմեդաշվիլի Ե. 154
Ինճիկյան Ա. 178
Իսահակյան Ավ. 109, 136, 167, 175
Իսպիրյան Մ. 195
Իփեքչյան Հ. 37

Լալախանյան Ս. 7
Լամարթին Ա. 80
Լամբնե Մ. 39
Լաֆոնտեն Ժ. 40—41, 77
Լենին Վ. Ի. 9, 10, 44, 121, 158
Լեո 112, 133, 136, 180
Լինչ Հ. 188
Լիսիցյան Դ. 147
Լիսիցյան Կ. 173, 177
Լիսիցյան Ստ. 146, 147, 167, 173, 177, 179, 180, 182—188, 209
Լիտվոս տե՛ս Սեննկևիչ Հ.
Լոնգֆելլո Գ. 77
Լունկևիչ Վ. 126
Լուսինյան Ա. 41
Լևոնյան Գ. 184

Խանճյան Ս. 78
Խնկոյան Ա. 175—177
Խոջամիրյան Գ. 139
Խոսքանեցյան Կ. 63
Խորանյան Ն. 193
Խրիմյան Հ. 112, 115, 155, 194

Ծատուրյան Ալ. 108, 109, 136, 137, 175
Ծերեթելի Ակ. 154
Ծերեթելի-Թումանովա Ա. 141
Ծերեթելի Գ. 141
Ծերենց 98, 115

Կարագին 136
Կարա-Մուրզա 115
Կարմեն Ս. 155
Կեսար Հ. 29
Կյուրոս 29
Կոլումբոս 73
Կոմենսկի Յ. 126
Կոմիտաս 130, 206
Կորյուն Մ. 7
Կորյուն, պատմիչ 80—81
Կորոլենկո Վ. 116
Կոստանդյան Գ. 28
Կոտ-Մուլիկա 145

Կոխլով Ի. 40, 41, 181
Կրին Ճ. 46
Կուրզինյան Շ. 111, 132

Հախունց Տեր-Կարապետ 141
Հախնազարյան Խ. 164
Հակոբյան Մ. 7, 28, 31
Հայրապետյան Հ. 175
Հարությունյան Իս. 167, 173
Հաուպտման Գ. 155
Հերոդոտ 86
Հինդլյան Հ. 201, 206
Հյուգո Վ. 38, 40, 76, 80, 181
Հոմերոս 86
Հովհաննիսյան Աբգ. 53
Հովհաննիսյան Աշ. 26
Հովհաննիսյան Գ. 84
Հովհաննիսյան Հովհ. 98, 99, 103, 136, 137, 175, 179
Հոֆման 97

Ղազարյան Կ. 163
Ղազար Փարպեցի 81
Ղուլաձե 136

Ճուղուրյան Հար. 113

Մակեդոնացի Ալ. 29
Մամուրյան Մ. 33, 34, 60, 66, 68—70, 73, 75, 76, 81, 82, 209
Մանդինյան Ս. 86, 99, 128, 130
Մանվելյան Լ. 137
Մառ Ն. 182
Մատթևոսյան Հ. 46
Մարգարյան Ա. 16
Մարկոսյան Լ. 128
Մարկոսյան Ն. 6
Մարկոսյան Պ. 15
Մարքս Կ. 187
Մելիք-Ադամյան Լ. 139
Մելիք-Շահնազարյան Կ. 113, 136, 138, 139
Մեծարենց Մ. 194
Մեհրաբյան Ա. 72, 136
Մեսրոպ Մաշտոց 81
Միրզոյան Գ. 6, 95, 106, 137, 146, 147
Միցկևիչ Ա. 38
Միքայելյան Ս. 37
Մյասնիկյան Ալ. 160
Մոզյան Մ. 78, 80
Մոպասան Գի դե 118
Մովսես Խորենացի 80
Մոցարտ Վ. 51
Մսերյան Մ. 28
Մուստաֆա Ք. 51
Մուրացան 158

Նազարյան Ստ. 11, 12
Նազարյան Տ. 6, 88, 91, 105, 109, 137, 140—149, 151—154, 157, 209
Նալբանդյան Միք. 12, 17, 93, 110, 115, 118, 123, 127, 194
Նար-Դոս 136, 137, 148, 158
Նապոլեոն Բոնապարտ 171
Նեկրասով Ն. 102
Նեմիրովիչ-Դանչենկո 181
Ներսիսյան Ստ. 142
Նիկոլայ II 183
Նիկողոսյան Ն. 113
Նուպարյան Մ. 26, 27, 31
Նուպար փաշա 35

Շալյապին Ֆ. 154
Շահամիրյան Շ. 172
Շահնազարյան Կ. 35, 37
Շահումյան Ստ. 166, 167, 187
Շամլյանց Մ. 17
Շանթ Լ. 167, 187
Շավարշյան Ա. 120, 201
Շատմերյան Պ. 189
Շեքսպիր Վ. 51
Շիլլեր Ֆ. 117
Շիշմանյան Հ. տե՛ս Մերենց

Շիրվանզադե Ալ. 136, 158, 175, 179, 194
Շևչենկո Տ. 181

Ոսկանյան Կ. 80
Ոսկան Ստ. 38

Զայան Ի. 31
Զաննիկ 75
Զեխով Ա. 116, 181
Զերազ Մ. 37, 38
Զերնիշևսկի Ն. 94, 120
Զիլինգարյան Ա. 167
Զոպանյան Ա. 78, 192

Պալյան Գ. 28
Պատկանյան Ռ. 26, 38, 39, 85, 98, 132, 163
Պարնըմը Հ. 46
Պարոնյան Հ. 6, 44, 53, 56—67, 98, 209
Պարսամյան Մ. 199
Պեչկեկյան Ս. 76
Պեստալոցցի Յ. 84
Պետրով 136
Պերրո Շ. 61
Պերպերյան Ն. 69, 78
Պերպերյան Ռ. 34, 68, 70, 72, 201
Պլեշչեև Ա. 181
Պոյաճյան Ք. 46
Պռոշյան Պ. 98, 99, 112, 136, 142, 179
Պուշկին Ա. 181

Ջուղայեցի Հ. 172

Ռաշմաճյան Տ. 34, 105, 125, 139, 167, 175
Ռաշևսկի 136
Ռուսինյան Ն. 10, 15
Ռուսո Ժ. 10

Սադալյան տե՛ս Լիսիցյան Ստ.
Սահաթճյան Մ. 17
Սահակյան Ս. 173, 177, 178
Սարաֆյան Վ. 164
Սաքայան Ա. 78
Սենկևիչ Հ. 142, 187
Սերեբրակյան Ն. 173
Սիմոնաքյան Կ. 29
Սոլովյով-Նեմիլով Ն. 137, 138
Սողոմոնյան Ս. 136, 140
Ստեփանյան Գ. 7, 22, 45, 46, 47, 52
Սվաճյան Հ. 53
Սրապյան Հ. 196
Սրվանձտյան Գ. 72, 85
Սուլթանով 136
Սունդուկյան Գ. 98, 180
Սուրենյանց Վ. 136

Վանանդեցի Հ. 24
Վարդանյան Փ. 139
Վարժապետյան Մ. 189, 196, 197, 199
Վարժապետյան Ն. 194
Վարժապետյան Վ. 196
Վարպետյան Մ. 72
Վերնից Հ. 185
Վորոնցով-Դաշկով 166
Վուչետիչ 49, 79, 87

Տատիշվիլի Գ. 140
Տարախչյան Հմ. 163
Տեմիրճիպաշյան Եղ. 39, 44, 75
Տեռվլեթյան Ստ. 69
Տեռեյան Հ. 17
Տեր-Ավետիքյան Ն. 113, 118, 142
Տեր-Գրիգորյան Ջ. 113, 144
Տեր-Ղևոնդյան Նիկ. 167
Տեր-Մարկոսյան Ն. 87
Տեր-Միրաքյան Հ. 33, 115, 136, 173, 186
Տիլտիլյան Ա. 196

Տիմիրյազև Ն. 187
Տոլստոյ Լ. 51, 117, 155, 163, 181
Տոմբայան Բ. 164
Տվեն Մ. 181
Տուրգենև Ի. 117

Բաֆֆի 98, 99, 100, 112, 114, 134, 136, 180

Ուատտ Ջ. 73
Ուշինսկի Կ. 83

Փալիաշվիլի Զ. 154
Փանոսյան Ալ. 72, 78
Փափազյան Անդր. 15
Փափազյան Ա. 24, 25, 30
Փափազյան Վահր. 204
Փափազյան Վրթ. 70, 136, 175

Քամալյան Ս. 136
Քափանակյան Ստ. 173
Քիլեաո Պ. 192
Քիշմիշյան Ա. 88
Քոսյան Վ. 24
Քրիսյան Շ. 200, 201, 206

Օգանյան Ա. 194
Օգանյան Գ. 188, 189, 191
Օտյան Գր. 10, 43
Օքրոյան Դ. 136

Ֆելեկյան Ս. 17, 53
Ֆլամարիոն Կ. 155
Ֆրեռբել Ֆ. 84
Ֆուլտոն Ռ. 73



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան 5

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Հայ մանկապատանեկան մամուլի սկզբնավորումը 9
«Բուրաստան ս. Սահակեան» (1851—1853) 16
«Թուխակ Հայկազեան» (1854—1855) 24

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Արևմտահայ մանկապատանեկան մամուլը 1870—1900 թվականներին 33
«Երկրագունդ» (1870—1871) 35
«Ավետարեր տղայոց համար» (1872—1915) 44
«Թատրոն բարեկամ մանկանց» (1876—1878) 53
«Բուրաստան մանկանց» (1882—1888) 69
«Ծաղիկ մանկանց» (1889—1893) 78

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

Արևելահայ առաջին մանկական պարբերականը («Աղբյուր» 1883—1918) 83
«Աղբյուր» ամսագիրը մանկական նոր գրականության ստեղծման գործում 92
«Աղբյուրի» դաստիարակչական սկզբունքները 119
«Աղբյուրի» աշխատակիցներն և խմբագիրը 136

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

Հայ մանկապատանեկան մամուլը 1900—1917 թվականներին . . 158
«Պատանի» (1902—1907) 170
«Հասկեր» (1905—1917, 1922) 173
«Հայկունի» (1910—1912) 188
«Բողբոջ» (1911—1914) 196
«Մարմնամարզ» (1911—1914) 200
Եզրափակում 209
Օգտագործված աղբյուրների և գրականության ցանկ . . . 211
Անվանացանկ 214

ՍԻԼՎԱ ՍՈՒՐԵՆԻ ՆԱԶԱՐՅԱՆ
СИЛЬВА СУРЕНОВНА НАЗАРЯН

ՀԱՅ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ
(1851—1917)

Տպագրվում է Հայկական ՍՍՀ ԳԱ
պատմության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

ИБ № 71

Հրատարակչական խմբագիր
Ս. Հ. ՇԱՂԴԱՄՅԱՆ
Նկարիչ
ՅՈՒ. Հ. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Գեղարվեստական խմբագիր
Հ. Ն. ԳՈՐԾԱԿԱԼՅԱՆ
Տեխնիկական խմբագիր
Լ. Կ. ՀԱԲՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Սրբագրիչ
Ջ. Խ. ՕՐՄԱՆՅԱՆ

ՎՖ 05326 Պատվեր 1083 Հրատ. 4999 Տպաքանակ 1500

Հանձնված է շարվածքի 5.10.1978 թ.:Ստորագրված է տպագրության 15.03.1979 թ.: Տպագրական 13,75 մամուլ, պայման. 11,55 մամուլ, հրատ. 9,75 մամուլ: Թուղթ № 1, 84×108¹/₃₂, գինը 1 ռ. 65 կ.:

Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչության, Երևան, 19, Բարեկամության 24գ.
Издательство АН Армянской ССР, Ереван, Барекамутян, 24-г.
Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչության էջմիածնի տպարան

Ա II
62224

ԳԱԱ Հիմնարար գիտ. գրադ.
220062224